


# ԲՆԱՊԱՐՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



Մայր Աթոռ Սուլբ Էջմիածնի  
Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոց  
Երևանի պետական համալսարան  
Վաղարշապատ 2007

Գրքում ներկայացված են էկոլոգիայի և բնապահպանության հիմունքները և քրիստոնեական եկեղեցու տեսակետուն էկոլոգիական ճգնաժամի մարդածին լինելու վերաբերյալ: Որպես այդ ճգնաժամից դուրս գալու ճշմարիտ և միակ ճանապարհ՝ նշվում է մարդ արարածի ապաշխարությունը՝ զուգակցված քրիստոնեական հիմնական առաջնություններով (հավատ, հույս, սեր, խոնարհամտություն, ժումկալություն, գրաստություն, ներողամտություն, համբերություն) զարդարվելու և իր բարձրագույն կոչմանը (լինել բոլոր արարածների համար խելացի պահապան և մշակ, դառնալ ողջ արարչության առաջնորդ-սպասավորը՝ այն դեպի Աստված բարձրացնելու և Նրա մեջ հաստատելու) հասնելու փափագով:

Գիրքը հասցեագրված է Եկեղեցու սպասավորներին, հոգևոր կրթօջախների սաներին և էկոլոգիական խնդիրներով հետաքրքրվող բոլոր ընթերցողներին:

Յեղինակներ՝

Ա մաս՝ Կառլեն Վաղարշակի Գրիգորյան

Բ մաս՝ Ալեքսանդր Յրանտի Եսայան

Գ մաս՝ Տեր Մինաս քահանա Մարտիրոսյան

Գլխավոր խմբագիր՝ Վանուիի Եղիշյան

Խմբագիրներ՝ Տեր Ղևոնդ քահանա Մայիսյան

Կարմեն Մարտիրոսյան

Զեավորումը՝ Միքայել Շահինյանի

154-րդ էջի նկարը՝ Խաչատուր Խիզանցի, Աղամի դրախտը, 1591թ.

Գրքի հրատարակությունն իրականացվել է «ԵՔԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամ» և ICCO -Global Ministries of the United Protestant Churches in The Netherlands կազմակերպությունների աջակցությամբ

This publication is made possible through the assistance of the WCC Armenia Round Table Foundation and ICCO - Global Ministries of the United Protestant Churches in The Netherlands.

## ՕՐԴՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Աստված ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրայ»: Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց: Աստված օրինեց նրանց ու ասաց. «Աճեցեք, բազմացեք, լցուք երկիրը, տիրեցեք դրան, իշխեցեք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»:

Ծննդ. 1: 26-28

Մարդ արարածը, չպահպանելով իր նախաստեղջ կերպարը, կորցրեց նաև ներդաշնակությունն իր և Արարչի միջև: Արդյունքում, իր շրջապատում ևս խարարվեց ներդաշնակությունը: Բնության մեջ կան երևույթներ, որոնք հակադարձելի են, այսինքն՝ հնարավոր է դրանք բերել իրենց սկզբնական վիճակին, բայց, ցավոք, կան երևույթներ, որոնք անշրջելի են, և գրոյին է մոտենում նրանց՝ նախնական վիճակին բերելու հավանականությունն անգամ:

Մարդու անկումը՝ հեռացումն իր նախնական վիճակից, անշրջելի էր թվում: Քրիստոնեական ընկալմանը՝ հնարավոր դարձավ անկյալ մարդուն հետ բերել մեր Տեր Յիսուս Քրիստոսի փրկագործության շնորհիվ: Մարդը գտավ իր փրկության ճանապարհը՝ ներքին վերածնունդ ապրելով, բարոյական նոր կերպար ստանալով, նորոգվելով ավետարանական պատգամներով: Եվ այսօր Եկեղեցու հիմնական առաքելությունը մարդկանց սրբության առաջնորդելն է՝ քրիստոնեական կենսածեն ու արժեհանակարգը կյանքի կոչելով:

Այսպիսով, Աստված նախանշել է մարդու փրկության ուղին. իսկ ի՞նչ կլինի այն միջավայրին, որը հանձնված է մարդուն որպես տնտեսություն՝ այս երկրային «դրախտին»:

Դամաձայն իր կոչման՝ մարդը պիտի հոգ տաներ արտաքին աշխարհի՝ իր տնտեսության մասին, մինչեւ, ցավոք, նա միշտ շահագործել ու աղարտել է այն:

Բնական է, թերմոդինամիկայի երկրորդ սկզբունքը (Էնտրոպիայի աճի օրենքը) գործում է նաև այս պարագայում, բայց դա բավական չէ՝ հիմնավորելու մարդու «անտնտես տնտեսավարությունը»: Բնությունն ինքն իրեն կարող է վերարտադրել, եթե արտաքին միջամտությունները լինեն նվազագույն: Այսօր նույն այդ բնությունը, որ կախում ունի մարդու տնտեսական անխնա գործունեությունից, կարծես սպասում է, որ մարդը, ի վերջո, ստանձնի իր պարտավորությունները և առաջնորդի իրեն դեպի փրկություն:

Մենք կարծում ենք, որ նման խնդիրներ լուծելու ճանապարհը դարձյալ նույնն է. մարդու բարոյական կերպարի վերափոխումը՝ համաձայն ավետարանական պատգամների, և քրիստոնեական վերաբերմունքի մշակումն արտաքին աշխարհի հանդեպ:

Ուրախությամբ պիտի նշենք, որ այդ նվիրական գործի մեջ արդեն ներգրավվել են ինչպես աշխարհական մասնագետ-գիտնականները, այնպես էլ՝ Եկեղեցական դասը:

Մեր օրինությունն ենք բերում մեզանում առաջին անգամ լուս տեսնող այս ձեռնարկի հեղինակներին և հրատարակչին՝ ԵՇԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամին, հուսալով, որ գիրքը կնպաստի մարդկանց կողմից մարդ-բնություն փոխհարաբերության ճիշտ՝ աստվածաշնչան ընկալմանը, և Էկոլոգիական խնդիրների լուծմանը:

Մարկոս Եպիսկոպոս Յովհաննիսյան

Առաջնորդ Գեղարքունյաց թեմի

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՄԱՍ Ա ԷԿՈԼՈԳԻԿԱ</b> .....	<b>8</b>
<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>9</b>
Հարցեր կրկնության համար .....	14
<b>ԳԼՈՒԽ 1 . ՄԻԶԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՂՆԵՐԸ ԵՎ ՕՐԳԱՆԻՉԱՄՆԵՐԻ ՎՐԱ ԴՐԱՍ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b> .....	<b>15</b>
1. Օգանիզմների գոյության միջավայրը և դայմանները .....	15
2. Սահմանափակող գործոններ .....	18
3. Օգանիզմների հարմարվելը միջավայրի դայմաններին .....	18
4. Ջրային միջավայր .....	20
5. Ցամաքաօդային միջավայր .....	21
6. Հողային միջավայր .....	22
7. Կենդանի օգանիզմները որդես կյանքի միջավայր .....	23
8. Կենսական գործոններ .....	24
9. Ջասկացություն օգանիզմների կենսաձևի մասին .....	26
10. Կենսաձևների դասակարգումը .....	26
Հարցեր կրկնության համար .....	27
<b>ԳԼՈՒԽ 2. ՊՈՊՈՒԼԱՑԻՈՆ ԷԿՈԼՈԳԻԿԱ</b> .....	<b>28</b>
11. Ջասկացություն դողուլյացիայի մասին .....	28
12. Պողուլյացիայի բնութագիրը .....	28
13. Ծնելիություն և մահացություն .....	30
14. Պողուլյացիայի սեռային կազմը .....	31
15. Պողուլյացիաների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը .....	32
16. Գիշատիչ և զոհ փոխհարաբերություն .....	33
Հարցեր կրկնության համար .....	35
<b>ԳԼՈՒԽ 3. ԿԵՆՍԱՑԵՆՈՉՆԵՐ</b> .....	<b>36</b>
17. Ջասկացություն կենսացենողի մասին .....	36
18. Կենսացենողի տեսակային կազմը .....	37
19. Կենսացենողի տարածական կառուցվածքը .....	38
21. Էկոլոգիական խորc .....	40
22. Կենսացենողի էկոլոգիական կառուցվածքը .....	42
23. Սահմանային էֆեկս .....	43

Հարցեր կրկնության համար .....	44
<b>ԳԼՈՒԽ 4. ԷԿՈԴԱՍՎԱԿԱՐԳԵՐ .....</b>	<b>45</b>
24. Էկոհամակարգերի գործունեության սկզբունքները .....	45
25. Էկոհամակարգի կառուցվածքը .....	46
26. Էներգիայի և նյութերի հոսք էկոհամակարգերում .....	47
27. Էներգիայի և նյութերի փոխանցումը էկոհամակարգերում (սննդային շղթա) .....	47
28. Էներգիայի կորուստները սննդային շղթաներում (էկոլոգիական բուրգի կանոնը) .....	48
29. Թվաքանակի և կենսագանգվածի բուրգեր .....	49
Խնդիրներ .....	50
30. Նյութերի շրջանառությունը էկոհամակարգում .....	50
31. Ազոտի շրջանառություն .....	51
33. Ծծմբի շրջանառություն .....	52
34. Ածխածնի շրջանառություն .....	53
35. Էկոհամակարգերի ինֆնազարգացումը .....	55
36. Ազրտկության դրամ առանձնահատկությունները .....	57
37. Կենսոլորտը որպես համամոլորակային էկոհամակարգ .....	58
38. Կենսոլորտի կառուցվածքը .....	59
39. Կենսոլորտի կազմավորման ընդհանուր օրինաչափությունները .....	59
Հարցեր կրկնության համար .....	61
 ՄԱՍ Բ ԲՆԱՊԱՐՊԱՆՈՒԹՅՈՒՆ .....	62
<b>ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԴՈՒ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ</b> .....	<b>63</b>
40. Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա .....	63
41. Բնակչության թվաքանակի աճը և բնական դաշտաները .....	64
Հարցեր կրկնության համար .....	66
<b>ԳԼՈՒԽ 6. ՄԹԽՈԼՈՐՏԻ ՊԱՐՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	<b>67</b>
42. Մթնոլորտի կառուցվածք .....	67
43. Մթնոլորտի աղտոտման աղբյուրները և դրա էկոլոգիական հետեւանքները .....	68
44. Մթնոլորտի աղտոտումը ջերմոցային գազերով .....	70
45. Օգնային ժերտի բայթայումը .....	72
46. Թթվային տեղումներ .....	75

47. Մքնոլորտային օդի ղահղանության ուղղված միջոցները .....	76
48. Դայասատանի Դանրադետության մքնոլորտային օդի աղտոտվածությունը .....	78
Դայասատանի Դանրադետության օդի աղտոտվածության վիճակը: .....	78
Դարցեր կրկնության համար .....	80
<b>ԳԼՈՒԽ 7. ԶՐԱՅԻՆ ՊԱՀԱՐՆԵՐԻ ՊԱՐՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	81
49. Զուրը երկրի վրա և նրա համակարգությունները .....	81
50. Զրոլորժի էկոլոգիական խնդիրները .....	83
51. Զաղցրահամ ջրի նշանակությունը եւ նրա ղահղանությունը .....	84
52. Զրային ղաւարների ղահղանությունը աղտոտումից եւ բայցայումից .....	85
53. Դայասատանի Դանրադետության ջրային ղաւարները եւ նրանց ղահղանությունը .....	86
Դարցեր կրկնության համար .....	89
<b>ԳԼՈՒԽ 8. ՀՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՐՆԵՐԻ ՊԱՐՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	90
54. Հողը, նրա կառուցվածքը եւ նշանակությունը նյութերի շքաղցույցի համար.....	90
55. Հողերի կորուսի հիմնական ղատճառները .....	92
56. Հողերի ֆիմիական աղտոտումը .....	94
57. Դայասատանի հողային ծածկույթը եւ նրա ղահղանությունը .....	97
Դարցեր կրկնության համար .....	99
<b>ԳԼՈՒԽ 9. ԿԵՆՍԱԲԱԶՄԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՊԱՆՄԱՆ ՀԻՄՈՒՆՁՆԵՐ</b> .....	100
58. Կենսաբանական բազմազանություն .....	100
59. Կենսաբազմազանության աշխարհագրություն .....	103
60. Տեսակների անհետացման ղատճառները .....	107
61. Կարմիր գրերը որպես հազվագյուտ եւ անհետացող տեսակների հաշվառման միջոց .....	109
62. Դազվագյուտ եւ անհետացող տեսակների ղահղանության ռազմավարությունը .....	113
63. Դազվագյուտ տեսակների օրենսդրական ղահղանությունը .....	117
64. Դազվագյուտ տեսակների արածանիքին ղահղանությունը .....	118
65. Դայասատանի Դանրադետության արգելոցները .....	121
66. Դայասատանի Դանրադետության ազգային ղարկեր .....	126
67. Դայասատանի Դանրադետության արգելավայրերը .....	130
68. Անտառը որպես մոլորակի կարեւորագույն բուսական ղաւար .....	133
Դարցեր կրկնության համար .....	139
<b>ԳԼՈՒԽ 10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՍԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	140
69. Մարդու առողջության էկոլոգիական ասդեկտները .....	140

<b>70. Միջավայրի իմիական աղտոտումը</b>	<b>140</b>
<b>71. Միջավայրի կենսաբանական աղտոտումը</b>	<b>142</b>
<b>72. Միջավայրի աղտոտումն աղմուկով</b>	<b>143</b>
<b>73. Աննդամթերթերի աղտոտումը</b>	<b>144</b>
<b>74. Լանդշաֆտը որպես առողջության գործոն</b>	<b>145</b>
<b>Դարցեր կրկնության համար</b>	<b>147</b>
<b>Բացատրական բառարան</b>	<b>148</b>

## **ՄԱՍ Գ ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԱՐԴ-ԲՆՈՒԹՅՈՒՆ**

<b>ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ</b>	<b>154</b>
<b>ՆԱԽԱԲԱՆ</b>	<b>155</b>
<b>ԳԼՈՒԽ 11. ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ</b>	<b>159</b>
<b>75. Աշխարհի արարումը</b>	<b>159</b>
<b>76. Մարդու արարումը</b>	<b>160</b>
<b>ԳԼՈՒԽ 12. ՆԱԽԱԽՆԱՎՈՒԹՅՈՒՆ</b>	<b>164</b>
<b>77. Ասծու ընդհանուր նախախնամությունն աշխարհի մասին</b>	<b>164</b>
<b>78. Ասծու նախախնամությունը մարդու մասին մինչև նրա անկումը</b>	<b>166</b>
<b>ԳԼՈՒԽ 13. ՄԱՐԴՈՒ ԿՈՉՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԱՆԿՈՒՄԸ</b>	<b>168</b>
<b>79. Մարդու կոչումը</b>	<b>168</b>
<b>80. Մարդու անկումը</b>	<b>172</b>
<b>ԳԼՈՒԽ 14. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՋԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ</b>	<b>177</b>
<b>81. Էկոլոգիական ճգնաժամը և քիմսոնեությունը</b>	<b>177</b>
<b>82. Ասվածառունչը և Եկեղեցին բնության մասին</b>	<b>182</b>
<b>83. Մարդ-բնություն փոխհարաբերությունն ըստ Դայ Եկեղեցու ծխակարգի</b>	<b>187</b>
<b>84. Աղաւարություն</b>	<b>195</b>
<b>85. Պահը որպես մարդու և բնության նորոգման միջոց</b>	<b>197</b>
<b>86. Տիեզերական հաւաքություն</b>	<b>200</b>
<b>ԱՄՓՈՓՈՒՄ</b>	<b>207</b>
<b>SUMMARY</b>	<b>209</b>
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>211</b>

Ա



ՄԱՍ Ա ԵԿՈԼՈԳԻԱ

## ՆԵՐԱԾՈՒՅԹՈՒՆ

Էկոլոգիայի համառոտ դասմություն: Էկոլոգիա բառը առաջացել է հունարեն օյկոս, որը նշանակում է տուն կան կացարան, և լոգոս՝ գիտություն բառերից և բառացի թարգմանությամբ նշանակում է գիտություն բնական տան մասին: Էկոլոգիա տերմինն առաջին անգամ 1866թ. առաջարկել է գերմանացի կենդանաբան Է. Շեկելը: Նա այդ գիտությանը տվել է հետևյալ սահմանումը. «Էկոլոգիան գիտություն է օրգանիզմների և միջավայրի պայմանների միջև գոյություն ունեցող փոխազդեցությունների մասին»: Շեկելը միջավայրի պայմանները բաժանել է երկու բաղադրիչների՝ անօրգանական և օրգանական: Գոյության անօրգանական պայմաններ են հանդիսանում բնակատեղի ֆիզիկական և քիմիական առանձնահատկությունները՝ հանքային սնուցումը, ջրի կազմությունը, հողի հատկությունները և այլն: Գոյության օրգանական պայմանները ձևավորվում են օրգանիզմների փոխհարաբերությունների արդյունքում:

Էկոլոգիա տերմինն առաջին անգամ օգտագործվել է այն ժամանակ, երբ խոսքը գնում էր բուսական և կենդանական համակեցությունների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների մասին, համակեցություններ, որոնք ներկայացնում են կայուն և կազմակերպված համակարգեր և ձևավորվել են օրգանական աշխարհի և շրջակա միջավայրի փոխազդեցության գործընթացի երկարատև զարգացման ընթացքում:

Շեկելը էկոլոգիան դասել է կենսաբանական գիտությունների շարքին:

Էկոլոգիա առարկայի այդպիսի ձևակերպումը լայն տարածում է գտել և օգտագործվում է բազմաթիվ գիտնականների կողմից: Սակայն Շեկելի օրոք և էկոլոգիայի հետագա զարգացման ընթացքում այդ գիտության առարկայի և կարգավիճակի վերաբերյալ կենսաբանների միջև ընթացել են թեժ վեճեր: Մինչև այժմ բացակայում է էկոլոգիա առարկայի բոլորի կողմից ընդունված համընդիանուր սահմանումը: Այդ պատճառով, ելնելով հետազոտման առարկայից, էկոլոգիան՝ որպես առանձին գիտություն, սահմանվել է տարբեր կերպ.



Էռնեստ Շեկել  
(1834 - 1919)


1. Էկոլոգիան կենսաբանության մի ճյուղն է (կենսաէկոլոգիա), որն ուսումնասիրում է օրգանիզմների (առանձնյակ, պոպուլյացիա, կենսացենոզ և այլն) միմյանց և միջավայրի գործունների հետ փոխադարձ կապերը: Այս դեպքում էկոլոգիան իր մեջ ընդգրկում է



Ալեքսանդր Շումբոլդտ  
(1769 - 1858)



Կարլ Ռուլյե  
(1814 - 1858)



Ժան Բատիստ Լամարկ  
(1744 - 1829)

առանձնյակների էկոլոգիա (առևտուկոլոգիա), պոպուլյացիաների էկոլոգիա (դեմէկոլոգիա), համակեցությունների էկոլոգիա (սինէկոլոգիա) ենթաբաժինները:

2. Էկոլոգիան գիտություն է, որը կյանքի կազմավորման տարբեր մակարդակներում ուսումնասիրում է էկոհամակարգերի գործունեության լնդիանուր օրինաչափությունները և օրենքները:
3. Էկոլոգիան փոխազդեցությունների գիտական ճանչողություն է:
4. Էկոլոգիան գիտություն է, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների՝ ներառյալ մարդու կենսամիջավայրը:
5. Էկոլոգիան գիտություն է, որն ուսումնասիրում է մարդու (որպես տեսակ) և հասարակության դիրքը կենսուլորտում (էկոսֆերայում), նրա կապը էկոլոգիական համակարգերի հետ և նրանց փոխազդեցության բնույթը և չափերը:
6. Էկոլոգիան գիտություն է, որը մշակում է միջոցառումների ծրագրեր բնական պաշարների պահպանության և արդյունավետ օգտագործման բնագավառում և կանխագուշակում է կենսուլորտի վրա մարդու տնտեսական գործունեության հետևանքով առաջացած համամոլորակային փոփոխությունները: Էկոլոգիայի զարգացման սկզբնական ժամանակաշրջանը բնութագրվում է նրանով, որ բնական երևույթների ուսումնասիրման ընթացքում զարգացվում է էկոլոգիական մոտեցման տեսակետը:

Էկոլոգիայի զարգացման երկրորդ էտապը բնորոշվում է բուսաբանական-աշխարհագրական լայնամասշտաբ ուսումնասիրություններով: Այդ գործում մեծ ավանդ են ներդրել գերմանացի փորձագետ Ա. Շումբոլդտը և ռուս կենսաբան Կ. Ռուլյեն, ովքեր բնությունը դիտում են որպես մեկ միասնական համակարգ, իսկ կենսուլորտը՝ համամոլորակային էկոհամակարգ: Ռուլյեն կենդանիների էկոլոգիական ուսումնասիրությունների համար մշակել է լայն համակարգ: Նրա գիտական աշխատանքները նշանակալի ազդեցություն են թողել իր աշակերտների՝ Սևերովի և Բեկետովի ուսումնասիրությունների ուղղվածության և բնույթի վրա: Այնուամենայնիվ, XIX դարի սկզբներին գիտնականները վերլուծել են օրգանիզմների և միջավայրի օրինաչափությունները, օրգանիզմների միջև գոյություն ունեցող փոփոխաբերությունները, հարմարվածության և հարմարվողականության երևույթը:

Սակայն այդ խնդիրների լուծման և էկոլոգիայի հետագա զարգացման վրա մեծ ազդեցություն է բողել 19-րդ դարի կեսերին ընդհանուր կենսաբանության զարգացումը: Այդ ժամանակաշրջանում բացահայտվել է, որ բնության մեջ գոյության կրկվը հանգեցնում է բնական ընտրության և հանդիսանում է զարգացման շարժիչ ուժը: Կենսաբանության բնագավառում այս զարգացումները էկոլոգիայի պատմության մեջ բացեցին զարգացման 3-րդ էտապը: Այդ էտապում էկոլոգիան անջատվեց այլ գիտություններից:

19-րդ դարի վերջերին ֆրանսիացի գիտնական Ժ. Ռեկյան, ապա՝ ակստրիացի հետազոտող Ջյուսսը արդեն օգտագործում էին «կենսոլորտ» հասկացությունը: Կենսոլորտ տերմինն առաջին անգամ օգտագործել է Լամարկը: Իսկ ուսմունքը ստեղծել է Վերնադսկին՝ նոր գիտության՝ կենսաերկրաբիմիայի հիմնադիրը: Էկոլոգիայի տեսական հիմունքների մշակման գործում մեծ ավանդ են ներդրել գերմանացի հիդրոկենսաբան Կ. Մերիուսը, ամերիկացի օվկիանոսագետ Ս. Ֆորսը, ռուս հողագետ Վ. Դոկուչաևը, բնագետ Ա. Սիլամտևը, Լ. Ռամենսկիյը և ուրիշներ:

Էկոլոգիայի զարգացման պատմության 4-րդ էտապում՝ XX դարի 30-ական թթ., կենսաերկրացենոգների սահմանների և կառուցվածքի, կայունության աստիճանի, այդ համակարգերի ինքնավերականգննան հնարավորությունների վերաբերյալ որոշակիացվեցին հիմնական տեսական պատկերացումները: 1934թ. Գառլագեն առաջարկեց իր մրցակցային բացառման սկզբունքը՝ ցույց տալով, որ տրոֆիկ կապերը հանդիսանում են համակեցություններում էներգիայի հոսքի հիմնական ուղիները:

1935թ. Ա. Թենսլին առաջարկեց «Էկոհամակարգ» հասկացությունը: Ըստ Թենսլիի՝ էկոհամակարգը ժամանակային և տարածքային առումով սահմանափակ բնական համակարգ է, որը ձևավորվում է իրար հետ նյութերի և էներգիայի փոխանակությամբ կապված կենդանի օրգանիզմների և դրանց գոյության միջավայրի կողմից:


1942թ. Վ. Սուկաչյանը հիմնավորեց կենսաերկրացենոգների մասին պատկերացումները: Նույն թվականին ամերիկացի գիտնական Լինդենանը մշակեց էկոհամակարգերում էներգետիկական հաշվեկշռի որոշման մեթոդները: Այդ ժամանակից սկսած՝ հնարավոր դարձավ կոմկրետ պայմաններում որոշել պոպուլյացիանների և կենսաերկրացենոգների արդյունավետության սահմանները:



Արթուր Թենսլի  
(1866 - 1847)



Վարդինիր Սուկաչյան  
(1880 - 1967)



Վարդինիր Վերնադսկի  
(1863 - 1945)

Եվ վերջապես էկոլոգիական վերլուծության զարգացումը ռուս գիտնական Վերնադսկուն հնարավորություն տվեց ստեղծել կենսոլորտի մասին իր ուսմունքը: Այդ ուսմունքի արդյունքում կենսոլորտը ներկայացվեց որպես համառորակային էկոհամակարգ, որի հաստատունությունը և գործունեությունը հիմնված են նյութերի և էներգիայի հաշվեկշիռի պահպանման էկոլոգիական օրենքների վրա:

20-րդ դարի վերջերին տեղի ունեցավ գիտությունների էկոլոգիացում: Դա պայմանավորված էր նրանով, որ գիտակցվեց էկոլոգիական գիտելիքների հսկայական նշանակությունը, որ մարդկությունը բնության վրա ոչ միայն ազդում է, այլև այդ ազդեցությունը խիստ բացասական է: Կենսոլորտի երկարատև զարգացման ընթացքում կենդանի օրգանիզմներն իրենց գործունեության արդյունքում ստեղծել են նպաստավոր պայմաններ մարդու բնականոն կենսագործունեության համար, իսկ մարդն իր գործունեության արդյունքում ստեղծում է պայմաններ, որոնք սպառնում են կենդանի օրգանիզմների և հենց մարդկության գոյությանը Երկիր մոլորակի վրա:

**Էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը:** Ժամանակակից էկոլոգիան երեք հորիզոնական շերտերից կազմված, եռամակարդակ կառուցվածք է: Առաջին մակարդակի մեջ են մտնում առանձնյակները, երկրորդ մակարդակի մեջ՝ պոպուլյացիաները և համակեցությունները, իսկ երրորդ մակարդակն զբաղեցնում են էկոհամակարգերը: Այսպիսով, ժամանակակից էկոլոգիայի օբյեկտ են հանդիսանում առանձին օրգանիզմները (առանձնյակներ), պոպուլյացիաները (մեկ տեսակի առանձնյակների խումբ) և կենսացենոզները (կենսաբանական տեսակների տարրեր պոպուլյացիաների ամբողջություն): Սակայն էկոհամակարգերի ուսումնասիրությունը հանդիսանում է էկոլոգիայի հիմնական բաժինը՝ ուսումնասիրության օբյեկտը: Ըստ կենսաբանական համակարգերի կազմավորման մակարդակների՝ ժամանակակից էկոլոգիայում տարբերում են երեք հիմնական ուղղություն՝ առևտուկոլոգիա, դեմկոլոգիա և սինէկոլոգիա: Յաճախ այդ ուղղություններին ավելացնում են էկոհամակարգերի և կենսոլորտի գործունեության մասին ուսմունքները: Այդ ուղղությունները կազմում են ընդհանուր էկոլոգիան:

Ըստ ուսումնասիրության օբյեկտի հանդեպ ունեցած վերաբերմունքի՝ էկոլոգիան ստորաբաժնում են միկրոօրգանիզմների (պրոկարիոտներ), սնկերի, բույսերի, կենդանիների, մարդու, գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդհանուր (որը տեսականորեն ընդհանրացնում է առարկան) ենթաբաժինների: Էկոլոգիայի այս ուղղությունը կոչվում է մասնավոր (հատուկ) էկոլոգիա, որն զբաղվում է կոնկրետ օրգանիզմների կամ համակեցությունների էկոլոգիական տեսակետների ուսումնասիրությամբ: Մասնավոր էկոլոգիան ներառում է նաև կիրառական էկոլոգիան: Այն ուսումնասիրում է մարդու առողջության և ընդհանրապես բնության վրա մարդաժին գործոնի անցանկալի ազդեցությունը կանխելու միջոցառումների հետևանքները: Այդ խնդրի լուծումը միայն կենսաբանության ձեռքբերումներով հնարավոր չէ: Այդ նպատակի համար ներկայումս օգտագործվում են քիմիայի, ֆիզիկայի, ծեռքբերումները և ինժեներական գիտելիքները: Ըստ միջավայրի և բաղադրամասերի տարբերակվումնեն՝ ցամաքի, քաղցրահամ ջրամբարների, ծովերի, Յեռավոր Յոյսիսի, բարձրլեռնային, քիմիական (երկրաքիմիական և կենսաերկրաքիմիական) էկոլոգիայի ուղղությունները: Ըստ առարկայի հանդեպ դրսևորվող մոտեցման էկոլոգիան լինում է վերլուծական և շարժնթացային (դինամիկ), ժամանակային գործոնի առունու՞ պատմական և զարգացման:

Մարդու էկոլոգիան կամ սոցիալական էկոլոգիան ուսումնասիրում է հասարակության և շրջակա միջավայրի փոխազդեցության օրինաչփությունները և նրա պահպանության գործնական հիմնահարցերը: Պետք է նշել, որ մարդու էկոլոգիայի և սոցիալական էկոլոգիայի միջև գոյություն ունեն տարբերություններ: Հիմնական տարբերությունն այն է, որ սոցիալական էկոլոգիան չի ընդգրկում մարդու կենսաբանական կողմը: Շատ հաճախ թյուրիմացաբար «Էկոլոգիա» և «բնապահպանական գործունեություն» հասկացությունները ներկայացվում են առանց տարբերակնան: Բնության պահպանությունը ներկա և մարդկության ապագա սերունդների շահերին համապատասխան երկիր մոլորակի և նրան սահմանակից տիեզերական տարածության պահպաննան, ռացիոնալ օգտագործման և վերականգնման համար մշակվող միջազգային, պետական, տարածքային, տեղային վարչատնտեսական, տեխնոլոգիական, քաղաքական, իրավաբանական և հասարակական միջոցառումների ամբողջությունն է: Շրջակա միջավայրի պահպանությունն իր ուշադրությունը կենտրոնացնում է մարդու շրջակա միջավայրի և մարդու պահանջնունքների վրա: Դա բնական համակարգերի գործունեությունը ապահովելուն նպատակաւողված միջոցառումների (միջազգային, պետական, վարչատնտեսական, հասարակական և այլն) ամբողջությունն է, որն անհրաժեշտ է մարդու առողջությունը և բարեկեցությունը պահպանելու համար:

Այսպիսով, «Էկոլոգիա», «բնության պահպանություն» և «շրջակա միջավայր» հասկացություններն առանց համապատասխան տարբերակնան ներկայացնելը ճիշտ չէ, քանի որ էկոլոգիան՝ որպես օրգանիզմների և նրանց գոյության միջավայրի փոխազդեցությունների մասին հիմնարար գիտություն, ունի ավելի լայն ընդգրկում, քան բնական միջավայրի պահպանության մասին ուսմունքը: Բնության և շրջակա միջավայրի պահպանությունն էկոլոգիայի կիրառության ոլորտներն են, որոնց զարգացման համար հիմք են համարվում էկոլոգիայի տեսական գիտելիքները:

## Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ է ուսումնասիրում էկոլոգիան:
2. Տվե՛ք էկոլոգիայի սահմանումը:
3. Ո՞րն է էկոլոգիայի ուսումնասիրության առարկան և օբյեկտը:
4. Համառոտ բնութագրե՛ք էկոլոգիայի զարգացման փուլերը:
5. Ո՞ր գիտնականները մեծ ավանդ ունեն էկոլոգիայի զարգացման գործում:
6. Թվարկե՛ք ժամանակակից էկոլոգիայի հիմնական բաժիններն ու ուղղությունները:
7. Ինչպիսի՞ կառուցվածք ունի էկոլոգիան:
8. Ինչո՞ւ է անհրաժեշտ ուսումնասիրել էկոլոգիան:

## ԳԼՈՒԽ 1 . ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՎՐԱ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 1. Օրգանիզմների գոյության միջավայրը և դայմանները

Միջավայրը բնության մի մասն է, օրգանիզմների շրջակա միջավայրը, որը նրանց վրա թողնում է ուղղակի կամ անուղղակի (միջնորդավորված) ազդեցություն: Միջավայրից կենդանի օրգանիզմները վերցնում են իրենց գոյության համար անհրաժեշտ տարրերը և նյութերը՝ միջավայրին տալով նյութափոխանակության արգասիքները: Ցանկացած միջավայր անօրգանական և օրգանական նյութերի ամբողջություն է: Որոշ նյութեր և առանձին տարրեր օրգանիզմի համար խիստ անհրաժեշտ են, որոշ նյութեր ունեն բացասական ազդեցություն, իսկ մյուսների հանդեպ օրգանիզմներն անտարբեր են:

Կյանքի պայմանները կամ գոյության պայմանները միջավայրում օրգանիզմների համար անհրաժեշտ տարրերի և նյութերի ամբողջությունն են, որոնց հետ նրանք գտնվում են սերտ կապի մեջ և առանց դրանց գոյություն ունենալ չեն կարող: Օրգանիզմներն ընդունակ են հարմարվելու միջավայրի այն պայմաններին, որոնցում նրանք գոյատևում են: Ցարմարվողականությունը կյանքի գոյության հիմնական պայմաններից մեկն է: Այն օրգանիզմներին հնարավորություն է տալիս գոյատևել և վերարտադրվել կոնկրետ պայմանների առկայության դեպքում: Ցարմարվողականությունը բնորոշ է կյանքի բոլոր մակարդակներին:

Միջավայրի ցանկացած դայման, որի հանրեղ օրգանիզմները ցուցաբերում են հարմարվողական ռեակցիա, կոչվում է էկոլոգիական գործոն:

Կան բնույթով տարբեր երեք խումբ էկոլոգիական գործոններ՝ ոչ կենսական (արիոտիկ), կենսական (քիոտիկ) և մարդածին (անթրոպոգեն): Էկոլոգիական գործոնի ազդեցությունը հիմնականում որոշվում է նյութափոխանակության վրա նրա ունեցած ազդեցությամբ: Այդ տեսանկյունից, ըստ իրենց ազդեցության, էկոլոգիական գործոնները լինում են ուղղակի և անուղղակի ազդեցության:

Արիոտիկ գործոնները անկենդան բնության բոլոր բաղադրամասերն են՝ լույսը, ջերմաստիճանը, խոնավությունը, ջրի, հողի, մթնոլորտի քիմիական բաղադրությունը, ճառագայթնան ֆոնը և այլն:


Քիոտիկ գործոնները կենդանի օրգանիզմների՝ միմյանց վրա ազդեցության բոլոր հնարավոր ձևերն են: Դա կենդանի օրգանիզմների ամբողջությունն է, որն իր կենսագործունեությամբ ազդում է այլ օրգանիզմների վրա:

Չնայած երկու վրա կյանքի պայմանները բազմազան են, այնուամենայնիվ, կարելի է տարանջատել իրենց հատկանիշներով և հատկություններով տարբերվող միջավայրերի չորս խումբ՝

1. ջրային
2. ցամաքաօդային
3. հողային
4. օրգանիզմային, երբ օրգանիզմը միջավայր է հանդիսանում այլ օրգանիզմների համար:

Առաջին երեքը համարվում են ոչ կենսական, իսկ վերջինը՝ կենսական միջավայր:

Օրգանիզմները կարող են գոյություն ունենալ մեկ կամ մի քանի միջավայրերում: Օրինակ՝ ձկները, կետերը, դելֆինները ապրում են միայն ջրում: Մարդը, թռչունների մեծ մասը, կաթնասունները, մերկասերն և ծածկասերն բույսերն ապրում են ցանաքաօդային միջավայրում: Շատ միջատներ և երկենցաղներ իրենց կյանքն սկսում են մի, շարունակում՝ այլ միջավայրում: Մարդածին գոր-



Նկ. 1. Եկոլոգիական գործոնի ազդեցության կախվածությունը նրա ուժգնությունից

օր-գանիզմների կենսագործունեության համար համար համարվում է առավել բարենպատ, կոչվում է օղտիմալ, իսկ առավել վաշ՝ դեսիմալ (որի դեմքում օրգանիզմների կենսագործունեությունը առավելագույն ճնշվում է, սակայն նրանք դեռևս կարող են գոյատել):

Եկոլոգիական գործոնի սահմանը (նվազագույնից՝ առավելագույնը), որի դեպքում հնարավոր է օրգանիզմի աճ, կոչվում է կայունության կամ դիմացկունության սահման: Բարենպատ (օղտիմալ) գոտուց դեպի դիմացկունության ծայրագույն կետերը (սահմանները) տվյալ եկոլոգիական գործոնի հանդեպ բարձրանում է օրգանիզմների լարվածության աստիճանը, և առաջանում են լարվածության կամ ճնշման գոտիներ: Դիմացկունության սահմաններից դուրս օրգանիզմները մահանում են (Նկ. 1):


Այստեղից կարելի է պնդել, որ միջավայրի յուրանքանչյուր եկոլոգիական գործոնի հանդեպ բույսերի և կենդանիների ցանկացած տեսակի համար գոյություն ունեն բարենպատ և լարվածության գոտիներ ու կայունության կամ դիմացկունության սահմաններ:

Եկոլոգիական գործոնի այս կամ այն սահմանի հանդեմ օրգանիզմների հարմարվելու ընդունակությունը կոչվում է եկոլոգիական առաձգականություն կամ եկոլոգիական վալենտականություն:

Ինչքան լայն են տվյալ տեսակի հնարավոր գոյության համար անհրաժեշտ եկոլոգիական գործոնի տատանման սահմանները, այնքան բարձր է նրա եկոլոգիական առաձգականությունը: Տեսակները, որոնք

ծոնը մարդու գործունեության այն ձևն է, որն ազդում է միջավայրի վրա, փոխում է կենդանի օրգանիզմների ապրելու պայմանները կամ անմիջական ազդեցություն թողնում նրանց վրա: Յանկացածէկոլոգիականգործնբնութագրվում է որոշակի քանակական բնութագրերով՝ ուժով և ազդեցության սահմաններով: Եկոլոգիական գործոնները անսահման բազմազան են, և յուրաքանչյուր տեսակ նրանց ազդեցությանը պատասխանում է յուրովի: Սակայն գոյություն ունեն օրինաչափություններ, որոնք ընդհանուր են բոլոր կենդանի օրգանիզմների համար: Դրանցից կարևորն օպտիմումի օրենքն է: յուրաքանչյուր էկոլոգիական գործոն կենդանի օրգանիզմների վրա ունի դրական (բարենպատ) ազդեցության որոշակի սահմաններ:

Եկոլոգիական գործոնի ուժգնությունը, որն օրգանիզմի աճ, կոչվում է կայունության կամ դիմացկունության սահման: Բարենպատ (օղտիմալ) գոտուց դեպի դիմացկունության ծայրագույն կետերը (սահմանները) տվյալ եկոլոգիական գործոնի հանդեպ բարձրանում է օրգանիզմների լարվածության աստիճանը, և առաջանում են լարվածության կամ ճնշման գոտիներ: Դիմացկունության սահմաններից դուրս օրգանիզմները մահանում են (Նկ. 1):



Նկ.2. Տեսակների եկոլոգիական առաձգականությունը (Օդում, 1975)

## »» 1. Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները

կարող են գոյություն ունենալ գործոնի աննշան տատանումների սահմաններում, կոչվում են նեղ մասնագիտացված, իսկ որոնք դիմանում են գործոնի նկատելի տատանումներին՝ լայն մասնագիտացված: Օրինակ՝ նեղ մասնագիտացում ունեն այն տեսակները, որոնք ապրում են միայն քաղցրահամ կամ միայն հանգանացման բարձր աստիճան ունեցող ջրերում: Լայն մասնագիտացում ունեն այն տեսակները, որոնք միաժամանակ կարող են նորմալ կենսագործել ինչպես քաղցրահամ, այնպես էլ աղի ջրերում: Էկոլոգիապես դիմացկուն տեսակներն անվանվում են էվրիբրինտներ (eyros-լայն), թույլ դիմացկուն տեսակները՝ ստենոբիոնտներ (stenos-նեղ) (նկ. 2):

Այն տեսակները, որոնք երկար ժամանակ զարգանում են համեմատաբար անփոփոխ (կայուն) պայմաններում, կորցնում են իրենց էկոլոգիական առաձգականությունը և մշակում են ստենոբիոնտության հատկանիշներ: Եթե նույն տեսակը զարգանում է գործոնների տատանումների լայն սահմաններում, ապա ձեռք է բերում էվրիբրինտության հատկանիշներ և փոխարկվում էվրիբրինտ տեսակի:


Էվրիբրինտությունը նպաստում է տեսակների լայն տարածմանը: Ստենոբիոնտությունը սովորաբար սահմանափակում է տեսակի տարածման արեալը: Նույն տեսակը մեկ էկոլոգիական գործոնի հանդեպ կարող է լինել էվրիբրինտ, մեկ այլ գործոնի հանդեպ՝ ստենոբիոնտ:

Օրգանիզմները մի գործոնի հանդեպ կարող են ունենալ դիմացկունության լայն, մեկ այլ գործոնի հանդեպ՝ նեղ սահման: Օրինակ՝ բույսերը կարող են ցուցաբերել դիմացկունություն ջերմաստիճանի մեջ տատանումների նկատմամբ, սակայն խիստ զգայուն լինել խոնավության պակասի հանդեպ:

Միջավայրի բոլոր գործոնները փոխկապակցված են, և չկա մի գործոն, որի հանդեպ օրգանիզմը ցուցաբերի բացարձակ անտարբերություն:

Պոպուլյացիաները և տեսակներն ընդհանրապես գործումների հանդեպ ցուցաբերում են վերաբերումներ և տարրեր կերպ են արձագանքում դրանց ազդեցությանը: Այդպիսի ընտրողականությունը պայմանավորում է նաև օրգանիզմների կողմից բնակության համար այս կամ այն տարածքի ընտրությունը:

Հողային պայմանների, լուսի, ջերմաստիճանի, խոնավության և այլ գործումների հանդեպ օրգանիզմների տարրեր տեսակներ ներկայացնում են տարրեր պահանջներ: Այդ պատճառով տարրեր կլիմայական գոտիների տարրեր հողատիպեր բնակեցվում են բույսերի տարրեր տեսակներով: Մյուս կողմից բուսական համակեցություններում կենդանիների համար ստեղծվում են տարրեր պայմաններ: Հարմարվելով միջավայրի ոչ կենսական գործումներին և կենսական փոխարժեցության մեջ մտնելով իրար հետ՝ բույսերը, կենդանիները և միկրոօրգանիզմները վերաբաշխվում են տարրեր միջավայրերում, և ստեղծվում է կենսոլորտում միավորված էկոհամակարգերի բազմազանություն: Հետևաբար օրգանիզմները և նրանցից ձևավորված պոպուլյացիաները միջավայրի յուրաքանչյուր գործոնի հարմարվում են հարաբերականորեն անկախ ճանապարհով: Արդյունքում ստացվում է այնպես, որ էկոլոգիական գործումների հանդեպ պոպուլյացիաները և նրանցից կազմված տեսակները ձեռք են բերում ոչ միատեսակ էկոլոգիական վալենտականություն: Յուրաքանչյուր տեսակ ունի յուրահատուկ էկոլոգիական վալենտականություն՝ միջավայրի գործումների հանդեպ էկոլոգիական վալենտականության հանրագումար:



Յուստոս Լիբիխ  
(1803 - 1873)

## 2. Սահմանափակող գործոններ

Առանձին գործոնների հանդեպ տեսակների հարմարվողականությունը տարբեր է: Մի գործոնի հանդեպ տեսակը կարող է օժտված լինել նեղ, մյուսի նկատմամաբ՝ լայն հարմարվողականությամբ:

Օրգանիզմի դիմացկունության լավագույն պայմանների սահմանները մեկ գործոնի նկատմամբ կախված են մյուս գործոնների մակարդակից: Օրինակ՝ սննդի բավարար լինելու դեպքում մեծանում է օրգանիզմների դիմացկունությունը եղանակային պայմանների փոփոխությունների նկատմամբ, օպտիմալ ջերմաստիճանի դեպքում բարձրանում է դիմացկունությունը սննդի և խոնավության պակասի նկատմամբ: Սակայն պետք է իմա-նալ, որ այդպիսի փոփոխությունը սահմանափակ է: Կյանքի համար անհրաժեշտ գործոններից ոչ մեկը չի կարող մյուսով փոխարինվել:

Վել: Մեկ գործոնը կարող է միայն թուլացնել կամ ուժեղացնել մյուս գործոնի ազդեցության ուժը: Առաջին անգամ սահմանափակող գործոնի նշանակությանը ուշադրություն է դարձրել գերմանացի ագրոքիմիկոս Յուլ. Լիբիխը (1840թ.): Նա սահմանել է մինիմումի օրենքը. բույսերի բերքը՝ արդյունավետությունը, կախված է այն գործոնից, որն ունի նվազագույն մեծություն: Օրինակ՝ եթե հողում սննդատարրերը բավարար քանակությամբ են և կազմում են հավասարակշռված համակարգ և միայն ֆոսֆորի պարունակությունը գտնվում է նրա լավագույն մեծությունից շատ ցածր, ապա բույսերի կենսագործունեությունը խիստ ճնշվում է: Ճետագայում հաստատվել է, որ հողում հանքային տարրերի շատ բարձր պարունակությունը ևս ճնշում է բույսերի կենսագործունեությունը:

Սահմանափակող գործոնի օրենքը դմում է, որ առավել նշանակալի է այն գործոնի ազդեցության ուժը, որը բոլորից ավելի շատ է սեղվում օրգանիզմի համար բարենպաս (օտքիմալ) արժեքներից:

Օրինակ՝ բազմաթիվ կենդանիների և բույսերի տարածումը դեպի հյուսիս սովորաբար սահմանափակվում է ջերմության պակասով, մինչդեռ հարավում նույն տեսակների համար սահմանափակող գործոն կարող է լինել խոնավության կամ անհրաժեշտ սննդի պակասը: Իրենց կյանքի տարրեր փուլերում օրգանիզմները հանդիպում են կենսագործունեությունը սահմանափակող բազմազան գործոնների:

Գյուղատնտեսության պրակտիկայում անընդմեջ հանդիպում ենք սահմանափակող գործոնների: Օրինակ՝ մշակաբույսերի աճն ու զարգացումը սահմանափակվում են կամ կրիտիկական ջերմաստիճանով, կամ խոնավության պակասով և ավելցուկով, երբեմն էլ բնական աղետներով՝ կարկուտներ, փոթորիկներ, հրդեհներ և այլն:

## 3. Օրգանիզմների հարմարվելը միջավայրի դայմաններին

Օրգանիզմների հարմարումը միջավայրի պայմաններին կոչվում է հարմարվողականություն (ադապտացիա): Եկուոգիական տեսանկյունից բնության մեջ օրգանիզմների գոյությունը, բազմազանությունը, փոփոխականությունը և կայունությունը միջավայրի գործոնների ազդեցության և հարմարվողականության արդյունք են: Բնության մեջ հարմարվողականությունը զարգանում է երեք հիմնական գործոնների ազդեցությամբ՝ բնական ընտրություն, ժառանգականություն և փոփոխականություն: Ժառատառուն միջավայրին տեսակի հարմարվողա-

### »» 3. Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին

կանությունը հանդիսանում է նրա երկարաժամկետ և կայուն գոյության նախապայման: Հարմարվողականության կենսաբանական իմաստն այն է, որ պոպուլյացիայի առանձնյակները պետք է գոյատևեն անբարենպաստ պայմաններում և վերարտադրվեն: Այդ առումով զարգացման ընթացքում տեսակների մոտ մշակվել են բազմաթիվ միջոցներ: Օրինակ՝ ծմեռային ցրտերի նախաշեմին որոշ կենդանիների մոտ առաջանում է խիտ և տաք մազածածկույթ, փոխվում է դրա գույնը, մյուսների մոտ առաջանում է ենթամշկային ճարպի հաստ շերտ, երրորդները մտնում են ծմեռային քուն և այլն: Միջավայրի պայմաններին հարմարվելու համար օրգանիզմների բոլոր տեսակների մեջ մշակվել են բազմաթիվ միջոցներ (հարմարանքներ): Հարմարվողականության ընդունակությունը հանդիսանում է կենդանի նյութի հիմնական հատկություններից մեկը:

Բերգմանի եղանակային կանոնը (1847թ.) ասում է, որ տեսակի սահմաններում կամ մոտ տեսակների միատարր խմբերում մարմնի խոռոր չափեր ունեցող կենդանիները զբաղեցնում են իրենց տարածի առավել ցուց մարզերը: Այդ կանոնը արտացոլում է կենդանիների հարմարվողականությունը, մասնավորապես տարբեր եղանակային դայմաններում մարմնի կայուն ջերմասիճան դահլյաններու ընդունակությունը: Հարավում բնակվում են այդ տեսակների ավելի փոքր ենթատեսակները: Օրինակ՝ Արկտիկայի սպիտակ արջը կշռում է մինչև 1000 կգ, Այսակայի գորշ արջը՝ 700 կգ, իսկ մալայան արջը՝ մինչև 70 կգ: Անտարկտիդայի խոշոր թագավորական պինգվինը ունի մինչև 120 սմ, իսկ հասարակածային գալապագույան պինգվինը՝ մինչև 40 սմ հասակ (նկ. 3):

Ըս Ալենի կանոնի (1877թ.)՝ ցուց դայմաններում աղրող տարայուն կենդանիների վերջույթները կարծ են, իսկ մարմինը՝ ավելի փոքր և հավաք: Օրինակ՝ դեպի հյուսիս կարճանում է աղվեսների տարբեր տեսակների ականջների երկարությունը (նկ. 4):

Նույն ուղղությամբ թոշունների թևերը դառնում են ավելի սուր, կաթնասունների բուրդը՝ երկար, աղվամազերը՝ խիտ և այլն: Այս ամենի հետ միասին կան նաև բացառություններ:

Ըս Գլոգերի կանոնի (1833թ.)՝ ավելի խոնավ և սառը դայմաններում աղրող կենդանիներն ունեն մարմնի ավելի մուգ գունավորում (դիգմենտացիա): Օրինակ՝ Գրենլանդիայի սառուցների վրա ապ-րող սև ագռավը ավելի մուգ գույն ունի, քան Սահարայի անապատներում ապրող սև ագռավը, որի փետուրները ծեռք են բերել դարչնագույն գունավորում: Որպես կանոն հարավային թոշուններն ունեն վառ և բազմազան գունավորում:

Հարմարվողականության օրինակ է նաև այն, որ անբարենպաստ պայմանների դեպքում կենդանիները նվազեցնում կամ դադարեցնում են իրենց նյութափոխանակության ուժգնությունը և անցնում թաքնված կյանքի: 18-րդ դարում Անտոն Լևենհոլմը իր պատրաստած մանրադիտակով ուսումնասիրեց մանր կենդանի օրգանիզմների աշխարհը: Նա բացահայտեց, որ նրանց որոշ տեսակներ օդում լրիվ չորանում են, իսկ ջրում նորից վերակենդանանում: Չորացած վիճակում նրանք թվում են լրիվ անկենդան: Թվացյալ մահվան այդպիսի վիճակը հետագայում անվանեցին անարիոզ (անա - ոչ, բիոս - կյանք): Ի տարբերություն մահվան՝ անարիոզի դեպքում օրգանիզմները կարող են նորից վերադառնալ ակտիվ կյան-



Նկ. 3. Կայսերական և դասիկ դինգվիններ



Նկ. 4. Աղվեսների տեսակներ

թի: Հարմարվողականության այս միջոցը օրգանիզմներին տալիս է գործնականորեն անսահման հնարավորություն գոյատևելու ամենադաժան պայմաններում:

Սակայն խոր անաբիոզը բնության մեջ հազվադեպ է հանդիպում: Անբարենպաստ պայմաններում հարմարվողականության ավելի տարածված ձև է կենսագործունեության ուժգնության նվազեցման երևույթը: Այս դեպքում մարմնական քիչները մասնակի ջրազոկվում են, և տեղի են ունենում նրանց կազմության մասնակի փոփոխություններ:

Կենդանիների անաբիոզին մոտ վիճակն անվանվում է թաքնված կյանք. նվազեցվում է նյութափոխանակության ուժգնությունը, խիստ խնայողաբար է ծախսվում էներգիան, և օրգանիզմը կտրուկ բարձրացնում է իր դիմացկունությունը: Համապատասխան պայմանների վերականգնման դեպքում օրգանիզմները թաքնված կյանքից նորից անցնում են ակտիվ կյանքի:

Հարմարվողականության մեկ այլ ձև է արտաքին միջավայրի փոփոխվող պայմաններից անկախ օրգանիզմների ներքին միջավայրի կայունության պահպանումը որոշակի սահմաններում: Օրինակ՝ փոփոխվող ջերմաստիճանային պայմաններում թռչունները և կաթնասունները պահպանում են իրենց մարմնի կայուն ջերմաստիճանը:

Հարմարվողականության բոլոր ձևերն ունեն իրենց առավելություններն ու թերությունները:

Գոյատևման այլ ձև է փախուստը անբարենպաստ պայմաններից և ավելի բարենպաստ կենսամիջավայրի ակտիվ որոնումը: Սա հատուկ է տարածության մեջ շարժվող կենդանիներին: Դրա վառ օրինակն է թռչունների չուն:

Այսդիսով, միջավայրի գործոնների փոփոխվող դայմաններում օրգանիզմների գոյատևման հիմնական միջոցներ են համարվում ժամանակավոր անցումը դասիվ կյանքի (էներգիայի խնայողաբար ծախսում), ակտիվության դաստիարակումը (էներգիայի լրացուցիչ ծախսում), փախուստը անբարենդաս դայմաններից (աղբելավայրի փոփոխում):

#### 4. Ջրային միջավայր

Երկիր մոլորակի ջրային թաղանթը (օվկիանոսների, ծովերի, մայրցամաքների ջրերի, սառցային ծածկույթների ամբողջությունը) կոչվում է ջրոլորտ (հիդրոսֆերա): Ավելի լայն առումով ջրոլորտի կազմության մեջ են մտնում նաև ստորգետնյա ջրերը, Արկտիկայի և Անտարկտիդայի ձյունը և սառույցը, մթնոլորտային ջուրը և օրգանիզմներում պարունակվող ջուրը: Զրի հիմնական զանգվածը կենտրոնացած է ծովերում և օվկիանոսներում: Բնական ջրերի ընդհանուր ծավալը կազմում է 1,39 մլրդ կմ<sup>3</sup>: Երկրագնդի մակերեսի 71% -ը ծածկված է ջրով (361 մլն կմ<sup>2</sup>): Զուրը կենսոլորտի տարրեր հանդիսացող մթնոլորտի, հողի և կենդանի օրգանիզմների կառուցվածքային մասն է (նկ.5): Այն մոլորակի ամենատարածված միացությունն է: Առանց ջրի հնարավոր չելիքների գոյությունը:



Նկ. 5. Ջրային միջավայրեր

Մեծ է ջրի դերը եղանակային պայմանների համեմատաբար անփոփոխ պահպանման գործում: Հիդրոսֆերան հանդիսանում է

գետերի և մթնոլորտային հոսքերի միջոցով օվկիանոս և այլ ջրամբարներ բերվող օրգանական և անօրգանական նյութերի համաշխարհային կուտակիչ: Չափ նյութեր առաջանում են հենց հիդրոսֆերայում: Երկրի վրա ջուրը ջերմության բաշխիչ է: Զուրը մտնում է միներալների, կենդանիների և բույսերի քիչների կազմության մեջ, ազդում է կլիմայի ձևավորման վրա,

## »» 5. Ցամաքաօդային միջավայր

մասնակցում է նյութերի շրջապտույտին, նստվածքային ապարների և հողի առաջացմանը, հանդիսանում է էլեկտրաէներգիայի ստացման աղբյուր:

Մեծ է նաև ոռոգման նպատակով օգտագործվող ջրի քանակը: Մեկ կիլոգրամ բուսական կանաչ զանգված ստանալու համար անհրաժեշտ է ծախսել 150-200-ից մինչև 800-1000 մ<sup>3</sup> ջուր: Սակայն ջրի հսկայական պաշարների 97-98%-ը կազմում են օվկիանոսների և ծովերի ջրերը, որոնք խիստ հանքայնացված են, և հնարավոր չէ օգտագործել սննդամթերքի արտադրության գործընթացում: Ավելի լուրջ է համարվում այն փաստը, որ քաղցրահամ ջրերի 75%-ը գոյություն ունի սառուցի ձևով և միայն նրա 1%-ն է օգտագործվում օրգանիզմների կողմից: Մարդու սխալ տնտեսական գործունեության արդյունքում ջրի այդ չնչին պաշարները ենթարկվում են աղտոտում: Դրա հետևանքով քաղցրահամ ջուրը դարձել է պահանջվածից պակաս: Զրային միջավայրի յուրահատկությունները պայմանավորված են ջրի ֆիզիկաքիմիական հատկություններով: Կարևոր է կոլոգիական նշանակություն ունի ջրի խտությունը և մասնաւոր ջրային օրգանիզմները բախվում են հիդրոռինամիկ դիմադրության մեջ ուժի հետ: Որևէ հետևանքով բազմաթիվ կենդանի օրգանիզմների մարմնի ձևի և շարժման տիպի զարգացումը ընթացել է ճակատային դիմադրության փոքրացման ուղղությամբ. լողալու ընթացքում այդ կենդանիները թիզ եներգիա են ծախսում: Զրի մեջ խտությունը նպաստում է նաև նրանում մեխանիկական տատանումների տարածմանը: Դա կարևոր դեր է խաղացել զգայական օրգանների զարգացման գործում՝ տարածության մեջ կողմնորոշվելուն և ջրային օբյեկտների հետ հաղորդակցվելուն: Զուրն ունի շատ բարձր ցերունակություն և ծովափնյա շրջաններում տարվա տարբեր եղանակներին և օրվա տարբեր ժամերին մեղմացնում է ջերմաստիճանային տատանումները: Երկիր մոլորակի վրա ջուրը հանդիսանում է ջերմաստիճանի կարգավորիչ:


## 5. Ցամաքաօդային միջավայր

Ցամաքի վրա կյանքի գոյությունը շատ առումներով կախված է օդի վիճակից: Որպես կյանքի միջավայր՝ օդը այդ միջավայրի օրգանիզմների զարգացմանը տալիս է որոշակի ուղղվածություն: Այսպես, օդում թթվածնի բարձր պարունակությունը որոշում է էներգետիկ փոխանակության բարձր մակարդակը: Մթնոլորտային օդը ունի ցածր և փոփոխական խոնավություն, ինչը սահմանափակում է օդային միջավայրի բնակեցումը, բայց ապահովում է նրանում բնակվող օրգանիզմների հանքային փոխանակության համակարգի և շնչառական օրգանների կառուցվածքի էվոլյուցիան: Պետք է նաև նշել, որ օդն ունի ցածր ճնշում, որի շնորհիվ կյանքը կենտրոնացված է երկրի մակերեսին մոտ՝ մինչև 50-70 մ բարձրության վրա:

Մթնոլորտի ժամանակակից գազային կազմությունը երկարատև զարգացման արդյունք է: Մթնոլորտային օդի հիմնական բաղադրիչներն են համարվում ազոտը՝ 78,08%, թթվածինը՝ 20,9%, արգոնը՝ 1% և ածխաբթու գազը՝ 0,03%:

Մթնոլորտը պաշտպանում է երկիրը տիեզերական ճառագայթումից և որոշում է երկրի մակերևույթի ողջ ջերմային ռեժիմը: Օդի շրջապտույտը ազդեցություն է գործում տեղային կլիմայական պայմանների վրա, իսկ դրանց միջոցով նաև գետերի ռեժիմի, բուսական և հողային ծածկույթների կենդանական աշխարհի և ռելիեֆ առաջացնող արտածին գործընթացների վրա: Բացի դրանից, մթնոլորտը նպաստում է ջերմության պահպաննայի երկրի վրա: Հակառակ դեպքում այն կցրվի դեպի տիեզերական տարածություն: Երկրի ծգողական ուժի շնորհիվ մթնոլորտը մնում է երկրի մակերևույթից որոշակի բարձրության վրա:

## 6. Հողային միջավայր



#### Նկ. 6. Հողային միջավայր

ազդեցությունների արդյունքում առաջացած մի քանի հորիզոններից: Վերին հորիզոնը (շերտը) կազմված է բուսական և կենդանական մնացորդներից, որոնք հողի բերրիության մակարդակը որոշող հումուսային նյութերի հենքն են:

Հողն իրենից Անրկայացնում է բույսերի, կենդանիների ու միկրօրգանիզմների գոյության միջավայր և պայման: Հողը կազմված է պինդ, հեղուկ, գազային և կենդանի բաղադրիչներից: Պինդ մասը կազմում է հողի զանգվածի 80-98%-ը (ավազ, կավ, տիղմ): Հողի պինդ բաղադրիչները հանդիսանում են մայրական ապարների հողմահարման արդյունք:

Հողի գազային մասը լցնում է ջրից գուրկ ծակոտիները: Հողային օդը մքնալորտային օդի համեմատությամբ պարունակում է ավելի շատ ածխաթթու գազ և քիչ թթվածին: Այն պարունակում է նաև մեթան և զնդող օրգանական նյութեր:

Հողի կենդանի մասը կազմված է հողային միկրոօրգանիզմներից, անողնաշարավորներից, փորող ողնաշարավորներից: Նրանք հիմնականում ապրում են հողի վերին շերտերում, բույսերի արմատային համակարգերին նոտ, որտեղից վերցնում են իրենց սնունդը (նկ. 6): Որոշ օրգանիզմներ ապրում են արմատների վրա: Հողի մեկ հեկտար (հա) բերրի շերտում բակտերիաների և սնկերի ընդհանուր զանգվածը կազմում է մոտ 5տ:

Հողում անողնաշարավոր կենդանիների զանգվածը կարող է հասնել մինչև 50 g/hw:

Եկոլոգիական տեսակետից հոդի նշանակությունը բազմազան է: Նախ այն մասնակցում է բնության մեջ տեղի ունեցող բոլոր շրջապատույտներին և հանդիսանում է կենսազանգվածի արտադրության հիմքը: Բուսական և կենդանական արտադրանք ստանալու համար մարդկությունը, որպես վարելահոգ, օգտագործում է զամարի միայն 10%-ը, իսկ 20%-ը՝ որպես արտավայր:

Կենսոլորտի զարգացման կարևոր փուլ է լիթո-սֆերայի հողային ծածկույթի առաջացումը: Այն երկրի կեղևի վերին քաղանքն է: Դողառաջացման գործընթացից հետո կենսոլորտը դարձավ ավարտուն ամբողջական համակարգ, որի բոլոր բաղադրիչները սերտ փոխկապակցված են և կախված են մեկը մյուսից:

Հողը հատուկ բնական համակարգ է, որը ունի կենդանի և անկենդան բնությանը բնորոշ բազմաթիվ հատկություններ: Հողն այն միջավայրն է, որտեղ փոխազդում են կենսոլորտի հիմնական տարրերը՝ ջուրը, օդը, կենդանի օրգանիզմները:

Հողը հանդիսանում է հողմահարման արդյունք՝ կենդանի օրգանիզմների, մթնոլորտի և փոխանակային գործընթացների ազդեցության տակ երկրի կենսի վերակառուցում և ձևավորում:

Հողը կազմված է լեռնային մայրական ապար-ների, կլիմայի, բուսական և կենդանական օր-գանիզմների, տեղանքի ռելիէֆի բարդ փոխ-

## »» 7. Կենդանի օրգանիզմները որպես կյանքի միջավայր

հողային ծածկույթի պահպանությունը կարևոր է կոլոգիական հիմնահարցերից մեկն է, որովհետև հող մտնող տեխնաժին նյութերը տարբեր կենսաբանական շղթաներով անցնում են օրգանիզմ՝ բացասական ազդեցություն բողնելով բույսերի արդյունավետության, կենդանիների և մարդու առողջության վրա:

### 7. Կենդանի օրգանիզմները որպես կյանքի միջավայր

Յետերոտրոֆ օրգանիզմների շատ տեսակներ իրենց ամբողջ կյանքի կամ կյանքի որոշակի հատվածներում ապրում են ուրիշ կենդանի օրգանիզմների մեջ, որոնց մարմինը նրանց համար հանդիսանում է կյանքի միջավայր: Այս երևույթը շատ հին է և տարածված բնության մեջ: Պրակտիկորեն գոյություն չունի որևէ բազմաթիվ օրգանիզմ, որը չունենա իր «բնակիչը»:

Բնության մեջ տարբեր տեսակների միջև ընթացող փոխհարաբերությունների ամենատարածված ձևերից մեկը մակարութությունն է (պարագիտիզմ):

Մակարույթ է կոչվում այն օրգանիզմը, որը որպես սննդի աղբյուր և բնակատեղ օգտագործում է այլ տեսակի օրգանիզմ (տիրոջը):

Կան մակարույթներ, որոնք ապրում են տիրոջ մարմնի վրա. դրանք կոչվում են էկտոմակարույթներ (տիզ, տզրուկ, ոջիլ և այլն): Տիրոջ մարմնում ապրող մակարույթները կոչվում են էնդոմակարույթներ (ճիծուներ, վիրուսներ, բակտերիաներ, մակարույթ նախակենդանիներ):



Նկ. 7. Տափակ որդ

Եթե մակարույթն իր կյանքի երկար ժամանակատվածը կամ ամբողջ կյանքը կապում է տիրոջ հետ, ապա նա համարվում է հաստատուն (անփոփոխ) մակարույթ: Հաստատուն մակարույթը կարող է ունենալ մեկ մշտական տեր (փետրակերը, ոջիլը և այլն) կամ էլ նրա զարգացումը ընթանում է տերերի հերթափոխությամբ (ժապավենաձև որդեր): Հիմնական է համարվում այն տերը, որի օրգանիզմում մակարույթը անց է կացնում իր սեռահասուն, իսկ միջանկյալ՝ թրուլրային ձևը: Գոյություն ունեն նաև ժամանակավոր մակարույթներ: Նրանք իրենց կյանքի մի մասը կապում են տիրոջ հետ, իսկ մյուս մասում վարում են ազատ կենսաձև:

Մակարույթն ապրում է տիրոջ ներքին միջավայրի յուրահատուկ պայմաններում, որը մի կողմից նրանց տալիս է մի շարք էկոլոգիական առավելություններ, իսկ մյուս կողմից դժվարեցնում է կյանքի շրջանի իրականացումը: Էկոլոգիական առավելությունն այն է, որ մակարույթը տիրոջից ստանում է առատ և հեշտ մատչելի սննդունի, որն էլ նպաստում է մակարույթի արագ աճին: Օրինակ՝ մարդու աղիներում մակարութող խոզի կամ եղան երիզորդի երկարությունը հասնում է մինչև 8-12 մետրի, այն դեպքում, երբ ազատ ապրող տափակ որդերն ավելի կարծ են (նկ. 7): Առատ սնունդը նպաստում է նաև մակարույթների արագ բազմացնանքը: Նրանք աչքի են ընկնում բարձր բեղունությամբ, ինչն էլ ապահովում է տեսակի պահպանումը և նրա թվաքանակի աճը: Եվս մեկ առավելություն. մակարույթը, ապրելով տիրոջ մարմնում, պաշտպանված է արտաքին գործոնների և այլ օրգանիզմների ազդեցություններից: Չատ դեպքերում մակարույթը հանդիսանում է միջավայր այլ տեսակի օրգանիզմների համար: Այս դեպքում ծագում է գերմակարութություն (հիպերպարագիտիզմ): Բուսական աշխարհում այդ երևույթը հազվադեպ է հանդիպում:

Բազմաբջիջ օրգանիզմների մարմնի տարբեր մասերում պայմանները տարբեր են: Տվյալ դեպքում մակարույթի համար տերը հանդիսանում է բազմաբնույթ միջավայր: Այդ պատճառով մակարույժները մասնագիտացվում են տիրոջ օրգանների և հյուսվածքների պայմաններին համապատասխան:

Պոպուլյացիոն և տեսակային մակարդակներում տեր և մակարույթ հարաբերություններն ինչ-որ իմաստով հավասարակշռված են: Դասկանալի է, որ մակարույթը չի կարող վերարտադրվել այն աստիճանի, որ տիրոջ պոպուլյացիան հասցի բնաշնչման: Դակառակ դեպքում մակարույժն իրեն կզրկի կերպին պաշարներից և բնակատեղից: Դետևաբար ինչպես մակարույթը, այնպես էլ ազատ ապրող տեսակներն ունեն իրենց միջավայրին հարմարվելու բարդ համակարգեր: Դրանց կառուցվածքը և կազմակերպվածությունն արտացոլում են միջավայրի յուրահատկությունները: Մակարույթ կյանք վարող օրգանիզմների տարբեր խմբեր ձեռք են բերում հարմարվողականութան նման տիպեր:

## 8. Կենսական գործոններ

Կենսական գործոնը մի խմբի օրգանիզմների ազդեցությունն է մեկ այլ խմբի օրգանիզմների կենսագործունեության վրա: Սովորաբար տարբերում են հետևյալ երեք կենսական գործոնները՝ կենդանիների ազդեցություն (կենդանածին գործոններ), բուսական օրգանիզմների ազդեցություն (բուսածին գործոններ) և մարդու ազդեցություն (մարդածին գործոններ):

Կենդանածին գործոնը կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրի վրա կենդանիների ունեցած ազդեցությունն է: Կենդանի օրգանիզմները բազմափափով կապված են իրար հետ: Այդ հարաբերությունները կարող են օրգանիզմների տարբեր խմբերի վրա բողոքել թե՛ բացասական և թե՛ դրական հետևանքներ: Սակայն, վերջնական արդյունքում, նրանք չեն կարող գոյատևել իրարից անկախ: Այդ փոխհարաբերությունները մի կողմից անհրաժեշտ են օրգանիզմների սննան, բազմացման, պաշտպանության, միջավայրի պայմանների մեղմացման համար, մյուս կողմից էլ վտանգ են ներկայացնում առանձնյակների գոյատևման համար: Յուրաքանչյուր տեսակ ընդունակ է գոյություն ունենալ միայն այնպիսի միջավայրում, որտեղ այլ օրգանիզմների հետ փոխհարաբերությունները ապահովում են նրա գոյության համար անհրաժեշտ պայմաններ: Այդ պատճառով կենդանի օրգանիզմները համախմբվում են որոշակի համակեցությունների մեջ:



Նկ. 8. Ներտեսակային դայթարի օրինակ

Առևտ ներտեսակային (Նկ. 8) և միջտեսակային պայքարը, մակարույժությունը, գիշատչությունը, կոմենսալիզմը, մուտուալիզմը և սիմբիոզը:

Բուսածին գործոնը կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրի վրա բույսերի ունեցած ազդեցությունն է: Բույսերի միջև ընթացող փոխհարաբերությունները կարող են լինել ուղղակի (անմիջական) և անուղղակի (միջնորդավորված): Ուղղակի ազդեցության օրինակ է այն

գործընթացը, երբ խառն անտառներում կեչու նույր ճյուղերը քամուց հարվածում են (մեխանիկական ազդեցություն) սոճու և եղևնու երիտասարդ փշերին, որի արդյուքում դրանք թափվում են (այս գործընթացը լավ արտահայտված է ձմռանը): Մեկ այլ օրինակ՝ հաճախ բույսերի ցողունները և արմատները միահյուսվում են իրար, որը բացասական ազդեցություն է թողնում նրանց վրա:

Բույսերի տեսակների մոտ 10%-ն ապրում է այլ բույսերի վրա՝ կապ չունենալով հողի հետ: Այդպիսի բույսերը՝ որպես ավտոտրոֆ օրգանիզմներ (առանց ֆիզիոլոգիական կապի), վարում են ինքնուրույն կյանք: Այս գործընթացը ևս ուղղակի փոխհարաբերության օրինակ է:

Կան դեպքեր, երբ բույսերը մտնում են ոչ թե մեխանիկական փոխհարաբերությունների մեջ, այլ նրանց միջև ստեղծվում է ֆիզիոլոգիական կապ (շփում): Մակաբուծությունը, սիմբիոզը, սապրոֆիտությունը (երբ օրգանիզմների մի տեսակը որպես ածխածնի աղբյուր օգտագործում է մահացած օրգանիզմների օրգանական նյութերը) և արմատների սերտաճումը հանդիսանում են ֆիզիոլոգիական կապի օրինակներ: Ուղղակի ֆիզիոլոգիական փոխհարաբերության ամենատարածված ձևը մակաբուծությունն է:

Բույսերի միջև անուղղակի փոխհարաբերությունները ստեղծվում են կենդանիների և միկրոօրգանիզմների միջոցով: Բույսերի կյանքում կենդանիների կարևոր էկոլոգիական դերն այն է, որ դրանք մասնակցում են փոշոտման գործընթացին, սերմերի և պտուղների տարածմանը: Զարգացման ընթացքում փոշոտվող բույսերի ծաղկի և փոշոտող միջատների մարմնի կառուցվածքում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ: Միջատների միջոցով փոշոտվող բույսերի ծաղիկների մասերը խիստ հարմարված են նրանց փոշոտող միջատների չափերին: Բույսերի փոշոտումը կատարվում է նաև թռչունների միջոցով: Գոյություն ունեն անուղղակի փոխազդեցությունների բազմաթիվ այլ ձևեր:

**Մարդածին գործոն:** Շրջակա միջավայրի մեջ վերափոխումները այժմ կապված են մարդու բազմաբնույթ գործունեության հետ: Մարդածին գործուների թվին են պատկանում շրջակա միջավայրի, օրգանիզմների, կենսաերկրացենոզների, էկոհամակարգերի և կենսոլորտի վրա մարդու ունեցած ցանկացած ազդեցությունը: Վերափոխելով բնությունը և հարմարեցնելով այն իր պահանջնունքներին՝ մարդը բույսերի և կենդանիների համար ստեղծում է անբարենպաստ պայմաններ: Մարդու ազդեցությունը կարող է լինել ուղղակի, անուղղակի և պատահական: Ուղղակի ազդեցության միջոցով մարդն անմիջապես ներգործում է կենդանի օրգանիզմների վրա: Օրինակ՝ ոչ ռացիոնալ ձկնորսության և որսի պատճառով խիստ նվազել է բազմաթիվ տեսակների թվաքանակը:

Անուղղակի ազդեցությունն իրագործվում է կլիմայի, մթնոլորտի, ջրոլորտի, քարոլորտի, բուսական և կենդանական աշխարհների փոփոխման ժանապարհով:

Պատահական ազդեցությունները նույնպես իրագործվում են մարդու կողմից, սակայն դրանք նախատեսված չեն՝ ճակիճների չորացում, ջրամբարների կառուցում, խոպան հողերի յուրացում և այլն: Պետք է նշել, որ կենդանիների և բույսերի բազմաթիվ տեսակներ բնաշնչվել են առանց մարդու ազդեցության: Բնության մեջ անընդհատ տեղի է ունենում տեսակառաջացման գործընթաց՝ մի տեսակը մահանում է, նրա տեղը զբաղեցնում է մեկ այլ՝ տվյալ պայմաններին ավելի հարմարված տեսակ: Էկոլոգիական խորշը երբեք դատարկ չի մնում: Սակայն մարդը բազմակի անգան արագացրել է տեսակների բնաշնչման գործընթացը:

## 9. Դասկացություն օրգանիզմների կենսածնի մասին

Օրգանիզմները և միջավայրի պայմանները մշտապես գտնվում են սերտ փոխազդեցությունների մեջ, որի արդյունքում այդ համակարգերը ձեռք են բերում կառուցվածքի անհավատալի համապատասխանություն: Միջավայրը օրգանիզմների վրա ազդում է էկոլոգիական գործոնների ամբողջ համալիրով, որի պատճառով հարմարվողականության գծերը համապատասխանում են գործոնների համալիր ազդեցությանը: Դարմարվողականության այդպիսի տիպը դրսևորվում է նրանում, որ օրգանիզմները ձեռք են բերում մորֆոլոգիական կառուցվածքի որոշակի նմանություն: Եթե կենսաբանական տարրեր խմբերի կենդանիների գոյության պայմանները և բնական ընտրության ազդեցության ուղղությունը նման են, ապա զարգացման ընթացքում նրանք բնակության միջավայրի հանդեպ ձեռք են բերում նաև նման հարմարանքներ: Այս գործընթացը ստացել է հատկանիշների համամիտում (կոնվերգենցիա) անվանումը: Դամամիտված են լինում նաև ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:

Բնակատեղի հիմնական պայմանների և կյանքի որոշակի կենսածնի հանդեպ բույսերի և կենդանիների մորֆոլոգիական հարմարվողականության տիպը կոչվում է օրգանիզմների կենսածն:

Նույն կենսածնին կարող են դատկանել տարբեր, նույնիսկ կենդանիների կարգաբանական ժամանակակից տեսակներ:

## 10. Կենսածների դասակարգումը

Կենդանիների կենսածների դասակարգման համար հիմք կարող են հանդիսանալ տարբեր չափանիշներ՝ սնունդ գտնելու ձևերը, ակտիվության աստիճանը, հարմարվածությունը որոշակի լանդշաֆտին և այլն: Օրինակ՝ ըստ ակտիվության ծովային կենդանիները լինում են լողացող, սողացող, նստակյաց և թռչող: Ավելի միասնական է բույսերի կյանքի ձևերի համակարգը:

Դանիացի էկոլոգուառնկիերը գտնում է, որ բույսերի վերաբերունքը կիմայի հանդեպ բավականին լավ է բնութագրում նրանց բազմացման օրգանների (բողբոջներ, պալարներ, սխուկներ) տեղադրման բարձրությունը: Բազմացման օրգանների տեղադրման բարձրությունը բույսերին օգնում է ապրել անբարենպաստ եղանակային պայմաններում: Ըստ այդ ցուցանիշի՝ Ուառնկիերը բույսերը բաժանել է հինգ խմբի:

Կենսածնի առաջին խմբի մեջ են մտնում այն բույսերը, որոնց բողբոջները գտնվում են հողի մակերևույթից նկատելի բարձրության վրա: Գոյության նպաստավոր պայմաններում բողբոջներին չի սպառնում չորացում և ցրտահարում: Այս խմբի մեջ են մտնում ծառերը, թփերը և ծառանման լիանաները:

Ինչքան բարդ են եղանակային պայմանները, այնքան բույսերի բողբոջները գտնվում են հողի մակերևույթին մոտ: Այսպիսի բույսերի բողբոջները ծածկված են թեփուկներով, իսկ ձմռանը գտնվում են ծյան տակ (թփեր, կիսաթփեր, որոշ բազմամյա խոտաբույսեր, մամուռներ):

Խոտաբույսերը անբարենպաստ պայմաններին դիմանում են այլ կերպ: Զմռանը սրանց ստորին ցողունները մահանում են, իսկ ամռանը՝ նորից աճում (այս պատճառով բողբոջները գտնվում են հողի մակերևույթին): Այսպիսի բույսերի թվին են պատկանում միջին լայնությունների բազմամյա խոտաբույսերը (գորտնուկ, խատուտիկ, եղինջ և այլն):

## »» 10. Կենսաձևերի դասակարգումը

Մյուս խնդի մեջ են մտնում այն բույսերը, որոնք ունեն ձմեռող պալարներ, սոխուկներ և կոճղարմատներ:

Մեկ այլ խումբ են կազմում այն բույսերը, որոնք անբարենպաստ պայմաններին դիմանում են սերմերի միջոցով: Դրանց թվին հիմնականում պատկանում են միամյա խոտարույսերը (մոլախոտեր):

Կենսաձև հասկացությունը պետք է տարբերել օրգանիզմների էկոլոգիական խնդեր հասկացությունից: Օրգանիզմների կենսաձևի հասկացությունը արտացոլում է էկոլոգիական գործոնների ամբողջ համալիրը, այնինչ էկոլոգիական խնդերը սովորաբար նեղ մասնագիտացված են էկոլոգիական այս կամ այն գործոնի հանդեա:

### Հարցեր կրկնության համար

1. Տվյալ օրգանիզմների գոյության միջավայրի և պայմանների սահմանումները:
2. Ինչո՞ւ են միջավայրի ոչ կենսական գործոնները տարբերվում կենսածին գործոններից:
3. Թվարկե՞ք Երկիր մոլորակի բնակության հիմնական միջավայրերը:
4. Տվյալ կյանքի ջրային, ցամաքաօդային և հողային միջավայրերի բնութագրերը:
5. Միջավայրի ո՞ր պայմաններն են էկոլոգիական գործոններ հանդիսանում:
6. Ո՞ր գործոններն են ապահովում էկոհամակարգերի բազմազանությունը:
7. Սահմանեք «Էկոլոգիական վալենտականություն» հասկացությունը:
8. Տվյալ սահմանափակող գործոնի բնութագիրը:
9. Ինչպե՞ս են օրգանիզմները հարմարվում միջավայրի պայմաններին:
10. Միջավայրի պայմաններին հարմարվելու համար զարգացման ընթացքում օրգանիզմներն ինչպիսի՝ հարմարանքներ են մշակել:
11. Տվյալ Բերգմանի, Ալլենի և Գլոգերի կանոնների բնութագրերը:
12. Ինչո՞ւ են կենդանի օրգանիզմները համարվում կյանքի միջավայր:
13. Ինչպիսի՝ կենսական գործոններ գիտեք:
14. Տվյալ կենսական գործոնների բնութագիրը:
15. Օրգանիզմների կենսաձևերի դասակարգման ինչպիսի՝ ձևեր գիտեք:
16. Կենդանի օրգանիզմների փոխհարաբերություններում ինչպիսի՝ էկոլոգիական նշանակություն ունի մակարուծությունը:

## ԳԼՈՒԽ 2. ՊՈՊՈՒԼԱՑԻՈՆ ԷԿՈԼՈԳԻԱ

Ա

### 11. Հասկացություն դողուլյացիայի մասին

Բնության մեջ յուրաքանչյուր տեսակ ներկայացնում է ներտեսակային խմբերի բարդ ամբողջություն, որը միավորում է յուրահատուկ կառուցվածք, ֆիզիոլոգիա և վարժ ունեցող առանձնյակների: Առանձնյակների այդմիսի ներտեսակային միավորումը կոչվում է դողուլյացիա (լատիներեն populus բառը նշանակում է ժողովուրդ, բնակչություն):

Առաջին անգամ պոպուլյացիա հասկացությունն առաջարկել է դանիացի գիտնական Վ. Իոհաննենը (1903թ): Ըստ նրա՝ պոպուլյացիան գենետիկական տեսակետից ոչ միատարր, նույն տեսակին պատկանող առանձնյակների բնական միավորում է:



Վիլհելմ Իոհաննեն  
(1857-1927)

Ժամանակակից էկոլոգիայում պոպուլյացիա են համարում որոշակի տարածքում երկար ժամանակ գոյություն ունեցող, ազատ խաչասերվող, բեղում սերունդ տվող, նույն տեսակի առանձնյակների այլ խմբերից հարաբերականորեն մեկուսացված առանձնյակների ամբողջությունը:

Պոպուլյացիայի կյանքը և գործունեությունը բավական բարդ գործընթաց է: Այն առանձին անհատների գուտ մեխանիզմական գումար չէ: Օրգանիզմների փոխազդեցության արդյունքում պոպուլյացիան ծեղը է բեղում սեփական հատկությունները, որոնք տարբերվում են պոպուլյացիան կազմող առանձնյակների հատկություններից:

Ժամանակի ընթացքում տարբեր գործոնների ազդեցությամբ պոպուլյացիայի թվաքանակը, տարիքային կազմը և տարածման արեալը ենթարկվում են փոփոխությունների: Այդ փոփոխությունները հաճախ ունենում են անցանկալի հետևանքներ: Օրինակ՝ վնասատու միջատների թուչքային աճը մեծ վնաս է հասցնում գյուղատնտեսությանը: Վնասի պատճառ կարող է հանդիսանալ նաև մարդու կարիքների բավարարման համար օգտագործվող օրգանիզմների թվաքանակի կտրուկ նվազումը (ձուկ, որսի կենդանիներ և այլն):

Պոպուլյացիան տեսակի գոյության տարրական միավորն է: Որոշակի տարածքում նույն տեսակի պոպուլյացիաների հարաբերական մեկուսացվածությունը տեսակին հնարավորություն է տալիս գոյություն ունենալ միջավայրի բազմազան պայմաններում:

Նույն պոպուլյացիայում առանձնյակներին միավորող հիմնական գործոն է համարվում նրանց ազգակցական կապը (գենետիկական ազգակցությունը) և բնակության պայմանների նմանությունը:

### 12. Պողուլյացիայի բնութագիրը

Որպես կենսաբանական համակարգ՝ պոպուլյացիան ունի որոշակի կառուցվածք և ֆունկցիաներ: Պոպուլյացիայի կառուցվածքը բնութագրվում է նրա առանձնյակների թվաքանակով և տարածության մեջ նրանց բաշխվածությամբ: Պոպուլյացիայի ֆունկցիաները նման են մյուս կենսաբանական համակարգերի ֆունկցիաներին (աճ, զարգացում, մշտապես փոփոխվող պայմաններում գոյությունը պահպանելու ընդունակություն):

## »» 12. Պոպուլյացիայի բնութագիրը

Պոպուլյացիան օժտված է հետևյալ իրմնական հատկություններով՝ թվաքանակ, խտություն, մահացություն, ծնելիություն, տարիքային և սեռային կազմ: Այս հատկությունները բնորոշում են միայն պոպուլյացիան ամբողջությամբ և կիրառելի չեն առանձին առանձնյակների համար:

Պոպուլյացիայի թվաքանակը տվյալ տարածքում կամ տվյալ ծավալում նրա առանձնյակների ընդհանուր թիվն է: Պոպուլյացիայի թվաքանակը հաստատուն լինել չի կարող և կախված է ծնելիության ու մահացության աստիճանների հարաբերությունից: Բազմացման ընթացքում տեղի է ունենում պոպուլյացիայի աճ, իսկ մահացությունը հանգեցնում է թվաքանակի կրծատման:

Պոպուլյացիայի խտությունը միավոր տարածքում կամ ծավալում նրա առանձնյակների թիվն է կամ կենսագանգվածը: Օրինակ՝ 100 ծառ 1 հա տարածքում կամ 10 ծուկ՝  $1\text{m}^3$  ջրում:

Պոպուլյացիայի խտությունը փոփոխական է և կախված է նրա թվաքանակից: Թվաքանակի աճի դեպքում խտության մեծացում չի նկատվում միայն այն դեպքում, երբ պոպուլյացիան ընդարձակում է իր գրաղեցորած տարածքը:

Գոյություն ունի տարածության մեջ պոպուլյացիայի առանձնյակների բաշխվածության երեք տիպ՝ հավասարաչափ, պատահական և խմբային (նկ. 9): Հավասարաչափ բաշխում գոյություն ունի այն դեպքում, երբ պոպուլյացիայի առանձնյակների միջև ընթանում է սուր մրցակցություն: Բնության մեջ այսպիսի բաշխումը հազվադեպ է հանդիպում: Ավելի հաճախ այդպիսի բաշխում հանդիպում է ագրոկուհամակարգերում:

Պատահական բաշխում հանդիպում է այն դեպքում, երբ պոպուլյացիայի առանձնյակների թիվը փոքր է, իսկ մրցակցության հավանականությունը՝ ցածր: Չնայած բնության մեջ պոպուլյացիայի առանձնյակների վրա բնական պատահական գործնների ազդեցությունները քիչ չեն, այնուամենայնիվ, պատահական բաշխումը ևս հազվադեպ է հանդիպում: Այն ավելի հաճախ հանդիպում է միատարր տարածքում:

Խնճային բաշխումը հանդիպում է ավելի հաճախ և հանդիպում է ինչպես ցամաքային, այնպես էլ ջրային կենսաձև վարող օրգանիզմների մոտ: Այսպիսի բաշխման դեպքում օրգանիզմները ստեղծում են տարաբնույթ խնճեր: Դա կապված է միջավայրի ոչ միատարրության, բնակատեղի տեղային տարբերությունների, եղանակային պայմանների օրական և սեզոնային փոփոխությունների և բազմացման գործններացի յուրահատկությունների հետ:



Նկ.9. Պոպուլյացիաները առանձնյակների բաշխվածության տիպերը

Պոպուլյացիայի կարևոր հատկություն է համարվում նրա տարիքային կազմը, որն արտացոլում է պոպուլյացիայի տարիքային կազմերի հարաբերությունը և որոշում է բազմացման ընդունակությունը: Արագ զարգացող պոպուլյացիաների առանձնյակների մեջ մասը կազմում են երիտասարդ՝ վերարտադրվող առանձնյակները: Ժամանակակից էկոլոգիայում պոպուլյացիայի տարիքային կազմի ուսումնասիրությունների ժամանակ առանձնացնում են երեք էկոլոգիական խմբեր՝ նախավերարտադրման, վերարտադրման և հետվերարտադրման (երբ առանձնյակները կորցնում են բազմանալու ընդունակությունը):

Տարբեր տեսակների տարիքային խմբերի տևողությունը տարբեր է: Ինչպես բույսերի, այնպես էլ բազմաթիվ կենդանիների նախավերարտադրման շրջանը տևում է ավելի երկար: Օրինակ՝ օրաքեցի կամ միօրիկ միջատի (Ephemeroidea) այդ շրջանը, թթվուրի երկար զարգացման հետևանքով, տևում է մի քանի տարի, իսկ վերարտադրման շրջանը՝ մի քանի օր: Հետվերարտադրման շրջանը այս դեպքում համարյա բացակայում է:


Ժամանակակից մարդու մոտ այդ երեք շրջանների տևողությունը կազմում է նրա կյանքի 1/3 մասը: Դին ժամանակներում մարդու մոտ հետվերարտադրման շրջանի տևողությունը անհամեմատ կարծ է եղել:

### 13. ԾՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ և ՄԱՀԱԳՈՒԹՅՈՒՆ

Պոպուլյացիայի թվաքանակի և խտության շարժընթացը սերտ կապված է նրա ծնելիության և մահացության հետ (նկ.10): Ծնելիությունը որոշակի ժամանակահատվածում պոպուլյացիայում ծնված առանձնյակների թիվն է՝ պոպուլյացիայի հատկությունն է մեծացնելու իր թվաքանակը: Ծնելիությունը լինում է մաքսիմալ և էկոլոգիական՝ իրացվող: Պոպուլյացիան մաքսիմալ ծնելիության աստիճան ունենում է այն դեպքում, երբ բացակայում են սահմանափակող էկոլոգիական

գործոնները և բազմացումը սահմանափակվում է միայն տվյալ տեսակի ֆիզիոլոգիական առանձնահատկությունների շնորհիվ: Մաքսիմալ ծնելիությունը իդեալական պայմաններում նոր առանձնյակների առաջացման տեսականորեն հնարավոր մաքսիմալ արագությունն է: Տեսականորեն տարբեր տեսակների բազմացման արագությունը կարող է լինել շատ բարձր: Օրինակ՝ բակտերիան յուրաքանչյուր 20 րոպեն մեկ կիսվում է: Այդպիսի արագությամբ բազմանալու դեպքում մեկ բակտերիալ բջջի սերունդը 36 ժամվա ընթացքում ամբողջովին կծածկի երկիր մոլորակի մակերևույթը: Դրա համար դիտումային ջրիմութին անհրաժեշտ է 16,8, հավին՝ 6000, փոլին՝ 37600 օր: Սակայն բնության մեջ ոչ մի տեսակ չի կարող առանց հսկողության և անսահման բազմանալ, հակառակ դեպքում կծածկեն էկոլոգիական ճգնաժամեր:

Էկոլոգիական կամ իրացվող ծնելիությունը իրագործվում է միջավայրի սովորական կամ յուրահատուկ պայմաններում: Որպես



Նկ. 10. Պոպուլյացիաների շարժընթացը

#### »» 14. Պոպովյացիայի սեռային կազմը


հարմարվողականության ձև՝ պայմանականորեն մշակվել է բեղունության միջին մեծություն, որն ապահովում է լրացնել պոպուլյացիայի առանձնյակների կորուստները: Եթե անբարենպաստ պայմաններում մեծ է տվյալ պոպուլյացիայի երիտասարդ առանձնյակների մահացության աստիճանը, ապա այն լրացվում է բեղունության բարձր աստիճանով: Որպես կանոն՝ բարենպաստ պայմաններում պոպուլյացիայի ծնելիության աստիճանը ցածր է: Բեղունության աստիճանը կախված է պոպուլյացիայի առանձնյակների սեռահասուն դառնալու արագությունից, ծնելիության հաճախականությունից, եգերի և արուների վիճակից: Եթե տեսակը բազմանում է շատ արագ և զգայուն է արտաքին գործոնների հանդեպ, ապա պոպուլյացիայի թվաքանակը ենթարկվում է արագ և նկատելի փոփոխությունների:

Պոպուլյացիայի մահացությունը որոշակի ժամանակում մահացող առանձնյակների թիվն է: Բացարձակ կամ ընդհանուր մահացությունը միավոր ժամանակում պոպուլյացիայի մահացող առանձնյակների թիվն է: Տեսակարար մահացությունը բացարձակ մահացության և պոպուլյացիայի թվաքանակի հարաբերությունն է:

Տարբերակում են մահացության 3 տիպ: Առաջին տիպը բնութագրվում է բոլոր տարիքային խմբերի նման մահացությամբ: Այս տիպը հանդիպում է հազվադեպ և բնորոշ է այն պոպուլյացիաներին, որոնք մշտապես գտնվում են գործոնների բարենպաստ պայմաններում: Մահացության երկրորդ տիպը բնութագրվում է զարգացման սկզբնական շրջանում գտնվող առանձնյակների մահացության բարձր աստիճանով: Այն բնորոշ է բույսերի և կենդանիների մեծամասնությանը: Մահացության երրորդ տիպը բնորոշվում է նրանով, որ բարձր է հետվերարտադրական շրջանում գտնվող առանձնյակների մահացության աստիճանը:

#### 14. Պոպուլյացիայի սեռային կազմը

Ըստ սեռի որոշման գենետիկական մեթոդի հայտնի է, որ բաժանասեռ օրգանիզմների (այդ թվում և մարդու) սեռերի հարաբերությունը սովորաբար կազմում է 1:1: Սակայն դրանից չի հետևում, որ այդ հարաբերությունը բնորոշ է պոպուլյացիային ընդհանրապես: Սեռի հետ շղթայակցված հատկանիշները հաճախ բացահայտում են եգերի և արուների ֆիզիոլոգիայի, էկոլոգիայի և վարքի միջև գոյություն ունեցող տարբերությունները: Արուները և եգերը ունեն տարբեր կենսունակություն, այդ պատճառով սեռերի 1:1 հարաբերությունը նկատելի տարբերվում է հասուն առանձնյակներին բնորոշ երկրորդային և երրորդային հարաբերություններից: Օրինակ՝ մարդու




Նկ. 11. Մարդկանց տարիք-սեռային կազմի տարբեր տիպեր

մոտ սեռերի երկրորդային կազմում է 100 աղջիկ և 106 տղա, տղամարդկանց բարձր մահացության աստիճանի դեպքում (16-18 տարեկանում) այդ հարաբերությունը հավասարվում է, 50 տարեկանի սահմաններում այդ հարաբերությունը կազմում է 100 կին և 85 տղամարդ, 80 տարեկանին մոտ՝ 50 տղամարդ և 100 կին (Ակ. 11):

Գոյություն ունեն պոպուլյացիաներ (օրինակ՝ ճանճեր), որոնք կազմված են միայն էգերից: Կան կուսածին շատ տեսակներ, որոնք կազմված են միայն արուներից: Բնության մեջ կուսածնություն հանդիպում է շատ բույսերի և կենդանիների մոտ, օրինակ, բույսերից՝ արտեմիաների, դաֆնիաների, ուտիճների, մեղուների մոտ: Որոշ տեսակների մոտ սկզբում սեռը որոշվում է ոչ թե գենետիկական, այլ էկոլոգիական գործններով: Օրինակ, Arisaeomajaponica արմատապալարի երկրորդային սեռի որոշման համար կարևոր նշանակություն ունի պալարի զանգվածը՝ ավելի խոշոր և զարգացած պալարները առաջացնում են իգական ծաղիկներով բույսեր, մանր և թույլ պալարները՝ արական ծաղիկներով բույսեր:

## 15. Պողովլյացիաների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը



Յուգեն Օդում  
(1913-2002)

Բնական պոպուլյացիաները կազմող առանձնյակները գոյություն չունեն իրարից անկախ և սովորաբար գտնվում են բարդ փոխհարաբերությունների մեջ: Տեսականորեն երկու տեսակների պոպուլյացիաների փոխհարաբերությունները կարելի է արտահայտել նշանների հետևյալ զուգակցումներով՝ 0 0, + +, + 0, + - :

Օդումը (1986թ.) առանձնացրել է փոխհարաբերությունների հետևյալ 8 տիպերը:

- Զեզոքություն (0 0) — Մեկ պոպուլյացիան չի ազդում մյուսի վրա: Բնության մեջ իրականում անտարբեր (չեզոք) տեսակները հազվադեպ են հանդիպում, որոնց հետևանքները մենք անմիջականորեն չենք տեսնում:
- Փոխադարձ մրցակցային ճնշում (- -) – Փոխազդող տեսակները փոխադարձ ճնշում են իրար: Օրինակ կարող է հանդիսանալ ջրի, լույսի, հանքային տարրերի հանդեպ մատչելիության աստիճան ձեռք բերելու գործընթացում մոլախոտերի և մշակաբույսերի միջև ընթացող մրցակցությունը: Այսպիսի փոխհարաբերությունների ժամանակ մեկ տեսակը անմիջապես չի հարձակվում մյուսի վրա:
- Ամենսալիզմ (- 0) – Մի պոպուլյացիան ճնշում է մյուսին, բայց ինքը չի կրում բացասական ազդեցություն: Օրինակ՝ իր աճի ընթացքում եղևանին լուսաւեր բույսերի համար ստեղծում է անբարենպաստ պայմաններ՝ չստանալով հակազդեցություն:
- Մակաբուծություն (+ -) – Մակաբույժի պոպուլյացիան, ապրելով տիրոջ վրա կամ մարմնի ներսում, մեծ վնաս է հասցնում նրան:
- Գիշատչություն (+ -) – Մի պոպուլյացիան անմիջականորեն հարձակվում է մյուսի վրա՝ վերջինիս հասցնելով մեծ վնասներ, սակայն կախված է նրանից (Ակ. 12):
- Կոմենսալիզմ (+ 0) – Այսպիսի փոխհարաբերություններից մի պոպուլյացիան օգուտ է

## »» 16. Գիշատիչ և զոհ փոխհարաբերություն

ստանում, իսկ մյուսի համար այդ փոխհարաբերությունը նշանակություն չունի: Օրինակ՝ որոշ տեսակներ սնվում են այլ տեսակների սննդի մնացորդներով կան ել օգտագործում են նրանց քարտոցը, որը՝ տիրոջը չպատճառելով ոչ օգուտ, ոչ վնաս (նկ. 13):

- Պրոտոկոռապերացիա (+ +) –Փոխհարաբերվող տեսակները փոխադարձաբար օգուտ են ստանում, սակայն կարող են բնականոն կենսագործել նաև առանց դրա: Պրոտոկոռապերացիայի վառ օրինակ է խոշոր կենդանիների (գռնեց, ռնգեղջուր, ընձուղտ, գերբ և այլն) և սարյակների փոխհարաբերությունը (նկ. 14):
- Մուտուալիզմ (+ +) – Երկու պոպուլյացիաներն այս փոխհարաբերությունից օգուտ են ստանում: Բնական պայմաններում այսպիսի փոխհարաբերության մեջ գտնվող պոպուլյացիաներից մեկը չի կարող գոյություն ունենալ առանց մյուսի: Այսպիսի կապ գոյություն ունի, օրինակ, ծաղկավոր բույսերի և փոշոտող միջատների միջև:



Նկ. 12. Գիշատչության օրինակ



Նկ. 13. Կոմենսալիզմի օրինակ




Նկ. 14. Պրոտոկոռապերացիայի օրինակ

## 16. Գիշատիչ և զոհ փոխհարաբերություն

Բնության մեջ այս հարաբերությունը գոյություն ունի կյանքի ծագման հենց սկզբից: Գիշատչի պոպուլյացիայի զարգացումը չի կարելի անջատել զոհի պոպուլյացիայի զարգացումից: Դրանց զարգացումը ընթանում է համատեղ, հակառակ դեպքում նրանց սպառնում է բնաջնջում: Զարգացման ընթացքում զոհին բռնելու համար գիշատչի մոտ ի հայտ են եկել բազմաթիվ հարմարանքներ՝ սուր ատամներ և ժանիքներ, արագ ոտքեր, հովանավորող գունավորում, թունավոր գեղձեր և այլն: Զոհն իր հերթին, գիշատչից խուսափելու համար, զարգացրել է պաշտպանական յուրահատուկ միջոցներ՝ պաշտպանական գունավորում, արագ թաքնվելու ընդունակություն, փշեր, սեպեր, զրահներ և այլն:

Ընդհանուր առմամբ՝ զոհի զարգացումը ընթանում է գիշատչի կողմից դժվար բռնվելու և գիշատչի համար դժվարանատչելիության ուղղությամբ: Գիշատչի զարգացումը ընթանում է որս կատարելու ունակության բարձրացման ուղղությամբ:



Նկ. 15. Զոհի և գիշատիչ թղթույացիաների թվաքանակի տատանումները

ՄԵՐԴԱՅԻՆ շղթաներում գիշատիչը համարվում է կարևոր օդակ: Նրանց առկայությունը նպաստում է խոտակեր կենդանիների բնական ընտրության ուղղվածությանը: Օրինակ՝ այժքաղների ձագերը ծնվելուց 5 րոպե հետո կարող են ինքնուրույն շարժվել:

Ոչ միշտ է գիշատիչը զոհի պոպուլյացիային վնաս հասցնում: Գիշատիչը հիմնականում որսում է զոհի պոպուլյացիայի հիվանդ, ծեր, թույլ առանձնյակներին: Դրանով զոհի պոպուլյացիայում մնում են ավելի երտասարդ, օգտակար ժառանգական հատկանիշներով օժտված և կենսունակ առանձնյակները: Սակայն կան գիշատիչներ, որոնք որպես սնունդ օգտագործում են զոհի պոպուլյացիայի բոլոր տարիքային խմբերը: Այս դեպքում խախտվում է պոպուլյացիայի պոտենցիալ աճը: Դրանով զոհի պոպուլյացիան խուսափում է նաև համաճարակներից:

Ուսումնասիրելով գիշատչի և զոհի պոպուլյացիաների շարժները՝ էկոլոգները բացահայտել են, որ բնության մեջ նրանց թվաքանակի տատանումները որոշ դեպքերում ընթանում են փոխկապակցված շրջաններով (Վոլտերայի օրենք, 1905թ.) (Նկ. 15):

Գիշատիչները մեր թշնամիները չեն: Նրանց բնաջնջումը բնության մեջ առաջ է բերում հավասարակշռության խախտում:

Ըստ կարգաբանական դասակարգման՝ գոյություն ունի գիշատիչների երեք տիպ՝

1. իսկական գիշատիչներ (գիշատիչը հարձակվում է զոհի վրա, սպանում նրան և ուտում ամբողջովին),
2. բուսակեր գիշատիչներ (գիշատիչը չի սպանում զոհին և բավարարվում է նրա որևէ մասը ուտելով),
3. ամենակեր գիշատիչ (սնվում է և կենդանիներով, և բույսերով): Օրինակ՝ գորշ արջը գարնանը սնվում է երիտասարդ բույսերով, ծառերի բողբոջներով, ամռանը՝ պտուղներով, ցորենի հատիկներով և կենդանական սննդով (միջատներ, թռչուններ, ձկներ, փոքր կաթնասուններ):

### Հարցեր կրկնության համար

1. Տվեք պոպուլացիայի սահմանումը:
2. Ինչպիսի՞ բնութագրեր ունի պոպուլացիան:
3. Ինչպիսի՞ հատկություններով է օժտված պոպուլացիան:
4. Ինչո՞վ է բացատրվում այն փաստը, որ պոպուլացիայի հատկանիշները կրում են առանձնյակների խմբերը, ոչ թե առանձին անհատները:
5. Պոպուլացիաների միջև փոխհարաբերությունների ինչպիսի՞ ձևեր գիտեք:
6. Բնութագրեք գիշատիչ-զոհ փոխհարաբերությունը: Գիշատիչների ինչպիսի՞ տիպեր գիտեք:

## ԳԼՈՒԽ 3. ԿԵՆՍԱՑԵՆՈՉՆԵՐ

Ա

### 17. Հասկացություն կենսացենոգի մասին

Համատեղ ապրող և միմյանց հետ կապված տեսակների ամբողջ համալիրն անվանում են կենսացենոգ (բիոցենոգ՝ «բիոս»-կյանք, «ցենոգ»-համակեցություն): Այդ տերմինն առաջին անգամ առաջարկվել է Կ. Միորիուսի կողմից (1987թ.): Նրա սահմանման համաձայն՝ կենսացենոզը ըստ կազմության, տեսակների և առանձնյակների թվի՝ միջավայրի արիտիկ գործոնների միջին մակարդակին համարատասանող կենդանի օրգանիզմների ամբողջությունն է, որում օրգանիզմները սերտ փոխկապակցված են և անընդհատ բազմացման շնորհիվ դադարանում են իրենց գոյությունը:



Կարլ Միորիուս  
(1825-1908)

Բնության մեջ կենսացենոզները լինում են տարբեր մասշտաբների: Կենսացենոգ է համարվում ծառի վրա ապրող մամուռների խումբը, քայլայվող կոճղը, մարգագետինը, լճակը, ճահիճը, անտառը և այլն: Ակվարիումը, տեռարիումը, ջերմոցը պատկանում են արիեստական կենսացենոզների թվին: Բնության մեջ ոչ մեծ կենսացենոզները հանդիսանում են ավելի խոշորների բաղադրիչ մասերը:

Կենսացենոգի կառուցվածքի մեջ են մտնում բույսերը, կենդանիները և միկրոօրգանիզմները: Կենսացենոզը կազմավորվում է շրջակա միջավայրի պայմաններին խիստ համապատասխան:

Կենսացենոզներում առանձին տեսակները, պոպուլյացիաները և տեսակների խմբերը, առանց համակեցությանը վնաս հասցնելու, կարող են փոխարինվել ուրիշներով:

Իսկ համակարգը գոյություն է ունենում տեսակների միջև անտագոնիստական ուժերի հավասարակշռության հաշվին: Համակեցության կայունությունը որոշվում է մի տեսակի կողմից մյուսի թվաքանակի կարգավորման ճանապարհով, իսկ նրա սահմանները կախված են արտաքին պայմաններից՝ բիոտոպից (կենսացենոգի կողմից գրանցված, ըստ միջավայրի ոչ կենսածին գործոնների հարաբերականորեն միատարր տարածքը կոչվում է բիոտոպ): Կենսացենոզի սահմանները համապատասխանում են բիոտոպի, հետևաբար նաև էկոհամակարգի սահմաններին: Կենսացենոգի և բիոտոպի ու նրանց բաղադրիչների միջև անընդհատ տեղի է ունենում էներգիայի և նյութերի փոխանակում:

Կենսացենոզը կյանքի կազմավորման ավելի բարձր մակարդակ է, քան նրա կառուցվածքային մաս հանդիսացող պոպուլյացիան:

Կենդանի օրգանիզմների բնական միավորումներն ունեն իրենց սեփական կազմավորման օրենքները, գործունեությունը և զարգացումը: Կյանքի կազմակերպվածության վերօրգանիզմային մակարդակի կարևոր յուրահատկություններ են համարվում (Տիշլեր, 1971թ.):

1. Կենսացենոզը միշտ ծագում և կազմավորվում է շրջակա միջավայրում գոյություն ունեցող տարբեր տեսակներին պատկանող առանձնյակներից կամ տեսակների ամբողջ համալիրից: Դրանով կենսացենոզը տարբերվում է առանձին օրգանիզմի կամ առանձնյակի ձևավորումից, որն ընթանում է սաղմի աստիճանական տարբերակման ճանապարհով:
2. Կենսացենոգի բաղադրիչները փոխարինվելի են: Մեկ տեսակը կամ տեսակների ամբողջությունը կարող են առանց ընդհանուր համակարգին վնաս հասցնելու փոխարինվել նման

### »» 18. Կենսացենողի տեսակային կազմը

Էկոլոգիական պահանջնունքներ ունեցող այլ տեսակներով: Ցանկացած օրգանիզմի օրգանները եղակի են:

3. Կենսացենողը գոյություն ունի հակադիր ուժերի հավասարեցման հիման վրա: Կենսացենողում բազմաթիվ տեսակների պահանջները լրիվ հակադիր են: Օրինակ՝ գիշատիչը զոհի համար հանդիսանում է անտագոնիստ, սակայն երկուսն էլ գոյատևում են նույն կենսացենողի սահմաններում:
4. Օրգանիզմի սահմանային չափերը սահմանափակվում է գենետիկական ծրագրով, իսկ վերօրգանիզմային համակարգի չափերը որոշվում են արտաքին ուժերով:
5. Կենսացենողները հաճախ ունենում են միաձուլված սահմաններ: Սակայն իրականում նրանք գոյություն ունեն բնության մեջ:

## 18. Կենսացենողի տեսակային կազմը

Կենսացենողի տեսակային կազմը նրա կազմության մեջ մտնող տեսակների ամբողջությունն է: Կախված միջավայրի գործոններից՝ կենսացենողը բնութագրվում է տեսակային բազմազանությամբ և տեսակների թվային հարաբերությամբ: Գլխավոր սահմանափակող գործոններն են համարվում ջերմաստիճանը, խոնավությունը, սննդի պակասը: Այդ պատճառով բարձրադիր լայնությունների, անապատների, բարձրլեռնային էկոհամակարգերի կենսացենողները բնութագրվում են աղքատ տեսակային կազմով և կազմված են բույսերի և կենդանիների տասնյակ և հարյուրավոր, իսկ արևադարձային անտառների, կորայսան խութերի, գետերի, հովհանների կենսացենողները բնութագրվում են հարուստ տեսակային կազմով և ընդգրկում են հազարավոր տեսակներ: Կենսաբազմազանության փոփոխության կարևոր օրինաչափություն է այն, որ արևադարձներից դեպի բարձր լայնություններ այն նվազում է: Յասարակածին մոտ կենսացենողները ունեն հարուստ տեսակային կազմ և բազմազան բուսական և կենդանական աշխարհ: Այդ օրինաչափությունը վերաբերում է նաև մյուս կենդանի օրգանիզմներին: Տեսակային կազմի բազմազանությունը որոշվում է տեսակների հարաբերական կամ բացարձակ թվով և կախված է կենսացենողի տարիքից: Յասուն կենսացենողները ունեն տեսակների բազմազանություն:

Եթե կենսացենողում ինչ-որ տեսակ ունի թվային մեծ առավելություն (թվաքանակ, կենսազանգված, արդյունավետություն), ապա այն կոչվում է դոմինանտ տեսակ: Դոմինանտ տեսակ գոյություն ունի ցանկացած կենսացենողում: Օրինակ՝ եղնու անտառում եղևնիները օգտագործում են արեգակնային էներգիայի մեջ նաև, ստեղծում են մեծ կենսազանգված, նվազեցնում են ջամուշադրան արագությունը և կենսացենողի մյուս բնակիչների համար ստեղծում բազմաթիվ անբարենպաստ պայմաններ: Սակայն կամ նաև այնպիսի դոմինանտ տեսակներ, առանց որոնց մյուս տեսակները գոյություն ունենալ չեն կարող: Դրանք ստեղծում են միկրոնիջավայր ամբողջ կենսացենողի համար: Դոմինանտ տեսակի (տեսակների) վերացման դեպքում մեծ վտանգ է սպառնում ամբողջ կենսացենողին: Դոմինանտ տեսակներ հիմնականում համարվում են բույսերը, հազվադեպ՝ կենդանիները:

Կենսացենողներում կամ նաև քիչ թվով կամ հազվադեպ երկրորդական տեսակներ, դրանց գերակայությունը հանդիսանում է համակեցության կայուն զարգացման երաշխիք: Սովորաբար հարուստ տեսակային կազմ ունեցող կենսացենողներում բոլոր տեսակներն ունեն փոքր թվաքանակ: Գոյություն ունի այսպիսի օրինաչափություն. ինչքան աղքատ է տեսակային կազմը, այնքան շատ են դոմինանտ տեսակները: Նման պայմաններում հնարավոր է դոմինանտ տեսակների թվաքանակի թույքային աճ:

## 19. Կենսացենողի տարածական կառուցվածքը

Կապված տեսակների պահանջմունքների և բնակության պայմանների համապատասխանության հետ՝ նրանք տարածության մեջ կարող են բաշխվել տարբեր կերպ: Տարածության մեջ կենսացենողը կազմող տեսակների այդպիսի բաշխումը կոչվում է կենսացենողի տարածական կառուցվածքը: Այն լինում է ուղղահայաց և հորիզոնական: Երկարատև օարգացման գործընթացում տեսակները, որոնք կազմում են համակեցություններ, այնպես են բաշխված, որ պրակտիկորեն իրար չեն խանգարում: Այդպիսի բաշխումը կոչվում է յարուսականություն (հարկայնություն): Այն ավելի հստակ արտահայտված է բուսական ցենոզներում: Որպես կանոն՝ տարբեր կենսածին ձևեր գրաղեցնում են տարբեր յարուսներ:

Կեսացենոզների յարուսներն իրարից տարբերվում են բարձրությամբ, օգանիզմների կազմով, էկոլոգիայով և կենսացենոզների կյանքում օրգանիզմների ունեցած դերով:

Անտառներում սովորաբար առանձնացնում են 5-6 յարուսներ՝

1. առաջին մեծության ծառեր (տերևները դասավորված են բարձր),
2. երկրորդ մեծության ծառեր (օգտագործում են առաջին յարուսի կողմից չօգտագործված լուսը),
3. անտառաբխուտ (ապրում են թույլ լուսավորվածության և սննդատարրերի անբավարարության պայմաններում և ունեն ցածր հասակ),
4. բարձրահասակ խոտաբույսեր,
5. ցածրահասակ խոտաբույսեր:

Կենսացենոզներում կենդանիները ևս գրաղեցնում են որոշակի մակարդակներ: Յողում ապրում են բազմաթիվ հողային որդեր, միկրոօրգանիզմներ, հողափոք կենդանիներ և այլն: Յողի մակերևույթին՝ տերևային թաղիքի տակ, բնակվում են բազմաթիվ բազմոտանիներ, գիշատիչ բգեցներ, մանր կաթնասուններ: Թոշունները գրաղեցնում են տարբեր յարուսներ, իսկ խոշոր կաթնասուններն ապրում են ներքեւի յարուսում: Յարուսականությունը լավ արտահայտված է նաև ջրային կենսացենոզներում:

Տարածության մեջ կենդանի օրգանիզմների առանձնյակները բաշխված են անհամաչափ: Սովորաբար առանձնյակները կազմում են խմբեր: Այս գործընթացը հանդիսանում է օրգանիզմների գոյության համար անհրաժեշտ հարմարվողական գործոն: Օրգանիզմների այդպիսի խմբերը որոշում են կենսացենողի հորիզոնական կառուցվածքը: Այդպիսի բաշխնան օրինակներ են համարվում փոերի, գերբերի, այծքաղների հոտերը արևադարձային տափաստաններում, թռչունների երամները, կորալների գաղութները ջրի հատակին և այլն:

Բուսական համակեցություններում հորիզոնական կառուցվածքի տարրական միավորներ են համարվում միկրոցենոզը և միկրոխմբավորումները:

Միկրոցենոզը համարվում է կենսացենողի՝ իր չափերով ամենափոք տարրական միավորը: Համարյա ցանկացած համակեցություն իր մեջ ներառում է միկրոհամակեցությունների կամ միկրոցենոզների համակարգեր:

Միկրոխմբավորումը նույն յարուսի սահմաններում մեկ կամ մի քանի տեսակների խտացումն է, ներյարուսայինխճանկարայինքնէ: Օրինակ, մամուռների կողմից գրաղեցվածյարուսում կարելի է առանձնացնել մամուռների մի քանի բժեր՝ մեկ կամ մի քանի տեսակների դոմինանտությամբ:

»» 19. Կենսացենողի տարածական կառուցվածքը

Խճանկարային բիջը հնարավորություն է տալիս ավելի լրիվ օգտագործել միկրոբնակատեղերը: Միկրոխմբավորումը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ և արագ օգտագործել սննդային պաշարները: Այն առաջ է բերում կենսաբազմազանության բարձրացում, նպաստում է կենսացենողի կայունությանը և կենսունակությանը:

## 20. Օրգանիզմների հարաբերությունները կենսացենողում

Կենսացենողում տարբեր տեսակների օրգանիզմների միջև գոյություն ունեն ուղղակի և անուղղակի փոխհարաբերություններ: Բեկլամիշևան (1970թ.) այդ փոխհարաբերությունները բաժանել է 5 տիպի:

1. Առաջին տիպի փոխհարաբերությունը ծագում է այն դեպքում, երբ կենսացենողում մի տեսակը սնվում է մյուսով, նրա մահացած մնացորդներով կամ կենսագործունեության արգասիքներով: Սննդի պաշարների հանդեպ մատչելիության աստիճան ձեռք բերելու համար երկու տեսակների միջև ընթացող մրցակցության դեպքում ծագում է անուղղակի փոխհարաբերություն:
2. Երկրորդ տիպի փոխհարաբերության իմաստն այն է, որ մեկ տեսակը նպաստում է մյուսի տարածմանը: Բույսերի սերմերի տարածումը իրագործվում է պասիվ և ակտիվ եղանակներով: Ակտիվ տեղափոխման ժամանակ սերմերն անցնում են կենդանիների (հատկապես թռչունների) մարսողական համակարգով: Սնկերի սպորմերը հիմնականում տարածվում են միջատների միջոցով:
3. Այս փոխհարաբերության ժամանակ մեկ տեսակը իր կենսագործունեության արդյունքում փոխում է մյուս տեսակի բնակատեղի պայմանները: Տեր և մակարույժ փոխազդեցությունը այսպիսի փոխհարաբերության օրինակ է:
4. Այս փոխհարաբերությունը պասիվ տարածման միջոց է: Դատուկ է այն տեսակներին, որոնք իրենց բնականոն կենսագործունեության համար մեկ բիոտոպից տեղափոխվում են մյուսը: Դա հիմնականում բնորոշ է անուղղակի զարգացում ունեցող կենդանիներին (աղեխորշավորներ, տափակ և օղակավոր որդեր, խեցգետնակերպեր, միջատներ և այլն): Որպես կանոն՝ այս տեսակների հասուն առանձնյակներն ու թրթուրները ապրում են տարբեր միջավայրերում: Կան նաև բազմաթիվ այլ օրինակներ:
5. Երկու տեսակների միջև գոյություն ունեցող փոխհարաբերության մեկ այլ տիպն էլ այն է, երբ մի տեսակը իր շինությունը կառուցելու համար օգտագործում է այլ տեսակի արտաթրության արգասիքները, մահացած մասերը և այլն: Օրինակ՝ թռչուններն իրենց բույնը հյուսելու համար օգտագործում են չոր ճյուղեր, փետուրներ, կաթնասունների բուլողը:

Բնության մեջ ավելի տարածված են երկու տեսակների միջև գոյություն ունեցող առաջին և երրորդ տիպերի փոխհարաբերությունները:

## 21. Էկոլոգիական խորշ

Էկոլոգիական խորշը ժամանակակից էկոլոգիայի հիմնարար հասկացություններից մեկն է:

Էկոլոգիական խորշը միջավայրի գործոնների ամբողջությունն է, որի սահմաններում բնակվում են և երկար ժամանակ կարող են գոյություն ունենալ այս կամ այն տեսակի օրգանիզմները: Էկոլոգիական խորշը հանդիսանում է օրգանիզմների տեղը բնության մեջ:



Զորյա Շաթչինստոն  
(1903- 1991)

1914թ. ամերիկացի կենդանաբան Զ. Գրիննելլը և 1927թ. անգլիացի Էկոլոգ Չ. Էլտոնը էկոլոգիական խորշը սահմանել են որպես տեսակի տարածման ամենափոքր միավորը, կենսական միջավայրում տվյալ օրգանիզմի տեղը, նրա դիրքը սննդային շղթայում: Ամերիկացի Էկոլոգ Գ. Շաթչինստոնը էկոլոգիական խորշը սահմանել է հետևյալ կերպ. դա երևակայելի բազմաչափ տարածություն է, որի վեկտորները համադաշտասխանում են տեսակի նորմալ գոյության համար անհրաժեշտ գործոններին: Նա առանձնացրել է երկու տիպի խորշեր՝

- հիմնարար, որը մրցակցության բացակայության դեպքում կարող է զբաղեցվել պոպուլյացիայի կողմից և որոշվում է օրգանիզմների ֆիզիոլոգիական առանձնահատկություններով,
- իրականացվող, որը հանդիսանում է հիմնարար խորշի մի մասը, որի սահմաններում տեսակն իրականում հանդիպում է բնության մեջ և զբաղեցնում է այն այլ տեսակների հետ մրցակցության ժամանակ: Որպես կանոն՝ իրականացվող էկոլոգիական խորշը միշտ փոքր է հիմնարարից:

Յուրաքանչյուր տեսակ ունի իր էկոլոգիական խորշը և իրեն հատուկ էկոլոգիական խորշը: Բույսերի և կենդանիների շատ տեսակներ կարող են գոյություն ունենալ միայն իրենց հատուկ խորշերում, որտեղ պահպանվում են որոշակի ֆիզիկաքիմիական գործոններ, ջերմաստիճան և սննդի աղբյուրներ: Օրինակ՝ Երբ Չինաստանում սկսեցին ոչնչացնել եղեգնութները, որոնք սնունդ էին հանդիսանում պանդայի համար, այդ կենդանին կանգնեց բնաջնջման եզրին (պանդայի կերաբաժնի մոտ 99% -ը կազմում է եղեգնը):

Միևնույն խորշում համատեղ ապրող տեսակները հեշտությամբ հարմարվում են իրենց բնակատեղի պայմանների փոփոխություններին, որի արդյունքում նրանց ոչնչացման հավանականությունը փոքրանում է:

Դամակեցություններում տեսակի գոյությունը պայմանավորված է բազմաթիվ գործոնների գուգակցմանը և ազդեցությամբ: Սակայն այս կամ այն էկոլոգիական խորշին նրա պատկանելությունը որոշելու համար ելնում են օրգանիզմների սննդան բնույթից և սնունդ գտնելու կամ տալու ընդունակությունից: Օրինակ՝ կանաչ բույսերը, մասնակցելով կենսացեղով կազմավորման գործընթացին, ապահովում են բազմաթիվ էկոլոգիական խորշերի գոյությունը: Այդպիսի էկոլոգիական խորշերից յուրաքանչյուրն իր մեջ ընդգրկում է իր տեսակային կազմով բազմաբնույթ օրգանիզմների խմբեր:

## »» 21. Էկոլոգիական խորշ

Այս կամ այն սննդային պաշարի հանդեպ տեսակների նեղ մասնագիտացումը նվազեցնում է մրցակցությունը և մեծացնում համակեցության կառուցվածքի կայունությունը:


Գոյություն ունեն սննդային պաշարներից օգտվելու տարբեր տիպեր.

- Սննդի բնույթին համապատասխան տեսակի ձևաբանության (մորֆոլոգիա) և վարքի մասնագիտացում: Օրինակ՝ կապված սննդան առանձնահատկությունների հետ՝ սերինոսի տեսակներն ունեն կտուցի տարբեր կառուցվածքներ: Կոզու ծաղիկների վրա սննդում է կոզու հողային սերինոսը, որն ունի երկար կտուց: Մեծ հողային սերինոսն ունի հաստ, վիթխարի կտուց, որով կարողանում է ուտել բույսերի խոշոր սերմեր: Ծառային սերինոսն ունի ուղիղ կտուց, որով փորում է ծաղերի կեղևը:
- Սննդի ուղղահայաց բաշխում: Օրինակ՝ այսպիսի բաշխում գոյություն ունի ծառերի վրա և անտառային թաղիքում ապրող բնակիչների միջև:
- Սննդի հորիզոնական բաշխում: Այսպիսի բաշխում գոյություն ունի միկրոբնակատեղերում:
- Այս տիպերից յուրաքանչյուրը կամ նրանց զուգակցությունը ստեղծում են պայմաններ իրար հետ թույլ մրցակցող օրգանիզմների տարբեր խմբերի առաջացման համար, քանի որ այդ խմբերից յուրաքանչյուրն զբաղեցնում է իր խորշը:

Համակեցություններում տեսակների էկոլոգիական խորշերի նեղացման կամ ընդարձակման վրա մեծ ազդեցություն են թողնում մրցակիցները: Ըստ Գ. Գառուզի կանոնի՝ էկոլոգիալես մոտ տեսակների մրցակցային բացառումը կարող է արտահայտվել այնպես, որ երկու տեսակներ չեն կարող միմյանց հարմարվել նույն էկոլոգիական խորշում: Այդպիսի տեսակների միջև մրցակցությունը վերանում է, եթե փոխվում է նրանց կյանքի բնույթը կամ էլ միջավայրի գործոնների հանդեպ ունեցած պահանջնունքները: Դրա արդյունքում տեղի է ունենում տեսակների էկոլոգիական խորշերի տարանջատում: Սակայն նրանք ձեռք են բերում նույն կենսացենոզում ապրելու ընդունակություն: Օրինակ՝ տափաստանային կենսացենոզներում համատեղ ապրում են խոտակեր կենդանիների բազմաթիվ խմբեր՝ մանր և խոշոր կաթնասուններ, կրծողներ, միջատներ և այլն: Սակայն նրանցից յուրաքանչյուրը սննդում է բույսերի այն մասերով, որոնք մատչելի չեն մյուսների համար: Նույն կենսացենոզում բնակվող խոտակեր կենդանիների միջև ստեղծվող այդպիսի փոխհարաբերությունները մրցակցային բնույթ չեն կրում և նույնիսկ ապահովում են հարաբերվող տեսակների մեծ թվաքանակ:

Տարածական և ժամանակային առումով տեսակների զբաղեցրած էկոլոգիական խորշերը փոփոխական են: Կենսացենոզներում շատ հաճախ զարգացման տարբեր շրջաններում նույն տեսակի առանձնյակները զբաղեցնում են տարբեր խորշեր: Օրինակ՝ գորտի շերեփուկը սննդում է բույսերով, իսկ հասուն գորտը տիպիկ գիշատիչ է: Շերեփուկն ու հասուն գորտը զբաղեցնում են տարբեր էկոլոգիական խորշեր և տրոֆիկ մակարդակներ:

Կապված եղանակային պայմանների փոփոխությունների հետ (ամառ-ձմեռ) չվող թռչունները և զբաղեցնում են տարբեր էկոլոգիական խորշեր:



Գեղրդի Գարիլով  
(1910-1986)

Այդ երևույթը շատ լավ արտահայտված է անուղղակի զարգացում ունեցող կենդանիների մոտ (կենդանիների անուղղակի զարգացման դեպքում սահմանային զարգացման հետևանքով առաջանում է թրթուր, որը տարբերվում է հասուն օրգանիզմից ներքին և արտաքին կառուցվածքի շատ հատկանիշներով, սնման և տեղաշարժման բնույթով և մի շարք այլ առանձնահատկություններով): Այսպիսի տեսակների հասուն առանձնյակները և թրթուրները զբաղեցնում են տարբեր էկոլոգիական խորշեր, որը նրանց զգալի առավելություններ է տալիս:

Կենսացենոզում բույսերի տարբեր տեսակներ նույնական զբաղեցնում են տարբեր էկոլոգիական խորշեր, որը թուլացնում է նրանց միջև ընթացող մրցակցության լարվածությունը: Տարբեր բնական գոտիներում նույն տեսակին պատկանող բույսերը ևս կարող են զբաղեցնել տարբեր էկոլոգիական խորշեր:

Եթե մրցակցությունն ընթանում է մոտ ազգակցական կապեր ունեցող կամ էկոլոգիապես նման տեսակների միջև, ապա նրանց բնակության տարածքը նեղանում է մինչև օպտիմալ սահմաններ: Եթե միջտեսակային պայքարը նեղանում է տեսակի էկոլոգիական խորշի սահմանները, ապա ներտեսակային պայքարը նպաստում է այդ սահմանների ընդարձակմանը:

Որոշ տեսակների էկոլոգիական խորշի սահմանները կարող են շատ նեղ լինել: Օրինակ՝ արևադարձային Աֆրիկայում ապրող որդերի տեսակներից մեկն ապրում է գետաձիու կողմերի վրա և սնվում է նրա արցունքներով: Այս էկոլոգիական խորշը համարվում է ամենափոքրերից մեկը:

## **22. Կենսացենոզի էկոլոգիական կառուցվածքը**

Կենսացենոզը ձևավորվում է համակեցության էկոլոգիական կառուցվածքը բնութագրող օրգանիզմների էկոլոգիական որոշակի խնդերից: Տարբեր կենսացենոզներում նման էկոլոգիական խորշեր զբաղեցնող օրգանիզմների էկոլոգիական խնդերը կարող են ունենալ տարբեր տեսակային կազմ: Օրինակ՝ գերխոնակ տարածքներում գերակշռում են խոնավասեր, իսկ չոր պայմաններում՝ չորադիմացկուն բույսերը:

Կենսացենոզի էկոլոգիական կառուցվածքի արտացոլում է նաև նման սնման և նման տիպում միավորված օրգանիզմների խնդերի համապատասխանությունը: Օրինակ՝ անտառներում գերակշռում են օրգանական մնացորդներով սնվող, իսկ տափաստաններում և կիսաանապատներում՝ բուսակեր օրգանիզմները: Օվկիանոսների խոր շերտերում կենդանիների սննան հիմնական տիպը գիշատչությունն է, իսկ վերին շերտերում գերակշռում է խառը սնման տիպը:

Կենսացենոզի էկոլոգիական կառուցվածքը նրա օրգանիզմների էկոլոգիական խնդերի կառուցվածքն է, որոնք համակեցության տարբեր էկոլոգիական խորշերում կատարում են որոշակի գործառույթներ:

Տեսակային և տարածական համակրում էկոլոգիական խորշի յուրահատկություններով օժտված էկոլոգիական կառուցվածքը հանդիսանում է կենսացենոզի մակրոդիտակային բնութագիրը:

Մակրոդիտակային բնութագիրը հնարավորություն է տալիս որոշել այս կամ այն կենսացենոզի հատկությունները, տարածության և ժամանակի մեջ բացահայտել նրա կայունությունը, կանխագուշակել մարդասին գործոնի ազդեցության արդյունքում ծագող փոփոխությունների հետևանքները:

## 23. Սահմանային էֆեկտ

Կենսացենողի կառուցվածքային բնութագրի կարևոր հատկանիշներ են համարվում համակեցությունների միջև գոյություն ունեցող սահմանները: Կենսացենողներն իրարից մերկուսացած չեն, նրանց միջև գոյություն ունեն սահմանային գոտիներ: Սակայն պետք է նշել, որ այդ սահմանները հիմնականում հստակ արտահայտված չեն, քանի որ, որպես կանոն, հարևան կենսացենողները միտում ունեն աստիճանաբար փոխարինվել մեկը մյուսով: Կտրուկ սահմանները հատուկ են այն համակեցություններին, որոնք ենթակվել են մարդածին գործոնների ուժգին ազդեցությանը:

Ժամանակին Գետեն գրել է, որ իր ազատ խաղի ընթացքում բնությունը հոգ չի տանում մարդու ստեղծած ցանկապատերի մասին:

Ուսումնասիրելով անտառի եզրերը, որին հաջորդում է մարգագետնային համակեցությունը՝ կարելի է պնդել, որ նրանց միջև հստակ սահման գոյություն չունի: Խսկապես, անտառին հատուկ շատ տեսակներ բողնում են իրենց բնակատեղը և հանդիպում անտառից շատ հեռու գտնվող բաց տարածություններում: Մյուս կողմից մարգագետնային շատ տեսակներ հաստատվում են անտառի սաղարթի տակ:

20-րդ դարի 30-ական թվականներին ամերիկացի բնախույզ Ա. Լեռպոլդը շեշտել է որսորդական տնտեսության գործունեության ժամանակ այսպես կոչված «սահմանային էֆեկտի» հաշվի առնման անհրաժեշտությունը: Տվյալ դիրքում սահմանային էֆեկտի էռլյունն այն է, որ սահմանը ոչ թե անտառի եզրն է, այլ երկու կենսացենողների կամ գյուղատնտեսական հանդակի միջև գոյություն ունեցող յուրահատուկ անցումային գոտին (Ակ. 16): Երկու կենսացենողների միջև գտնվող սահմանային գոտին գրավում է միջանկյալ դիրք և բնութագրվում է իրեն հատուկ ջերմաստիճանային ռեժիմով, խոնավությամբ, լուսավորվածությամբ, կենդանիների և բույսերի բազմազանությամբ և այլն: Այդ գոտին որսի համար ունի կերային ու պաշտպանական ավելի լավ պայմաններ և, որ ավելի կարևոր է, օժտված է բարձր արդյունավետությամբ:

Արտաքին իրարից տարբերվող հարակից համակեցությունների միջև գոյություն ունեցող անցումային գոտին կոչվում է էկոտոն:

Կենսացենողների միջև թիշ թիշ շատ հստակ սահմանների կարելի է հանդիպել այն տեղերում, որտեղ դիտվում են ոչ կենսածին գործոնների կտրուկ փոփոխություններ: Օրինակ՝ այդպիսի սահմաններ գոյություն ունեն ջրային և ցամաքային կենսացենողների միջև: Այդպիսի սահմաններ կան նաև այն տեղերում, ուր տեղի է ունենում հողի հանքային կազմի կտրուկ հերթափոխ:

Դաճախ էկոտոնում տեսակների թիվը գերազանցում է հարևան յուրաքանչյուր կենսացենողի տեսակների թիվը:

Կենսացենողների՝ իրարից բաժանող սահմանային գոտիներում տեսակների բազմազանության և խտության այդպիսի միտումը կոչվում է սահմանային էֆեկտ:



Ալյոն Լեռպոլդ  
(1887-1948)



Ակ. 16. Անտառի եզրը

## Հարցեր կրկնության համար

1. Տվե՛ք կենսացենողի սահմանումը:
2. Որո՞նք են կյանքի կազմակերպվածության վերօրգանիզմային մակարդակի կարևոր յուրահատկությունները:
3. Ո՞րն է կենսացենողի տեսակային կազմը:
4. Ինչպիսի՞ տարածական կառուցվածք ունի կենսացենողը:
5. Ինչպիսի՞ յարուսներ են բնորոշ անտառներին:
6. Տվե՛ք «Էկոլոգիական խորշ» հասկացության սահմանումը:
7. Բնութագրե՛ք Գառլզեի՝ Էկոլոգիապես մոտ տեսակների մրցակցային բացառնան կանոնը:
8. Ինչպիսի՞ էկոլոգիական կառուցվածք ունեն կենսացենողները:
9. Ո՞րն է սահմանային էֆեկտի էությունը:

»» 24. Էկոհամակարգերի գործունեության սկզբունքները

## ԳԼՈՒԽ 4. ԷԿՈՌԱՍՎԱԿԱՐԳԵՐ

### 24. Էկոհամակարգերի գործունեության սկզբունքները

Էկոհամակարգ տերմինն առաջին անգամ առաջարկվել է անգիտացի բուսաբան Ա. Թենսլիի կողմից (1935թ.): Էկոհամակարգը հանդիսանում է էկոլոգիայի հիմնական գործառական միավորը: Այդ կենսահամակարգը ներառում է օրգանիզմները և անկենդիան միջավայրը, որոնք փոխազդում են այնպես, որ էներգիայի անընդհատ հոսքն ստեղծում է որոշակի կառուցվածք և նյութերի շրջանառությունը և անկենդիան բաղադրիչների միջև:

Այժմ լայն տարածում է գտել էկոհամակարգի հետևյալ սահմանումը. Էկոհամակարգը օրգանիզմների և անօրգանական բաղադրիչների ցանկացած միասնությունն է, որտեղ տեղի է ունենում նյութերի շրջանառություն:

Էկոհամակարգին՝ որպես բարդ համակարգի, բնորոշ է էմերժենտությունը, տարրերի անհրաժեշտ բազմազանությունը, կայունությունը, նյութերի կամ էներգիայի փոխանակության ձևերը, զարգացումը:

Էմերժենտություն (համակարգակի ծագող): համակարգի հատկությունները պայմանավորված են ոչ միայն նրանում գտնվող տարրերով, այլ նաև դրանց միջև գոյություն ունեցող փոխազդեցություններով (օրինակ՝ սիներգիզմի երևույթը, երբ թունավոր նյութերի ազդեցությունից առաջանում է ավելի թունավոր նյութը):

Էլեմենտների անհրաժեշտ բազմազանության սկզբունքը պնդում է, որ ցանկացած համակարգ չի կարող կազմված լինել բացարձակ միատեսակ էլեմենտներից, քանի որ էլեմենտների բազմազանությունը համակարգի գործունեության անհրաժեշտ պայման է: Էլեմենտների բազմազանության ներքին սահմանը հավասար է 2-ի, վերինը ձգտում է անսահմանության: Բազմազանությունը և նյութերի տարրեր փուլային վիճակների առկայությունը ապահովում են էկոհամակարգերի հետերոգենությունը:

Դամակարգի դիմանմիկ կայունությունը կախված է արտաքին փոխազդեցությունների հանդեպ ներքին փոխազդեցությունների գերակայումից: Եթե կենսաբանական համակարգի վրա արտաքին ազդեցությունը գերակայում է ներքին փոխազդեցությունների նկատմամբ, ապա դա կարող է համակարգում առաջացնել անվերադարձ փոփոխություններ կամ համակարգի մահ:

Ըստ զարգացման սկզբունքի՝ բոլոր էկոհամակարգերի ծագումը և գոյությունը պայմանավորված են զարգացմամբ: Զարգացման ընթացքում տեղի է ունենում համակարգի բարդացում և ենթահամակարգերի առաջացում:

Առանց բացառության բոլոր էկոհամակարգերը հանդիսանում են բաց համակարգեր, ուստի նրանց կենսագործունեության համար պետք է էներգիայի հոսք և արտահոսք:

Էներգիայի հոսքի և արտահոսքի պայմաններում միջավայրի փոփոխության նաև շտաբները խիստ փոփոխական են և կախված են՝

- համակարգի չափերից. ինչքան այն փոքր է, այնքան ավելի ուժեղ է կախված արտաքին ազդեցություններից,
- փոփոխակարգության ուժգնությունից. ինչքան ուժգին է փոփոխակարգությունը, այնքան մեծ են էներգիայի հոսքը և արտահոսքը,

- ավտոտրոֆ և հետերոտրոֆ օրգանիզմների գործունեության հավասարակշռությունից. անհավասարակշիռ համակարգերի գործունեության համար պահանջվում է ավելի շատ արտաքին էներգիա,
- համակարգի զարգացման փուլերից և աստիճաններից. Երիտասարդ համակարգերը տարբերվում են հասուն համակարգերից:
- Էկոհամակարգ մտնող էներգիան ունի մեկ ուղղություն: Էներգիայի մի մասը ավտոտրոֆ օրգանիզմների կողմից կուտակվում է օրգանական նյութերում և իրենից ներկայացնում էներգիայի ավելի «խտացված» ձև: Էներգիայի հիմնական մասն անցնում է համակարգի միջով և հեռանում դրանից:
- Ի տարբերություն էներգիայի՝ կյանքի համար անհրաժեշտ սննդատարրերը և ջուրը համակարգի կողմից կարող են օգտագործվել բազմակի անգամ:

## 25. Էկոհամակարգի կառուցվածք

Կենսաբանության տեսանկյունից էկոհամակարգերում տարբերում են հետևյալ բաղադրիչները՝

- անօրգանական նյութեր ( $H_2O$ ,  $CO_2$ ,  $N_2$ ,  $C$  և այլն),
- օրգանական միացություններ (ածխաջրեր, ճարպեր, սպիտակուցներ, հումուսային նյութեր և այլն), որոնք կապ են հաստատում էկոհամակարգի կենդանի և անկենդան բաղադրիչների միջև,
- օդային, ջրային և սուբստրատային միջավայրեր, եղանակային պայմաններ և միջավայրի այլ ֆիզիկական գործոններ,
- պրոդրուցենտներ. օրգանիզմներ են (հիմնականում՝ բույսերը), որոնք պարզ անօրգանական նյութերից ( $H_2O$  և  $CO_2$ ), օգտագործելով արևի էներգիան, սինթեզում են բարդ օրգանական նյութեր, որոնք ել սնունդ են հանդիսանում մնացած բոլոր օրգանիզմների համար,
- կոնսումենտներ. հետերոտրոֆ օրգանիզմներ են (հիմնականում բակտերիաները և սնկերը), որոնք իրենց կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիան ստանում են մահացած հյուսվածքների քայլայման արդյունքում կամ ել օգտագործում են լուծված օրգանական նյութերը:

Նյութափոխանակության գործընթացին մասնակցող օրգանիզմները տարածության մեջ մասնակիորեն տարանջատված են: Ավտոտրոֆ գործընթացները ավելի ակտիվ ընթանում են վերին հարկում (յարուսական), որտեղ տեսանելի լույսը մատչելի է: Այդ հարկը կոչվում է «կանաչ գոտի»: Հետերոտրոֆ գործընթացները ավելի ակտիվ ընթանում են ներքին հարկում, որտեղ հողում և նստվածքներում կրտսակվում են օրգանական նյութեր:

Էկոհամակարգերի բաղադրիչների հիմնական գործընթացները տարանջատված են նաև ժամանակային առունությունում: Այսպես, հնարավոր է նկատելի խզում ավտոտրոֆ օրգանիզմների կողմից սինթեզված օրգանական նյութերի և հետերոտրոֆների կողմից այդ նյութերի օգտագործման միջև: Այնուամենայնիվ, էկոհամակարգերի այդ 3 կենդանի բաղադրիչներին՝ պրոդրուցենտներին, կոնսումենտներին և ռեդուցենտներին, կարելի է դիտել որպես բնության 3 գործառական բազավորություններ, այնպես որ դրանց տարանջատումը հիմնականում հիմնված է սննդան տիպի և էներգիայի ստացման եղանակի վրա:

»» 26. Եներգիայի և նյութերի հոսքը էկոհամակարգերում

## 26. Եներգիայի և նյութերի հոսքը էկոհամակարգերում

Ցանկացած կյանք պահանջում է եներգիայի և նյութերի անընդհատ հոսք: Եներգիան ծախսվում է կենսական ռեակցիաների իրագործման, իսկ նյութերը՝ օրգանիզմների մարմնի կառուցման վրա: Բնական էկոհամակարգերի գոյությունն ուղեկցվում է կենդանի և անկենդան բնության միջև նյութաեներգետիկ բարդ գործընթացների փոփոխությամբ: Էկոլոգիայում եներգիայի և նյութերի հոսքը դիտվում են որպես ավտոտրոֆ օրգանիզմներին եներգիայի և նյութերի փոխանցում դրսից, իսկ այնուհետև, սննդային շղթաներով, մեկ տրոֆիկ մակարդակի օրգանիզմներից՝ հաջորդներին:

Դամակեցություններում եներգիայի հոսքը օրգանական նյութերի քիմիական կապերի եներգիայի անցումն է օրգանիզմների մեկ մակարդակից հաջորդներին:

Նյութերի հոսքը քիմիական տարրերի ձևով նյութերի տեղափոխությունն է ավտոտրոֆ օրգանիզմներից ռեդուցենտներին և հետո քիմիական ռեակցիաներով, առանց կենդանի օրգանիզմների մասնակցության, նորից ավտոտրոֆ օրգանիզմներին: Նյութերի հոսքը կատարվում է փակ շրջանով, որի պատճառով այդ գործընթացը կոչվում է շրջանառություն: Ի տարբերություն նյութերի՝ եներգիան կարելի է օգտագործել մեկ անգամ: Եներգիայի միակողմանի հոսքը համարվում է բնության յուրահատուկ երևույթ և տեղի է ունենում ֆիզիկայի օրենքներով: Այդ օրենքներից մեկն ասում է, որ եներգիայի մեկ ձևը (լույսի եներգիան) կարող է փոխարկվել մեկ այլ ձևի (սննդի պատենցիալ եներգիայի), բայց այն երբեք նորից չի ստեղծվում և չի կորչում: Մեկ ուրիշ օրենքի համաձայն՝ չկա որևէ գործընթաց՝ կապված եներգիայի փոխակերպման հետ, որ չունեկցվի եներգիայի որոշակի կորուստով: Այդպիսի փոխակերպումների ընթացքում եներգիայի որոշակի քանակություն վեր է ածվում անմատչելի շերմային եներգիայի և կորչում: Բոլոր էկոհամակարգերի գոյությունը կապված է եներգիայի անընդհատ հոսքի հետ, որն անհրաժեշտ է բույր օրգանիզմներին իրենց կենսագործունեության և վերարտադրման պահպանման համար:

## 27. Եներգիայի և նյութերի փոխանցումը էկոհամակարգերում (սննդային շղթա)

Կենսացենոզներում եներգիայի և նյութերի փոխանցումը մի տրոֆիկ մակարդակից մյուսին իրագործվում է սննդային շղթաների միջոցով (նկ. 17): Յուրաքանչյուր տեսակ օգտագործում է օրգանական նյութերի մեջ գտնվող եներգիայի միայն մի մասը՝ նրա տրոհումը հասցնելով մինչև որոշակի փուլի: Տվյալ տեսակի համար ոչ պիտանի, բայց դեռևս եներգիայով հարուստ այդ նյութերն օգտագործվում են այլ օրգանիզմների կողմից: Այսպիսով, էկոհամակարգերում զարգացման ընթացքում ստեղծվել են իրար հետ փոխադարձ կապված տեսակների շղթաներ, որոնք հաջորդաբար նյութեր և եներգիա են ստանում ելակետային սննդայութերից: Տեսակների առանձնյակների միջև գոյություն ունեցող այդպիսի կապերը կոչվում են սննդային կապեր: Սննդան շղթայի առաջին օղակներն անվանում են սննդային կամ տրոֆիկ մակարդակներ: Յուրաքանչյուր սննդային շղթա սկսվում է կամ կանաչ բույսերով (պրոդուցենտներ), կամ նրանց մնացորդներով:

Սննդային շղթաների օրինակներ կարելի են տեսնել ամենուրեք՝



Նկ. 17. Սննդային շղթա

1. բույս - խոտակեր կենդանի,
2. բույս - խոտակեր կենդանի - գիշատիչ,
3. բույս - խոտակեր կենդանի - առաջնային գիշատիչ - երկրորդային գիշատիչ,
4. ֆիտոպլանկտոն - աղեխորշավոր կենդանի - մանր ծուկ - խոշոր ծուկ - մարդ:

Բայց բնական պայմաններում սննդային շղթաները ավելի մեծ քանակի օղակներից են կազմված, քանի որ նրանց մեջ են ընդգրկված մսակեր կենդանիներ, գիշատիչներ և մակարույժներ: Սննդային շղթաներն իրարից մեկուսացված չեն: Գրեթե միշտ տարրեր տեսակներ սնվում են մի քանի տարրեր օբյեկտներով, իրենք էլ սննդի աղբյուր են հանդիսանում էկոհամակարգի մի քանի անդամների համար: Այսպիսով, ստացվում է սննդային կապերի բարդ ցանց:

## **28. Էներգիայի կորուսները սննդային շղթաներում (էկոլոգիական բուրգի կանոնը)**

Սննդային շղթաներում կարելի է հաշվել բույսերում կուտակված էներգիայի փոխանցումը



Ռայմոնդ Լինդեման  
(1915-1942)

շղթայի մի օղակից մյուսին: Սննդային շղթան կազմող բույս տեսակները գոյություն ունեն կանաչ բույսերի կողմից սինթեզված օրգանական նյութերի հաշվին: Ընդ որում կապված սննդան պրոցեսում էներգիայի օգտագործնան և փոխակերպման արդյունավետության հետ՝ գործում է մի կարևոր օրինաչափություն, որի եռթյունը հետևյալն է. ֆոտոսինթեզի ընթացքում բույսերն օգտագործում են արեգակից ճառագայթվող էներգիայի միայն մեկ տոկոսը: Էներգիայի այդ քանակությունը կուտակվում է (պոտենցիալ էներգիայի ծևով) սինթեզված օրգանական նյութերի քիմիական կապերում: Երբ կենդանին օգտագործում է բույսը որպես սնունդ, սննդի մեջ եղած էներգիայի մեջ մասը ծախսվում է նրա կենսագործունեության բազմաթիվ գործընթացներում, փոխարկվում ջերմային էներգիայի և ցրվում միջավայրում: Յետևաբար, սննդային շղթայի առաջին իսկ փուլում տեղի է ունենում էներգիայի կամ կենսագովածի զգալի


կորուստ (նկ. 18): Սննդային շղթայի յուրաքանչյուր հաջորդ օղակում, նախորդի համեմատությամբ, կորչում է էներգիայի 80 - 95%-ը, սննդի էներգիայի միայն 5 - 20%-ն է (միջին հաշվով՝ 10%-ը) անցնում կենդանու մարմնի նոր կառուցված նյութի մեջ (Ռ. Լենդեմանի օրենք, 1942թ.): Էներգիայի այդպիսի մեծ կորուսների դաշտառով սննդային շղթաները շատ երկար լինել չեն կարող և հիմնականում բաղկացած են 3-5 օղակներից:

Էկոհամակարգերում օրգանական նյութերի ստեղծման արագությունը կոչվում է կենսաբանական արտադրանք, կենդանի օրգանիզմների մարմնի զանգվածը՝ կենսագոված:

Այսպիսով, էկոհամակարգերի կենսաբանական արտադրանքը կենսագովածի ստեղծման արագությունն է:

Բույսերի կողմից ստեղծված արտադրանքը կոչվում է առաջնային կենսաբանական արտադրանք կամ առաջնային կենսաբանական արտադրանքություն: Սննդային շղթայի մյուս օղակներում ստեղծված արտադրանքը կոչվում է երկրորդային կենսաբանական արտադրանք: Բնականաբար, հասկանալի է, որ երկրորդային արտադրանքը առաջնայինից մեծ կամ նույնիսկ նրան հավասար լինել չի կարող: Եթե սննդային շղթայի ցանկացած օղակում գնահատենք արտադրանքը կամ էներգիայի կորուստները, ապա կստանանք թվերի նվազող շարք, որոնցից յուրաքանչյուրը միջին հաշվով 10 անգամ փոքր է նախորդից: Այդ շարքը կարելի է արտահայտել գրաֆիկորեն, բուրգի տեսքով, որն ունի լայն հիմք և նեղ գագար (նկ. 19): Սննդային շղթայում կենսագովածի ստեղծման այդպիսի օրինաչափություններն էկոլոգներն անվանում են կենսաբանական արտադրանքի բուրգի կանոն:

»» 29. Թվաքանակի և կենսագանգվածի բուրգեր



Նկ. 18. Էներգիայի կորուսները էկոհամակարգում (միավորները տրված են 1018 Զոռուով)

## 29. Թվաքանակի և կենսագանգվածի բուրգեր

Էկոլոգների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն էներգիայի հոսքը, այլև էկոհամակարգի տարբեր տրոֆիկ մակարդակներում կենդանի նյութի ձևով էներգիայի ընդհանուր քանակության կուտակման բացահայտումը (Նկ.19): Տարբեր տրոֆիկ մակարդակներում կենդանի նյութի հարաբերությունն ընդհանրապես ենթարկվում է նույն կանոնին, ինչպես տրոֆիկ մակարդակ մտնող էներգիայի ընդհանուր քանակությունը. ինչքան բարձր է տրոֆիկ մակարդակը, այնքան ցածր է կենսագանգվածը և կենսագանգվածը



Նկ. 19. Էկոլոգիական բուրգի օրինակ

կազմող օրգանիզմների թվաքանակը: Տարբեր խմբերի օրգանիզմների թվաքանակի և զանգվածի հարաբերությունը պատկերացում է տալիս նաև համակեցության կայունության մասին՝ ընդունելով, որ պոպուլյացիաների թվաքանակը և կենսագանգվածը պոպուլյացիան կազմող օրգանիզմների և այլ պոպուլյացիաների համար հանդիսանում է կենսական տարածության ցուցանիշ: Օրինակ՝ անտառում եղած ծառերի թվով կարելի է որոշել ոչ միայն նրանցում կուտակված կենսագանգվածը և էներգիան, այլև պոպուլյացիաների առանձնյակների թվաքանակը և այլն:

Ցուրաքանչյուր տրոֆիկ մակարդակում թվաքանակի բուրգը արտահայտում է միայն օրգանիզմների խտությունը, բայց ոչ օրգանիզմների ինքնավերականգնման արագությունը: Եթե պոպուլյացիայի վերարտադրման ընթացքում նրա առանձնյակների մահացության աստիճանը բարձր է, ապա միևնույն է՝ այդպիսի պոպուլյացիան, որը կայունալով փոքր կենսագանգված, կարող է հանդիսանալ սննդի բավարար աղբյուր մեծ կենսագանգված և ցածր վերարտադրություն ունեցող գիշատիչների համար: Այդ պատճառով թվաքանակի բուրգը կարող է ունենալ շրջված տեսք, եթե ժամանակի տվյալ հատվածում օրգանիզմների խտությունը ցածր տրոֆիկ մակարդակում ավելի փոքր է, քան բարձր տրոֆիկ մակարդակում գտնվող օրգանիզմների խտությունը:

Օրինակ՝ թվաքանակի շրջված բուրգ կարող է հանդիպել այն դեպքում, երբ մեկ ծառի վրա բնակվում են միջատների բազմաթիվ պոպուլյացիաներ: Կենսազանգվածի շրջված բուրգը հատուկ է ջրային էկոհամակարգերին և հանդիպում է այն դեպքում, երբ առաջնային պրոդուցենտները արագ վերարտադրվում են, իսկ դրանցով սնվող, ավելի խոշոր կոնսումենտները ունենում են վերարտադրման երկար ժամանակաշրջան:

### **ԽՆԴԻՐՆԵՐ**

1. ՍԱՄԱՆ շղթան կազմված է հետևյալ օղակներից՝ ջրիմուռ-ջրային մանրանողնաշարավորներ - մանր ձկներ - խոշոր ձկներ: Որքա՞ն սկզբնական կենսազանգված է անհրաժեշտ խոշոր ձկան զանգվածի 1կգ-ով ավելանալու համար, եթե կենդանու զանգված է անցնում կերած սննդի զանգվածի 10%-ը:
2. Էկոլոգիական համակարգում օրվա ընթացքում բույսերի կենսազանգվածը ավելացավ 120 կգ-ով, բուսակեր կենդանիներինը՝ 13կգ-ով, իսկ գիշատիչներինը՝ 2 կգ-ով: Հաշվել առաջնային և երկրորդային կենսաբանական արդյունավետությունները (գ/ժամ) տվյալ էկոլոգիական համակարգում:
3. Ինանալով կենսազանգվածի մեկ տրոֆիկ մակարդակից մյուսին անցնելու կանոնը (մոտ 10%) և ընդունելով, որ յուրաքանչյուր տրոֆիկ մակարդակի կենդանիները սնվում են միայն նախորդ մակարդակի օրգանիզմներով, կազմեք հետևյալ սննդային շղթայի տարեկան կենսաբանական արդյունքի բուրգ՝ բույս - միջատ - գորտ - օձ - օձակեր թռչուն: Հետազոտվող տարածքում բույսերի տարեկան արդյունքը կազմում է 40 տոննա:

### **30. Նյութերի ռջանառությունը էկոհամակարգում**

Ցանկացած էկոհամակարգում գոյություն ունեն նյութափոխանակությամբ իրար հետ կապված օրգանիզմների խմբեր՝ պրոդուցենտներ, կոնսումենտներ և ռեդուցենտներ, որոնք իրագործում են կենդանի բջջի համար անհրաժեշտ էլեմենտների կրկնվող շրջանառությունը: Այդ խմբերի օրգանիզմների տարրեր տեսակներն իրենց աճի, զարգացման և վերարտադրման համար միջավայրից կլանում են նյութեր և միջավայր արտանետում օրգանական ու անօրգանական բնույթի իրենց կենսագործունեության արգասիքները:

Ածխածինը, ջրածինը, ազոտը, ֆոսֆորը և ևս 30 պարզ տարրեր անընդհատ փոխարկվում են օրգանական նյութերի կամ էլ ավտոտրոֆ բույսերի կողմից կլանվում են անօրգանական իոնների ձևով: Այսուհետև այդ նյութերն օգտագործվում են հետերոտրոֆների՝ կենդանիների և ռեդուցենտների կողմից: Վերջիններս ճեղքում են կենսագործունեության արգասիքները, բույսերի մնացորդները և դիակները և առաջանում ջրում լուծվող էլեմենտներ կամ գազային միացություններ: Այդ նյութերը վերադառնում են հող, մքնոլորտ կամ ջուր: Նյութերի շրջանառության համար շարժիչ ուժ է համարվում արեգակնային էներգիան, որն անմիջապես օգտագործվում է ֆոտոսինթեզող օրգանիզմների կողմից, իսկ հետո փոխանցվում էկոհամակարգը կազմող օրգանիզմների մյուս խմբերին: Արդյունքում, էկոհամակարգում ընթանում է սննդատարերի և էներգիայի հոսք, այդ գործընթացը կոչվում է կենսաերկրագիմիական շրջան:

»» 31. Ազոտի շրջանառություն

## 31. Ազոտի շրջանառություն

Ազոտը մտնում է սպիտակուցների և նուկլեինաթրուների կազմության մեջ և համարվում անփոխարինելի կենսածին էլեմենտ:

Դայտնի է, որ յուրաքանչյուր բջջի առաջանում է մայր բջջի բաժանման հետևանքով: Ընդ որում դուստր բջջները ժառանգում են մայրական բջջի հատկությունները: Իսկ բջջի հատկությունները որում են գլխավորապես նրա սուբստանցիաներով: Նուկլեինաթրուներն աղափում են ճիշտ այնորոշ սուբստանցիաները, որոնք կան մայրական բջջում:

Մթնոլորտը համարվում է ազոտի անսպառ շտեմարան: Նրանում ազոտի պարունակությունը կազմում է 78%: Սակայն խիստ կարևոր այդ կենսածին էլեմենտը (մթնոլորտային ազոտը) անմատչելի է և չի կարող անմիջապես օգտագործվել օրգանիզմների կողմից:

Էկոհամակարգերի կենսական բաղադրիչների կողմից ազոտի յուրացման համար անհրաժեշտ է, որ այն ամոնիում ( $\text{NH}_4^+$ ) կամ նիտրատ ( $\text{NO}_3^-$ ) իոնի ձևով մտնի քիմիական նյութերի կազմի մեջ: Գազային ազոտի՝ ( $\text{N}_2$ ) ամոնիակային ձևի փոխարկման գործընթացում (ազոտաֆիկացիա) կարևոր դեր են խաղում *Rhizobium* ցեղի բակտերիաները: Դրանք ապրում են լոբազգիների արմատների պալարագոյացումներում: Բույսերը բակտերիաներից ստանում են ազոտի մատչելի ձևերը, իսկ բակտերիաները բույսերից վերցնում են սնունդ (ածխաջրեր) և ձեռք են բերում բնակատեղ (մուտուալիզմի վառ օրինակ): Օրգանական նյութերի ձևով, սննդային շղթաների միջոցով ազոտը փոխանցվում է էկոհամակարգերի մյուս օրգանիզմներին (Ակ. 20):

Բջջային շնչառության ժամանակ ազոտօրգանական միացությունները ճեղքվում են (հանքայինացվում են), և հիմնականում ամոնիում իոնի ձևով ազոտն անցնում է միջավայր: Որոշ բակտերիաներ ընդունակ են ազոտի ամոնիակային ձևը փոխարկել նիտրատային ձևի (նիտրիֆիկացիայի գործընթաց): Պետք է նշել, որ ազոտի այդ երկու ձևերն էլ հեշտությամբ յուրացվում են բույսերի կողմից: Արդյունքում ազոտը՝ որպես հանքային կենսածին էլեմենտ, կատարում է անընդհատ շրջանառություն: Սակայն այդպիսի հանքայինացումը դարձելի է, քանի որ հողային որոշ բակտերիաներ կարող են ամոնիում և նիտրատ իոնները փոխարկել մոլեկուլային ազոտի՝  $\text{N}_2$ -ի (դենիտրիֆիկացիայի գործընթաց):

Այսպիսով, դենիտրիֆիկացնող բակտերիաների գործունեության ընորիկվ ազոտը մօտապես անցնում է մթնոլորտ, իսկ ազոտ ֆիխող բակտերիաների ազդեցության տակ այն նորից մնան է շրջանառության մեջ:

Զրային էկոհամակարգերում ևս գոյություն ունեն նիտրիֆիկացնող բակտերիաներ: Դրանց թվին են պատկանում կապտականաց ջրիմուռները (*Anabaena*, *Nostoc*, *Frichodesmium* ցեղեր և այլն):

Ոչ մեծ քանակությամբ նիտրատային ազոտ (անօրգանական ճանապարհով) մշտապես առաջնում է նաև մթնոլորտում: Այդ գործընթացը ընթանում է ամպրոպմերի ժամանակ՝ էլեկտրական լիցքի ազդեցության տակ ( $\text{N}_2 + \text{O}_2 \rightarrow 2\text{NO}; 2\text{NO} + \text{O}_2 \rightarrow 2\text{NO}_2$ ):



Ակ. 20. Ազոտի շրջանառությունը

## 32. ֆոսֆորի շրջանառությունը

Կենսոլորտում ֆոսֆորի շրջանառությունը կապված է կենդանիների և բույսերի միջև ընթացող նյութերի փոխանակության հետ: Ֆոսֆորը մտնում է շատ կարևոր օրգանական նյութերի կազմության մեջ՝ գեն, աղենոզիներֆոսֆորական թթու: Ցամաքային բույսերի և ջրիմուռների բջիջների մեջ այդ կարևոր և անհրաժեշտ տարրի պարունակությունը կազմում է 0,01 - 0,1%, իսկ կենդանիների բջիջներում՝ 0,1-ից մինչև մի քանի տոկոս:

Ֆոսֆորի համար շտեմարան է հանդիսանում ոչ թե մթնոլորտը, այլ լիթոսֆերան: Անօրգանական ֆոսֆորի հիմնական աղբյուր են հանդիսանում հրաբխային ապարները (ապատիտներ) կամ էլ նստվածքային ապարները՝ ֆոսֆորիտները: Ջրում ապարների լվացման և լուծման արդյունքում անօրգանական ֆոսֆորը ( $\text{PO}_4^{3-}$ ) մտնում է շրջանառության մեջ: Անցնելով ցամաքային էկոհամակարգ՝ հող, անօրգանական ֆոսֆորը հողի ջրային լուծույթից կլանվում է բույսերի կողմից և ներառվում ֆոսֆոր-օրգանական նյութերի կազմության մեջ: Սննդային շղթաների միջոցով անօրգանական ֆոսֆորը փոխանցվում է էկոհամակարգերի մյուս օրգանիզմներին: Բույսերի և կենդանիների մնացորդները, անցնելով հող, ենթարկվում են միկրոօրգանիզմների ազդեցությանը և փոխարկվում անօրգանական ֆոսֆորի: Դետագայում սկսվում է ֆոսֆորի կրկնվող շրջանառությունը: Մակերևութային ջրերի միջոցով անօրգանական ֆոսֆորի մի մասը անցնում է ջրային էկոհամակարգեր՝ հագեցնելով և գերհագեցնելով այդ կենսահամակարգերը: Այսպիսով, ֆոսֆորի մի մասը դուրս է օալիս շրջանառությունից, և այդ գործընթացը հնարավոր է, եթե երկրի կեղևը բարձրանա ծովի մակերևույթից վեր: Եթե ազոտի շրջանառությունը ընթանում է փակ համակարգով, ապա այն ամբողջովին չի կարելի վերագրել ֆոսֆորին (նկ. 21):

Զննարկելով ֆոսֆորի ցամառառությունը կենսոլորտում՝ ընդհանրաբես կարելի է դնենել, որ այն համեմատաբար կարճ ժամանակահատվածի նկատմամբ համարվում է մասնակի փակ: Ի տարբերություն մյուս կենսածին տարրերի՝ ֆոսֆորը չի առաջացնում գազային միացություններ:


## 33. Ծծմբի ցամառառությունը

Գոյություն ունեն ծծմբի բազմաթիվ գազային միացություններ՝ ծծմբաջրածին ( $\text{H}_2\text{S}$ ), ծծմբային անհիդրիդ ( $\text{SO}_2$ ): Սակայն այդ տարրի շրջանառությունը հիմնականում կատարվում է հողում և ջրում (նկ. 22): Կենդանի օրգանիզմների համար ծծմբի հիմնական աղբյուր են հանդիսանում սուլֆատները ( $\text{SO}_4^{2-}$ ): Կլանելով սուլֆատները՝ բույսերը վերականգնում են դրանք և առաջացնում ծծումբ պարունակող օրգանական նյութեր՝ ամինաթթուներ (մեթիոնին, ցիստեին, ցիստին):

Ծծմբի կենսաքիմիական շրջանառությունն ունի հետևյալ առանձնահատկությունները.

1. Ծծումբը հողում և նստվածքներում ունի շտեմարանային մեծ պաշարներ, մթնոլորտում՝ փոքր:
2. Ծծմբի շրջանառության գործընթացում մեծ դեր ունեն օքսիդացնող և վերականգնող մասնագիտացած միկրոօրգանիզմները: Օքսիդավերականգնող միկրոօրգանիզմների գործունեության արդյունքում մատչելի սուլֆատների ( $\text{SO}_4^{2-}$ ) և երկաթի սուլֆիդների միջև տեղի է ունենում ծծմբի փոխանակություն: Այդ փոխանակության ընթացքում հնարավոր են հետևյալ ռեակցիաները՝  $\text{H}_2\text{S} \rightarrow \text{S} \rightarrow \text{SO}_4^{2-}$  (դա իրագործվում է անգույն, կանաչ և ալ կարմիր ծծմբաբակտերիաների կողմից),  $\text{SO}_4^{2-} \rightarrow \text{H}_2\text{S}$  (սուլֆատների անակարգ վերականգնում),  $\text{H}_2\text{S} \rightarrow \text{SO}_4^{2-}$  (սուլֆիդների օքսիդացում), օրգանական ծծումբ՝  $\text{S} \rightarrow \text{SO}_4^{2-}$  և  $\text{H}_2\text{S}$  (աերոբ և անաերոբ հետերոտրոֆ բակտերիաները միասին):
3. Խորզյա նստվածքներից ծծմբի միկրոօրգանիզմային փոխարկումը ծծմբաջրածին, որը գազային վիճակով անցնում է մթնոլորտ:

### »» 34. Ածխածնի շրջանառությունը



Նկ. 21. Ֆուֆորի շրջանառությունը

4. Երկրաքիմիական և օդերևութաբանական գործընթացների փոխազդեցություն՝ էրոզիա, նստվածքագոյացում, լվացում, անձրևներ, արսորբցիա - դեսորբցիա և այլն:
5. Քամաշխարհային մասշտաբով շրջանառության գործընթացում մթնոլորտի, ջղի և հողի փոխազդեցությունը:


Ընդհանրապես, ազոտի և ֆուֆորի համեմատությամբ, էկոհամակարգերի գործունեության համար անհրաժեշտ է ավելի քիչ քանակությամբ ծծումբ: Այստեղից հետևում է, որ ծծումբը քիչ դեպքերում է համարվում սահմանափակող գործոն:

### 34. Ածխածնի շրջանառությունը

Բոլոր կենսաերկրաքիմիական շրջանների համեմատությամբ ածխածնի շրջանառությունը (Նկ. 23), անկասկած, ընթանում է ավելի ուժգին: Ածխածնի շրջանառության գործընթացում կարևոր դեր են խաղում ածխածնի ենթօքսիդը (CO) և երկօքսիդը (CO<sub>2</sub>): Կենսոլորտում ածխածինն ավելի հաճախ հանդիպում է նրա ավելի շարժուն ձևով (CO<sub>2</sub>): Կենսոլորտում ածխաթթու գազի (CO<sub>2</sub>) միգրացիան ընթանում է երկու ճամապարհով:

Առաջինի եռթյունն այն է, որ ածխաթթու գազը կլանվում է ֆոտոսինթեզի պրոցեսում, որի արդյունքում սինթեզվում են բույսերի հյուսվածքները կազմող գլուկոզա և այլ օրգանական նյութեր:

Ա



Նկ. 22. Ծեմբի ցջանառությունը



Նկ. 23. Ածխածնի ցջանառությունը

և  $MgCO_3$ , որոնք ել նստվածքների ձևով կուտակվում են ջրային էկոհամակարգերի հատակում (կրաքարերի ձևով): Այսպիսով, ածխաթթու գազի մի զգալի մասը դուրս է գալիս ածխածնի շրջանառությունից:

Ֆոտոսինթեզի գործընթացում բույսերի կողմից ածխաթթու գազը կլանվում է ցերեկվա ժամերին: Գիշերը նրա որոշ քանակություն նորից արտազատվում է մթնոլորտ: Բույսերի և կենդանիների մահից հետո օրգանական նյութերը հանքայնացվում են, անջատվում է  $CO_2$  գազ, որն էլ անցնում է միջավայր (մթնոլորտ): Ածխածնի ատոմները մթնոլորտ են անցնում նաև օրգանական նյութերի այրման հետևանքով: Ածխածնի շրջանառության կարևոր և հետաքրքիր առանձնահատկությունն այն է, որ միլիոններում տարիներ առաջ ֆոտոսինթեզի արդյունքում սինթեզված օրգանական նյութերի զգալի մասը չի օգտագործվել ոչ կոնսումենտների և ոչ էլ ուժուցենտների կողմից, այլ կուտակվել է լիբուֆերայում՝ նավթի, ածխի, տորֆի և այլ նյութերի ձևով: Ներկայումս էներգետիկ պահանջների բարելավման համար այդ նյութերը լայն ծավալներով արդյունահանվում են: Այրելով դրանք՝ մենք ինչ-որ չափով ավարտին ենք հասցնում ածխածնի շրջանառությունը:

Ըստ Երկրորդ ճանապարհի՝ ածխածնի միգրացիան իրագործվում է կարբոնատային համակարգի առաջացման միջոցով (ջրային էկոհամակարգերում): Այս դեպքում ածխաթթու գազը ջրում լուծված կալցիումի կամ մագնեզիումի հետ առաջացնում է  $CaCO_3$

## 35. Էկոհամակարգերի ինքնազարգացումը

### Էկոլոգիական սուկցեսիա

Նոյն տեղում հարաբերականորեն երկար ժամանակ գոյություն ունեցող կենսացենոզը (կաղնուտը կամ եղևու անտառը, ծանծաղ ջրամբարը և այլն) փոխում է բիոտոպը (տեղ, որտեղ գոյություն ունի կենսացենոզը) այնպես, որ այն որոշ տեսակների գոյության համար դառնում է անբարենպաստ, իսկ ուրիշ տեսակների զարգացման համար՝ բարենպաստ: Արդյունքում այդ բիոտոպում աստիճանաբար զարգանում է այլ կենսացենոզ, որն ավելի լավ է հարմարված միջավայրի նոր պայմաններին: Կենսացենոզների այդպիսի բազմակի հերթափոխը կոչվում է սուկցեսիա: Սուկցեսիան (լատ. successio- հաջորդականություն, ժառանգականություն) նոյն տարածում բնական գործոնների կամ մարդու ազդեցության տակ կենսացենոզների աստիճանական, անհետադարձ, ուղղորդված հերթափոխն է (Ակ. 24):

Կաղնուտը, տայգայի եղևու մութ անտառները երկար ժամանակ գոյություն ունեցող կայուն էկոլոգիական համակարգեր են: Եթե անմշակ հողատարածքները, խոնավ մարգագետինները թողնենք ինքնահոսի, ապա արագ կփոփոխվեն: Նրանք աստիճանաբար համալրվում են այլ բուսականությամբ, կենդանիներով, միկրօրգանիզմներով և վերափոխվում են այլ տիպի էկոհամակարգերի:

Էկոհամակարգերի ինքնազարգացումը տեղի է ունենում ոչ մեծ լճերում և ցամաքի ցանկացած մասում, որը բնական գործոնների կամ մարդու գործունեության ազդեցության տակ մերկանում է (գրկվում է հողաշերտերից)` մերկ ժայռեր, լեռնային ապարների փլվածքներ, հոսող ավագուտներ և այլն: Էկոլոգիական սուկցեսիան լինում է առաջնային և երկրորդային:

Առաջնային սուկցեսիան նախկինում չբնակեցված տարածքում էկոհամակարգերի զարգացումն է և հերթափոխը: Առաջին էտապում չբնակեցված տարածք են գաղթում սերմեր, սպորներ, միջատներ, քարաքոսեր, կրծողներ, թռչուններ և այլն: Մրանցից ոչ բոլորն են կարողանում ապրել տվյալ տարածքում: Նրանց մի մասը կամ մահանում է, կամ էլ գաղթում է այլ տարածք:

Երկրորդ էտապում նոր տարածքին ընտելացած տեսակները, առանց միմյանց խանգարելու, իրացնում և փոխում են իրենց գոյության միջավայրը:

Երրորդ էտապում ավարտվում է տարածքի իրացումը, և կենսացենոզը կազմող տեսակների միջև ծագում են մրցակցային հարաբերություններ: Ի վեհական միջավայրը փոխելու և միջտեսակային պայքարի պատճառով որոշ տեսակներ դուրս են մղվում այդ տարածքից, և նրանց տեղը զբաղեցնում են այլ տեսակներ:

Ավարտական էտապում կենսացենոզում հաստատվում է տեսակների կայուն կազմ: Տեսակները բաշխվում են ըստ էկոլոգիական խորշերի, իրար հետ կապվում են սննդային կապերով և փոխահավետ հարաբերություններով և համատեղ իրականացնում նյութերի շրջապտույթ: Այսպիսով, էկոհամակարգում ստեղծվում է հավասարակշիռ վիճակ: Էկոհամակարգերի ինքնազարգացումը միշտ ընթանում է քիչ կայուն վիճակից դեպի ավելի կայուն վիճակ:

Սուկցեսիան ունի ինքնազարգացման որոշակի արագություն: Էկոհամակարգի ինքնազարգացման ամենագլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ զարգացման փոփոխությունների արագությունը անընդհատ նվազում է: Սակայն ծերոք բերելով համեմատաբար կայուն վիճակ՝ զարգացման տարրեր փուլերում փոփոխությունների արագությունը երկար ժամանակ կարող է մնալ անփոփոխ: Էկոհամակարգի զարգացման անկայուն փուլերը անվանում են ոչ հասուն համակեցություն, իսկ կայուն փուլերը՝ հասուն:



Նկ. 24. Էկոլոգիական սույցեսիա

Էկոհամակարգերի զարգացման ավելի տարածված ձև է համարվում երկրորդային սույցեսիան, եթե որևէ տարածքում ընթանում է համակեցության հաջորդական զարգացում, որտեղ բնական բուսականությունը ոչնչացել կամ էլ խիստ խախտվել է, բայց հողի շերտը պահպանվել է: Եթե հողի շերտը ենթարկվել է էրոզիայի, ապա սույցեսիան կընթանա առաջնային տիպով: Երկրորդային սույցեսիան ընթանում է առաջնային սույցեսիայից անհամեմատ արագ: Ըստ էներգետիկ տեսակետի՝ սույցեսիան համակեցության այնորին անհավասարակշռ վիճակ է, որը բնութագրվում է համախառն արտադրանքի և ամբողջ համակարգի կենսագործունեությունը դահլանող էներգիայի ծախսի անհամաղատասխանությամբ:

Կենսաերկրացենոգների ինքնազարգացման համար բնորոշ են մի շարք ընդհանուր օրինաչափություններ:

1. Սույցեսիայի սկզբնական շրջանում տեսակային բազմազանությունն աննշան է, կենսաբնական արտադրանքը և կենսազանգվածը՝ քիչ: Էկոհամակարգի զարգացման ընթացքում այդ ցուցանիշներն աճում են:
2. Սույցեսիայի զարգացման ընթացքում օրգանիզմների միջև ավելանում են փոխադարձ կապերը, ամբողջովին յուրացվում է գոյության միջավայրը: Բարդանում են սննդային օրգանները և ցանցերը:
3. Նվազում է ազատ էկոլոգիական խորշերի թիվը, իսկ հասուն էկոհամակարգերում դրանք կամ բացակայում են, կամ էլ գտնվում են նվազագույն քանակով:
4. Ուժգնանում են նյութերի շրջանառության և էներգիայի հոսքի գործընթացները:
5. Հասուն էկոհամակարգերում, տարածքի ամբողջովին յուրացման արդյունքում, կենսազանգվածը հասնում է առավելագույնի կամ էլ մոտենում է դրան:

Էկոհամակարգերի զարգացման սկզբնական փուլում, մինչև կայուն սննդային կապերի ձևավորումը, ստեղծվում է բուսական արտադրանքի ավելցուկ: Այսպիսի էկոհամակարգերը մարդկանց համար շատ օգտակար են, քանի որ չխախտելով համակեցությունը՝ կարելի է օգտագործել կենսաբնական արտադրանքի մի մասը: Մարդկանց գործունեությունը մշտապես ուղեկցվում է էկոհամակարգերի փոխարինանմբ՝ անտառների հատում, ճահիճների չորացում, տորֆի վերամշակում, ճանապարհների անցկացում և այլն:

### »» 36. Ագրոէկոհամակարգեր և դրանց առանձնահատկությունները

Էկոհամակարգերի ցանկացած խախտում մշտապես առաջացնում է դրանց ինքնավերականգնման բնական գործընթացներ: Սակայն բնության հնարավորություններն անսահմանափակ չեն: Դամապատասխան պայմանների բացակայության դեպքում էկոհամակարգերի ինքնավերականգնումը դանդաղում կամ էլ դադարում է: Տվյալ դեպքում կայուն կենսացենոզներ չեն ձևավորվում, և համակեցությունը մշտապես գտնվում է ոչ հասուն վիճակում:

### 36. Ագրոէկոհամակարգեր և դրանց առանձնահատկությունները

Մարդու տնտեսական գործունեության հետևանքով ձևավորվում են յուրատեսակ կենսահամակարգեր՝ ագրոէկոհամակարգեր (ագրոցենոզ, ագրոկենսացենոզ, գյուղատնտեսական էկոհամակարգ): Ագրոէկոհամակարգը (լատ. agros - դաշտ) գյուղատնտեսական արտադրանք ստանալու համար մարդու կողմից ստեղծված և կանոնավոր հսկվող կենսահամակարգ է: Ագրոէկոհամակարգերի օրինակ կարող են ծառայել արհեստականորեն ստեղծված այգիները, բանջարանցները, խոշոր անասնապահական համալիրները, արոտավայրերը, մարգագետինները և այլն (նկ. 25):

Բնական էկոհամակարգերի համեմատությամբ ագրոէկոհամակարգերը տարբերվում են մի շարք առանձնահատկություններով.




Նկ. 25. Ագրոէկոհամակարգի օրինակ

1. Առավել բարձր արտադրանք ստանալու համար ագրոէկոհամակարգերում կտրուկ նվազեցված է տեսակների թիվը: Բնական էկոհամակարգերում կենսաբազմազանությունը նկատելի բարձր է, իսկ կենսաբանական արդյունավետությունը՝ բազմաթիվ անզամ ցածր:
2. Ագրոէկոհամակարգերում գյուղատնտեսական բույսերի և կենդանիների տեսակներն ստացվում են արհեստական ընտրության ներգործությամբ: Վերջինս դուրս է մղում թույլ հարմարված օրգանիզմների բոլոր ձևերը:
3. Բնական էկոհամակարգերում պրոդուցենտների առաջնային արտադրանքը սննդային շղթաներում օգտագործվում է կոնսումենտների կողմից և ածխաթթու գազի, ջրի և հանքային տարրերի ձևով նորից վերադարձնում կենսաբանական շրջանառության համակարգ: Ագրոէկոհամակարգերը համարվում են ավելի բաց կենսահամակարգեր, ուստի դրանցում սննդատրրերի զգալի մասը բերքի հետ համակարգերից դուրս է մղվում, և նյութերի բնական շրջապտույտ չի կատարվում: Այդ պատճառով խախտվում է նաև հողառաջացման գործընթացը և նրա ուղղվածությունը:
4. Ագրոէկոհամակարգում ցանքաշրջանառությունը (մշակաբույսերի հերթափոխը) կատարվում է մարդու ցանկությամբ, որն անցանկալի ազդեցություն է թողնում ոչ կենսական բաղադրիչների, հատկապես հողի բերրիության վրա:
5. Բնական էկոհամակարգերում էներգիայի աղբյուրն Արեգակն է: Ագրոէկոհամակարգի նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ են լրացուցիչ էներգիայի աղբյուրներ՝ մարդու կամ կենդանիների ֆիզիկական աշխատանք, վառելանյութի տարրեր տեսակներ, պարարտանյութեր, լրացուցիչ լուսավորում, պեստիցիդներ, թունաքիմիկատներ: «Լրա-

ցուցիչ էներգիա» են համարվում նաև ընտանի կենդանիների նոր ցեղերը և բույսերի նոր տեսակները: Առանց էներգիայի լրացուցիչ աղբյուրների հնարավոր չեն ապահովել կենսաբանական բարձր արդյունավետություն:

6. Ազրուեկոհամակարգերը տալիս են կենսաբանական բարձր արդյունք շնորհիվ մարդու անընդմեջ միջամտության և օժանդակության, առանց որի դրանք գոյություն ունենալ չեն կարող: Պետք է նշել, որ ազրուեկոհամակարգերը խիստ անկայուն համակարգեր են: Նրանք ընդունակ չեն ինքնավերականգնվելու և ինքնակարգավորվելու:
7. Մարդու անընդհատ գործունեությունն անհրաժեշտ է ազրուեկոհամակարգերի պահպաննան համար:

### **37. Կենսոլորտը որպես համամոլորակային էկոհամակարգ**



Նկ. 26. Երկրագնդի երկրաբանական ոլորտները

Երկիր մոլորակի վրա ընթացող բարդ բնական գործընթացները անմիջականորեն կապված են մոլորակի երեք հիմնական թաղանթների՝ լիթոսֆերայի (քարուրոտ), հիդրոսֆերայի (ջրուրոտ) և ատմոսֆերայի (մթնուրոտ) փոխազդեցությունների հետ: Այդ թաղանթները կազմում են այն ոլորտը, որտեղ գոյատևում են կենդանի օրգանիզմները (նկ. 26): Երկիր մոլորակի կենդանի օրգանիզմներով բնակեցված թաղանթների ամբողջությունը կոչվում է կենսոլորտ (բիոսֆերա)՝ (հուն. «բիոս»՝ կյանք, «սֆերա»՝ գունդ): Այդ անվանումն առաջին անգամ տվել է ֆրանսիացի բնախուզ Ժ. Բ. Լամարկը: Նրա աշխատանքները հիմք դրեցին այն պատկերացումներին, որ Երկիր մոլորակի վրա գոյություն ունի կենդանի օրգանիզմներով բնակեցված որոշակի տարածություն և այդ տարածությունը կազմավորվում է հենց կենդանի օրգանիզմների գործունեության արդյունքում:

Կենսոլորտի մասին ուսմունքը ստեղծել է Վերնադսկին, նոր գիտության՝ կենսաերկրաբիմիայի հիմնադիրը:

## 38. Կենսոլորտի կառուցվածքը

Երկրի վրա կենսոլորտի ձևավորումը պայմանավորված է հետևյալ գործոնների միասնությամբ՝

1. Երկրի գրավիտացիոն ձգողության ուժեր,
2. տիեզերական ճառագայթում,
3. ածխաթթու գազի և թթվածնի պարունակություն մթնոլորտում,
4. կարծ ուլտրամանուշակագույն ճառագայթների ուժգնություն,
5. ջերմաստիճան:

Կենսոլորտն ընդգրկում է ամբողջ ջրոլորտը (11,034 կմ), քարոլորտի վերին մասը (3 - 4 կմ) և մթնոլորտի ստորին մասը (մինչև 30 կմ): Մթնոլորտի վերին շերտերում կյանքի գոյության համար սահմանափակող գործոն է համարվում ուլտրամանուշակագույն ճառագայթման ուժգնությունը, ջրոլորտում՝ տեսանելի լույսի բացակայությունը, քարոլորտում՝ ընդերքի բարձր ջերմաստիճանը ( $100^{\circ}\text{C}$ -ից բարձր): Կենդանի նյութի զանգվածի ամենամեծ խտությունը կենսոլորտում կենտրոնացած է ցամաքի և օվկիանոսի մակերևույթին, ջրոլորտի և մթնոլորտի, քարոլորտի և մթնոլորտի, ջրոլորտի և քարոլորտի շփման սահմաններին մոտ: Այդ սահմաններում գոյություն ունեն կյանքի գոյության համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Ըստ Վերնադսկու ուսմունքի՝ կենսոլորտը կազմված է.

- Կենդանի նյութից, դա ժամանակակից կենդանի օրգանիզմների զանգվածն է:
- Կենսածին նյութերից՝ դետրիտների (օրգանիզմների մասը մնացորդները կամ նրանց կենսագործունեության արգասիքները) բոլոր ձևերը՝ տորֆը, ածուխը, նավթը, գազը և այլն:
- Կենսահանքային նյութերից. կենսոլորտում այդ նյութերն առաջանում են միաժամանակ կենդանի օրգանիզմների կողմից և առանց նրանց մասնակցության: Այս խնդիր նյութերը հանդիսանում են կենսածին և ոչ կենսածին նյութերի խառնուրդ՝ հող, տիղմ, բնական ջրեր, նստվածքային կարբոնատների մի մասը և այլն:
- Ջանքային նյութերից. դրանք հանքային և նստվածքային ապարներն են, միներալները, որոնք չեն ենթարկվել կենդանի օրգանիզմների կենսաքիմիական ազդեցությանը:

Ջաշվարկները ցույց են տվել, որ ըստ ածխածնի և էներգիայի պարունակության՝ կենսոլորտում կենդանի, կենսածին և կենսահոսանքային նյութերը գտնվում են  $1:20:4000$  հարաբերությամբ:

## 39. Կենսոլորտի կազմավորման ընդհանուր օրինաչափություններ

Կենսոլորտը հիմնականում ձևավորվում է ոչ թե արտաքին գործոնների ազդեցությամբ, այլ ներքին օրինաչափությունների արդյունքում: Կենսոլորտի կարևոր հատկությունն է համարվում կենդանի և անկենդան նյութերի փոխազդեցությունը, որն իր արտացոլումն է գտնել Վերնադսկու՝ «ատոմների կենսածին շրջապտույտի» օրենքում: Կենդանի նյութի քանակը կենսոլորտում նկատելի փոփոխության չի ենթարկվում: Այդ օրինաչափությունը Վերնադսկու կողմից ձևակերպվել է որպես կենդանի նյութի քանակի հաստատունության օրենք՝ տվյալ երկրաբանական շրջանում կենդանի նյութի քանակը հաստատուն մեծություն է: Գործնականորեն այդ օրենքը կենսոլորտի ներքին շարժընթացիկ (դինամիկ) հավասարակշռության օրենքի քանակական արտացոլումն է: Քանի որ կենդանի նյութը, ըստ ատոմների կենսածին շրջապտույտի օրենքի, հանդիսանում է էներգետիկ միջնորդ Արեգակի և Երկիր մոլորակի միջև, ապա նրա քանակը պետք է լինի հաստատուն

մեծություն, հակառակ դեպքում պետք է փոխվի նրա էներգետիկ բնութագիրը: Սակայն կենդանի նյութի ֆիզիկաքիմիական միասնության օրենքը՝ Երկրի բոլոր կենդանի նյութերը ֆիզիկաֆիզիալես միասնական են, բացառում է էներգետիկ բնութագրի նկատելի փոփոխությունները: Այդ օրինաչափությունը վերաբերում է նաև տեսակների թվին: Կենդանի բնության մեջ գոյություն ունի նաև տեղեկատվական և մարմնական կառուցվածքների հաստատունություն, չնայած որ զարգացման գործընթացում այն որոշ չափով ենթարկվում է փոփոխության:

Նշված հատկությունը մատնանշել է Յու. Գոլդսմիթը (1981թ.) և տվել է կենսոլորտի կառուցվածքի պահպանման օրենք անվանումը՝ Էկոշարժընթացի (Էկոդինամիկայի) առաջին օրենք:

Կենսոլորտի կառուցվածքի պահպանման համար կենդանի նյութը միշտ ձգտում է հասնել հասուն կամ էկոլոգիական հավասարակշռության վիճակի (Էկոշարժընթացի երկրորդ օրենքը): Երկրորդ օրենքը վերաբերում է կենսոլորտին և կենսոլորտը կազմող էկոհամակարգերին՝ չնայած կենսոլորտը համարվում է ավելի փակ համակարգ:

Կենսոլորտի կենդանի նյութերի և նրա ենթահամակարգերի կառուցվածքի միասնականությունը բերում է նրան, որ տարրեր ժամանակաշրջաններում և տարրեր աշխարհագրական տեղանքներում կենսագործող կենդանի տարրերը բարդ կապերով միահյուսվում են միմիանց: Կենսոլորտի բոլոր էկոլոգիական մակարդակներում տարրեր տարածածամանակային ծագման տարրերի միահյուսումը արտացոլում է կենդանի նյութերի հետերօգենության կանոնը կամ սկզբունքը: Այդ հետերօգեն կառուցվածքն անկանոն չէ, այլ ենթարկվում է էկոլոգիական կոմպլիմենտարության (լրացման), էկոլոգիական համապատասխանության և այլ սկզբունքների: Սա էկոշարժընթացի երրորդ օրենքն է (Էկոլոգիական մուտուալիզմի կանոն) և ցույց է տալիս բաղադրիչների վրա ամբողջի և ամբողջի զարգացման վրա բաղադրիչների ունեցած ազդեցությամբ պայմանավորված հիմնարար հատկությունները: Այս երկկողմ փոխազդեցությունները ապահովում են կենսոլորտի կայունությունն ընդհանրապես:

Էկոլոգիական մուտուալիզմի կանոնի մեջ մտնում է նաև համակարգային լրացման սկզբունքը, ըստ որի՝ իր զարգացման ընթացքում մեկ բնական համակարգի ենթահամակարգերը նախադրյալներ են ստեղծում նույն համակարգի այլ ենթահամակարգերի զարգացման և ինքնակարգավորման համար:

Էկոշարժընթացի չորրորդ օրենքը կենդանի նյութի ինքնահսկման և ինքնավերականգնման մասին է: Ըստ այս օրենքի՝ կենդանի համակարգը և նրա ազդեցությամբ դեկավարվող համակարգերը շրջակա միջավայրի փոփոխվող պայմաններին հարմարվելու գործընթացի ժամանակ ընդունակ են ինքնահսկման և ինքնավերականգնման:


Կենդանի նյութի ինքնավերականգնման և ոչ կենսական գործոնների հետ ունեցած փոխազդեցությունների ընթացում կենդանի նյութը ինքնաշարժընթացով պահպանում է իր զարգացման համար պիտանի կենսամիջավայրը: Այս գործընթացը սահմանափակվում է տիեզերական և կենսոլորտային փոփոխությունների ազդեցության արդյունքում:

Կենսոլորտի վրա տիեզերական ազդեցության մասին վկայում է տիեզերական ազդեցության բեկման օրենքը, ըստ որի կենսոլորտի, հատկապես նրա ենթահամակարգերի վրա ազդեցության ժամանակ տիեզերական գործոնները էկոսփերայի կողմից ենթարկվում են փոփոխության՝ թուլանալով և հաճախ կորցնելով իրենց ազդեցությունը:

## Հարցեր կրկնության համար

1. Տվեք էկոհամակարգի սահմանումը:
2. Էկոհամակարգի գործունեության ինչպիսի՝ սկզբունքներ գիտեք:
3. Ինչպիսի՝ կառուցվածք ունի էկոհամակարգը:
4. Բերեք սննդային շղթայի օրինակներ:
5. Ո՞րն է էկոլոգիական բուրգի կանոնի էռթյունը:
6. Համառոտ բնութագրեք ազոտի, ֆոսֆորի, ծծմբի և ածխածնի շրջանառությունները:
7. Ի՞նչ է էկոլոգիական սուկցեսիան:
8. Կենսաերկրացենոզների ինքնազարգացման ընթացքում ինչպիսի՝ օրինաչափություններ են գործում:
9. Ինչպիսի՝ առանձնահատկություններ ունեն ագրոէկոհամակարգերը:
10. Կենսոլորտի կազմավորման ի՞նչ օրինաչափություններ գիտեք:

բ



## ՄԱՍ Բ ԲՆԱՊԱՐՊԱՆՈՒԹՅՈՒՆ

»» 40. Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա

## ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԴՈՒ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ԴԵՏ

### 40. Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա

Կենսոլորտի կայունությունը: Երկոր բոլոր մեծ և փոքր էկոհամակարգերը, որոնք միմյանց հետ փոխազդում են և փոխկապակցված են մթնոլորտում, ջրոլորտում և քարոլորտում ընթացող համամոլորակային էկոլոգիական գործընթացների շնորհիվ, կազմում են կենսոլորտը: Կենսոլորտն իր զարգացման բոլոր փուլերում անընդհատ փոփոխվել է և արդյունում ձեռք բերել ինքնակարգավորման և բնական բացասական ազդեցությունները չեղոքացնելու ունակություն:

Կենսոլորտի կայունության գրավականն այն կազմող մանրէների, բույսերի և կենդանիների կենսաբանական բազմազանությունն է:

Մարդու ազդեցությունը բնության վրա: Մարդու կողմից նոր տեխնոլոգիաների ստեղծման, զարգացման և տարածման հետ բնական գործոններին հարմարված կենսոլորտն սկսեց կրել իր համար անսովոր ծանր, հզոր և բազմազան ազդեցություններ: Նման ազդեցությունները պայմանավորված են մարդու տնտեսական գործունեությամբ և կոչվում են մարդածին:



Նկ. 27 Բ. Կոմմոներ

Էկոլոգիական գործընթացներին մարդու միջամտությունները չափազանց բազմազան են, որոնցից հիմնական ձևեր, ըստ էկոլոգ Բ. Կոմմոների (նկ.27), հանդիսանում են՝

- Էկոլոգիական համակարգերի պարզեցումը և կենսաբանական ցիկլերի խախտումը,
- ցրված էներգիայի խտացումը ջերմային աղտոտման ձևով,
- քիմիական արտադրություններից ստացվող թունավոր թափոնների կուտակումը,
- նոր տեսակների ներմուծումը էկոհամակարգեր,
- մանրէների, բույսերի և կենդանիների գենետիկական փոփոխությունների առաջացումը:

Մարդածին ազդեցությունների հիմնական մասն ունի ուղղորդված բնույթ, այսինքն՝ իրականանում է մարդու կողմից որոշակի նպատակներ իրագործելու համար:

Մարդածին ազդեցությունների էկոլոգիական հետևանքների վերլուծությունը թույլ է տալիս վերջիններս դասակարգել երկու խմբի՝ դրական և բացասական:

Կենսոլորտի վրա մարդու դրական ազդեցությունների շարքին կարելի է դասել բնական պաշարների վերարտադրությունը, հողերի վերականգնումը և այլն:

Կենսոլորտի վրա մարդու բացասական ազդեցություններից են՝ աղտոտումը, անտառների զանգվածային հատումը, հողերի աղակալումը և անապատացումը, կենդանիների և բույսերի տեսակների ոչնչացումը և այլն:

Մարդածին էկոլոգիական ճգնաժամեր: Բնական պաշարների ոչ բնականոն օգտագործումը դառնում է էկոլոգիական ճգնաժամների պատճառ: Էկոլոգիական ճգնաժամը բնական համալիրների հավասարակշռված վիճակի դարձելի խախտումն է:

Քաղաքակրթության զարգացման պատմությունն ապացուցում է, որ էկոլոգիական ճգնաժամին անմիջապես հաջորդում են հասարակության և բնության փոխազդեցության հեղափոխական փոփոխություններ: Մարդկության զարգացման պատմության մեջ տեղի են ունեցել մի շարք էկոլոգիական ճգնաժամներ և դրանց հաջորդող հեղափոխություններ:

Առաջին ճարդաժին էկոլոգիական ճգնաժամը՝ «կոնսումենտների ճգնաժամը», կապված էր խոչոր կենդանիների զանգվածային ոչնչացման հետ: Դրան հաջորդեց գյուղատնտեսական հեղափոխությունը:


Երկրորդ էկոլոգիական ճգնաժամը կապված էր ոռոգելի երկրագործության ընթացքում հողերի աղակալման և քայլայման հետ: Դա առաջ բերեց երկրորդ գյուղատնտեսական հեղափոխությունը՝ անցումը ոչ ոռոգելի երկրագործության:

Երրորդ էկոլոգիական ճգնաժամը՝ «արորդուցենտրների ճգնաժամը», կապված էր բուսական պաշարների զանգվածային ոչնչացման և դրանց անբավարարության հետ: Դասարակության կողմից հանքային պաշարների լայն կիրառումը և հասարակության արտադրական ուժերի բուռն զարգացումը հանգեցրին արդյունաբերական հեղափոխությանը:


Ժամանակակից էկոլոգիական ճգնաժամը հաճախ անվանում են «ռեդուցենտների ճգնաժամ»: Ուղղութեան կամ ընդունակ կենսուրատուրային աղտոտությունը հաջորդած է ճգնաժամային վիճակը բարելավելուն կօգնի գիտատեխնիկական հեղափոխությունը, որը հենվելով գիտական նվաճումների վրա՝ պետք է արմատապես փոխի արդյունաբերական արտադրությունը:

## 41. Բնակչության թվաքանակի աճը և բնական դաշտաները

Մարդու ժողովրդագրության առանձնահատկությունները և նրանց հեռանկարը: Վերջին 100 տարվա ընթացքում կտրուկ աճել է Երկրի բնակչության թվաքանակը, էներգիայի, գյուղատնտեսական մթերքների և արդյունաբերական արտադրությունը:



»» 41. Բնակչության թվաքանակի աճը և բնական պաշարները



Նկ. 29 . Բնական դաշտների դասակարգումը

Ժողովրդագրական կորի աճը համապատասխանում է արդյունաբերական հեղափոխության սկզբին, որն սկսվել է մոտ 200 տարի առաջ, երբ գիտության, բժշկության և տնտեսության առաջընթացը թույլ տվեց լայնացնել մարդու գոյության միջավայրի սահմանները (նկ. 28):

Այս արագացված աճը շարունակվում է մինչ օրս: Ներկայումս բնակչության տարեկան աճը կազմում է 1,7%: Յուրաքանյուր շաբաթ մարդկության թվաքանակն աճում է 1,7 մլն-ով: Օրական աճը կազմում է 247 հազ. մարդ, իսկ մեկ ժամում աճը՝ 10270 մարդ: ՄԱԿ-ի գնահատականներով՝ Երկրի բնակչությունը 2100թ. կկազմի մոտ 12 մլրդ մարդ, այսինքն՝ մոտ 2 անգամ ավել, քան 1999թ., իսկ հետո կկայունանա:

Բնական դաշտները և դրանց դասակարգումը: Բնական պաշարները բնական օբյեկտները կամ երևույթներն են, որոնք օգտագործվում են արդյունաբերության և տնտեսության մեջ՝ հանդիսանալով մարդկային հասարակության գոյության միջոց:

Բնական պաշարները բաժանվում են Երկու խմբի՝ սպառվող և անսպառ (նկ. 29):

Սպառվող բնական ռեսուրսներն իրենց հերթին բաժանվում են Երկու խմբի՝ չվերականգնվող և վերականգնվող պաշարների:

Չվերականգնվող են համարվում այն պաշարները, որոք չեն վերականգնվում կամ վերականգնվում են շատ ավելի դանդաղ, քան սպառվում են: Դա քարածուխն է, նավթը և այլ օգտակար հանածոներ:

Վերականգնվող բնական պաշարները սպառմանը զուգընթաց վերականգնվում են: Դրանք են՝ հողը, բուսական և կենդանական աշխարհները, որոշ հանքեր և այլն: Սպառման և վերականգնման արագության համապատասխանության խախտումը բերում է պաշարների սպառմանը:

Զրային, կլիմայական և տիեզերական պաշարները դասվում են անսպառ պաշարների թվին:

Զրի պաշարը մոլորակի վրա մնում է անփոփոխ և անսպառ է, սակայն ջրի աղտոտման հետևանքով կորցնում է իր հատկությունները՝ սահմանափակելով ջրային բույսերի և կենդանիների կենսունակությունը: Առավել վտանգված են քաղցրահամ ջրերի պաշարները, որոնք ներկայումս կարելի են դասել սպառվող պաշարների խմբին:

Կլիմայական պաշարները՝ օդը, ջամու և երգիան, ևս ենթարկվում են մարդածին գործոնների ազդցությանը:

Տիեզերական պաշարներին են պատկանում արեգակնային ճառագայթումը, ծովային մակընթացությունների և տեղատվությունների էներգիան: Այս պաշարները անսպառ են, սակայն արդյունարերական կենտրոններում մթնոլորտի աղտոտման պատճառով արեգակնային ճառագայթումը խիստ նվազել է:

### Հարցեր կրկնության համար

1. Տվե՛ք կենսուլորտի սահմանումը:
2. Բացատրե՛ք կենսուլորտի վրա մարդածին ազդեցությունների էությունը: Ինչպե՞ս են դրանք դասակարգվում:
3. Քանի՞ խմբի են բաժանվում մարդածին ազդեցությունները: Բացատրե՛ք:
4. Ի՞նչ է էկոլոգիական ճգնաժամը:
5. Թվե՛ք ձեզ հայտնի էկոլոգիական ճգնաժամերը:
6. Ինչպիսի՞ հեղափոխություններ էին ուղեկցում էկոլոգիական ճգնաժամերին: Նկարագրե՛ք:
7. Նկարագրե՛ք մարդու ժողովրդագրական առանձնահատկությունները:
8. Տվե՛ք բնական պաշարների դասակարգումը:
9. Որո՞նք են սպառվող պաշարները: Բերե՛ք օրինակներ:
10. Որո՞նք են անսպառ պաշարները: Բերե՛ք օրինակներ:

## ԳԼՈՒԽ 6. ՄԹՆՈԼՈՐՏԻ ՊԱՐՊԱՍՈՒԹՅՈՒՆԸ

### 42. Մթնոլորտի կառուցվածք

**Մթնոլորտի կառուցվածքը և բաղադրությունը:** Մթնոլորտը երկրագնդի օդային թաղանքն է, որը պտտվում է մոլորակի հետ միասին: Երկրի մակերևույթին մոտ գտնվող մթնոլորտային օդը պարունակում է 78,1 % ազոտ, 21 % թթվածին, 0,9 % արգոն, 0,03 % ածխաթթու գազ, չնչին քանակությամբ ջրածին, հելիում, նետոն և այլ գազեր: Մթնոլորտի ստորին շերտերում՝ մինչև 20կմ բարձրության վրա, պարունակվում են ջրային գոլորշիներ, որոնց քանակությունը բարձրության հետ խիստ նվազում է: Շատ մեծ բարձրությունների վրա գերակշռում են հելիումի և ջրածնի մոլեկուլները, որոնց մի մասն էլ քայլայվում է ատոմների և իոնների՝ առաջացնելով իոնոսֆերան: Երկրի մթնոլորտում օդի ճնշումը և խտությունը նվազում են բարձրության հետ:

**Մթնոլորտի շերտերը:** Ձերմաստիճանի բաշխումից և քիմիական կազմից կախված՝ Երկրի մթնոլորտը բաժանում են մի քանի շերտերի՝ տրոպոսֆերայի, ստրատոսֆերայի, մեզոսֆերայի, իոնոսֆերայի և էկզոսֆերայի (նկ. 30):

Տրոպոսֆերան մթնոլորտի ստորին հիմնական շերտն է, որը հասնում է մինչև 10կմ բարձրության ընեռային և 18կմ՝ արևադայային լայնություններում: Տրոպոսֆերայում կենտրոնացած է ողջ մթնոլորտային օդի ավելի քան 1/5 մասը, այստեղ առաջանում են ամպերը, ճնշման ցածր և բարձր գոտիները:

Ստրատոսֆերան տրոպոսֆերային հաջորդող մթնոլորտային շերտն է, որը տարածվում է մինչև 55կմ բարձրության վրա: Ստրատոսֆերայի ստորին հատվածում՝ 25կմ բարձրության վրա, գտնվում է օզոնային շերտը: Ստրատոսֆերայում ջերմաստիճանը բարձրանում է ստորին շերտերից դեպի վերին շերտեր՝  $-40^{\circ}\text{C}$ -ից հասնելով մինչև  $0^{\circ}\text{C}$ -ի:

Մեզոսֆերան ստրատոսֆերային հաջորդող մթնոլորտի այն շերտն է, որը գտնվում է 55-ից 85կմ բարձրության վրա: Այս շերտը բնորոշվում է բարձրության հետ ջերմաստիճանի անկմանը՝  $0^{\circ}\text{C}$ -ից մինչև  $-90^{\circ}\text{C}$ :

Իոնոսֆերան մեզոսֆերային հաջորդող մթնոլորտային օդի այն շերտն է, որը տարածվում է 85 կմ-ից մինչև 800կմ: Ձերմաստիճանն այստեղ բարձրանում է՝ հասնելով մինչև  $1200^{\circ}\text{C}$ , և մնում է կայուն իոնոսֆերայի հաջորդ շերտերում:

Էկզոսֆերան մթնոլորտի արտաքին շերտն է, որը սկիզբ է առնում մի քանի հարյուր կմ բարձրությունից: Այս շերտից ջրածնի արագ շարժվող ատոմները կարող են հեռանալ դեպի տիեզերական տարածություն:

Երկրի մթնոլորտ են թափանցում հզոր արեգակնային ճառագայթներ, որոնք ել պայմանավորում են մեր մոլորակի մակերևույթի ջերմային ռեժիմը: Մթնոլորտի անհավասարաչափ տաքացումը նպաստում է նրա ընդհանուր շրջապտույտին, որն ել ազդում է Երկրի կլիմայի ձևավորման վրա:

**Մթնոլորտի նշանակությունը:** Մթնոլորտի միջոցով տեղի է ունենում նյութերի և կներգիայի փոխանակություն Երկրի և տիեզերքի միջև: Տիեզերքից Երկիր են թափանցում տիեզերական փոշին և Երկնաքարերը, իսկ Երկրից հեռանում են թերև գազերը՝ ջրածինը և հելիումը: Մթնոլորտի, Երկրի մակերևույթի և Երկրի մյուս ոլորտների միջև անընդհատ տեղի է ունենում ջերմության, խոնավության և գազերի փոխանակություն, որն ել մթնոլորտում օդային հոսանքների հետ ձևավորում է կլիման:



Նկ. 30 . Երկրի մթնոլորտի կառուցվածքը

Մթնոլորտի կարևորագույն էկոլոգիական ֆունկցիաներից է նրա պաշտպանական ֆունկցիան: Մթնոլորտը պաշտպանում է Երկիրը բացարձակ սառը տիեզերքից և տիեզերական ճառագայթման ուժեղ հոսքից: Առանց մթնոլորտի Երկրի վրա ջերմաստիճանային տատանումներն օրվա ընթացքում կկազմեին  $200^{\circ}\text{C}$ : Կարևոր նշանակություն ունի օգոնային շերտը, որը կենդանի օրգանիզմները պաշտպանում է մահացու կարծալիք ճառագայթումից: Մթնոլորտում պարունակվող թթվածինը կենդանի օրգանիզմների մեջ մասը օգտագործում է շնչառության համար, իսկ ածխաթթու գազը բույսերն օգտագործում են ֆոտոսինթեզի համար:

#### **43. Մթնոլորտի աղտոտման աղբյուրները և դրա էկոլոգիական հետեւանքները**

Մթնոլորտի աղտոտում հասկացությունը: Մթնոլորտային օդի աղտոտումը նրա բաղադրության և հատկությունների ցանկացած փոփոխությունն է, որը բացասական ազդեցություն է բողնում էկոհամակարգերի կայունության և մարդու առողջության վրա:

Մթնոլորտի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին:

Մթնոլորտային օդի բնական աղտոտման պատճառ են հանդիսանում բնական գործընթացները: Այդպիսիք են հրաբխային ժայթքումները, լեռնային ապարների հողմահարումը, քամու էրոզիան, բույսերի զանգվածային ծաղկումը, անտառային և տափաստանային հրդեհների ծուխը և այլն:

Մարդածին աղտոտումը կապված է մարդու գործունեության ընթացքում տարբեր աղտոտիչ նյութերի արտանետման հետ: Ներկայումս մթնոլորտային օդի մարդածին աղտոտումն իր մասշտաբներով բազմաթիվ անգամ գերազանցում է բնական աղտոտմանը:

### »» 43. Մթնոլորտի աղտոտման աղբյուրները և դրա էկոլոգիական հետեւանքները

Մթնոլորտի աղտոտման հիմնական ձևերը:  
Աղտոտման մասշտաբներից կախված՝ մթնոլորտային աղտոտումը լինում է՝ տեղային, տարածաշրջանային և համամոլորակային:


Տեղային աղտոտումը բնորոշվում է ոչ մեծ տարածքներում աղտոտիչ նյութերի բարձր պարունակությամբ (քաղաք, արտադրական կենտրոն և այլն) (Նկ. 31): Տարածաշրջանային աղտոտումն ընդգրկում է խոշոր տարածքներ, իսկ համամոլորակային աղտոտումը կապված է մթնոլորտի վիճակի ընդհանուր փոփոխության հետ:

Մթնոլորտը աղտոտող նյութերն ըստ ֆիզիկական վիճակի լինում են՝

1. գազանման (ծծմբի երկօքսիդ, ազոտի օքսիդներ, ածխածնի օքսիդներ և այլն),
2. հեղուկ (թթուներ, հիմքեր, աղերի լուծույթներ և այլն),
3. պինդ (կապար և նրա միացությունները, օրգանական և անօրգանական փոշի և այլն):

Մթնոլորտի աղտոտման հետևանքները: Մթնոլորտ արտանետված գազանման աղտոտիչ նյութերը կարող են.

- նստել ծանրության ուժի ազդեցությամբ,
- ներգրավվել մթնոլորտում գտնվող ջրի կաթիլների մեջ և տեղումների տեսքով անցնել հողի և երկրի ջրային ավազանի կազմի մեջ,
- ընդգրկվել նյութերի կենսոլորտային շրջապտույտի մեջ,
- փոխել իրենց ֆիզիկական վիճակը կամ քիմիապես փոխագրել օդի այլ բաղադրիչների հետ,



Նկ. 32 Առավել լայն տարածված աղտոտիչ նյութերի արտանետումներն ըստ մայրցամանների



Նկ. 31 Մթնոլորտի տեղային աղտոտում

- հարաբերականորեն երկար ժամանակ մնալ մթնոլորտում և օդային հոսանքներով տեղափոխվել տրոպոսֆերայի և ստրատոսֆերայի տարրեր շերտեր կամ էլ մոլորակի տարրեր մայրցամաքներ (նկ. 32):

Նկար 32-ում բերված են առավել լայն տարածված աղտոտիչ նյութերի արտանետումներն ըստ մայրցամաքների:

Մթնոլորտի վրա մարդածին ազդեցության հետևանքով կարող է առաջանալ՝

- գետնամերձ շերտի տեղային կամ տարածաշրջանային աղտոտում,
- աղտոտումների անդրսահմանային տեղաշարժ մեծ տարածությունների վրա,
- տարրեր համամոլորակային էկոլոգիական հետևանքներ, որոնցից առավել հրատապ են «ջերմոցային էֆեկտը», օգնային շերտի քայլայումը և թթվային տեղումները,
- քարոլորտի և ջրոլորտի աղտոտում՝ որպես մթնոլորտի բնական ինքնամաքրման գործընթացի հետևանք:

#### **44. Մթնոլորտի աղտոտումը ջերմոցային գազերով**

**Ջերմոցային էֆեկտ:** Արեգակի լուսային էներգիայի մեծ մասը մթնոլորտի միջով թափանցում է կենսոլորտ, կլանվում երկրի մակերևույթի կողմից, վերածվում է ջերմային էներգիայի և ինֆրակարմի ճառագայթման ձևով անդրադառնում է տիեզերը: Սակայն մթնոլորտում որոշ գազերի շնորհիվ, որոնք ստացել են «ջերմոցային գազեր» անվանումը, մթնոլորտը կլանում է երկրից անդրադարձող ճառագայթման մեծ մասը: Այն տաքանում է և նպաստում ջերմության պահպաննանը (նկ. 33):

Ջերմոցային էֆեկտի շնորհիվ երկրի մակերևույթի միջին ջերմաստիճանը դրական է, ինչը նպաստում է կյանքի զարգացմանը երկրի վրա:



Նկ. 33 «Ջերմոցային գազերի» դաշտառով մթնոլորտը տաքանում է, կլանելով երկրից անդրադարձող ջերմային ճառագայթման մեծ մասը

գազերի թվին են դասվում նաև քլորֆլորածխաջրածինները, ածխածնի ենթօքսիդը և ծծմբի հեքսաֆլորիդը:

Եթե երկրի մակերևույթից ճառագայթվող ամբողջ ջերմությունը հեռանար տիեզերը, ապա մեր մոլորակի վրա կյանքի գոյությունը շատ ցածր՝ բացասական միջին ջերմաստիճանի և օրվա ընթացքում նրա մեծ տատանումների պատճառով կդառնար անհնար:

**Ջերմոցային գազեր** և նրանց թափանցման ուղիները մթնոլորտ: Ջերմոցային էֆեկտի առաջացմանը մասնակցող հիմնական գազերը ածխածնի երկօքսիդը և մեթանն են: Բացի այս գազերից ջերմոցային ածխածնի ենթօքսիդը և ծծմբի

#### »» 44. Մթնոլորտի աղտոտումը ջերմոցային գազերով

Ածխածնի երկօքսիդը մթնոլորտ է թափանցում գլխավորապես օրգանիզմների շնչառության և հրաբխային ժայթքումների հետևանքով:  $\text{CO}_2$ -ի մուտքը մթնոլորտ հավասարակշռվում է ֆուտոսինթեզի ընթացքում այն օգտագործող կամաչ բույսերի կողմից:

Մերանի՝ մթնոլորտ թափանցման հիմնական բնական պատճառը անթթվածին պայմաններում ածխաջրերը քայքայող հատուկ բակտերիաների գործունեությունն է: Այդպիսի գործընթացներ տեղի են ունենում ճահիճներում և կենդանիների մարտղական համակարգում:


Մյուս ջերմոցային գազերի մուտքը մթնոլորտ պայմանավորված է գլխավորապես նարդու գործունեությամբ:

Մթնոլորտում ջերմոցային գազերի բանակի ավելացման դաշտառները և հետևանքները: Մեր մոլորակի վրա ջերմաստիճանը և կլիման ապահովում են մթնոլորտում ջերմոցային գազերի որոշակի քանակով, մասնավորապես ածխաթթու գազի 0,03% պարունակությամբ: Սակայն վերջին 150 տարիների ընթացքում ածխաթթու գազի պարունակությունը բարձրացել է՝ հասնելով 0,04%-ի (նկ. 34):


Մթնոլորտում ածխաթթու գազի պարունակության բարձրացման հիմնական պատճառներից են ածխաջրածնային վառելանյութերի հիմքի վրա աշխատող արդյունաբերական ձեռնարկությունների կողմից  $\text{CO}_2$ -ի արտանետումը, ինչպես նաև՝ ցամաքային էկոհամակարգերի, առաջին հերթին՝ անտառների կողմից այդ գազի կլաննան ինտենսիվության իջնումը նրա քանակի կրծատման պատճառով: Նույն ժամանակահատվածում մթնոլորտում նկատվել է նաև նյուս ջերմոցային գազի մեթանի պարունակության ավելացում, ինչն ապացուցվում է բներային սառուցներում պղպջակների անալիզի արդյունքներով:

Մարդու գործունեության արդյունքում մթնոլորտ են արտանետվում այլ գազեր, որոնք և կարող են առաջացնել ջերմոցային էֆեկտ:

19-րդ դարի վերջում շվեյտ գիտնական Արենիուսը եկավ այն եզրակացության, որ արդյունաբերական հեղափոխության ժամանակաշրջանում տարբեր արտադրությունների կողմից  $\text{CO}_2$ -ի և այլ ջերմոցային գազերի արտանետումների ավելացման արդյունքում մթնոլորտում նրանց պարունակությունը կփոխվի և որպես հետևանք՝ կնկատվի կլիմայի գլոբալ տաքացում:



Նկ. 34 Ածխաթթու գազի դարունակության փոփոխությունը մթնոլորտում վերջին 150 տարիների ընթացքում



Նկ. 35 Երկրի ջերմաստիճանի աճը վերջին 150 տարիների ընթացքում

Նկար 35-ում ցույց է տրված Երկրի ջերմաստիճանի աճը վերջին 150 տարիների ընթացքում: Իհարկե, մեր մոլորակի մթնոլորտում եղել են ջերմոցային գազերի պարունակության փոփոխություններ, սակայն ժամանակակից իրավիճակի առանձնահատկությունն այն է, որ այդ փոփոխությունները շատ արագ են կատարվում:

Գիտական ուսումնասիրությունների արդյունքում հաստատվել է, որ արտանետումների ներկայիս ծավալների դեպքում 2050թ. մթնոլորտում  $\text{CO}_2$ -ի պարունակությունը կկրկնապատկվի: Կլիմայական երևոյթների ժամանակակից համակարգչային մոդելավորման միջոցով հաստատվել է, որ այդ գործընթացի հետևանքով Երկրի ջերմաստիճանը կբարձրանա  $1,5\text{-}4,5^{\circ}\text{C}$ -ով:


Ենթադրվում է, որ բնեռային շրջաններում ջեմաստիճանը կբարձրանա  $10^{\circ}\text{C}$ -ով, իսկ հասարակածային շրջաններում՝ մինչև  $2^{\circ}\text{C}$ -ով:

Ըստ գիտնականների կանխատեսումների՝ ջերմաստիճանի գլոբալ բարձրացման արդյունքում արդյունավետ էկոհամակարգերում տեղի կունենան անդառնալի փոփոխություններ, լայնատարած անապատացում, որն էլ կրերի էկոհամակարգերի քայլայնան: Ենթադրվում է, որ արկտիկական սառուցների հալման արդյունքում՝ 2030թ. Երկրի վրա ծովի մակարդակը կբարձրանա մոտավորապես 200մն-ով և ջրի տակ կառնի շատ մերձափնյա քաղաքներ և երկրներ: Միաժամանակ կմեծանա փոթորիկների, ջրհեղեղների, երաշտների հաճախությունը և ուժգնությունը:

**Կիոտոյի արձանագրությունը:** Միավորված ազգերի կազմակերպության անհանգստությունը կլիմայի կանխագուշակվող տաքացման մասին հանգեցրեց 1992թ. Ոիո դե ժաներոյում «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի մշակմանը և ընդունմանը: 1997թ. Կիոտոյում (ճապոնիա) այդ կոնվենցիայի կողմերի հերթական կոնֆերանսում ստորագրվեց արձանագրություն, որը մասնակից արդյունաբերական զարգացած երկրների համար հաստատեց  $\text{CO}_2$ -ի արտանետումների կրծատման որոշակի քանակական պարտավորություններ:

## 45. Օգոնային շերտի բայցայումը

Օգոնային շերտի նշանակությունը և ձևավորումը: Մյուս կարևոր, համամոլորակային էկոլոգիական խնդիրը օգոնային շերտի քայլայումն է:



Նկ. 36 Օգոնը առաջանում է սրատութեայի սորին շերտերում, թթվածնի մոլեկուլի վրա ուշրամանութակագույն ճառագայթների ազդեցության հետևանքով

»» 45. Օգոնային շերտի քայլայումը



Նկ. 37 Մթնոլորտում օգոնի առաջացման և բայթայման ռեակցիաները գտնվում են հավասարակշռված վիճակում

Մթնոլորտում օգոնի ընդհանուր քանակությունը մեծ չէ՝ մոտ 3,3 մլրդ տ, սակայն այն մարդու և նյուս կենդանի էակների համար կենսականորեն անհրաժեշտ է, քանի որ պաշտպանում է ուժեղ կարճալիք ուլտրամանուշակագույն ճառագայթումից և էապես նպաստում է մեր մոլորակի ջերմաստիճանային ռեժիմի կայունացմանը:


Օգոնը թթվածնի գոյության ձևերից մեկն է, որն իր մոլեկուլում կրում է թթվածնի ոչ թե երկու, այլ երեք ատոմ: Օգոնը հիմնականում առաջանում և կուտակվում է ստրատոսֆերայի ստորին շերտերում, թթվածնի մոլեկուլի վրա ուլտրամանուշակագույն ճառագայթումից ազդեցության հետևանքով: Արդյունքում թթվածնի մոլեկուլը քայլայվում է թթվածնի ազատ ատոմների, որոնք ել միանում են թթվածնի մոլեկուլներին՝ առաջացնելով օգոն (նկ. 36):

Սակայն թթվածնը ամբողջությամբ չի վերածվում օգոնի, և թթվածնի ատոմների մի մասը, միանալով օգոնի մոլեկուլների հետ, առաջանում են թթվածնի երկու մոլեկուլ: Այսպիսով, մթնոլորտում օգոնի քանակությունն անընդհատ փոփոխվում է՝ ներկայացնելով օգոնի առաջացման և քայլայման ռեակցիաների հավասարակշռման արդյունք (նկ. 37):

**Օգոնային շերտի բայթայումը:** 1995թ. Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Շ. Ռոռլենդի, Պ. Կրիտցենի և Ս. Մոլինի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քլորֆոռորածիսածինների մոլեկուլները, որոնք մթնոլորտ են ընկնում մարդու տնտեսական գործունեության հետևանքով, ընդունակ են քայլայել մեր մոլորակի օգոնային շերտը: Ազոտի օքսիդները և քլորի ատոմները, հանդես գալով որպես կատալիզատորներ, առաջ են բերում օգոնի քայլայում և խախտում են օգոնի առաջացման և քայլայման ռեակցիաների միջև ստեղծված հավասարակշռությունը:

Հաստատված է, որ քլորի մեկ մոլեկուլը կարող է օգոնի մի քանի միլիոն մոլեկուլ քայլայել:

Տարվա եղանակից և հասարակածից ունեցած հեռավորությունից կախված՝ օգոնի պարունակությունը ստրատոսֆերայի ստորին շերտերում փոփոխվում է, սակայն 1985թ. աշնանը մոլորակի հարավային թևերում գրանցվել է օգոնի պարունակության նվազում միջինի համեմատ 40%-ով: Մթնոլորտի այն հատվածները, որտեղ նկատվում էին օգոնի քանակի կտրուկ նվազումներ, անվանվեցին օգոնային անցքեր (նկ. 38): Օգոնային շերտի քայլայումը և օգոնային անցքերի առաջացումը պայմանավորված է մարդածին ծագում ունեցող քլորֆոռորածիսածիններով և ազոտի օքսիդներով մթնոլորտի աղտոտմամբ: Քլորֆոռորածիսածիններն առավել հայտնի են



Նկ. 38 Երկիր մոլորակի խոռու օգոնային անցքերից մեկը



**Նկ. 39 Օղնային շերտի ուսումնասիրությունները  
Անտառկանություն**

ֆրեններ անվաճք և լայնորեն կիրառվում են սառնարանների, կոսմետիկայի արտադրության մեջ, արդյունաբերության այլ բնագավառներում, իսկ ազոտի օքսիդներն առաջանում են ազոտի և թթվածնի փոխազդեցության արդյունքում՝ բարձր ջերմաստիճանային պայմաններում և կատալիզատորների առկայության դեպքում, որոնց դերում հանդես են գալիս մետաղները։ Մեծ քանակությամբ ազոտի օքսիդներ առաջանում են ինչպես մեքենաների, այնպես էլ հրթիռային շարժիչների աշխատանքի ժամանակ։

Օղնային շերտի բայթայման հետևանքները:  
Անհրաժեշտ ուլտրամանուշակագույն ճառագայթների մի մասը, տեսանելի և ինֆրակարմիր ճառագայթները ազատ անցնում են օղնային

շերտով և հասնում են մինչև մեր մոլորակի մակերևույթ, ինչը անհրաժեշտ է կյանքի գոյության բոլոր ձևերի զարգացման համար: Միաժամանակ օգնային շերտը արդյունավետ կլանում է բոլոր կենդանի օրգանիզմների համար մահացու իրանակնող, ռենտգենայն և ուլտրամանուշակագույն ճառագայթների կարծալիք մասը՝ թույլ չտալով, որ դրանք հասնեն երկրի մակերևույթ:

Հավանաբար օգոնային շերտի հաստության նվազումը կվտանգի բոլոր կենդանի օրգանիզմների, այդ թվում և՝ մարդու կյանքը:

Հաստատված է, որ օգնային շերտի փոքրացման հետ մեծանում է մաշկի քաղցկեղով և կատարակտով հիվանդ մառկանց թիվը:

Բացի վերը նշված բացասական հետևանքերից, օգոնային շերտի քայլայումը կրերի ջերմոցային էֆեկտի ուժեղացման, զյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության իջեցման և հողերի քայլայման:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ տրոպոսֆերայի ստորին շերտերում օգնող հանդես է գալիս որպես շատ վտանգավոր աղտոտիչ: Այն առաջացնում է բույսերի քլորոֆիլի քայլայում, դժվարացնում է մարդկանց շնչառությունը և վնասում աչքերը: Օդի գետնամերձ շերտերում օգնի կուտակումը չի բերում նրա քանակի ավելացման օգնային շերտում, քանի որ տրոպոսֆերայի ստորին շերտերը և ստրատոսֆերան չեն խառնվում: Դեւևաբար անհրաժեշտ է պայքարել ստորին շերտերում օդի՝ օգնով աղտոտման դեմ և շտապ միջոցներ ձեռնարկել ստրատոսֆերայում օգնի պահպանանան ուղղությամբ:

Օգոնային ժերտի դահլանությանը ուղղված միջազգային համագործակցությունը: Հասկանալով համանուրակային բացասական հետևանքները, որոնք կարող են առաջանալ օգոնային շերտի քայլքայնան հետևանքով, 1985թ. Վիեննայում կայացած միջազգային բանակցությունների մասնակիցներն ստորագրեցին «Օգոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիան: Կոնվենցիան նպաստում է օգոնային շերտի պահպանությանը մասնակից երկրների միջև տեղեկատվության փոխանակմանը և լրացրւիչ ուսումնասիրությունների անզեկազմանը (Ակ. 39):

1987թ. Մոնրեալում 98 երկիր կնքեցին համաձայնագիր ՔՖԱ-ների արտադրության աստիճանական կրծատման և նորանց՝ մթնոլորտ արտանետումների առգելման մասին:

### »» 46. Թթվային տեղումներ

1990թ. Լոնդոնում կայացած նոր հանդիպման ժամանակ սահմանափակումներն ավելի խիստ էին. մոտ 60 երկիր ստորագրեց լրացուցիչ արձանագրություն, համաձայն որի մասնակից երկրները պարտավորվում էին մինչև 2000թ. դադարեցնել ՔՖԱ-ների արտադրությունը:

## 46. Թթվային տեղումներ

**Թթվային տեղումներ և նրանց առաջացման դաշտառները:** Թթվային է կոչվում ցանկացած տեղում՝ անձրև, մառախուղ, ձյուն, որի թթվայնությունը բարձր է նորմայից: Սովորաբար աղտոտիչների բացակայության դեպքում մթնոլորտային տեղումների ռեակցիան թույլ թթվային է ( $\text{pH}=5,6$ ), քանի որ նրանցում հեշտությամբ լուծվում է օդում առկա ածխաթթու գազը՝ առաջացնելով թույլ ածխաթթու: Այսպիսով, թթվային են կոչվում այն տեղումները, որոնց  $\text{pH}$ -ը ցածր է 5,6-ից:


Թթվային տեղումների առաջացման հիմնական պատճառը մթնոլորտի աղտոտումն է ծծմբի, ազոտի օքսիդներով և այլ միացություններով:

Ծծմբի երկօքսիդը և ազոտի օքսիդը մթնոլորտ են ընկնում օդանական վառելանյութի այրման արդյունքում: Անցնելով մթնոլորտ՝ այս օքսիդներն աստիճանաբար փոխագրում են ջրի մոլեկուլների հետ՝ առաջացնելով ծծմբական և ազոտական թթուներ (նկ. 40):


**Թթվային տեղումների էկոլոգիական հետևանքները:** Թթվային տեղումները առավել ծանր հետևանքներ են թողնում ջրային, հողային և անտառային էկոհամակարգերի վրա: Զրի թթվայնության փոփոխության դեպքում նրանում ապրող բոլոր կենդանի օրգանիզմները ոչնչանում են նորմալ բազմացման անհնարին դաշնալու պատճառով: Զրի և հողի թթվայնության բարձրացման դեպքում մի շարք անլուծելի քիմիական միացություններ դառնում են լուծելի և ուժեղ թունավոր ազդեցություն են ինչպես բույսերի, այնպես էլ կենդանիների վրա: Թթվային տեղումները, ընկնելով թույսերի տերևների վրա, խախտում են վերջիններիս ամբողջականությունը, ինչը բերում է ֆոտոսինթեզի ինտենսիվության իջեցման, վնասատուների և տարբեր հիվանդությունների հարուցիչների նկատմամբ նրանց դիմադրողականության թուլացման:

Թթվային տեղումները վտանգավոր են նաև մարդու համար՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցության դեպքում: Թթվային անձրևներն արագացնում են մետաղների կոռոզիայի, շենքերի և այլ կառույցների քայլայման գործընթացները: Դայտնի են բնական հումքից պատրաստված մշակույթի հուշարձանների քայլայման բազմաթիվ օրինակներ (նկ. 41):

Ակնհայտ է, որ թթվային տեղումների դեմ պայքարի ռազմավարության բացակայությունը կարող է խախտել հասարակութան կայուն զարգացման հիմքերը:



Նկ. 40 Մթնոլորտում թթվային տեղումների առաջացման մեխանիզմը



Նկ. 41 Թթվային տեղումների ազդեցության հետևանքները էկոհամակարգերի և հուսաձանների վրա

#### **47. Մթնոլորտային օդի դադարանությանն ուղղված միջոցները**

Մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու և նվազեցնելու ուղիները: Մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու և նվազեցնելու հիմնական ուղիներն են՝ զանազան ֆիլտրերի մշակումը և ներդրումը, էկոլոգիապես անվտանգ էներգիայի աղբյուրների կիրառումը, անթափոն արտադրությունների տեխնոլոգիաների զարգացումը, մեքենաներից արտանետվող գազերի դեմ պայքարը, կանաչապատումը:

Ֆիլտրերը հանդիսանում են մթնոլորտի արդյունաբերական աղտոտման դեմ պայքարի հիմնական միջոց: Արտանետումների մաքրումը մթնոլորտն աղտոտող նյութերից իրականացվում է դրանց մեխանիկական, էլեկտրական, մագնիսական, ձայնային ֆիլտրերի, ջրի և այլ քիմիապես ակտիվ հեղուկների միջով անցկացման եղանակով:

Սակայն մաքրող սարքավորումների կիրառման հետ մեկտեղ անհրաժեշտ է այնպիսի տեխնոլոգիաների ներդրում, որոնք կրացառեն կամ կնվազեցնեն աղտոտող նյութերի արտանետումները:

Անթափոն արտադրությունները մշակվում են կենսոլորտում ընթացող գործընթացների նմանությամբ, երբ մեկ օղակի վերջնանյութերը օգտագործվում են էկոհամակարգի նյութ օղակների կողմից:

Մթնոլորտ աղտոտումից պաշտպանելու միջոցներից են նաև վառելանյութի O44-ի բարձրացումը և էներգիայի խնայման այլ եղանակները: Յեռանկարային է նաև էկոլոգիապես անվտանգ էներգիայի աղբյուրների որոնումը և կիրառումը: Այդ ուղղությամբ աշխատանքներ տարվում են ողջ աշխարհում:

Արդեն կան որոշակի նվաճումներ արեգակնային, քամու, մակընթացությունների և տեղատվությունների, ծովային հոսանքների, ջրածնի էներգիաների կիրառման բնագավառում (Նկ. 42): Զարգանում է ատոմային էներգետիկան (Նկ. 43), որը անվտանգության որոշակի միջոցների պահպանման դեպքում չի աղտոտում շրջակա միջավայրը: Սակայն 1986թ. Չեռնոբիլի

»» 47. Մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցները

ատոմակայանում տեղի ունեցած վթարից հետո այս տեսակի էներգետիկայի կողմնակիցների թիվն զգալիորեն պակասեց:

Արտանետվող գազերից մթնոլորտը պահպանելու մասնավոր միջոցներից կարելի է նշել ֆիլտրերի տեղադրումը, կապար պարունակող հավելումների փոխարինումը ավելի անվտանգներով, տրանսպորտային միջոցների շարժման կարգավորումը, բենզինի փոխարինումը գազով և այլն: Սակայն խնդիրը էականորեն կարող է լուծվել միայն ներքին այրման շարժիչների՝ էլեկտրականի կան ջրածնայինի փոխարինման դեպքուն (նկ. 44):

Մթնոլորտի մաքրության պահպանման համար մեծ նշանակություն ունի քաղաքների ճիշտ պլանավորումը. գործարանները, ֆաբրիկաները և տրանսպորտային նայրուղիները պետք է անջատվեն քաղաքի բնակեցված մասերից կանաչապատ տարածքներ ներկայացնող բուֆերային հատվածներով:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել անտառների պահպանությանը: Բույսերը ֆուտոսինթեզի ընթացքում մաքրում են օդը ածխածնի երկօքսիդից և միաժամանակ հարստացնում թթվածնով: Ծառերի և թփերի տերևները եղորքացնում են օդալտուտողատ միացությունների վնասակար ազդեցությունը, օրինակ՝ փոշու հատիկներինը՝ 72%-ով, ծծմբի երկօքսիդինը՝ 60%-ով:

Մթնոլորտի դահլյանությանն ուղղված միջազգային համագործակցությունը: Բազմաթիվ աղտոտիչներ մթնոլորտում կարող են տեղափոխվել մեծ հեռավորությունների վրա: Այսպիսով, աղտոտումն ազգային սահմաններ չունի և շատ դեպքերում գլոբալ բնույթ է կրում:

Մեծ տարածությունների վրա օդն աղտոտող նյութերի տեղափոխումը գնահատելու ծրագրերը Եվրոպայում տարվում են ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կողմից: 1979թ. ՄԱԿ-ի ԵՏՀ հովանավորությամբ մշակվել և ընդունվել է «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիա: Կոնվենցիան շատ մեծ կարևորություն ունի Եվրոպական մայոցամաքում էկոլոգիական դրությունը կարգավորելու համար:

Անցյալ դարի 90-ական թթ. Եվրոպական պետությունների ուշադրությունը բևեռվեց գետնամերձ օգնության ազդեցության բացասական հետևանքների վրա: 1991թ. մշակվեց նոր արձանագրություն



Նկ. 42 Արեգակնային ժառագայթները և բամին կարելի է օգտագործել էներգիա ստանալու նորատակով



Նկ. 43 Առօնային էլեկտրակայանները լայն տարածում են ստանուած աշխարհի տարբեր երկրներում



Նկ. 44 Ավտորանսպորտի էլեկտրական և ջրածնային շարժիչները կողահյաններ մթոլորտը արտանետվող գազերից

«Յնդող օրգանական միացությունների (ՅՕՄ) արտանետումների և նրանց անդրսահմանային հոսանքների սահմանափակման մասին»:

Ներկայումս տարբեր երկրների միջև տարվում են արտանետումների ծավալների կրճատման վերաբերյալ բանակցություններ:

## **48. Հայաստանի Հանրապետության մթնոլորտային օդի աղտոտվածությունը**

### **Հայաստանի Հանրապետության օդի աղտոտվածության վիճակը:**

Հանրապետությունում մինչև 1992թ. օդի հիմնական աղտոտման աղբյուրներն էին էներգետիկայի, գունավոր մետալուրգիայի, արդյունաբերական շինանյութերի, քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները: Տնտեսության ծանր զգնաժամանակին վիճակի հետևանքով դադարեցվեցին աշխատանքները «Նախրիտ» ԳԱԱ-ում, Հայկական ատոմակայանում, Ալավերդու լեռնամետալուրգիական և այլ ձեռնարկություններում: Դրա հետևանքով խիստ նվազեցին մթնոլորտային արտանետումների ծավալները:

Ներկայումս վճարակար նյութերի արտանետումների հիմնական աղբյուր են էներգետիկայի և լեռնամետալուրգիական ոլորտները: Էկոլոգների տվյալների համաձայն՝ Ալավերդու մետալուրգիական կոմբինատը յուրաքանչյուր տարի մթնոլորտ է արտանետում 15,5 հազ. տ փոշի և ծծմբի երկօքսիդ: 1980թ. համեմատությամբ կոմբինատի արտանետումների քանակը նվազել է, սակայն այսօր էլ դրանց ծավալները մեծ են: Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ալավերդի քաղաքի մթնոլորտում կապարի պարունակությունը 35, իսկ մկնդեղինը 5,5 անգամ գերազանցում է բույլատրելի սահմանները (նկ. 45):



Նկ. 45 Ալավերդու մետալուրգիական կոմբինատի մթնոլորտային արտանետումները

»» Հայաստանի Հանրապետության օդի աղտոտվածության վիճակը

Հանրապետությունում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի զանգվածային արտանետումներում ավտոտրանսպորտի բաժինը կազմում է մոտ 65%:

Ծրջակա միջավայրի մոնիթորինգի կենտրոնի տվյալների համաձայն՝ վտանգավոր ածխաջրածինների, ազոտի երկօքսիդի և այլ նյութերի պարունակությունը Երևանի, Հրազդանի, Վանաձորի և մյուս քաղաքների օդային ավազաններում գերազանցում է թույլատրված սահմանները:

Մթնոլորտային օդի օրենսդրական դահլյանությունը Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանի Հանրապետությունում «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի ընդունումից հետո ՀՀ կառավարությունն ընդունել է երկու կարևոր որոշում, որոնք մթնոլորտի վրա վնասակար ներգործությունները սահմանափակող իրավական նորմեր են:

Ավտոտրանսպորտի արտանետումների կրճատման ուղղությամբ ընդունված են մի քանի որոշումներ, որոնցից մեկը վերաբերում է կապարային միացություններով էթիլացված բենզինի արտադրությանը, օգտագործմանը և ներմուծման արգելմանը:

Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Մեծ հեռավորությունների վրա օդի միջսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիային և ակտիվորեն մասնակցում է «Ծանր մետաղների, կայուն օրգանական աղտոտիչների, քրվայնացման, եվտրոֆիկացման և գետնամերձ օգոնի դեմ պայքարի արձանագրությունների» մշակմանը:

2000թ. Հայաստանի Հանրապետությունն ընդունել է «Օգոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայից և «Օգոնային շերտը քայլայող նյութերի վերաբերյալ» Մոնրեալի արձանագրությունից բխող ՀՀ պարտավորությունները կատարելու մասին որոշում, իսկ 2001թ. օգոն քայլայող նյութերի ներմուծումն արգելելու մասին որոշում, որոնց շրջանակներում մշակվել է «Օգոնային շերտը քայլայող նյութերի փոխարինման ազգային ծրագիր»:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շարունակվում են աշխատանքները մթնոլորտի պահպանության օրենսդրական հիմքերի բարելավման և կատարելագորման ուղղությամբ: Բացի այդ, Հայաստանն ակտիվորեն մասնակցում է մթնոլորտի պահպանությանն ուղղված բոլոր միջազգային միջոցառումներին:

## Հարցեր կրկնության համար

1. Ինչպիսի՞ գազային կազմ ունի Երկրի մակերևույթին մոտ գտնվող մթնոլորտային օդը:
2. Ի՞նչ շերտերից է կազմված մթնոլորտը:
3. Նկարագրեք տրոպոսֆերան և ստրատոսֆերան:
4. Նկարագրեք մեզոսֆերան, իոնոսֆերան և էկզոսֆերան:
5. Ի՞նչ նշանակություն ունի մթնոլորտը Երկիր մոլորակի համար:
6. Նկարագրեք մթնոլորտի բնական և մարդածին աղտոտումները:
7. Մթնոլորտի աղտոտման ինչպիսի՞ ձևեր կան:
8. Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ մթնոլորտի աղտոտումը:
9. Ի՞նչ է ջերմոցային էֆեկտը:
10. Որո՞նք են հիմնական ջերմոցային գազերը: Նշե՛ք դրանց բնական աղբյուրները:
11. Ինչո՞ւ է ավելանում ջերմոցային գազերի պարունակությունը մթնոլորտում:
12. Ի՞նչ կարող է առաջանալ մթնոլորտում ջերմոցային գազերի ավելացման դեպքում:
13. Ե՞րբ և որտե՞ղ է ստորագրվել Կիոտոյի արձանագրությունը:
14. Ի՞նչ նշանակություն ունի Կիոտոյի արձանագրությունը:
15. Ի՞նչ նշանակություն ունի օգոնային շերտը:
16. Ի՞նչ է օգոնը և ինչպե՞ս է այն առաջանում մթնոլորտում:
17. Թվե՛ք օգոնային շերտի քայլայման հիմնական պատճառները:
18. Ինչպիսի՞ հետևանքներ կարող է ունենալ օգոնային շերտի քայլայումը:
19. Ե՞րբ և որտե՞ղ է ստորագրվել Վիեննայի կոնվենցիան:
20. Օգոնի պահպանությանն ուղղված ի՞նչ կոնվենցիաներ և արձանագրություններ են ձեզ հայտնի:
21. Ի՞նչ նշանակություն ունի Մոնրեալի համաձայնագիրը:
22. Տվե՛ք թթվային տեղումների սահմանումը:
23. Ինչո՞ւ են առաջանում թթվային տեղումները:
24. Ի՞նչ հետևանքներ կարող են ունենալ թթվային տեղումները:
25. Օդի աղտոտումը կանխելու և նվազեցնելու ի՞նչ եղանակներ գիտեք:
26. Մթնոլորտի պահպանությանն ուղղված ի՞նչ կոնվենցիաներ և արձանագրություններ են ձեզ հայտնի:
27. Ինչպիսի՞ն է ՀՀ մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակը:
28. Ինչպե՞ս է իրականացվում ՀՀ-ում մթնոլորտային օդի օրենսդրական պահպանությունը:

»» 49. Զուրը երկողի վրա և նրա հատկությունները

#### **ԳԼՈՒԽ 7. ԶՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՇՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

#### **49. Զուրբ ԵՐԿՐԻ ՎՐԱ և ՕՐՎ ԽԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Զրոլորտ:** Զրային պաշարները Երկրի վրա ահօնի են և ծևավորում են ջրոլորտը՝ մեր մոլորակի ոլորտներից մեկը: Զրոլորտը, 1566 մլն կմ<sup>3</sup> ծավալում միավորում է օվկիանոսները, ծովերը, գետերը, լճերը, ճահիճները, ջրամբարները, ջրային ավազանները, քեռային և լեռնային սառցադաշտերը, ստորգետնյա ջրերը, հողի և մթնոլորտային խոնավությունը: Յամաշխարհային օվկիանոսը, որի ծավալը 1476 մլն կմ<sup>3</sup> է, զբաղեցնում է Երկրի մակերևույթի մոտավորապես 71%-ը: Սառցադաշտերում կուտակված ջրի ծավալը կազմում է մոտ 30 մլն կմ<sup>3</sup>, իսկ ստորգետնյա ջրերինը՝ 60 մլն կմ<sup>3</sup>: Գետերին, լճերին, ճահիճներին, մթնոլորտային և հողի խոնավությունը կազմող ջրերին բաժին է ընկնում մոտ 0,31 մլն կմ<sup>3</sup>:

Այսպիսով, ջրային պաշարների մոտավորակես 3% կազմում են քաղցրահամ ջրերը: Սակայն ներկայումս այդ պաշարների միայն 0,05 մլն կմ<sup>3</sup>-ն է տնտեսապես նատչելի մարդու համար (Ակ. 46):

Հայաստանի Հանրապետությունում ջրային պաշարները (մակերեսային և ստորգետնյա) կազմում են մոտ 8 կմ<sup>3</sup>:



Նկ. 46 Երկրի վրա ջրի ընդհանուր դաշտաների բաշխվածությունը

Երկրի Վրա ամբողջ ջուրն աճրնդիատ տեղափոխվում է՝ կատարելով շրջապտույտ:


Զրի համկությունները և նրա նշանակությունը բնության մեջ: Զուրը կազմված է թթվածնի մեկ և ջրածնի երկու ատոմներից, չունի հոտ, համ և գույն: Զուրը, ինչպես հայտնի է, կարող է գտնվել երեք ֆիզիկական վիճակներում՝ պինդ, հեղուկ և գազային: Այս բոլոր վիճակները ջրի մոլեկուլների միջև փոխազդեցության արդյունք են:



Նկ. 47 Զրի տքաղետույթը



Նկ. 48 Ձրի ֆիզիկական հատկությունների շնորհիվ առաջացած սառցե ժերը կուտակվում է ջրի մակերևույթին



Նկ. 49 Ձրի մակերևութային բարձր լարվածությունը թույլ է տալիս իր մակերևույթին դահլիճ կենդանի օրգանիզմները և անկենդան օրյեկտները

Ձրի գոլորշիացումը և խտացումն ընկած են ջրի մաքրման կարևորագույն գործընթացի հիմքում: Ձրի մաքրման գործընթացը կոչվում է թորում կամ զտում: Ձրի գոլորշիացման դեպքում օդ են բարձրանում միայն ջրի մոլեկուլները, իսկ աղերը և մյուս միացությունները մնում են: Երբ ջրային գոլորշիները խտանում են, առաջանում է միայն մաքուր ջուր: Այսպիսով, ջուրը ծովերից անընդհատ գոլորշիանում է, մաքրվում, մթնոլորտում խտանում և վերադառնում է երկիր քաղցրահամ ջրի ձևով: Քաղցրահամ ջրերի պաշարները երկրի վրա առաջանում են հենց այս եղանակով: Ձրի ֆիզիկական վիճակների այս բոլոր փոփոխություններն ընկած են երկրի վրա նրա շրջապատույտի հիմքում (նկ. 47):

Զուրը միացություն է, որն օժտված է զարմանալի և անսովոր հատկություններով, որոնցից առաջին նշենք ջերմային հատկությունները՝ բարձր ջերմունակությունը, ցածր ջերմահաղորդականությունը, սառեցմանժամանակը և աղջամանի արժանակությունը: Այս հատկություններով է պայմանավորված օվկիանոսների ջերմային ռեժիմի հարաբերական կայունությունը, ինչն իր հերթին փոքրացնում է երկրի մակերևույթի ջերմային տատանումները:

Ամենամեծ խտությունը ջուրն ունի  $+4^{\circ}\text{C}$ -ում: Սրա շնորհիվ առաջացած սառցե շերտը կուտակվում է ջրամբարի մակերևույթին, ինչը թույլ է տալիս ջրային օրգանիզմներին տարվա ցուրտ եղանակներին գոյատևել ջրամբարների հատակում (նկ. 48):

Զուրն ունիվերսալ լուծիչ է: Ջրային լուծույթների ձևով օրգանիզմ են թափանցում տարբեր նյութեր և հեռանում նյութափոխանակության արգասիքները:

Շնորհիվ մակերևութային բարձր լարվածությամբ այն իր մակերևույթին պահում է կենդանի օրգանիզմները և անկենդան օբյեկտները, ինչպես նաև ընդունակ է բարձրանալ մազանոթներով (նկ. 49):

Ձրի անսեղմելիությունը թույլ է տալիս օրգանիզմներին ապրել մեծ խորություններում (նկ. 50):

Զուրը թափանցիկ է, ինչի շնորհիվ ջրային բույսերն իրականացնում են ֆոտոսինթեզ նույնիսկ զգալի խորություններում (նկ. 51):

Կենդանի օրգանիզմները պարունակում են մոտ 80% ջուր, և նրա կորուստն անգամ աննշան քանակներով, որպես կանոն, բերում է օրգանիզմի մահվան: Բացի այդ ջրի քայլայումը ֆոտոսինթեզի ժամանակ մթնոլորտը թթվածնով հարստացնելու միակ աղբյուրն է:

Այսպիսով, բնության մեջ ջուրն ունի բացարկի նշանակություն: Այն ստեղծում է նպաստավոր պայմաններ բույսերի, կենդանիների և մանրէների կենսագործուներության համար:

»» 50. Ձրոլորտի էկոլոգիական խնդիրները



Նկ. 50 Ձրի անսեղմելիությունը թույլ է տալիս օգանիզմներին աղբել մեծ խորություններում



Նկ. 51 Ձրի թափանցիկությունը թույլ է տալիս ջրային բույսերին իրականացնել ֆուռսինթեզ նույնիսկ զգալի խորություններում

## 50. Ձրոլորտի էկոլոգիական խնդիրները

Բնական ջերի ադտուման հիմնական աղբյուրները: Ձրի մեջ տարրեր միացությունների ներթափանցման արդյունքում այն աղտոտվում է, ընդ որում իշխում է ջրի կենսոլորտային ֆունկցիան և տնտեսական նշանակությունը:

Ձրի հիմնական աղտոտիչներից է նավթը, որը կարող է աղտոտել ջուրը ինչպես բնական ճանապարհով, այնպես էլ մարդու գործունեության հետևանքով՝ վերջինիս տեղափոխման, արդյունահանման և օգտագործման ժամանակ (Նկ. 52):

Ձրի աղտոտիչներ են նաև մետաղները, ռադիոակտիվ տարրերը, թունաքիմիկատները և պարարտանյութերը: Մետաղներից ջրային միջավայրի համար առավել վտանգավոր են ծանր մետաղները, որոնք ընդունակ են կուտակվելու օրգանիզմներում և տեղափոխվելու սննդային շղթաներով: Մեծ վտանգ են ներկայացնում նաև ծովերի հատակում թաղված ռադիոակտիվ և թունավոր թափոնները:

Զրամբարների ջերմային ադտումը: Զրամբարների աղտոտման ձևերից է նրանց ջերմային աղտոտումը: Էլեկտրակայանները, արդյունաբերական ձեռնարկությունները հաճախ ջրամբարներ են արտանետում մաքուր, բայց տաքացված ջուր: Զրամբարում ջրի ջերմաստիճանի բարձրացման հետ փոքրանում է թթվածնիքանակությունը, խախտվում է կենսաբանական հավասարակշռությունը, և կարող է սկսվել էվտրոֆիկացման գործընթացը: Աղտոտված և տաքացված ջրում ակտիվ սկսում են բազմանալ մանրէները, այդ թվում նաև՝ հիվանդաբեր: Ընկնելով խմելու ջրի մեջ՝ դրանք



Նկ. 52 Ջուրը կարող է ադտովել նավթանքներով տեղափոխման, արդյունահանման և օգտագործման ժամանակ

կարող են տարբեր հիվանդությունների և համաճարակների պատճառ դառնալ:

**Զրամբարների էվտրոֆիկացումը:** Գյուղատնտեսական հոսքաջրերը պարունակում են մեծ քանակությամբ կենսածին տարրեր: Նրանց պարունակության բարձրացումը բերում է կենսաբանական հավասարակշռության խախտման ջրամբարներում: Նման ջրամբարում սկզբից խիստ մեծանում է մանրադիտակային ջրիմուռների քանակությունը: Սննդի քանակության ավելացման հետ մեծանում է խեցգետնակերպերի, ձկների և այլ օրգանիզմների թվաքանակը: Զրում եղած թթվածնի պաշարների սպառնան և ծծմբաջրածնի կուտակման պատճառով ջրամբարում բոլոր կենդանի օրգանիզմների գոյությունը դառնում է անհնար: Զրամբարը դառնում է անկենդան: Նման ջրամբարի ջուրը դառնում է անպիտան խմելու և տնտեսական կարիքները հոգալու համար (նկ. 53): Չատ դանդաղ ընթացող բնական էվտրոֆիկացման գործընթացները բնորոշ են մեր մոլորակի երկրաբանական պատճության շատ փուլերի: Ածխի, նավթի, վառվող շերտաքարերի ներկայիս պաշարների առկայությունը կապված է բնական էվտրոֆիկացման գործընթացների հետ:

Մարդածին էվտրոֆիկացումը ընթանում է շատ կարծ ժամանակահատվածում և բացասաբար է ազդում քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի վրա:

Ներկայումս Աևանա լճում մարդածին էվտրոֆիկացում է ընթանում, և եթե այդ գործընթացը չկանվի, ապա մենք կարող ենք գրկվել քաղցրահամ ջրի աղբյուրից, որը շատ կարևոր է ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ տարածաշրջանի համար:

## 51. Քաղցրահամ ջրի նւանակությունը և նրա դահլուանությունը

**Ջրի նւանակությունը մարդու համար:** Մարդու առողջությունն անմիջականորեն կախված է քաղցրահամ ջրի առկայությունից, նրա որակից: Միջազգային փորձագետների տվյալներով 2000թ. մոլորակի ավելի քան 1,2 մլրդ մարդ տուժում է քաղցրահամ ջրի անբավարար լինելուց: Ներկայումս Պարսկական նեղուցի երկրներում մեկ լիտր խմելու ջուրը փոխանակվում է մեկ լիտր նավթով (նկ. 54): Քաղցրահամ ջրի հիմնական մասը ծախսվում է արդյունաբերական և գյուղատնտեսական նպատակներով: 1 տոննա նավթի վերամշակման համար անհրաժեշտ է ծախսել մոտավորապես 60 տոննա ջուր, 1մ սինթետիկ կյուսվածքի արտադրման համար՝ 5000տ ջուր: 1տ ցորենի աճեցման համար ծախսվում է 2տ, իսկ բրնձի համար՝ 25տ ջուր:

Զուրը դարձել է ամենաթանկարժեք հումքերից մեկը, որը փոխարինել հնարավոր չէ:



Նկ. 53 Էվտրոֆիկացված ջրամբարը դառնում է անոդիտան խմելու և տնտեսական կարիքները հոգալու համար



Նկ. 54 Շատ երկներում 1լ խմելու ջրի արժեքը հավասար է 1լ նավթի արժեքին:

## »» 52. Զրային պաշարների պահպանությունը աղտոտումից և քայլայումից

Ինչպես նշված է ՄԱԿ-ի գեկույցում, քաղցրահամ ջրի պակասության անընդհատ աճը կարող է դառնալ նույնիսկ ավելի սուր խնդիր, քան կլիմայի գլոբալ տաքացման հարցը: Ըստ կանխագուշակումների՝ 2050թ. ջրի սակավությունից կտուժի ավելի քան 3 մլրդ մարդ աշխարհի 50-ից ավելի երկուներում: Դա կուժեղացնի ջրի հետ կապված էկոլոգիական և սոցիալական խնդիրների բարոյությունը:

Արդեն հիմա Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի երկրներում ջրի պակասությունը ծնունդ է աղքատություն և հետամնացություն, բերում է քաղաքական անկայունության: Ջրի պակասությունը հաճախ էքսիկական և միջադաշտական հակամարտությունների պատճառ է հանդիսանում:

Եգիպտոսը, Սուդանը և Եթովպիան թշնամնացություն են Նեղոս գետի ջրերի օգտագործման պատճառով: Հնարավոր է քրդական հարցով Թուրքիայի և Սիրիայի միջև հակամարտության իրական պատճառը ջրային ռեսուրսներից օգտվելու խնդիրն է:

**Քաղցրահամ ջրի հիմնական աղբյունները:** Գյոյություն ունեն քաղցրահամ ջրերի երկու տիպի աղբյուններ՝ մակերևութային և ստորերկրյա: Այն մթնոլորտային տեղուները, որոնք թափանցել են հողի մեջ և չեն վերադարձել մթնոլորտ, կոչվում են մակերևութային ջրեր: Մթնոլորտային տեղուների մի մասը թափանցում է հողի մեջ և կուտակվում այնտեղ գրունտային ջրերի տեսքով: Այդ ջրի մեջ մասը վերադառնում է մթնոլորտ, իսկ մյուս մասն է օգտագործվում և մարդու կողմից:

**Քաղցրահամ ջրի սակավության դաշտառները:** Տեղուների անհավասարաչափ բաշխումը աշխարհի տարբեր շրջաններում պայմանավորել է ջրի պակասությունը որոշ շրջաններում և նրա ավելցուկը՝ մյուսներում: Սակայն քաղցրահամ ջրի պակասության հիմնական պատճառներն են մարդու կողմից նրա օգտագործման անընդհատ աճը, ջրի կորուստները նրա տեղափոխման և օգտագործման ժամանակ, ջրի որակի վատացումը աղտոտման հետևանքով: Բոլոր գետերի ընդհանուր տարեկան հոսքը կազմում է 426000կմ<sup>3</sup>, ինչը համապատասխանում է մոտավորապես 7000մ<sup>3</sup> բնակչության մեկ շնչի համար: Սակայն բնակչության թվաքանակի աճի հետևանքով այդ քանակը 2025թ. կարող է ընկնել մինչև 5200մ<sup>3</sup>: Որոշ դեպքերում քաղցրահամ ջրի պակասությունը պայմանավորված է մարդու գործունեության բացասական հետևանքների անկանխատեսելիությամբ:

Զրանցքների, ջրավագանների կառուցումը, ռոռոգումը, այսինքն՝ արոտավայրերի, ճահիճների չորացումը և այլն հաճախ չեն բերում ակնկալվող դրական արդյունքների:

Մի շարք դեպքերում դա բերում է ոչ միայն գրունտային ջրերի մակարդակի փոփոխության, այլև ջրերի բնական աղբյունների ջրագրկման և աղտոտման:

## 52. Զրային դաշտարների դահլիճանությունը աղտոտումից և քայլայումից


**Զրերի դահլիճանության հիմնական սկզբունքները:** Զրային պաշարների աղտոտման և քայլայման մասշտաբները սպառնացող բնույթ են կրում: Ելնելով խնդիրի կարևորությունից՝ միջազգային համաձայնաժողովը կազմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Միջազգային հիդրոլոգիական ծրագիր (ՄՀԾ): ՄՀԾ-ի հիմնական խնդիրներն են՝ համալիր միջոցառումների մշակումը, որոնք ուղղված են ջրային պաշարների ռացիոնալ օգտագործմանը, նրանց պահպանությանը, քայլայման կանխմանը, գիտական և կիրառական ուսումնասիրությունների համակարգի ստեղծմանը: Առավել կարևոր է բնական կապերի վերականգնումը, մարդու գործունեության և միջավայրի միջև հավասարակշռության ստեղծումը:

Զրային պաշարների պահպանության ճիշտ կազմակերպման համար կարևոր նշանակություն ունի համապատասխան օրենսդրական հիմքի մշակումը և տարբեր երկրների միջև համագործակցությունը, մասնավորապես անդրսահմանային գետերի և ջրամբարների օգտագործման բնագավառում:

Զրային դաշտում՝ աղտոտմից մաքրման եղանակները: Զրային պաշարների պահպանության կարևորագույն տեխնոլոգիական և կենսատեխնոլոգիական միջոցներից են արտադրության տեխնոլոգիաների կատարելագործումը, անբավոն տեխնոլոգիաների ներդրումը: Քանի որ ջրի աղտոտումից խուսափելն անհնարին է, ներկայումս լայն կիրառում են գտել ջրային պաշարների պահպանության համար կենսատեխնիկական մեթոդները, այսինքն՝ հոսքաջրերի՝ աղտոտիչներից մաքրման եղանակները:

Հաշվի առնելով հոսքաջրերի կազմի բազմազանությունը՝ մշակվել են նրանց մաքրման տարրեր եղանակներ՝ մեխանիկական, ֆիզիկաքիմիական, քիմիական, կենսաբանական և այլն: Հոսքաջրերի վճասակարության աստիճանից և աղտոտման բնույթից կախված՝ մաքրման գործընթացը կարող է իրականացվել կամ մեկ, կամ համալիր եղանակներով: Լայն կիրառում է գտել հոսքաջրերի մաքրման կենսաբանական եղանակը: Այս եղանակը հիմնված է արհեստականորեն ներմուծվող մանրէների կողմից սրանց զարգացման համար հոսքաջրերում պարունակվող օրգանական և անօրգանական միացությունների (ծծմբաջրածին, ամոնիակ, նիտրիտներ և այլն) օգտագործման ընդունակության վրա: Հոսքաջրերի կենսաբանական մաքրման համար օգտագործում են կենսաֆիլտրեր, կենսաբանական լճակներ և աերոտենկեր:

Ներկայումս համարյա ոչ մի քաղաք չի կարող բնականոն գոյատևել առանց մաքրող կայանների աշխատանքի (Ակ. 55):



Ակ. 55 Մաքրող կայանները դարձել են բոլոր բաղամերի ջրամատակարարման ցանցի կարևորագույն բաղադիչներ


### **53. Հայաստանի Հանրապետության ջրային դաշտում և նրանց դահողանությունը**

**Գետեր:** Հանրապետության մակերևության ջրային պաշարները կազմում են մոտ 6,25 կմ<sup>3</sup>, իսկ ստորգետնյա ջրային պաշարները՝ մոտ 1,2 կմ<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետության տարածքով հոսում է 1700 գետ, որոնցից 14-ի երկարությունը գերազանցում է 35կմ (Ակ. 56): ՀՀ տարածքում գետերը, չնչին քացառությամբ, լեռնային բնույթունեն և պատկանում են Քուր-Արաքսի ջրահավաք ավազանին: Գետերի սնումը կատարվում է հիմնականում ձնիալի, անձուների և ստորգետնյա ջրերից: Հայաստանն օգտագործում է նաև Արաքս և Ախուրյան սահմանային գետերի ջուրը: Տարվա ընթացքում գետերի հոսքը մեծ փոփոխություններ է կրում: Հանրապետության աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ գրեթե բոլոր գետերն արտահոսում են նրա սահմաններից դուրս:

**Լճեր:** Հայաստանի Հանրապետությունում կա 95 լիճ: Դրանց ընդհանուր ծավալը, քացառաթյամբ Սևանի, կազմում է մոտ 0,5կմ<sup>3</sup>: Լճերը հիմնականում լեռնային են և, քացառությամբ Սևանա լճի, քավական փոքր: Սևանա լիճն զբաղեցնում է 1326 կմ<sup>2</sup> տարածք և գտնվում է 1897 մ ծմբ: Մյուս հիմնական լճերն են՝ Արփին, Քարին, Ակնան, Այղըր և Սև լիճը:

»» 53. Հայաստանի Հանրապետության ջրային պաշարները և նրանց պահպանությունը



Նկ. 56 Հայաստանի Հանրապետության 14 գետերը, որոնց երկարությունը գերազանցում է 35կմ

Բնակչությունը միայն խմելու նպատակով տարեկան օգտագործում է 2190 մլն լ ջուր, իսկ կենացաղյին կարիքների համար՝ մոտ 100 մլրդ լ ջուր:

Սուրերկյա ջրերի տեսակները Հայաստանում մեծ են ստորերկյա և հանքային ջրերի պաշարները:

Հայաստանում ստորերկյա ջրերը բաժանվում են երեք խմբի:

Աղբյուրները, մակերես դուրս գալով միայն որոշակի վայրերում, անմիջապես հոսքեր են գոյացնում: Աղբյուրների ջրերը սովորաբար կարող են օգտագործվել խմելու նպատակով՝ առանց որևէ մշակման: Եթե աղբյուրների շուրջը բացակայում են սանիտարական գոտիները, նրանք հեշտությամբ աղտոտվում են, մասնավորապես, մանրէներով և տարբեր քիմիական նյութերով: ՀՀ տարածքում աղտոտված աղբյուրների հիմնական վայրերն են՝ Լոռվա գոգավորությունը, Գետամնեջը:

ճահճուտները մակերես են դուրս են գալիս մեծ իջվածքներում, հաճախ՝ ճահճների տեսքով, որոնք ի վերջո գոյացնում են հոսքեր ու արտահոսում տարածքից դուրս: Տարվա ընթացքում գրունտային ջրերի մակարդակը տատանվում է շուրջ 1 մետրով: Երբեմն ստորերկյա ջրերը շատ են մոտենում երկրի մակերեսին և գոյացնում ճահճուտներ: Արարատյան դաշտում ճահճուտները 1953-1955թթ. չորացվել են և վերածվել գյուղատնտեսական հողերի:

Ստորերկյա հոսքերը արտահոսում են տեղանքից դուրս՝ առանց մակերեսային հոսքեր առաջացնելու:

Հանրապետության ջրային պաշարների շուրջ 70%-ը ի վերջո հոսում է դեպի Արարատյան դաշտ:

Հայաստանի ստորերկյա ջրային պաշարներն աղտոտում լավ պաշտպանված են, քանի որ գտնվում են մեծ խորություններում՝ ծածկված գրեթե անբափան կավային շերտերով, իսկ արտեզյան ճնշումը թույլ չի տալիս, որ աղտոտիչները մուտք գործեն ստորգետնյա ավագանները:

Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի միայն որոշ մասն է, որ խմելու համար պիտանի չե, քանի որ դրանցում հանքային նյութերի պարունակությունը գերազանցում է պահանջվող նորմերը:

Զրային դաշտաների դահլիճանությունը Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանում ջրային պաշարների պահպանության առաջնահերթ խնդիրներից են ջրային պաշարների ծիշտ հաշվառումը, բաշխումը և աղտոտումից պահպանումը: Շուրջ 200 հազար մարդ բնակվում է ջրասակավ շրջաններում, և այդ տարածքների տնտեսական զարգացումը կապված է ջրի առկայության հետ:

Զրային պաշարների պահպանության և արդյունավետ օգտագործման հիմնախնդիրներից մեկը Սևանա լճի պահպանությունն է, որի քաղցրահամ ջրերը տարածաշրջանի համար ապագա խմելու ջրերի միակ աղբյուրն են: Վերջին 50 տարիների ընթացքում Սևանա լճի մակարդակը իջել է նոտ 20 մետրով: Զուրու օգտագործվել է էլեկտրաէներգիայի արտադրության և ոռոգման նպատակներով: Լիճը սնելու համար կառուցվեց Արփա-Սևան թունելը, որով Արփա գետի ջրերը հոսում են դեպի Սևանա լիճ: Լճի մակարդակի պահպանման համար կառուցվում է Որոտանի հիդրոտեխնիկական կառույցը: Սևանա լճի պահպանության համար տեղծվել է «Սևան» ազգային պարկը: Շնորհիվ այդ միջոցառումների՝ Սևանա լճի մակարդակն սկսել է բարձրանալ:

Հայաստանում ջրային պաշարների կառավարման և օգտագործման հետ կապված մշակվել են մի շարք օրենքներ, որոնցից կարելի է նշել Զրային օրենսգիրքը, Քաղաքացիական օրենսգիրքը, Կառավարության որոշումը Սևանա լճի ջրի օգտագործման վերաբերյալ և այլն:

Զրային օրենսգիրքն ընդունվել է 1992թ.: Օրենսգրքում տրվում են ջրի օգտագործման տարրեր ասպեկտները և ջրային պաշարների պահպանության համար կառավարության պատասխանատվությունը: Օրենսգրքի հիմնական նպատակներն են՝ կանխել ջրի աղբյուրների աղտոտումն ու սպառումը, բարելավել ջրային օբյեկտները, ուժեղացնել ջրի իրավական պաշտպանությունը, ապահովել ջրամատակարարումը կենցաղային և արդյունաբերական նպատակներով օգտագործելու համար: Օրենսգիրքը սահմանում է, որ ջուրը պետք է օգտագործվի այնպես, որ ջրի քանակը չսպառվի և չճնշի ջրային կենդանիների և բույսերի գոյությունը:

»» 53. Յայաստամի Յանրապետության ջրային պաշարները և նրանց պահպանությունը

### Հարցեր կրկնության համար


1. Ինչպիսի՞ն են Երկրի վրա ջրային պաշարները:
2. Թվե՛ք ջրի հատկությունները:
3. Ի՞նչ նշանակություն ունի ջուրը բնության մեջ:
4. Զրերի աղտոտման ի՞նչ աղբյուրներ գիտեք:
5. Ի՞նչ է ջրամբարների ջերմային աղտոտումը:
6. Ինչո՞ւ և ինչպե՞ս է ընթանում ջրամբարների էվլորոֆիլկացումը:
7. Ի՞նչ նշանակություն ունի ջուրը մարդու կյանքում:
8. Որո՞նք են քաղցրահամ ջրերի հիմնական աղբյուրները:
9. Ինչո՞վ է պայմանավորված քաղցրահամ ջրերի պաշարների սակավությունը:
10. Ջրային պաշարների՝ աղտոտումից մաքրման ինչպիսի՞ եղանակներ են ձեզ հայտնի:
11. Նկարագրե՛ք ՀՀ ջրային ռեսուրսները և ՀՀ ջրային օրենսգիրը:

## ԳԼՈՒԽ 8. ՀՈՂԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՐՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 54. Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը նյութերի տրամադրությամասին

Հողի կառուցվածքը: Կենսոլորտի գարզացման կարևորագույն փուլերից էր հողային ծածկույթի առաջացումը: Հողը յուրահատուկ բնական գոյացություն է, որն օժտված է կենդանի և անկենդան բնությանը բնորոշ մի շարք հատկություններով: Հողն այն միջավայրն է, որում փոխազդում են կենսոլորտի տարրերի մեջ մասը, ջուրը, օդը և կենդանի օրգանիզմները:

Բ



Նկ. 57 Հողի հորիզոնները

Հողը կազմված է մի քանի հորիզոններից, որոնք առաջանում են մայրական լեռնային ապարների, կլիմայի, բույսերի, կենդանիների և տեղանքի ռելիեֆի փոխազդեցության հետևանքով (նկ. 57):

Սակերեսային հորիզոնը բնակեցված է կենդանիների, մանրէների, բույսերի բազմաթիվ տեսակներով և նրանց մնացորդներով, որոնք կազմում են հումուսի հիմքը: Հումուսը կայուն օրգանական նյութ է, որը պահպանվում է քայլայնան հիմնական գործընթացների ավարտից հետո: Հումուսային հորիզոնը բաժանվում է մի քանի ենթաշերտի: Դրանք են՝ թաղիքը, հիմնական հումուսային շերտը և տարալվացված բաց գույնի հողը: Հաջորդ հորիզոնը կազմված է հիմնականում հողի հանքային տարրերից: Օրգանական նյութերն այստեղ մշակվել են ռեղուցենտների՝ մանրէների կողմից և հավասարաչափ խառնվել մայրական ապարների հանքաշերտերի հետ: Եվ վերջապես երրորդ հորիզոնը քիչ փոփոխված մայրական հանքաշերտն է:

Հողը կազմող տարրերը կառող են գտնվել երեք ֆիզիկական վիճակներում՝ պինդ, հեղուկ և գազային: Պինդ վիճակում գերակշռում են հանքային գոյացությունները և օրգանական նյութերը, այդ թվում և հումուսը: Հողի հեղուկ վիճակը, այսպես կոչված հողային լուծույթը, կազմում է ջուրը՝ նրանում լուծված օրգանական և հանքային միացություններով, ինչպես նաև՝ գազերով: Զրից գուրկ հողային տարածքներում գոյանում է «հողային օդը», որն իր մեջ ներառում է զանազան գազեր:


Հողի նշանակությունը բնության մեջ: Հողը հանդիսանում է կյանքի միջավայր շատ օրգանիզմների համար: Հողում բնակվում են բազմաթիվ կենդանի օրգանիզմներ՝ բակտերիաներ, ջրիմուռներ, սնկեր, միաբջիջ կենդանիներ, որդեր, հոդվածոտանիներ և մանր կաթնասուններ: Հողի կարևորագույն հատկությունը նրա բերրիությունն է, այսինքն՝ նրա ընդունակությունը՝ ապահովելու բույսերի բերքատվությունը: Հողի բնական բերրիությունը ծևավորվում է շատ երկար ժամանակի ընթացքում և պահպանվում է այնքան, քանի դեռ բնակեցված է տարբեր կենդանի օրգանիզմներով, որոնք մասնակցում են հումուսի առաջացման գործընթացներին: Հողի բերրիության բարձրացման համար մեջ նշանակություն ունեն անձրևողները: Շատ բակտերիաների, սնկերի և բարձրակարգ բույսերի արմատների միջև առաջանում է սիմբիոզ: Օրինակ՝ երեքնուկի արմատների արմատապարհիկներում ապրում են բակտերիաներ, որոնք վերամշակում են օդի ազոտը՝ դարձնելով այն մատչելի բույսերի համար (նկ. 58):

#### »» 54. Յողը, Այս կառուցվածքը և նշանակությունը նյութերի շրջապտույտի համար

Յողը կարևորագույն նշանակություն ունի բույսերի կյանքում: Յողային շերտի հզորությունը որոշվում է բույսերի արմատների բափանցման խորությամբ և փորող կենդանիների գործունեությամբ: Այն հասնում է մոտավորապես 1,5-2 մ-ի:

Բացառապես մեծ է հողի՝ որպես սանհտարական պաշտպանիչ շերտի նշանակությունը: Այն հանդես է գալիս որպես հզոր բակտերիալ ֆիլտր ջրային լուծույթների մաքրման համար և օժտված է քիմիական միացությունները կապելու մեջ ընդունակությամբ: Յողի մաքրող դերը հիմնականում կախված է նրա ֆիզիկական և քիմիական հատկություններից:

Յողի դերը նյութերի ցածրադրույտում: Յողը բարդ բնական համակարգ է, որտեղ



Նկ. 58 Որոշ բակտերիաներ, սնկեր՝ բարձրակարգ բույսերի հետ սիմբիոզի արդյունքում, առմատների վրա առաջացնում են սարեր բնույթի դաշտականեր, որտեղ և բնակվում են

կենդանի օրգանիզմների և այլ գործոնների ազդեցությամբ տեղի է ունենում բարդ օրգանական միացությունների առաջացում և քայլայում: Հանքային նյութերը բույսերի միջոցով կլանվում են հողից, մտնում են նրանց օրգանական միացությունների կազմի մեջ, ապա՝ բուսակեր օրգանիզմների օրգանական նյութերի, իսկ հետո՝ միջատակեր և գիշատիչ կենդանիների: Բույսերի և կենդանիների մահից հետո օրգանական նյութերն անցնում են հողի մեջ: Յողային մանրէները քայլայում են այդ օրգանական միացությունները, որոնք ել բազմաթիվ բարդ և բազմաստիճան ռեակցիաների արդյունքում վերածվում են բույսերի համար մատչելի ծների: Դրանց մի մասն է մտնում է հողում պարունակվող օրգանական նյութերի կազմի մեջ կամ հեռացվում է հոսքաջրերով: Այս ամբողջ գործընթացը քիմիական տարրերի օրինաչափ շրջապտույտ է «հող-բույս-կենդանի-մարդ-հող» համակարգում: Այս շրջապտույտը կոչվում է «փոքր» կամ «կենսաբանական»: Շնորհիվ նյութերի փոքր շրջապտույտի՝ մշտապես պահպանվում է հողի բերրիությունը:

Յողի նշանակությունը մարդու կյանքում: Յողի նշանակությունը մարդու կյանքում շատ մեծ է: Մարդիկ հողից ստանում են այն ամենը, ինչն անհրաժեշտ է իրենց կյանքի համար: Եներգիայի մոտավորապես 88%-ը, որը մարդն ստանում է սննդի հետ, տալիս են մշակվող հողերը, 10%-ը ստանում են անտառներից, դաշտերից, արոտավայրերից և միայն 2%-ը՝ Համաշխարհային օվկիանոսի պահարներից:

Բնական է, որ հողից և նրա բերրիությունից կախված է մարդու կյանքը: Գյուղատնտեսական հողերը բաշխված են անհավասարաչափ և գրավում են հսկայական տարածքներ անտա-

ռատափաստանային և տափաստանային գոտիներում: Մեր մոլորակի վրա բնական բարդ գործընթացների և մարդկային սերունդների երկարատև աշխատանքի արդյունքում մշակված է ցանաքի մոտ 10%-ը: Բնական պայմաններում 1սմ հաստությամբ բերրի հողի շերտը ձևավորվում է 125-400 տարվա ընթացքում: Այդ գործընթացն էապես արագացավ մարդկային գործունեության և օպտիմալ ազդութեամիկայի կիրառման հետ: Բայց նույնիսկ այդ դեպքում 1սմ բերրի հողաշերտ ստանալու համար պահանջվում է ոչ պակաս, քան 40 տարի:

Բերքի հետ միասին մարդը հողից ստանում է մեծ քանակությամբ օրգանական և հանքային նյութեր՝ դրանով իսկ աղքատացնելով հողը: Խնամքով մշակելով և պարարտացնելով հողը՝ մարդը բարձրացնում է նրա բերրիությունը՝ հասցնելով այնպիսի արժեքների, որ այդ հողերն արդեն կարելի է համարել արհեստական:

Այսպիսով, մի դեպքում մարդու ազդեցությունը բերում է հողի բերրիության բարձրացմանը, իսկ այլ դեպքերում էլ՝ բերրիության իջեցմանը, հողի քայլայմանը և ոչնչացմանը:

## 55. Հողերի կորսի հիմնական դասճառները

**Հողերի երողիան:** Տարբերում են հողերի քայլայման և ոչնչացման չորս գլխավոր պատճառ՝ էրոզիա, ոռոգման բացասական հետևանքներ, հողերի հյուծում և օտարում:

Ամենակործանիչ ազդեցությունը հողերի վրա թողնում է էրոզիան: Հողի էրոզիան նրա քայլայումն է ջրի կամ քամու ազդեցությամբ: Էրոզիան առաջին հերթին սկսվում է այն հողերում, որտեղ բացակայում է բնական բուսածածկույթը, որը տվյալ դեպքում կատարում է առնվազն երկու ֆունկցիա: Առաջինը՝ բույսերն իրենց արմատներով ամրացնում են հողը, և երկրորդը՝ բույսի վերգետնյա մասերը նվազեցնում են ջրի և, հատկապես, քամու հոսքի ուժն ու ինտենսիվությունը:

Սակայն մարդու գործունեության ազդեցությամբ էրոզիոն գործընթացները կտրուկ արագացել են: Օրինակ՝ վերջին 50 տարվա ընթացքում օվկիանոս թափված էրոզիոն քշվածքն ավելացել է մոտ 8 անգամ (նկ. 59):

Քամու էրոզիա: Էրոզիայի այս տեսակն անմիջական կախվածության մեջ է գտնվում քամու արագությունից և տևողությունից, հողի ընդհանուր վիճակից: Էրոզիային նպաստում են հողերի չորությունը և հումուսով աղքատ լինելը:



Նկ. 59 Հողի երողիոն գործընթացները կտրուկ արագացել են վերջին 50 տարվա ընթացքում

»» 55. Հողերի կորստի հիմնական պատճառները



Նկ. 60 Հողերի աղակալումը հաճախ առաջ է բերում անաղատացում



Նկ. 61 Անձրևացիր սարքավորումների կիրառումը կօգնի դայլարե հողերի երկրորդային աղակալման դեմ

**Զրային էրոզիա:** Էրոզիայի այս տեսակը հանդիպում է ամենուր, բայց առավել ուժեղ է արտահայտված այն վայրերում, որտեղ մշակվող, ընդարձակ բաց տարածությունների վրա մեծ է տեղումների քանակությունը: Զրային էրոզիան սկսվում է կաթիլային էրոզիայից, երբ ընկնող անձրևի կաթիլների ուժի ազդեցությամբ տեղի է ունենում հողային կնծիկների և ագրեգատների քայլայում: Կաթիլային էրոզիայի արդյունքում ջուրը կարող է կուտակվել ջրափոսերում և ջրի տակ առնել բույսերը: Առավել վտանգավոր է մակերեսային հոսքի ուժեղացումը, որը բերում է էրոզիայի ուժեղացմանը: Հոսելով հողի մակերևույթով՝ ջուրը տանում է հողային մասնիկները:

Բացի հողերի մշակումից էրոզիոն գործընթացների ի հայտ գալուն նպաստում են մեծ ծավալով անտառահատումները, բուսածածկույթի ոչնչացումը, անասունների արածեցումը, տուրիզմը և այլն:

Հողի էրոզիայի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է պահպանել բուսածածկույթը մեծ տարածությունների վրա, պահպանել անասունների արածեցման և հանգստավայրերի տեղաբաշխման նորմերը, մանավանդլեռնային գոտիներում, ստեղծել դաշտապահպան գոտիներ, օգտագործել օրգանական պարարտանյութեր և հողամշակման համար նախատեսված հատուկ սարքավորումներ, որոնք նվազագույն չափով կվճարեն հողի մակերեսային շերտը և այլն:

Որպեսզի իջեցվի ջրային էրոզիայի արագությունը, կատարում են տնկարարական աշխատանքներ: Քանու էրոզիայի ազդեցությունը թուլացնելու համար հողի մակերեսը որոշ դեպքերում ծածկում են պոլիմերային նյութերով և միաժամանակ տնկում են խոտեր, թփեր, ծառեր:

**Ոռոգելի հողագործություն:** Ոռոգելի հողագործությունը մշակվող հողերի արհեստական մատակարարումն է ջրով: Ոռոգումը նպաստում է ստացվող գյուղատնտեսական արտադրանքի եական ավելացմանն այն վայրերում, որտեղ տեղումները քիչ են:

**Ոռոգվող հողատարածություն:** Ոռոգվող հողագործությունը մշակվող հողերի արհեստական մատակարարումն է ջրով: Ոռոգումը նպաստում է ստացվող գյուղատնտեսական արտադրանքի եական ավելացմանն այն վայրերում, որտեղ տեղումները քիչ են:

**Դաշտերը հաճախ ոռոգվում են ավելի շատ ջրով,** քան հողը կարող է պահել իր արմատային շերտում: Այդ ավելցուկ խոնավությունը հասնում է գրունտային ջրեր, որի հետևանքով դրանց մակարդակը բարձրանում է: Մի քանի տարի անց գրունտային ջրերը հասնում են հողի մակերեսին, և ջուրն սկսում է գոլորշիանալ: Ընդ որում ջրում լուծված աղերը կուտակվում են հողի մակերեսային շերտերում: Այդպիսի հողերը գործնականում անպիտան են դառնում հողագործության համար:



Նկ. 62 Մեծ ծավալներով հողերի օսարում  
տեղի է ունենում նավթի և այլ օգտակար  
հանածոների արդյունահաննան ժամանակ

Ներկայում աշխարհում կա մոտ 60 մլն հա երկրորդական աղակալած հող, որը կազմում է բոլոր ոռոգվող հողերի մոտ 25%-ը: Հողերի աղակալումը հաճախ առաջ է բերում անապատացում (նկ. 60):

Երկրորդային աղակալման դեմ պայքարի կարևորագույն միջոցներն են ոռոգելի համակարգերում ջրի չափաՎորված ծախսը, խիստ հանքայնացված ջրի հեռացումը հողից, անձրևացիր սարքավորումների կիրառումը և այլն (նկ. 61):

**Հողերի ճահճացումը:** Չորային կլիմայով շրջաններում հողերի աղակալմանը հաճախ ուղեկցում է ճահճացումը: Այն սերտ կապված է տարածքի ջրային ռեժիմի հետ և հնարավոր է միայն այդ տարածքների երկարատև և մշտական գերխոնավացնան պայմաններում: Հաճախ ճահճացումը զարգանում է ջրավազանների մոտ գտնող տարածքներում: Այստեղ խիստ բարձրանում է ստորերկրյա ջրերի մակարդակը, և ճահճացումն ընդգրկում է հարթավայրային մեծ տարածքներ: Ճահճացնան դեմ պայքարն իրականանում է հողերի ավելցուկային խոնավության հեռացման եղանակով:

**Հողերի հյուծումը:** Էրոզիայից և սխալ կազմակերպված ոռոգումից հետո հյուծումը երրորդ գործոնն է, որը մեծ վնաս է հասցնում հողային պաշարներին:

Հողերի հյուծման պատճառները տարբեր են: Դա և՛ բերքի հետ հողից սննդանյութերի հեռացումն է, և հումուսի կորուստը, և ջրային ռեժիմի խախտումը: Հյուծվելու արդյունքում հողը զրկվում է բերրիությունից, և սկսվում են անապատացման գործընթացները:

Հողի բերրիության կորուստը պայմանավորված է նաև նրա ուժգին մշակումով, աղտոտումով, թթվայնացումով (թթվային տեղումների հետևանքով) և այլն:

**Հողերի օսարումը:** Օտարումը տարբեր, հողի բնական ֆունկցիայի հետ չկապված նպատակներով հողերի օգտագործումն է: Ներկայում երկրագնդի մեկ բնակչին բաժին է ընկնում 0,1 հա օտարված հողատարածություն (նկ. 62):

Ընդհանրապես օտարումը անխուսափելի երևույթ է: Սակայն շռայլինելչիկարելի: Զարդարացված մեծ ծավալներով հողերի օտարում տեղի ունի նավթի և այլ օգտակար հանածոների արդյունահաննան ժամանակ:

## 56. Հողերի ֆիմիական աղտոտումը

**Հողերի աղտոտումը արտադրական թափուններով:** Օդի և ջրի նման, հողը ևս ենթակա է աղտոտման: Նրա աղտոտման աղբյուրներից մեկը մթնոլորտն է: Մթնոլորտի վնասակար խառնուրդները նստում են հողի մակերեսին, թափանցում են գրունտային ջրեր, իսկ նրանց մի մասն էլ փոշու ձևով վերադառնում է մթնոլորտ՝ քանու էրոզիայի ժամանակ:

Հողի աղտոտման աղբյուրներ են նաև մետաղաձուլական գործարանների, նավթարդյունաբերական և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափունները: Նման աղտոտումները տարածվում են հսկայական տարածությունների վրա և նկատվում են անգամ երկրագնդի ամենահեռավոր վայրերում:

### »» 56. Հողերի քիմիական աղտոտումը

Ընդ որում հողի մակերեսային բերրի շերտում կարող են կուտակվել մանգանի, քրոմի, պղնձի, կորալտի, նիկելի և կապարի վտանգավոր միացություններ, ինչը 20-50%-ով իջեցնում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը (նկ. 63):

Արտադրությունում նոր տեխնոլոգիաների ներդրումը պետք է բացարի ինչպես հողերի, այնպես էլ մթոլորտի և ջրերի աղտոտումը:

Ակնհայտ է, որ արդյունաբերական ծեռնարկությունների թափոնների դեմ պայքարը նաև պայքար է հողերի բերրիության պահպանման համար:

**Հողի աղտոտումը ռադիոակտիվ նյութերով:** 20-րդ դարի երկրորդ կեսից առաջացավ հողերի ռադիոակտիվ տարրերով աղտոտման իրական վտանգ: Ռադիոակտիվ նյութերը կարող են թափանցել և կուտակվել հողում ատոմային պայքարուններից հետո տեղումների արդյունքում: Տեղ-տեղ հողը կարող է աղտոտվել ատոմային էլեկտրակայանների և այլ ծեռնարկությունների թափոնների ռադիոակտիվ տարրերով (նկ. 64): Մթնոլորտում, ջրի տակ և տիեզերական տարածությունում միջուկային գենքի փորձարկումների արգելման մասին համաձայնագիրը, որը կնքվել է Մոսկվայում 1963 թ., մեծ նշանակություն ունի ոչ միայն միջուկային պատերազմը կանխելու, այլև շրջակա միջավայրի՝ ռադիոակտիվ տարրերով աղտոտման դեմ պայքարելու համար:

**Հողի աղտոտումը դեստիցիդներով:** Դեստիցիդները քիմիական միացությունների խումբ են, որոնք կիրառվում են մարդու համար անցանկալի օրգանիզմները ոչնչացնելու կանոնաց թվաքանակը կրծատելու նպատակով:

Կախված նրանից, թե որ օրգանիզմների դեմ են դրանք ուղղված, պեստիցիդները բաժանվում են խնբերի: Հերքիցիդները ոչնչացնում են բույսերը, ինսեկտիցիդները՝ միջատներին, ֆունգիցիդները՝ սնկերը և այլն:

Այս քիմիկատներից ոչ մեկն օժտված չէ բացարձակ ընտրողականությամբ այն օրգանիզմի նկատմամբ, որի դեմ կիրառվում է: Այդ բոլոր միացությունները օտար են բոլոր օրգանիզմների և, ընդհանրապես, կենսոլորտի համար:

Ժամանակակից գյուղատնտեսությունը չի կարող չկիրառել պեստիցիդներ, քանի որ դրանց բացակայության դեպքում բերքի մեծ կորուստներ ունենալու վտանգ է առաջանում: Հետևաբար, պեստիցիդներն անհրաժեշտ են կիրառել մեծ զգուշությամբ և պետք է կարողանալ կանխագուշակել կենդանի օրգանիզմների, էկոլոգիական համակարգերի և մարդու վրա նրանց ունեցած բացասական ազդեցության հնարավոր էկոլոգիական հետևանքները (նկ. 65):



Նկ. 63 Հողերի աղտոտումը ռադիոակտիվ նյութերով հողում բերրիության պահպանի համար



Նկ. 64 Հողը կարող է աղտոտվել ռադիոակտիվ սարքերով



Նկ. 65 Պեսիցիդները լայնորեն կիրառվում են ժամանակակից գյուղատնտեսության մեջ

Վճարատուների դեմ պայքարում է կոլոգիապես առավել նպատակահարմար է պայքարի բնական և կենսաբանական միջոցների կիրառումը:

Պարարտանյութերի օգտագործումը: Աշխարհում տարեկան կտրվածքով արտադրվում է շուրջ 200 մլն տ հանքային պարարտանյութ կամ մեկ շնչին՝ մոտավորապես 40կգ: Սակայն այդ պարարտանյութերի կիրառումից սպասվող ցանկալի արդյունքին հասնելու համար անհրաժեշտ է դրանց արտադրությունը ավելացնել մինչև 500 մլն տ, ինչը կկազմի մոտ 90կգ մեկ շնչին մեկ տարվա ընթացքում:

Հանքային պարարտանյութերով հողի պարարտացումը ինտենսիվ հողագործության անխուսափելի հետևանքն է: Առանց պարարտանյութերի գյուղատնտեսական արտադրանքը խիստ կնվազի, որն անխուսափելի հորեն կբերի ծանր սոցիալական հետևանքների: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել և այն է կոլոգիական հետևանքները, որոնք ծագում են հանքային պարարտանյութերի կիրառման ժամանակ:

Հանքային պարարտանյութերի օգտագործման կանոնների խախտման դեպքում մեծանում է հողի թթվայնությունը, փոխվում է հողային օրգանիզմների տեսակային կազմը, խախտվում է նյութերի շրջապտույտը, քայլայվում է հողի կառուցվածքը: Արդյունքում հողի բերդիությունն ընկնում է:

Շատ պարարտանյութեր պարունակում են այլ խառնուրդներ, որոնք կարող են հանգեցնել ռադիոակտիվ ֆոնի բարձրացմանը և ծանր մետաղների կուտակմանը: Պարարտանյութերը բացասաբար են ազդում ոչ միայն հողի, այլև մթնոլորտի և ջրային էկոհամակարգերի վրա:

Մարդու և կենդանիների առողջության վրա բացասաբար են ազդում պարարտանյութերի բոլոր խնբերը, մասնավորապես քլոր պարունակող և ֆոսֆորական պարարտանյութերը:

»» 57. Հայաստանի հողային ծածկույթը և նրա պահպանությունը

## 57. Հայաստանի հողային ծածկույթը և նրա ղափականությունը

**Հայաստանի հողային ծածկույթը:** Հայաստանը սակավահող երկիր է, սակայն ունի խայտաբղետ հողային ծածկույթ: Հողերի մեծ մասն ունի կավաճակային, կավային մեխանիկական կազմություն:

Հողային ծածկույթի լայնամասշտաբ քարտեզավորումը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության տարածքում ըստ ծագումնաբանական և արտադրական ցուցանիշների առանձնացնել 14 հողատիպ: Այդ հողատիպերն առաջացել են հիմք բնահողային գոտիներում՝ լեռնամարգագետնային, անտառային, տիպիկ տափաստանային, չոր տափաստանային և կիսանապատային (նկ. 66):

Հումուսի պարունակությունն ամենաշատը լեռնամարգագետնային սևահողերում է (միջինը՝ 9%):

Հայաստանում անապատին բնորոշ լանդշաֆտը զբաղեցնում է ոչ մեծ տարածք: Տափաստանները Հայաստանում ամենատարածված լանդշաֆտի տեսակն են: Սևահող տափաստանները զբաղեցնում են հանրապետության տարածքի ավելի քան 50%-ը:

Ալպիական գոտին ընդգրկում է լեռնային զանգվածները և սարավանդները: Արագածի զանգվածի, Գեղանա, Վարդենիսի, Զանգեզուրի լեռնաշղթաների լեռնամարգագետնային սևահողերի վրա սիրված են ալպիական արոտավայրերը:

Բարձրլեռնային բազմախոտային մարգագետինները և «ալպիական գորգերը» պարունակում են բազմաթիվ սննդարար նյութեր և վիտամիններ: Այդ հողատեսքերը հանրապետության լեռնային գոտու ոսկե ֆոնդն են:



Նկ. 66 Հայաստանի Հանրապետության հողերի որու ժիղերը՝ սևահող (1), չափանակագուն հող (2), լեռնա-անտառային դարչնագուն հող (3), լեռնա-մարգագետնային հող (4), լեռնա-անտառային գորշ հող (5)

Հայաստանի Հանրապետությունում, ըստ կադաստրային տվյալների, հողօգտագործումը դասակարգվում է՝ գյուղատնտեսական նշանակության հողեր, բնակավայրերի համար տրամադրված հողեր, արդյունաբերության, տրանսպորտի և կապի այլ նշանակության հողեր, բնապահպանական, առողջարանային, հանգստավայրերի, մարզական և պատմամշակութային նշանակության հողեր, անտառային ֆոնդի հողեր, ջրային ֆոնդի հողեր և այլ կարգի հողեր:

Հայաստանում գյուղատնտեսության մեջ արդյունավետ օգտագործվող հողերը կազմում են 567 հազ. հա: ՀՀ հողերի կեսից ավելին էրոզացված է ոչ արդյունավետ հողօգտագործման, անասունների արածեցման պատճառով: Մարդու գործունեության հետևանքով առաջացել են ոչ գոտիական մարգագետնային գորշ, ռռոգելի, մարգագետնա-սևահողային, աղուտալկալի և այլ բնույթի հողեր:

**Հայաստանի Հանրապետության հողերի դահլիճանությունը:** Հողերի պահպանությունը, որն ուղղված է հողերի նպատակային և ռացիոնալ օգտագործմանը, իր մեջ ներառում է տնտեսական, կազմակերպչական, օրենսդրական և այլ միջոցառումների մշակում և կիրառում:

Հայաստանի տարածքում ռելիեֆի առանձնահատկություններից ելնելով՝ տնտեսական գործունեությունը կենտրոնացված է տարածքի մոտ 60%-ի վրա: Համաձայն «Հողային հաշվեկշիռ» ըստ կատեգորիաների հողատեսքերի 1995թ. հունվարի 1-ի դրությամբ հաստատելու մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի հողային ֆոնդը կազմում է ընդամենը 2974,3 հազ. հա: Երողիայի ենթարկված տարածքների աճը վերջին 20 տարում կազմում է 1,9%:

Հայաստանում հողային պաշարների պահպանության ընթացքում անհրաժեշտ է ապահովել հողերի նպատակային օգտագործումը, կատարելագործել հողերի պահպանության և օգտագործման պետական վերահսկողությունը՝ կիրառելով ՀՀ հողերի օրենսդրական պահպանության հիմնունքերը, ստեղծել խախտված հողերի վերականգնման հիմնադրամ, ապահովել արտավայրերի ընդհանուր օգտագործման սկզբունքները, ինչպես նաև կանխարգելել տարբեր աղտոտիչների կողմից հողերի վրա վտանգավոր ազդեցությունը:

Հողերի աղտոտման կանխման նպատակով ծեռնարկվում են մի շարք միջոցառումներ, որոնցից կարելի է նշել՝

- «մաքուր» տեխնոլոգիաների ներդրմանը նպաստող տնտեսական մեխանիզմները,
- արտանետումների և թափոնների առաջացման նվազեցմանը ուղղված միջոցառումները:

Հողերի պահպանության ոլորտում իրականացվում են մի շարք ծրագրեր և նախագծեր, այդ թվում նաև՝ համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ:

»» 57. Հայաստանի հողային ծածկույթը և նրա պահպանությունը

### Յարցեր կրկնության համար

1. Նկարագրե՛ք հողի կառուցվածքը:
2. Ի՞նչ նշանակություն ունի հողը բնության մեջ:
3. Ինչպե՞ս է հողը մասնակցում նյութերի շրջապտույտին:
4. Ի՞նչ նշանակություն ունի հողը մարդու կյանքում:
5. Ի՞նչ է հողերի էրոզիան:
6. Հողերի էրոզիայի ինչպիսի՝ ձևեր կան:
7. Հողերի էրոզիայի դեմ պայքարի ինչպիսի՝ եղանակներ կան:
8. Ի՞նչ է ոռոգելի հողագործությունը:
9. Ի՞նչ է հողերի երկրորդային աղակալումը և ինչո՞ւ է այն առաջանում:
10. Ինչո՞ւ է առաջանում հողերի ճահճացումը:
11. Ինչպե՞ս է առաջանում հողերի հյուծումը և օտարումը:
12. Հողերի աղտոտման ի՞նչ պատճառներ կան:
13. Նկարագրե՛ք հողերի աղտոտումը արտադրական թափոններով:
14. Նկարագրե՛ք հողերի աղտոտումը ռադիոակտիվ նյութերով:
15. Նկարագրե՛ք հողերի աղտոտումը պեստիցիդներով:
16. Նկարագրե՛ք հողերի աղտոտումը պարարտանյութերով:
17. Ինչպիսի՝ հողային ծածկույթ է բնորոշ Հայաստանին:
18. Ինչպե՞ս է իրականացվում հողերի պահպանությունը Հայաստանում:

## ԳԼՈՒԽ 9. ԿԵՆՍԱԲԱԶՄԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՊԱՆՄԱՆ ՀԻՄՈՒՆՁԵՐ

### 58. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԳՄԱՋԱՆՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է կենսաբանական բազմազանությունը: Կյանքի գարմանահրաշ բազմազանությունը դարեր շարունակ եղել է մարդու ուսումնասիրության առարկան: Սակայն միայն վերջին տարիներին մենք սկսեցինք հասկանալ, որ կենսաբանական ձևերի այդ բազմազանությունը երկու վրա կյանքի կայունության հիմնական պայմանն է: Յուրաքանչյուր տեսակի կորստով բնությունը ոչ միայն աղքատանում է, այլև թուլանում:

«Կենսաբազմազանություն» հասկացությունը կազմված է երկու բառերից՝ կենսաբանական բազմազանություն, և սովորաբար օգտագործվում է կենդանի օրգանիզմների տեսակային բազմազանությունը և փոփոխականությունը նկարագրելու համար: Լայն իմաստով այն ներառում է բազմաթիվ տարբեր չափանիշներ և հանդիսանում է «կյանքը երկու վրա» հասկացության հիմնահիշը:


Ժամանակակից կենսաբանությունը տարբերում է կյանքի կազմավորման մոլեկուլային, բջջային, օրգանիզմային, պոպուլյացիոն, էկոհամակարգային և կենսոլորտային մակարդակներ: Նկարագրված մակարդակներից յուրաքանչյուրը բնորոշվում է իրեն հատուկ կենսաբազմազանությամբ:

Կենսաբանական մակրոմոլեկուլները, հատկապես նուկլեինաթրուները, ընդունակ են առաջացնել կառուցվածքի ոչ ուղղորդված փոփոխություններ, ինչը հանդիսանում է մինյանցից անկախ ընթացող երեք գործընթացների կենսաբինհական հիմքը: Դրանք են՝ գենետիկական տեղեկատվության պատահական փոփոխությունները մուտացիաների արդյունքում, բնական ընտրությունը պոպուլյացիաներում և աշխարհագրական ու վերարտադրողական մեկուսացումը: Նշված գործընթացները բերում են նոր տեսակների առաջացման և կենսաբանական համակարգերի հաջորդ՝ պոպուլյացիոն ու էկոհամակարգային մակարդակներում էկոլոգիական հետագա դիֆերենցմանը:

«Կենսաբանական բազմազանություն» բառակապակցությունը առաջին անգամ կիրառել է Գ. Բեյտսը (1892թ.), երբ նկարագրում էր իր տպավորությունները մեկժամյա էքսկուրսիայի ընթացքում մոտ 700 տեսակի թիթեռների հանդիպելու մասին (նկ. 67):



Նկ. 67 Գ. Բեյտսը առաջին անգամ կիրառել է «Կենսաբանական բազմազանություն» բառակապակցությունը



Նկ. 68 Կայրի բնության համաշխարհային ֆոնդի խորհրդանանը

### »» 58. Կենսաբանական բազմագանություն

Վայրի բնության համաշխարհային ֆոնդի (1989թ.) (նկ. 68) սահմանման համաձայն՝ կենսաբանական բազմագանությունը «Երկրի վրա կյանքի ողջ բազմագանությունն է՝ բույսեր, կենդանիներ, մանրէների միջինավոր տեսակներ՝ ներառելով դրանց գենային կազմը և բարդ էկոհամակարգերը, որոնք կազմում են կենդանի բնությունը»:

Ներկայում այս հասկացությունը լայնորեն կիրառվում է գիտական և ուսումնական գրականության մեջ, բնապահպանական գործընթացներում և միջազգային կապերում: Տարբեր երկրների գիտնականներ ապացուցել են, որ մեր մոլորակի վրա էկոլոգիական համակարգերի և կենսուլորտի բնականոն գոյատևման համար անհրաժեշտ պայման է կենդանի օրգանիզմների կենսաբանական բազմագանության բավարար մակարդակը: Կենսաբանական բազմագանությունը դիտարկվում է որպես հիմնական ցուցանիշ, որը պատկերացում է տալիս վերօրգանիզմային համակարգերի վիճակի մասին:


**Կենսաբազմագանության մակարդակները:** Համաձայն վերը նշված սահմանման՝ կենսաբազմագանությունը հարկավոր է դիտարկել երեք մակարդակներում՝ տեսակային, գենային և էկոհամակարգային: Կենսաբանական բազմագանությունը տեսակային մակարդակում ընդգրկում է Երկրի վրա ապրող բոլոր տեսակներին, որոնք միավորվում են կենդանի բնության չորս բազավորություններում՝ բակտերիաների, սնկերի, բույսերի և կենդանիների (նկ. 69): Տարբեր տեսակներ միմյանցից տարբերվում են մի շարք հատկանիշներով, որոնք կոչվում են չափանիշներ:

Մի շարք դեպքերում դժվար է լինում տեսակները տարբերել միմյանցից՝ նրանց բնութագրող չափանիշների նմանության պատճառով:

Տեսակային պատկանելությունը որոշելու համար ժամանակակից կենսաբանության մեջ դասական՝ ծևաբանական, ֆիզիոլոգիական, էկոլոգիական և այլ չափանիշների հետ մեկտեղ լայնորեն կիրառվում են կենսաբիմիականը և գենետիկականը: Նոր մերոդների հիմքում ընկած է տարբեր տեսակների սպիտակուցների և նուկլեինաթրուների կառուցվածքային տարբերությունների հայտնաբերման սկզբունքը:

Ներկայում նկարագրված է Երկրի վրա ապրող տեսակների 10-30%-ը միայն: Հավանական է, որ շատ անհայտ և չնկարագրված տեսակներ կանկետանան՝ մնալով անծանոթ մարդկությանը: Այդ պատճառով՝ ձեռնարկվող

բնապահպանական միջոցառումները պետք է ընդգրկեն տեսակների նկարագրման, ուսումնասիրման և պահպանության խնդիրները:



Նկ. 69 Կենդանի բնության չորս բազավորություններում միավորվում են Երկրի վրա աղբող կենդանի օրգանիզմների բոլոր տեսակները

Գենետիկական բազմազանությունը պայմանավորված է նրանով, որ մեկ տեսակի տարբեր ներկայացուցիչներ կրում են գեներ՝ որոշակի սպիտակուցներ կողավորող քրոմոսոմների հատվածներ, որոնք տեսակի սահմաններում ունեն չնչին տարբերություններ: Այդ տարբերությունները ծագում են մոլուցիաների, այսինքն՝ յուրաքանչյուր առանձնյակի քրոմոսոմում գտնվող ԴՆԹ-ի կառուցվածքի փոփոխության արդյունքում: Գիտնականները հաստատել են, որ հազվագյուտ տեսակները, ի տարբերություն լայնորեն տարածվածների, օժտված են փոքր գենետիկական բազմազանությամբ: Այսպիսով, արտաքին պայմանների փոփոխությունների դեպքում հազվագյուտ տեսակների համար անհետացման վտանգն ավելի մեծ է, քան տարածվածների համար, որոնք օժտված են ավելի լայն գենետիկական բազմազանությամբ, ինչն էլ թույլ է տալիս ավելի լավ հարմարվել արտաքին պայմաններին:

Ցանկացած բնական համակարգ, որն ընդգրկում է տվյալ տարածքում համատեղ ապրող և միջանց ու անկենդան բնության գործուների հետ մշտապես փոխազդող տարբեր տեսակներ, կոչվում է էկոհամակարգ: Ցանքային և ջրային էկոհամակարգերը շատ բազմազան են: Դրանք են անապատները, անտառները, կորայսան խուրերը և այլն: Բազմաթիվ, միմյանցից տարբերվող էկոլոգիական համակարգերի գործունեության բնույթը հասկանալու համար մշակված են դրանց դասակարգման տարբեր սկզբունքներ, որոնք խնբավորում են էկոհամակարգերը՝ ըստ դրանց միջև ննանությունների և տարբերությունների աստիճանի:

Գիտական տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում մարդածին էկոհամակարգերի կառուցվածքի և գործունեության ուսումնասիրության խնդիրը: Այդպիսի էկոհամակարգերի զարգացման բարդ ընթացքը և օրինաչափությունները չափազանց թույլ են ուսումնասիրված: Որպես կանոն՝ մարդածին էկոհամակարգերի վրա ազդող գործոնների և պայմանների կտրուկ փոփոխությունները բերում են վերջիններիս կառուցվածքի եական փոփոխությունների և ի վերջո՝ քայլայման (նկ. 70):



Նկ. 70 Մարդածին էկոհամակարգերի՝ ազրունողների կառուցվածքը և գործունեության օրինաչափությունները չափազանց թույլ են ուսումնասիրված


»» 59. Կենսաբազմազանության աշխարհագրություն

## 59. Կենսաբազմազանության աշխարհագրություն

**Տեսակների թիվը:** Կենսաբազմազանության պահպանության ճիշտ ռազմավարության մշակման համար անհրաժեշտ են տվյալներ այն մասին, թե մեր մոլորակում որքա՞ն տեսակ գոյություն ունի և ինչպե՞ս են դրանք բաշխված: Երկիրը բնակեցնող օրգանիզմների տեսակների թիվը հսկայական է, սակայն այս մեջության գնահատականները խիստ տարբերվում են՝ տատանվելով 5-ից մինչև 80 միլիոն: Տեսակների այս քանակից որոշված է միայն 1,5 մլն-ի կարգաբանական պատկանելությունը: Դրանցից մոտավորապես 750000-ը կազմում են հողվածոտանիները (խեցգետնակերպեր, սարդեր և միջատներ), 41000-ը՝ ողնաշարավոր կենդանիները, 250000-ը՝ բույսերը: Մնացածը կազմում են անողնաշարավոր կենդանիները, սնկերը, ջրիմուները և բակտերիաները (նկ. 71):

Այսպիսով, տեսակների մեծամասնությունը դեռ նկարագրված չէ: Յիմնականում դրանք արևադարձային հողվածոտանիներն են: Ուսումնասիրության համար դժվարություններ ներկայացնող մանր սարդերը, նեմատոդները, հողային սնկերը և այլ օրգանիզմներ դեռ լիովին ուսումնասիրված չեն կարգաբանների կողմից:

Անջատման, աճեցման և տեսակային պատկանելության որոշման դժվարությունների պատճառով բույլ են ուսումնասիրված նաև բակտերիաները: Ներկայումս մանրէաբանների կողմից նկարագրված է բակտերիաների մոտ 4000 տեսակ, ինչը կազմում է Երկրի վրա ապրող այս խմբի ներկայացուցիչների շատ փոքր մասը:



Նկ. 71 Երկիրը բնակեցնող օրգանիզմների տեսակների հսկայական թվաքանակից որոշված է միայն 1,5 մլն-ի կարգաբանական դատականելությունը



Նկ. 72 Տեսակներով առավել հարուս են կորայան խութերը, արևադային լճերը և խորջա ծովերը

**Տեսակների բաժնումը:** Տարբեր կլիմայա - աշխարհագրական շրջանների կենսաբանական բազմազանությունը խիստ տարբերվում է, թեև նկատվում է տեսակների քանակի ավելացման միտում թևեռներից դեպի հասարակած: Տեսակներով առավել հարուստ են արևադային խոնավ անտառները, կորայան խութերը, արևադային լճերը և խորջա ծովերը: Ծովերում կենսաբազմազանությունը պայմանավորված է նրանց հսկայական մակերեսներով և ջրային միջավայրի կայունությամբ (Ակ. 72): Կենսաբազմազանության մակարդակը բարձր է նաև չոր արևադային տերևաթափային անտառներում, տափաստաններում և պրերներում:

Արևադային անտառները տարբերվում են տեսակների մեջ բազմազանությամբ: Թեև այս անտառները կազմում են ցամաքի միայն 7%-ը, նրանցում ապրում է մեր մոլորակի տեսակների մոտավորապես կեսը: Ենթադրվում է, որ այստեղ միջատների դեռ անհայտ տեսակների թիվը կարող է հասնել մինչև 30 միլիոնի: Այս անտառներում աճում են համաշխարհային կենսաբազմազանության ծաղկավոր բույսերի մոտավորապես 40%-ը և թռչունների 30%-ը:

Արևադային և բարեխառն կլիմայով նույն չափի տարածք զբաղեցնող երկրների կաթնասունների բազմազանության միջև տարբերությունները գնահատելուն կօգնի այլուսակը (Ակ. 73):

Ասվածից պարզ է դառնում, որ տեսակային հարստության վիճակը կախված է տեղագրության տեղային առանձնահատկություններից, կլիմայից, միջավայրից և տեղանքի երկրաբանական տարիքից:

Ցամաքային համակեցություններում տեսակների թիվը սովորաբար մեծանում է տեղանքի բարձրության իջեցման, արեգակնային ճառագայթման մեծացման և տեղումների քանակի ավելացման հետ:

Տեղանք	Առաջնահատկություն	Տեսակների համար առավել բարձր աճակայտություն	Տեղանք	Առաջնահատկություն	Տեսակների համար առավել բարձր աճակայտություն
Հարավային անտառներ	Հարավային անտառներ	150	Հարավային անտառներ	Հարավային անտառներ	139
Հարավային անտառներ	Հարավային անտառներ	150	Հարավային անտառներ	Հարավային անտառներ	132
Հարավային անտառներ	Հարավային անտառներ	150	Հարավային անտառներ	Հարավային անտառներ	140
Հարավային անտառներ	Հարավային անտառներ	150	Հարավային անտառներ	Հարավային անտառներ	137
Հարավային անտառներ	Հարավային անտառներ	150	Հարավային անտառներ	Հարավային անտառներ	137

Նկ. 73 Արևադային և բարեխառն կլիմայով նույն չափի տարածք

»» 59. Կենսաբազմազանության աշխարհագրություն

Տեսակներով հարուստ են այն տեղանքները, որոնք ունեն բարդ ռելիեֆ, ինչը կարող է ապահովել գենետիկական մեկուսացումը և, համապատասխանաբար, տեղային ադապտացիան և մասնագիտացումը: Այս տարածքներում ստեղծվում են բազմազան, խիստ մեկուսացված հողային պայմաններ, ինչը նպաստում է տարբեր համակեցությունների ձևավորմանը:

Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանությունը: Բազմաթիվ բրածո մնացորդներ վկայում են, որ Հայաստանի Հանրապետության տարածքում կենսաբազմազանության ձևավորումն անցել է բարդ և երկար ճանապարհ (Ըկ. 74):



Ըկ. 74 Հայաստանի Հանրապետության տեսակային բազմազանությունը

Տարբեր երկրաբանական դարաշրջանների նստվածքային ապարներում գիտնականները հայտանքերել են կենդանիների և բույսերի բազմաթիվ տեսակների գոյության ապացույցներ, ընդ որում ծառաբույսերի տեսակների թիվը կազմել է 169: Համեմատության համար նշենք, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում աճում են միայն 47 տեսակի ծառաբույսեր:

Հայաստանի Հանրապետության տարածքը 29742 կմ<sup>2</sup> է և գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասում՝ զբաղեցնելով Վերջինիս մակերեսի մոտ 10%-ը: Մեր հանրապետությունը լեռնային երկիր է: Ամենաբարձր կետը Արագած լեռան հյուսիսային գագաթն է, որն ունի 4095 մետր բարձրություն, իսկ ամենացածր կետը՝ հանրապետության հյուսիսում Դեբեդ գետի ափը, որն ունի 375 մետր բարձրություն: Հանրապետության միջին բարձրությունը մոտավորապես 1850 մետր է ծովի մակերևույթից:

Հայաստանը գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտու կենտրոնական հատվածում, սակայն ռելիեֆի լեռնային բնույթի պատճառով տարբերվում է կլիմայական պայմանների մեջ բազմազանությամբ:

Լավ արտահայտված ուղղահայաց գոտիականությունը, կլիմայական պայմանների բազմազանությունը բերեցին հանրապետության տարածքում յուրահատուկ բուսական ծածկով և կենդանական աշխարհով 7 տիպի լանդշաֆտակալիմայական գոտիների ծևավորման: Բացի այդ հանրապետության տարածքում հանգստանում են ու բնադրում բազմաթիվ չվող թռչուններ, և խաչվում են մի շարք կենդանիների գաղթի ճանապարհները, ինչը ևս հանդիսանում է Հայաստանի հարուստ կենսաբազմազանության նախապայմանը:

Ներկայումս հանրապետության ոչ մեծ տարածքում ուսումնասիրված և նկարագրված են բակտերիաների, սնկերի, ջրիմուռների և ցածրակարգ բույսերի մի քանի հազար տեսակ, ծաղկավոր բույսերի ավելի քան 3500 տեսակ և կենդանիների 17500 տեսակ:

Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանությունը ուշագրավ է նաև նրանով, որ այստեղ շատ են հանդիպում էնդեմիկ (բույսերի և կենդանիների տեսակներ, ցեղեր, ընտանիքներ, որոնց տարածվածությունը սահմանափակված է ոչ մեծ աշխարհագրական շրջանով), ռելիկատային (բույսերի և կենդանիների փոքրաքանակ տեսակներ, որոնք պահպանվել են նախորդ դարաշրջաններում լայնորեն տարածված տեսակներից) և հազվադեպ հանդիպող տեսակներ:

»» 60. Տեսակների անհետացման պատճառները

## 60. Տեսակների անհետացման դաշտառները

**Բնական դաշտառներ:** Տեսակների անհետացման գործընթացը կանգնեցնելու համար անհրաժեշտ է հասկանալ այդ երևույթի հիմնական պատճառները: Տեսակների անհետացման պատճառ կարող են լինել կլիմայի և այլ պայմանների արմատական փոփոխությունները:

Սակայն բնության մեջ տեսակները կարող են անհետանալ նաև առանց կործանիչ գործոնների ազդեցությունների: Մի տեսակը կարող է ճնշվել մեկ այլ տեսակով կամ կարող է ոչնչացվել գիշատիչների կամ մակարույժների կողմից:

Յուրաքանչյուր տեսակի կայունությունը կամ խոցելիությունը պայմանավորող ոչ բոլոր գործոններն են պարզ գիտնականներին, սակայն տեսակների անհետացումը, ինչպես և տեսակառաջացումը բնական գործնթացներ են: Չանի որ երկրի մակերևույթի կլիմայական, երկրաբանական և այլ պայմանների վերակառուցումն ընթանում է շատ դանդաղ, հետևաբար կենսաբանական տեսակների «կյանքի» տևողությունը և շատ երկար է:

Տեսակների անհետացումը մարդու ի հայտ գալու հետ: Մարդու գործունեությամբ պայմանավորված կենդանիների և բույսերի տեսակների անհետացման արագությունը հազարավոր անգամ գերազանցում է տեսակների անհետացման բնական գործնթացի արագությանը:

Յնադարյան մարդը հոյակապ որսորդ էր (նկ. 75): Լավ իմանալով կենդանիների վարքը՝ օգտագործում էր որսի և զենքի զանազան եղանակներ: Իր որսորդական նվաճումները մարդը պատկերում էր իր կացարանի պատերին: Շատ երկրների, այդ թվում և Յայաստանի քարանձավներում գտնված են ժայռապատկերներ՝ կենդանիների և որսի տեսարաններով (նկ. 76):

Մարդու առաջին գոհերը եղան խոշոր կենդանիները: Երկրի տարբեր շրջաններում մարդը կարդ ժամանակահատվածում ոչնչացրեց հսկա եղջերուին, քարանձավային վագրին և արջին, մամոնտին: Մարդը նպաստում էր թռչունների և ծովային կաթնասունների շատ տեսակների ոչնչացմանը (նկ. 77):


Ավելի ուշ շրջանում հողագործության և անասնաբուծության ի հայտ գալու հետ մարդն սկսեց մեծ ազդեցություն թողնել բնական լանդշաֆտների վրա: Անտառների զանգվածային հատումը, արոտավայրերի գերեօնվածությունը, գրունտային ջրերի մակարդակի փոփոխությունը աստիճանաբար բերում էին ավելի չորային կլիմայի ձևավորման և անկենդան անապատների



Նկ. 75 Յնադարյան մարդը օգտագործում էր որսի և զենքի զանազան եղանակներ



Նկ. 76 Յայաստանի Գեղանակ լեռնաշղթայի Աժդահակ լեռան ստորոտների քարանձավներում հայտնաբերված ժայռապատկերներ



Նկ. 77 Մարդ կարծ ժամանակահատվածում ոչնչացրեց բազմաթիվ տեսակներ, որոնցից են լայնեղջյու եղջերուն (1), բարանձավային արջը (2), բարանձավային առյուծը (3), ճամոնը (4)

առաջացման (Ակ. 78): Մարդու գործունեությամբ է պայմանավորված երկրի ամենախոշոր անապատի՝ Սահարայի առաջացումը: Մեծ տարածությունների գյուղատնտեսական մշակումը դուրս մղեց այդ վայրերում բնակվող կենդանիների և բույսերի շատ տեսակների: Դրանց մի մասն անհետացավ, մի մասն էլ գտնվում է անհետացման եզրին: Եկոլոգիական հավասարակշռության խախտման արդյունք դարձավ հողերի աստիճանական քայլայումը, մակերեսային և գրունտային ջրերի աղտոտումը, ջրամբարների էվտրոֆիկացումը:

Բնության մեջ էական փոփոխությունները կապված են արդյունաբերության զարգացման հետ: Բնական պաշարների ինտենսիվ շահագործումը մեծացրեց հողօգտագործման ինտենսիվությունը և բերեց շրջակա միջավայրի աղտոտմանը (Ակ. 79):

Հեռավոր անցյալում տեսակների մասին տվյալների բացակայության պատճառով գիտնականները չեն կարող ամբողջական գաղափար կազմել նրանց վրա մարդու ազդեցության աստիճանի մասին:

17-րդ դարի կեսերին հրատարակվեց Կարլ Լիննեյի «Բնության համակարգը» գիրքը, որում նկարագրված էին կենդանիների և բույսերի առավել հայտնի և տարածված տեսակները (Ակ. 80): Այդ պատճառով, որպես տարեթիվ կենդանիների կամ բույսերի որոշակի տեսակների մասին դատողություններ անելու և նրանց ճակատագիրը ուսումնասիրելու համար, գիտնականները ընտրեցին 1600 թվականը:

Ըստ Բնության և բնական պաշարների պահպանության միջազգային միության տվյալների՝ 1600-2000թ., այսինքն՝ վերջին 400 տարվա ընթացքում մարդու գործունեության ուղղակի և

»» 61. Կարմիր գրքերը որպես հազվագյուտ և անհետացող տեսակների հաշվառման միջոց

անուղղակի ազդեցությունների հետևանքով Երկրի վրա անհետացել է թռչունների ավելի քան 95 և կաթնասունների 65 տեսակ: Նույն ժամանակահատվածում մարդու կողմից ոչնչացվել են նաև բույսերի շատ տեսակներ, մասնավորապես այն տեսակները, որոնք ունեն դեկորատիվ, սննդային և դեղագործական նշանակություն:

Կենսաբազմազանության աղքատացումը և կենդանիների ու բույսերի հազվագյուտ տեսակների ճակատագիրը անհանգստացնում են մարդկությանը ավելի քան 100 տարի: Սակայն այս հարցը լրջորեն սկսեց քննարկվել 1948թ. Բնության և բնական պաշարների պահպանության միջազգային միության իհմնադրման պահից (IUCN) (նկ. 81): Շատ երկրների գիտնականների կողմից, որոնց աշխատանքը կոորդինացնում էր IUCN-ը, մշակվեց և ընդունվեց Բնության պահպանության համաշխարհային ռազմավարություն: Համաձայն ընդունված ռազմավարության՝ կենսաբազմազանության պահպանման համար գործադրվող ջանքերը պետք է տարվեն երկու գուգահեռ ուղղություններով՝ հազվագյուտ տեսակների հաշվառման և կենսաբանական տեսակների անհետացման պատճառների վերլուծություն, գնահատում և կասեցում:



Նկ. 78 Մարդն իր գործունեությամբ դարձել է բազմաթիվ անաղանների, այդ թվում՝ Երկրի ամենախուռոր անաղատի՝ Սահարայի առաջացման դաշտաւոր պատճենը.



Նկ. 79 Արդյունաբերության զարգացման հետ արագացավ շրջակա միջավայրի աղոտման ինտենսիվությունը.

## 61. Կարմիր գրքերը որպես հազվագյուտ և անհետացող տեսակների հաշվառման միջոց

Բնության դահլիճնության միջազգային միության (IUCN) Կարմիր գիրը: Հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանության առաջին կազմակերպչական խնդիրը նրանց հաշվառման է՝ ինչպես գլոբալ մասշտաբներով, այնպես էլ ըստ երկրների: Առանց դրա հնարավոր չէ առանձին տեսակների փորկելու համար տեսական հարցերի մշակումը և գործնական առաջարկների ձևակերպումը:

Բնության պահպանության միջազգային միության առաջին որոշումների թվում էր 1949թ. հազվագյուտ տեսակների գծով մշտական հանձնաժողովի ստեղծումը: Հանձնաժողովի հիմնական պատասխանական աշխատանքներով վտանգված կենդանիների և բույսերի տեսակների համաշխարհային ցուցակների կազմումը: Այդ ցուցակի յուրահատուկ նշանակությունն ընդգծելու նպատակով հանձնաժողովը առաջարկեց անվանել այն «Կարմիր գիրը»:

IUCN-ի Կարմիր գրքի առաջին իրատարակությունը լույս տեսավ 1963թ.: Վերջին՝ չորրորդ իրատարակությունը, որը լույս էր տեսել 1978-1980 թթ., ներառում էր կաթնասունների 226 տեսակ



Նկ. 80 «Բնության համակարգը» գրի հեղինակ Կարլ Լինեյը




Նկ. 81 Բնության և բնական դաշտաների տակածանության միջազգային միության խորհրդանությունը

և Ենթատեսակ, թռչունների 181 տեսակ և 77 Ենթատեսակ, սողունների 77 տեսակ և 21 Ենթատեսակ, երկկենցաղների 35 տեսակ և 5 Ենթատեսակ, ձկների 168 տեսակ և 25 Ենթատեսակ:

IUCN-ի Կարմիր գրքի բնագավառում աշխատանքները շարունակվում են: Կենդանիների և բույսերի գոյության պայմանները անընդհատ փոփոխվում են, և նորանոր տեսակներ կարող են հայտնվել աղետային վիճակում: Դրա հետ մեկտեղ, մարդու ձեռնարկած ջանքերը լավ արդյունքներ են տալիս. շատ տեսակներ վերականգնել են իրենց թվաքանակը, դուրս են եկել անհետացող տեսակների շարքից և Կարմիր գրքում հայտնվել են կանաչ էջեր:

**Հայաստանի Կարմիր գրքերը:** Հայաստանում անհետացող տեսակների մասին տեղեկատվությունը ներկայացված է ֆլորայի և ֆաունայի Կարմիր գրքերում: Հայաստանի բույսերի Կարմիր գիրքը լույս է տեսել 1989թ., սակայն նրա կազմման աշխատանքները տևել են մոտ 15 տարի: Կարմիր գրքի նախապատրաստման ընթացքում բացահայտվել են բույսերի նոր ցեղեր և տեսակներ:



Նկ. 82 Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակներից են Վայրի ձմեռնկը (1), Խուրման (2), Ճնծաղիկը (3), Թրաշուշանը (4), Իիրիկը (5), Վարդակակաչը (6)

»» 61. Կարմիր գրքերը որպես հազվագյուտ և անհետացող տեսակների հաշվառման միջոց

Ներկայումս Շայաստանի տարածքում աճող բույսերի վիճակը անհանգստության տեղ է տալիս: Առավել կամ նվազ չափով պահպանության կարիք ունի Շայաստանի ֆլորայի տեսակների համարյա կեսը: Սակայն Կարմիր գրքում ընդգրկված են միայն 387 տեսակ (ինչը կազմում է Շայաստանի ֆլորայի 12%-ը), որոնց վիճակն առավել տագնապալի է: Այդ տեսակներից նշենք վայրի ծմերուկը, խուրման, ծնծաղիկը, բրաշուշանը, հիրիկը, վարդակակաչը (նկ. 82): Կարմիր գրքում ընդգրկված յուրաքանչյուր տեսակ պատկանում է բնության պահպանության միջազգային միության հանձնաժողովի կողմից ընդունված հինգ խմբերից որևէ մեկին:

1. Անհետացած տեսակներ, որոնք տարիների ընթացքում չեն հանդիպում բնության մեջ, սակայն հնարավոր են, որ պահպանված լինեն առանձին անմատչելի վայրերում կամ կուլտուրայի մեջ (35 տեսակ):
2. Անհետացող տեսակներ. ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա տեսակներ, որոնց հետագա գոյությունն անհնար է առանց պահպանման հատուկ միջոցառումների իրականացման (129 տեսակ):
3. Հազվագյուտ տեսակներ, որոնք անհետացման ուղղակի վտանգի ենթակա չեն, սակայն հանդիպում են այնպիսի սահմանափակ տարածքներում կամ այնպիսի խիստ մասնագիտացած վայրերում, որ կարող են արագ ոչնչանալ (154 տեսակ):




Նկ. 83 Սովորակ սումկը (1), կարմիր ծանձատումկը (2), ոգնասումկ մարզանանմանը (3), կոնասումկ կոնանմանը (4), տամարին աղյուսակաձմկը (5), դժգույն գարցասումկը (6) և այլ սնկեր դահանջում են հատուկ դասկանություն

4. Կրճատվող տեսակներ, որոնց թվաքանակը կրճատվում է, արեալը նեղանում է որոշակի ժամանակի ընթացքում կամ բնական պատճառներով, կամ էլ մարդու միջամտության հետևանքով (59 տեսակ):
5. Անորոշ տեսակներ, որոնք հնարավոր է ենթակա են վտանգի, բայց տվյալների բացակայությունը թույլ չի տալիս նրանց տարածման արեալի վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ տալ (8 տեսակ):

Պահպանության կարիք են զգում նաև սնկերը: Ցավոք, սնկերը առաջմ ընդգրկված չեն Հայաստանի Կարմիր գրքում: Մարդու գործունեության հետևանքով անհետացման եզրին են կանգնած սնկերի շատ տեսակներ: Բացահայտված են անհետացող գլխարկավոր սնկերի մի շարք տեսակներ, որոնք հետագայում անհրաժեշտ է ընդգրկել Հայաստանի նոր Կարմիր գրքում: Հատուկ պահպանություն են պահանջում սնկերի շուրջ 15 տեսակ, որոնց թվում կարելի է նշել սպիտակ սունկը, կարմիր ճանճասպանը, ողնասունկ մարջանանանը, կոնասունկ կոնանանանը, շամպինյոն աղյուսակաձևը, դժգույն գարշասունկը և այլն (նկ. 83):

Հայաստանի կենդանիների Կարմիր գիրքը լույս է տեսել 1987թ.: Հայաստանում հանդիպող 17000 անողնաշարավոր և 493 ցամաքային ողնաշարավոր կենդանիների տեսակներից 300-ը հազվագյուտ և անհետացող տեսակներ են: Դրանցից անողնաշարավորների 48 տեսակ և ողնաշարավորների 39 տեսակ (ձկների և երկկենցաղների մեկական տեսակ, սողունների 7 տեսակ, թռչունների 21 տեսակ և կարնասունների 10 տեսակ) գրանցված են նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում, ողնաշարավորների 99 տեսակ և ենթատեսակ՝ Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 6 տեսակ՝ IUCN-ի Կարմիր գրքում: Ներկայունս անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Կարմիր գրքում գրանցելու ողնաշարավոր կենդանիների և 97 տեսակ: Հայաստանի անողնաշարավոր կենդանիների Կարմիր գիրքը դեռ հրատարակված չէ, բայց արդեն հրատարակության է պատրաստվել «Հայաստանի անողնաշարավոր կենդանիների հազվագյուտ և անհետացող տեսակները» աշխատությունը, որտեղ ընդգրկված են անհետացող անողնաշարավորների ավելի քան 100 տեսակ:

Հայաստանում առավել վտանգված են կարնասունների հետևյալ տեսակները՝ Մեհելի պայտաքիթը, լայնականց ծալքաշրթունքը, հարավորուսական խայտաքիսը, կովկասյան ջրասամույրը, անդրկովկասյան գորշ արջը, մանուլը, հայկական մուֆլոնը, բեզոարյան այծը և այլ կենդանիներ (նկ. 84):



Նկ. 84 Մեհելի դայտաքիթը (1), լայնականց ծալքաշրթունք (2), մանուլը (3), հարավորուսական խայտաքիսը (4) Հայաստանում առավել վտանգված կարնասունների տեսակներից են

»» 62. Հազվագյուտ եւ անհետացող տեսակների պահպանության ռազմավարությունը

## 62. Հազվագյուտ եւ անհետացող տեսակների դահլյանության ռազմավարությունը

Տեսակների դահլյանության ռազմավարության տարրերը: Հազվագյուտ տեսակների պահպանության և վերականգնման ռազմավարության հիմնական խնդիրն է անբարենպաստ ազդեցություններից տեսակի կենսաբանական ցուցանիշների պահպանության մեխանիզմների կարգավորումը: Նման մեխանիզմների հիմքում պետք է լինի նշված տեսակների պահպանության գործնական հնարավորությունը սահմանափակող գործոններից: Այդ խնդիրը հնարավոր է լուծել միայն հատուկ մեթոդական միջոցառումների համակարգի իրագործման ճանապարհով: Այդ միջոցառումներն եւ կոչվում են հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանության ռազմավարության տարրերը: Սիայն համակարգային մոտեցումը կարող է ապահովել տեսակի առավել կարևոր կենսաբանական ցուցանիշների պահպանումը և ամբողջականությունը, հետևաբար՝ տեսակի պահպանումը կենսոլորտում: Հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանության ռազմավարության հիմնական տարրերը հինգն են:

- հազվագյուտ տեսակների բազմացում հատուկ բուծարաններում,
- կենդանիների և բույսերի վերադարձ գոյության բնական միջավայր,
- գենոֆոննի պահպանություն,
- օրենսդրական պահպանություն,
- տարածքային պահպանություն:

Հազվագյուտ տեսակների բազմացում: Ներկայումս բուծարաններում, ամբողջ աշխարհի կենդանաբանական և բուսաբանական այգիներում ուսումնասիրում են բարձրակարգ ողնաշարավոր կենդանիների և բույսերի համարյա բոլոր խնբերի բուծման հարցերը: Այդ հսկայական աշխատանքի արդյունքում մարդիկ սովորեցին բազմացնել երկրի վրա ապրող հազվագյուտ տեսակների համարյա կեսը: Առաջին բուծարանների ստեղծումը նշանակում էր անցում պահպանության պասիվ ձևերից դեպի անհետացող տեսակների պահպանության համար ակտիվ պայքարի:

Հազվագյուտ տեսակներին արհեստական բուծարաններում անհետացումից փրկելու օրինակ կարող է ծառայել Պրժևալյան ձին, զուբրը, Դավթի եղջերուն և այլն (նկ. 85):

Այժմ մասնագետները եկել են այն եզրակացության, որ անհրաժեշտ է անթերի տիրապետել կենդանիների և բույսերի բոլոր տեսակների՝ արհեստական պայմաններում բուծման տեխնոլոգիաներին: Դա կարող է երաշխիք ծառայել կենսաբազմազանության պահպաննան համար, քանի որ սովորական տեսակը, մարդու գործունեությամբ պայմանավորված էկոլոգիական համակարգերում ծագած փոփոխությունների հետևանքով, կարող է արագ դառնալ հազվագյուտ և պահանջել շտապ պահպանություն:



Նկ. 85 Պրժևալյան ձին (1) և զուբրը (2) անհետացումից փրկվել են արհեստական բուծարաններում



Նկ. 86 Երևանի կենդանաբանական այգին գիտահետազոտական և կրթական օջախ է

**Երևանի կենդանաբանական այգի:** Երևանի կենդանաբանական այգին գիտահետազոտական և կրթական օջախ է, որտեղ վայրի կենդանիները ապրում, բազմանում և ցուցադրվում են վանդակներում և ցանկապատված բացօթյա տարածքներում: Երևանի կենդանաբանական այգին հիմնադրվել է 1940 թ. (նկ. 86):

ՀՀ գործող միակ պետական կենդանաբանական այգում 2006թ. դրությամբ կան մոտ 200 տեսակների պատկանող կենդանիներ: Կենդանաբանական այգու ընդհանուր մակերեսը 8,5 հա է, իսկ կենդանիների համար նախատեսված կառույցների մակերեսը՝ 5,2 հա, Կենդանաբանական այգում բնակվող 32 տեսակի կենդանիներ և թշուններ գրանցված են միջազգային Կարմիր գրքում, իսկ 24 տեսակի կենդանիներ և թշուններ՝ Հայաստանի Կարմիր գրքում: Եվ միջազգային, և Հայաստանի Կարմիր գրքերում ընդգրկված՝ կենդանաբանական այգում բնակվող կենդանիների գերակշռող մասը կազմում են կաթնասունները:

Կենդանաբանական այգում ցուցադրված են Հայաստանի ֆաունային բնորոշ այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են հայկական մոլֆլոնը, բեզոարյան այծը, վայրի խոզը, լեռնային կաքավներ, բազմաթիվ սողուններ, ձկներ և այլն (նկ. 87):

**Երևանի բուսաբանական այգի:** Բուսաբանական այգին գիտահետազոտական և ուսումնաօժանդակ հիմնարկ է, որտեղ մշակվում, ուսումնասիրվում են բույսերը և պրոպագանդվում բուսաբանական գիտելիքները (նկ. 88):

Բուսաբանական այգու հիմքը կազմում են կենդանի բույսերի հավաքածուները, որոնք աճեցվում են բաց տարածություններում ու ջերմատներում և օգտագործվում են ցուցադրման, գիտահետազոտական նպատակներով:

Երևանի բուսաբանական այգին հիմնվել է 1935թ.: Բուսաբանական այգում աճում են ավելի քան 1200 տեսակի ծառաբիկային և մոտ 2000 տեսակի ջերմատնային բույսեր: Հայաստանի ֆլորան ներկայացված է 1000-ից ավելի տեսակներով: Ջերմատնային պայմաններում պահպանվում է արևադարձային և մերձարևադարձային բույսերի մոտ 1000 տեսակ:

»» 62. Յազվագյուտ եւ անհետացող տեսակների պահպանության ռազմավարությունը



Նկ. 87 Կենդանաբանական այգում ցուցադրված են ինչպես ՝ այսաւանի, այնուև էլ այլ երկրների ֆառունային բնորու կենդանիներ

**Դազգայուս տեսակների վերադարձը բնական միջավայր:** Արհեստական պայմաններում աճեցված տեսակների վերադարձի գործընթացը բնություն դիտվում է որպես ռազմավարության ինքնուրույն տարր, որն ուղղված է անհետացած և անընդհատ պակասող թվաքանակով տեսակների վերականգնման համար: Որոշակի իմաստով արհեստական բազմացումը և վերադարձը բնություն մեկ գործընթացի հաջորդական փուլեր են, որոնք, սակայն, մեթոդապես և սկզբունքորեն տարբերվում են: Բնական միջավայր տեսակների վերադարձի ժամանակ հիմնական խնդիրներն են արհեստական պայմաններում աճեցված կենդանիների՝ մարդուց վախի բացակայությունը, սննդի ինքնուրույն հայքայթման, միգրացիոն ճիշտ ուղղություններ ընտրելու անկարողությունը: Սակայն արդեն մշակված են բազմաթիվ տեխնիկական միջոցառումներ, որոնք թույլ են տալիս հաղթահարել այդ ակնառու խնդիրները:

**ԳԵՆՈՖՈՆՆԵՐԻ ՊԱՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:** Հազվագյուտ տեսակների գենետիկական նյութի պահպանան եղանակներից մեկը սոնդատիկ և սեռական բջիջների պահպանումն է հեղուկ ազոտում՝  $-196^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում (նկ. 89):



Նկ. 88 Երևանի բուսաբանական այգին գիտահետազոտական և ուսումնաօժանդակ կենտրոն է



Նկ. 89 Շեղուկ ազոտում՝ և  $196^{\circ}\text{C}$  ջերմասիճանում կարելի է դափուանել հազվագյուտ տեսակների սոմատիկ և սեռական բջիջները



Նկ. 90 Մեկուսացված կուլտուրաների սացումը հնարավորություն է տալիս դափուանելու էնդեմիկ և ռելիկտային բույսերի տեսակները

նաև շատ բույսերի սերմերի և հյուսվածքների պահպանման մեթոդներ: Այսպիսով, կենսաբանական օբյեկտների խոր սարեցումը համարվում է գենետիկական նյութի պահպանման առավել հեռանկարային ուղի: Բացի այդ, բույսերի գենոֆոնի պահպանման համար այժմ կիրառվում են մեկուսացված կուլտուրաներում, սրվակներում բույսերի կլոնալ միկրոբազմացման մեթոդները: Կլոնալ միկրոբազմացումը գենետիկորեն միատարր բույսերի ստացումն է անսեռ եղանակով: Կլոնալ միկրոբազմացման գործընթացն իր մեջ ներառում է մի շարք հաջորդական փուլեր՝ ընտրված բույսերի մեկուսացված կուլտուրաների ստացում, ընձյուղների արմատակալում՝ հողային պայմաններում դրանց

հետագա աղապտացիայով, նախապատրաստում բնական պայմաններում տնկելու համար:

Բույսերի հազվագյուտ տեսակների մեկուսացված կուլտուրաների ստացումը հնարավորություն է տալիս պահպանելու էնդեմիկ և ռելիկտային բույսերի տեսակները (Նկ. 90):

Միաժամանակ գենային ճարտարապետության տարբեր ուղղությունների զարգացումը կարող է վտանգ ներկայացնել գենետիկական նյութի պահպանման համար: Դա տրամադրեն կենդանիների և բույսերի ստացումն է, որոնց բնորոշ են արագ աճը և մեծ չափերը: Իհարկե, դրանք գյուղատնտեսության զարգացման համար արդիական նվաճումներ են, սակայն առաջանում է արհետականորեն ստեղծված գենետիկական նյութով մոլորակի գենետիկական ֆոնդի աղտոտման վտանգ:

Այժմ բազմաթիվ զարգացած երկրներում աշխատանք է տարվում այս բնագավառում գիտահետազոտական աշխատանքների կարգավորման՝ օրենսդրական դաշտի ստեղծման ուղղությամբ:

Հազվագյուտ տեսակների պահպանության օրենսդրական և տարածքային պահպանության հարցերը ներկայացված են հաջորդ պարագրաֆներում:

»» 63. Յազվագյուտ տեսակների օրենսդրական պահպանությունը

### 63. Յազվագյուտ տեսակների օրենսդրական ղահղանությունը

Միջազգային համագործակցությունը կենսաբազմազանության ղահղանության բնագավառում:  
Օրենսդրական պահպանությունը կարևոր, որոշիչ և առաջին քայլն է ոչ միայն հազվագյուտ տեսակների և էկոհամակարգերի, այլև կենսաբազմազանության պահպանության գործընթացում:  
Քանի որ հազվագյուտ տեսակների պահպանությունը կենսաբազմազանության պահպանության ծրագրի կարևոր մասն է, որը չի կարող իրագործվել երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակից անկախ, ապա հազվագյուտ տեսակների պահպանության խնդրի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է պետական և իրավական օժանդակություն՝ նորմատիվային իրավական հիմքի ստեղծման ձևով:



Նկ. 91 Վայրի ֆլորայի և ֆաունայի անհետացող տեսակների միջազգային կոնվենցիայի խորհրդանշանը

Տեսակների օրենսդրական պահպանությունը իրականացվում է ազգային և միջազգային մակարդակներով: Ազգային օրենքները պաշտպանում են տեսակները երկրի ներսում, իսկ միջազգային համաձայնությունները կարգավորում են երկրների միջև տեսակների առևտուրը:

Բոլոր երկրներում կառավարությունները ազգային բնապահպանական կազմակերպությունների հետ միասին առաջատար դեր են կատարում կենսաբազմազանության բոլոր մակարդակների պահպանության խնդիրների լուծման հարցում: Ընդունվում են օրենքներ ազգային պարկերի կազմակերպման, ձկնորսության կարգավորման, անտառահատումների, մթնոլորտի և ջրի աղտոտումների հարցերի վերաբերյալ:

Կենսաբանական բազմազանության պահպանությունը տարբեր երկրներում կազմակերպվում է տարբեր եղանակներով: Եվրոպայի խորհրդի 15 անդամները տեսակների պահպանության վերաբերյալ իրենց աշխատանքը կազմակերպում են միջազգային կոնվենցիաների հիման վրա, օրինակ՝ Վայրի ֆլորայի և ֆաունայի անհետացող տեսակների առևտուրի միջազգային կոնվենցիայի (CITES) (Convention on International Trade in Endangered Species) հիման վրա (նկ. 91): CITES-ը նախապատրաստվել է IUCN-ի առաջարկով 20-րդ դարի 60-ական թթ. 1973թ. կոնվենցիան ընդունվեց և ստորագրվեց Վաշինգտոնում: 1976թ. կոնվենցիային միացավ նախկին ԽՍՀՄ-ը: ԽՍՀՄ փլուզումից հետո 1991թ. Ռուսաստանի Դաշնությունը մնաց որպես կոնվենցիայի մասնակից, իսկ նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններից 1997թ. CITES-ին միացան Բելառուսը, Վրաստանը և Ուզբեկստանը: Մնացած պետությունները, այդ թվում և Յայաստանի Դանրապետությունը, չեն դրսեւուել իրենց վերաբերմունքը կոնվենցիայի նկատմամբ:

Այժմ կոնվենցիային միացել են 128 երկիր: Կոնվենցիայի կարևորագույն մասն են կազմում կենդանիների և բույսերի համաձայնեցված ցուցակները: Դրանցում թվարկված են կենդանիների և բույսերի այն տեսակները, որոնց տեղափոխումը պետական սահմաններով հնարավոր է միայն հատուկ թույլատվությունների առկայության դեպքում: Այդ ցուցակները ներառում են հազվագյուտ կենդանիների 7 հազար և բույսերի 30 հազարից ավելի տեսակներ: Ցուցակները լրացվում են և վերանայվում յուրաքանչյուր երեք տարին մեկ կողմերի կոնֆերանսի ժամանակ, որին ներկայանում են CITES-ի մասնակից բոլոր պետությունները:

Տեսակների պահպանության միջազգային համաձայնությունների շարքում կարևոր են՝ Անտարկտիդայում ծովային կենդանական ռեսուրսների պահպանության մասին կոնվենցիան, Կետերի որսի կարգավորման միջազգային կոնվենցիան, Թոչունների պահպանության միջազգային կոնվենցիան, Բենիլյուքսի կոնվենցիան թոչունների որսի և պահպանության մասին և այլն:

Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության դահդանության օրենսդրական հիմքը: Հայաստանում կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման համար սահմանված են և ընդունված մի շարք օրենքներ:

«Բնության պահպանության մասին» ՀՀ օրենսդրության հիմունքները (1991թ.), սահմանում են ՀՀ բնապահպանական քաղաքականությունը և նպատակառուղղված են ապահովելու բնական միջավայրի պահպանությունը և օգտագործման կարգավորումը, ինչպես նաև անհրաժեշտ իրավական հիմքեր ստեղծելու ընդերքի, ջրերի, մքնոլորտային օդի, բուսական և կենդանական աշխարհի, անտառների պահպանության և օգտագործման հարաբերությունները կարգավորող բնապահպանական օրենսդրության գարգացման համար:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (1991թ.) կարգավորում է բնության հատուկ պահպանվող տարածքների (IUCN) կազմավորման, կազմակերպման, պահպանության ու օգտագործման կարգը և այդ ոլորտում ծագող հարաբերությունները: Ըստ այս օրենքի՝ որպես բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ երաշխավորված են պետական արգելոցները, պետական արգելավայրերը, ազգային պարկերը և բնության հուշարձանները: Օրենքում առանձին հոդվածներով սահմանված են նշված հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման թույլատրելի ձևերը:

ՀՀ անտառային օրենսգիրը (1994թ.) կարգավորում է անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում ծագող հարաբերությունները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999թ.) սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտական հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում: Օրենքի նպատակն է կարգավորել բուսական աշխարհի պահպանության և օգտագործման ոլորտում հասարակական հարաբերությունները:

«Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» ՀՀ օրենքը (2000թ.) սահմանում է ՀՀ տարածքում բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի իրավական բնագավառում պետական մարմինների և իրավաբանական ու ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները:

«Կենդանի աշխարհի մասին» ՀՀ օրենքը (2002թ.) սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բնական կենդանական աշխարհի գիտական հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

## **64. Հազվագյուտ տեսակների տարածությին դահդանությունը**

Դահդանության հատուկ տարածների ստեղծման սկզբունքները: Հազվագյուտ տեսակների տարածքային պահպանությունը նրանց պահպանությունն է տարբեր մակարդակների պահպանության հատուկ տարածքների սահմաններում: Տարածքային պահպանությունը վերաբերում է կենսաբազմազանության պահպանության ռազմավարության հիմնական տարրերին, ունի մեծ նշանակություն և լայն կիրառություն ողջ աշխարհում:

Պահպանվող տարածքները կարող են կազմակերպվել տարբեր ճանապարհներով: Սակայն գոյություն ունի հիմնական երկու ուղղություն՝ պետական պահպանություն և հողատարածքի սեփականաշնորհում մասնավոր անձանց կամ էկոլոգիական կազմակերպությունների կողմից: Կառավարության մակարդակով ընդունվում է որոշում պահպանվող տարածքների անջատման մասին, և ընդունվում են օրենքներ, որոնք որոշում են պահպանվող տարածքի

պաշարների օգտագործման աստիճանը: Աշխարհում պահպանվող շատ տարածքներ ստեղծվում են մասնավոր էկոլոգիական կազմակերպությունների կողմից, օրինակ՝ Բնության պահպանության կազմակերպությունը (The Nature Conservancy) կամ Օդյուրոնի կազմակերպությունը (Audubon Society) (նկ. 92): Առաջադրված խնդիրների լուծման համար առավել հաճախ կիրառվում են զարգացող երկրների կառավարությունների և միջազգային էկոլոգիական կազմակերպությունների միջև կամ միջազգային բանկերի և զարգացած երկրների կառավարությունների միջև համագործակցությունները:

Համագործակցության այս տեսակներն անընդհատ աճում են Գլոբալ էկոլոգիական ֆոնդի ֆինանսավորման օժանդակության աճի շնորհիվ: Այս ֆոնդն ստեղծվել է Համաշխարհային բանկի և Միացյալ ազգերի կազմակերպության կողմից:

**Պահպանության հատուկ տարածքների դասակարգումը:** Պահպանվող տարածքի ստեղծման ժամանակ առաջին հերթին նրանում պետք է որոշել մարդկային գործունեության թույլատրելի սահմանները: Բնության պահպանության միջազգային միությունը 1994թ. մշակեց պահպանվող տարածքների դասակարգում, որն արտացոլում է մարդու կողմից տարածքի օգտագործման սահմանները.

I. Խիստ պահպանվող արգելոցներ, որտեղ պահպանում են տեսակները և բնական էկոհամակարգերը հնարավորինս չփոփոխված վիճակում: Արգելոցների տարածքներում թույլատրվում է գիտական ուսումնասիրությունների, կրթական ծրագրերի և շրջակա միջավայրի մոնիթորինգի անցկացումը: Հայաստանում առաջին դասին են պատկանում երեք արգելոցները՝ Երեսունու, Խոսրովի և Շիկահողի:

II. Ազգային պարկերը մեծ տարածություններ են, որոնց բնորոշ է գեղատեսիլ և հարուստ բնությունը: Նախատեսված են մեկ և ավելի էկոհամակարգերի պահպանության, գիտական և կրթական նպատակների, ինչպես նաև՝ հանգստի համար: Այս տարածքները չեն օգտագործվում պաշարների կոներցիոն շահագործման նպատակներով: Հայաստանում դրանք Սևանի և Ղիլիջանի ազգային պարկերն են:

III. Բնության ազգային հուշարձանները չափերով ավելի փոքր են և նախատեսված են յուրահատուկ հետաքրքրություն ներկայացնող մենահատուկ կենսաբանական, երկրաբանական և մշակութային օբյեկտների պահպանության համար: Հայաստանում բնության ազգային հուշարձաններ են լայնատերև սոսիները, որոնք աճում են ծավ գետի լեռնանցքում, Մեղրիի շրջանում, Բուղդայի ծառը:

IV. Դեկավարվող բնական արգելավայրերը նման են խիստ պահպանվող տարածքներին, սակայն այստեղ թույլատրվում է մարդկային որոշակի գործունեություն, օրինակ՝ չափավորված բերքահավաքը: Հայաստանում այդպիսին է, օրինակ, Սոսու պուրակը:

V. Պահպանվող գեղեցիկ լանդշաֆտներ և ծովի ջրեր. տեղային բնակչությանը հնարավորություն է ընձեռված ավանդաբար օգտվել շրջակա բնության պաշարներից, մասնավորապես այնպիսի տեղերում, որոնք յուրահատուկ են իրենց մշակությով, գեղագիտական և էկոլոգիական առանձնահատկություններով: Այս տարածքներում հնարավոր է տուրիզմի և հանգստի կազմակերպումը, կարող են գտնվել գյուղեր, այգիներ և արոտավայրեր:



Նկ. 92 Բնության դահլիճանության միջազգային միության խորհրդանշանը

VI. Պաշտպանված տարածքներ՝ պաշարների կարգավորված շահագործմամբ՝ ներառելով ջուրը, վայրի բնությունը, արոտավայրերը, անտառահատումները, ձկնորսությունը։ Այս տարածքները հաճախ մեծ են լինում, և նրանցում թույլատրվում են պաշարների օգտագործման ինչպես ժամանակակից, այնպես էլ ավանդական եղանակները։

Բերված կարգերից միայն առաջին երեքը կարելի է համարել պահպանվող տարածքներ, քանի որ դրանք ստեղծվում են կեսնաբազմազանության պահպանության նպատակներով։

Հատուկ դահլիճներում տարածեներն աշխարհում առաջին, երկրորդ և երրորդ կարգի հատուկ պահպանվող տարածքների թիվը հասնում էր 4500-ի, որոնց



Նկ. 93 Հայաստանի Հանրապետության արգելոցները, ազգային դարկերը և արգելավայրերը

### »» 65. Հայաստանի Հանրապետության արգելոցները

զբաղեցրած տարածքը կազմում էր մոտ 500 մլն հա: Չորրորդ, հինգերորդ և վեցերորդ կարգերին պատկանող տարածքների թիվը 5000-ից ավելի է և կազմում է մոտ 350 մլն հա:

Դժբախտաբար, ցանաքի միայն 4%-ն է բաժին ընկնում հատուկ պահպանվող տարածքներին: Բացի այդ, պահպանվող չպահպանվող տարածքների հարաբերությունը տարբեր երկրներում խիստ տատանվում է՝ սկսած 25%-ից Գերմանիայում, Ավստրիայում մինչև շատ ցածր տոկոսներ այնպիսի երկրներում, ինչպես Ռուսաստանը (1,2%), Հունաստանը (0,8%) և Թուրքիան (0,3%): Հայաստանի Հանրապետության հատուկ պահպանվող տարածքների ընդհանուր մակերեսը մոտ 311 հազար հա է, որը հանրապետության տարածքի մոտ 10%-ն է (նկ. 93):

Աշխարհում ամենամեծ պահպանվող տարածքը գտնվում է Գրենլանդիայում՝ մոտավորապես 92 մլն հա տարածքով:

Ծովային տարածքների միայն 1%-ն է ընդգրկված հատուկ պահպանվող տարածքների մեջ, այնինչ ձկնային նվազող պաշարների պահպանության համար պահանջվում է նման կարգավիճակ տալ ջրային մակերևույթի ամենաքիչը 20%-ին:

Չնայած բոլոր դժվարություններին՝ աշխարհում կան ավելի քան 1300 ծովային և առափնյա պահպանվող տարածքներ, որոնց ընդհանուր մակերեսը մոտ 800000 կմ<sup>2</sup> է:

Ընդհանուր տարածքի կեսը գրավում են երեք ամենախոշոր պահպանվող տարածքները՝ Ավստրալիայի մեծ սահմանային խորհի ծովային պարկը, Գալապագոսյան ծովային պարկը Էկվադորում և Հյուսիսային ծովի ռեզերվացիան Նիդերլանդներում:

### 65. Հայաստանի Հանրապետության արգելոցները

Խոսրովի արգելոց: Ստեղծվել է 1958թ., տեղակայված է Գեղամա լեռնավահանի հարավային դիրքադրության և Ուրօի ու Երանոսի լեռնաշղթաների հյուսիսարևմտյան լանջերին, Ազատ և Խոսրով գետերի ավազաններում և գրավում է 29196 հա տարածք: Այստեղ պահպանվում են Կենտրոնական Հայաստանի չոր նոսրանտառային, ֆրիգանային ու կիսաանապատային լանդշաֆտները՝ բուսական ու կենդանական եզակի համակեցություններով (նկ. 94): Արգելոցի ֆլորան պարունակում է 1800 բուսատեսակ, որոնք կազմում են Հայաստանի ֆլորայի 50%-ից ավելին: Նրանցից 146-ը գրանցված են ՀՀ և նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում: Այստեղ պահպանվում են մշակաբույսերի վայրի ցեղակիցները՝ պտղատուններից՝ վայրի տանձենին, խնձորենին, սալորենին, բալենին, արոսենին, սզնին, նշենին և այլն, հացազգիներից՝ աշորա կավիլովի տեսակը: Արգելոցում պահպանվում են գիհու և կաղնու նոսրանտառները, տաճառուտները, հացենին, նշենին լեռնային քսերոֆիտները, լեռնատափաստանային և օշինդրային կիսաանապատային համակեցությունները, գազը, սաղավարտուկը, (նկ. 95):

Մյուս արգելոցների համեմատ Խոսրովի արգելոցում բավականին լավ է ուսումնասիրված կենդանական աշխարհը: Յոդվածուտանիները ներկայացված են ամենատարբեր դասերով: Սարդակերպերից հանդիպում են մորմը, կարիճի մի քանի տեսակներ, խաչասարդը



Նկ. 94 Խոսրովի արգելոցում ուղարկանվում են Կենտրոնական Հայաստանի չոր նոսրանտառային, ֆրիգանային ու կիսաանապատային լանդշաֆտները

Բ



Նկ. 95 Խոշորվի արգելոցում դահլիճանվող բուսատեսակներից են գազը (1), գիհին (2), հացենին (3), սաղավարտուկը (4), նօենին (5)



Նկ. 96 Խոշորվի արգելոցում բնակվող կենդանիներից են սաղաֆաթիթեռը (1), սիրիական սխտորագործը (2), կապտալանջը (3), լայնականց ոզնին (4), գայլը (5), վարազը (6)

### »» 65. Յայաստանի Յանրապետության արգելոցները

և տիգերի տարբեր տեսակներ, խեցգետնակերպերից՝ դաֆնիան, ցիկլոպները: Ուղղաքներից այստեղ բնակվում են փոքր զամբիկների մի շարք տեսակներ, ինչպես նաև՝ հավասարաթևերի և կարծրաթևերի զանազան տեսակներ: Թիթեռներից նույնպես հայտնի են շատ տեսակներ, որոնց մեջ մասը գրանցված են նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Բազմազան են նաև կարծրաթևերը, որոնցից կարելի է հիշատակել մալոզիա շովիցին և գնայուկի տեսակները:

Արգելոցում հատկապես լավ են ուսումնասիրված ողնաշարավոր կենդանիները: Զկներից հանդիպում են կարմրախայտը, կարմրակնը, քուրի բեղլուն և այլն: Կան նաև մի շարք երկենցաղներ, որոնցից սիրիական սխտորագորտը գրանցված է ՀՀ և նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում: Այստեղ հանդիպող 33 տեսակ սողուններից շատերը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

Արգելոցում բնակվում են 142 տեսակ թռչուններ, որոնցից 66-ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Կաթնասունները ներկայացված են 55 տեսակով, որոնցից են անդրկովկասյան գորշ արջը, վարազը, լայնականց ողնին, հայկական մոլֆոնը, բեզոարյան այծը, լուսանը, գայլը, աղվեսը, երբեմն հանդիպող առաջավորասիական ընձառյուծը և այլն (նկ. 96):

**Շիկահողի արգելոց:** Ստեղծվել է 1958-ին, գտնվում է հանրապետության հարավային մասում՝ Ծավ և Շիկահող գետերի ավազաններում: Զբաղեցնում է 13 հազար հա տարածություն՝ 700-2400ն բարձրությունների սահմաններում (նկ. 93): Այստեղ յուրաքանչյուր կիրճ ունի իր յուրահատուկ կլիման, որը հիմնականում տաք և խոնավ է: Այստեղ է գտնվում Յայաստանում բնական վիճակում միակ լավ պահպանված անտառը՝ Մթնաձորի կիրճը:



Նկ. 97 Շիկահողի արգելոցում դահդանվող բուսատեսակներից են բազմատիկը (1), կակաչը (2), սնդեղը (3), տանձենին (4), նոնենին (5-6)



Նկ. 98 Շիկահողի արգելոցում հանդիպում են մորուխավոր արծիվը (1), անգող (2), հնդկահավը (3), իժը (4), գյուրզան (5), սաղատաւակը (6) և առ ուրիշ տեսակներ

Արգելոցի պահպանության հիմնական օբյեկտներն են կաղնու, բոխու և կաղնուտաքրիչուտային անտառները, ինչպես նաև՝ հազվագյուտ բուսական համակեցություններ, որոնք սահմանազատված են կենու, արևելյան հաճարենու, ընկուզենու պուրակների տեսքով։ Անտառի վերին սահմաններում՝ 2400-2600մ բարձրության վրա աճում են սուրալյան կաղնու, կեչու և խաշը անտառներ։ Արգելոցում աճում են հազվագյուտ ռելիկտային պտերներ՝ իժալեզու սովորական, արծվապտեր դրիմյան, բազմավոտիկ շղավարդ կաշվե, ձնծաղիկ անդրկովկասյան, խոլորձի, հիրիկի, կակաչի, շնդեղի, խլոպուզի տարրեր տեսակներ (Նկ. 97)։

Աճում են նաև էնդեմիկ տեսակներ՝ տանձ Զանգեզուրի, մորենի թախտաջյանի, նոռենի, վարդակակաչ խառը, սրոհունդ էլեոնորայի, գազ Զանգեզուրի և այլն։ ՀՀ Կարմիր գրքում ներառված են արգելոցում աճող շուրջ 70 բուսատեսակներ։


Զեռնաթևավորներից հանդիպում են փոքր պայտաքիթը, սրականջ գիշերաշղիկը և այլն, կարմիր գրքում գրանցված թոչուններից՝ վայրի հնդկահավը, գառնանգողը, սևանգողը, սպիտակագլուխ անգողը և այլն։ Հանդիպում են նաև մորուքավոր արծիվը, սովորական տատրակը, հոպոպը, ականջավոր բուն, բվիկը, տնային բվիկը և այլն, սողուններից՝ դեղնափորիկը, գյուրզան, ջրային լորտուն, կաթնասուններից տարածված են գորշուկը, գորշ նապաստակը, կզաքիսը, անտառային կատուն, այծյանը, գայլը, աղվեսը։ Հանդիպում են նաև բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը (Նկ. 98)։

»» 65. Հայաստանի Հանրապետության արգելոցները

**Երեսունու արգելոց:** Ստեղծվել է 1981թ., գտնվում է Մերձարաքսյան լեռնաշղթաների լանջերին, Կոտայքի և Արարատի մարզերի սահմաններում, Երևանի շրջակայրում: Զբաղեցնում է 89 հա տարածք (նկ. 93): Այստեղ պահպանվում են լեռնային էնդեմիկ և եզակի բնական էկոհամակարգեր: Այս արգելոցը վայրի հացազգիների գենոֆոնի պահպանության հիմնական վայրն է: Ունի հարուստ և բազմատեսակ բուսականություն, որը կազմված է 293 տեսակներից:

Բուսական համակեցությունները հիմնականում կազմված են միամյա հացազգիներից՝ այժակն զլանածն, բթաթեփուկ աճքիստ, աշորա վավիլովի, ցորեն արարատյան, ցորեն վայրի միահատիկ, ցորեն Ուրարտուի և այլն: Այստեղ կան ցորենի հարյուրից ավելի տարատեսակներ: Հանդիպում են նաև անհետացող հազվագյուտ այլ տեսակներ, որոնք գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Դրանցից են՝ հիրիկ ցանցավորը, արմատագլխիկ արևելյանը, հոհենակերիա անցողուն, կանկար տուրնեֆորի, կապարը և շատ ուրիշներ (նկ. 99):

Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից այստեղ հանդիպում են 17 տեսակի սողուններ, որոնցից են՝ գյուրզան, մողեսանման օձը, սահնօձի տարրեր տեսակներ, ուկեգույն նարույան, երկարոտն սցինկը և այլն: Երկենցաղներից հանդիպում են լճագորտը, կանաչ դոդոշը, փոքրասիական ծառագորտը, թռչուններից՝ մոխրագույն կաքավը, սովորական տատրակը, սովորական բազեն, մկնածուռակը, տնային բվիկը, ներկարարը և այլն: Կարնասուններից տարածված են աղվեսը և աքիսը, հազվադեպ նաև կզաքիսը, գայլը և գորշուկը (նկ. 100):



Նկ. 99 Երեսունու արգելոցում տարածված են այժակնը (1), գարին (2), հիրիկը (3), տունեֆորկանկարը (4), կաղղարը (5), Վավիլովի աշորան (6)



Նկ. 100 Երեսունու արգելոցում կենդանական աշխարհի ներկայացուցիչներից հանդիլում են սահմանագծում պահպանագործության մարույան (2), կանաչ դրոդու (3), փոքրասիական գորտը (4), մոխրագույն կարավը (5), բազեն (6), աղվեսը (7) և ամֆիսը (8)

## 66. Դայաստանի Դանրադետության ազգային դարձերը



Նկ. 101 «Ուլան» ազգային դարձը գիտահետազոտական, հանգստի ու տուրիզմի, դասության և մշակույթի հոււշաճանաների դահլանությանը վայրէ

«Ուլան» ազգային դարձը: Ստեղծվել է 1978թ., ընդգրկում է Սևանա լճի հայելին և նրա շրջակայքը: Զբաղեցնում է 150,1 հազար հա տարածք, (նկ. 93): «Ուլան» ազգային պարկը բնապահանական գիտահետազոտական վայրէ և իրականացնում է Սևանա լճի և նրա ավազանի բնական համալիրների և բնական պաշարների պահպանությունը և օգտագործման վերահսկումը, ինչպես նաև կոռորդինացնում և վերահսկում է հանգստի ու տուրիզմի կազմակերպումը, աշակեցում է պարկի տարածքի պատճության և մշակույթի հուշարձանների պահպանությանը (նկ. 101):

Պարկը բաժանվում է 3 ֆունկցիոնալ գոտիների՝ արգելոցային, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում առանձնացված են 4 արգելոցներ՝ 3700 հա ընդհանուր մակերեսով, 10 արգելավայրեր՝ գետերի գետաբերաններից սկսած 500 մ երկարությամբ, ինչպես նաև՝ 7200 հա ռեկրեացիոն գոտու տարածքը, որից 3000 հա ցամաքային է:

Պահպանության օբյեկտներն են Սևանա լիճը և նրա ջրահավաք ավազանի եզակի ու էնդեմիկ կենդանական ու բուսական համակեցությունները: Սևանի ավազանի աշխարհագրական դիրքը, կլիման և բույսերի բազմազանությունը բարենպաստ միջավայր են ստեղծել կենդանական աշխարհի հանար: Կարգաբանական խմբերից այստեղ հանդիպում են՝ կաթնասունների՝ 34, թռչունների՝ 267 (որոնցից 48-ը բնադրող են), երկկենցաղների՝ 3, սողունների՝ 17, ձկների 9 տեսակ:

»» 66. Յայաստամի Յանրապետության ազգային պարկերը



Նկ. 102 «Սևան» ազգային ղարկի տարածում հանդիլում են իշխանը (1), սիգը (2), հայկական ռոռոր (3), սև փարփարը (4), կարմիր բաղրը (5), տելիկանը (6)



Նկ. 103 «Սևան» ազգային ղարկի տարածում հանդիլում են չիշխանը (1), օշինդրը (2), թաթարական կաթնուկը (3) և այլ բուսաւետներ



Նկ. 104 Դիլիջան ազգային ղարեւում ղահողանվում են ղամաճարտարադեսական ու բնության եզակի հուշարձաններ՝ Գուշավանիք, Հաղարծինը և ուրիշներ

1996թ. տվյալներով պարկի տարածքում հանդիպող բնադրող թռչուններն են՝ սև փարփարը, կոճչան բադը և հայկական որորը: ՀՀ Կարմիր գրքում գրանցված թռչուններից Ազգային պարկի տարածքում 1996թ. արձանագրված են մեծ ձկնկուլը, փոքր ձկնկուլը, քաջահավը, սովորական ֆլամինգոն, կանչող կարապը և այլն: Սողուններից անհրաժեշտ է նշել մողեսներին՝ սպիտակափոր, նահրյան, ռոստոմբեկովի, հայկական, օձերից՝ սովորական, ջրային լորտուններին, պղնձօձին, լեռնատափաստանային իժին:


Երկկենցաղներից առկա են կանաչ դոդոշը, լճագորտը և փոքրասիական գորտը: Զկներից գրանցված են կարմրախայտը, Սևանի իշխանը՝ իր 4 ռասաներով, սիգը, Սևանի բեղլուն, կողակը և ծածանը (նկ. 102):

Արտանիշի թերակղզին «Սևան» ազգային պարկի ցամաքային տարածքի ամենախոշոր մասն է կազմում՝ (2500 հա) և ունի հարուստ բուսական աշխարհ: Սևանի տարածքում հայտնաբերված 1600 բարձրակարգ բուսատեսակներից 1000-ն աճում են այս տարածքում: Ազգային պարկի տարածքում հանդիպող են մի շարք էնդեմիկ և հազվագյուտ բուսատեսակներ, ինչպիսիք են՝ ողնաբուփի գաբրիելանի, գազ գյուշայի, լոջուն Սևանի, արոսենի լուրիստական, արոսենի հայաստանյան, կումկուտրուկ վոլգյան և ուրիշներ (նկ. 103):

«Դիլիջան» ազգային ղարեւկ: «Դիլիջան» ազգային պարկն ստեղծվել է 2002թ. համանուն պետական արգելոցի հիման վրա, որն իր հերթին հիմնադրվել էր 1958թ., նախկին Դիլիջանի և Կույրիշկի անտառատնտեսությունների բազայի վրա: Նորաստեղծ ազգային պարկի տարածքը համընկնում է նախկին արգելոցի տարածքի հետ (նկ. 93):

Գտնվում է հանրապետության հյուսիսային հատվածում՝ Փամբակի, Արեգունու, Միափորի, Գուգարաց լեռնաշղթաների լանջերին, Աղստև և Գետիկ գետերի ավազաններում՝ զբաղեցնելով 27995 հա տարածք: Գտնվում է ծովի մակարդակից 1000-2300մ բարձրության սահմաններում (նկ. 104): Այստեղ պահպանության են վերցված կովկասյան տիպի մեզոֆիլ անտառները, հաճարենու և կաղնու համակեցությունները, կենու եզակի պուրակը, անտառային հազվագյուտ ֆաունան և պատմաճարտարապետական ու բնության եզակի հուշարձանները:

»» 66. Հայաստանի Հանրապետության ազգային պարկերը



Նկ. 105 Դիլիջան ազգային բարձր տարածում աճում են կաղնին (1), հոնը (2-3), սոճին (4), դափնյակը (5), ուրցը (6)

Ազգային պարկի բուսական աշխարհը կազմված է մոտ 900 բուսատեսակներից, որոնցից 35-ը գրանցված է ՀՀ և նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում: Նրանց թվում են հազվագյուտ խոլորձներ, հիրիկներ, աղքայապսակ և այլն: Տարածված են հաճարենու և կաղնուտաքոխուտային մեզոֆիլ անտառները, որոնք որոշ տեղերում խառնված են ընկուզենու, սոճու, իսկ վերին սահմաններում կեչու ծառատեսակներով: Անտառաքիուտներում հանդիպում են ցախակեռաս, հոն, ծորենի, զկեռ, մասուր և այլն: Ազգային պարկի տարածքում է Հայաստանի համար ռելիկտային տեսակ հանդիսացող Ախնաբատի կենու լավ պահպանված պուրակը: Անտառային մարգագետիններում աճում են այնպիսի հազվագյուտ խոլորձներ, ինչպիսիք են դակտիլորիզա վրացական, կծկծուկը, եպիպոգիում անտերկը, շուշանի և թրաշուշանի տարբեր տեսակներ (Նկ. 105):

Այստեղ հանդիպում են երկկենցաղների՝ 4, սողունների՝ 13, թռչունների՝ 147 և կաթնասունների՝ 43 տեսակ: Զկներից կարելի է նշել կարմրախայտը, քուրի բեղլուն, քուրի լերկակաձուկը և այլն, թռչուններից՝ կովկասյան մայրեհավը, կասպիհական հնդկահավը, քարարծիվը, գառնանգողը: Կաթնասուններից այստեղ բնակվում են խլուրդը, գորշուկը, կզաքիսը, աքիսը, լուսանը, անտառակատուն, սկյուռը և այլն: Հաճախակի հանդիպում են վարազը և կխտարը, իսկ գետամերձ տարածքներում՝ նաև ՀՀ և նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում գրանցված ջրասամույրը:

## 67. Հայաստանի Հանրապետության արգելավայրեր


Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգում ընդգրկված են պետության կողմից հաստատված 23 արգելավայրեր: Արգելավայրերը կազմավորվել են դեռևս 1950-70-ական թվականներին:

Ըստ նշանակության և պահպանության հիմնական օբյեկտների՝ արգելավայրերից 8-ն անտառային են: Մնացածն ունեն բազմաբնույթ նշանակություն:

Ստորև բերված են համառոտ տեղեկություններ արգելավայրերից մի քանիսի մասին:

**Սոսու ղուրակ:** Ստեղծվել է 1958թ., 60 հա տարածության վրա: Գտնվում է Հայաստանի հարավում՝ Ծավ և Շիկահող գետերի ափին, 700-800մ բարձրության վրա: Պուրակը շարունակվում է Աղրբեցանի տարածքում (4000 հա) և կոչվում է Բասուտչայի արգելոց (նկ. 93):

Պահպանության օբյեկտն է Կովկասում միակ բնական սոսու պուրակը, որը պահպանվում է հինգույն ժամանակներից: Հազվագյուտ սոսի արևելյան տեսակի հետ այստեղ աճում են ուրիշ ռելիկտային տեսակներ՝ ընկուզենի, շրջահյուս հունական, բաղեղ և այլն (նկ. 106):



Նկ. 106 Սոսու ղուրակում դահաղավող բուսատեսակներից են արևելյան սոսին (1-2) և ցըահյուս հունականը (3)



Նկ. 107 Ախնաբաշի կենու ղուրակում դահղանվում է կենու եզակի ղուրակը

»» 67. Յայաստանի Յանրապետության արգելավայրերը



Նկ. 108 Արջատիւնու արգելավայրում դահղանվում է արջատիւնու դուրակը

**Ախնաբատի կենու դուրակ:** Կազմավորվել է 1958թ. և գբաղեցնում է 25 հա տարածության: Գտնվում է Յայաստանի հյուսիսի-արևելքում՝ Միափորի լեռնաշղթայի հարավարևմտյան լանջերին, Գետիկ գետի ավազանում, ծովի մակարդակից 1400-1800մ բարձրության վրա (նկ. 93): Պահպանության օբյեկտն է ռելիկտային կենու եզակի պուրակը: Յազվագյուտ կենի հատապտղային տեսակը բարձրարժեք բույս է՝ շնորհիվ չփառագույն բնափայտի և եթերայուղերով հարուստ գեղեցիկ, մուգ կանաչ գույնի նույր տերևիկների: Այս պուրակում ներ, մութ կիրճերի զաղիքափ լանջերին աճում են 20-30մ բարձրության, 280-450 տարեկան կենու գեղեցիկ, ուղղաձիգ բներով ծառերը (նկ. 107):

**Արջատիւնու արգելավայր:** Ստեղծվել է 1958թ., 4000 հա տարածության վրա: Գտնվում է Յյուսիսային Յայաստանում՝ Տավուշի մարզի Խաչաղբյուր գետի ավազանում, Իջևանի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին, 1500-1800մ բարձրության վրա (նկ. 93):

Պահպանության օբյեկտներն են արջատիւնու և կենու պուրակները: Պահպանվող տիսենի ծառանման, կենի հատապտղային, հաճարենի արևելյան տեսակների հետ մեկտեղ ենթանտառում աճում են հազվագյուտ պտերներ և այլ ռելիկտային տեսակներ (նկ. 108):

**Մրավարդենու արգելավայր:** Կազմավորվել է 1959թ., 1000 հա տարածության վրա: Գտնվում է Յյուսիսային Յայաստանում՝ Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների հյուսիսահայաց լանջերին, Կոտայքի, Գուգարքի մարզերում՝ 1900-2200մ բարձրության վրա (նկ. 93):

Պահպանության օբյեկտն են ռելիկտային մրտավարդ կովկասյան տեսակը և ուղեկցող այլ հազվագյուտ տեսակներ (նկ. 109):

**Որդան կարմրի արգելավայր:** Կազմավորվել է 1987թ., 200 հա տարածության վրա: Գտնվում է Արարատի գոգահովտում՝ Արգավանդ, Արազափ և Սովետական գյուղերի միջև (նկ. 93):

Պահպանության օբյեկտն է հալոֆիտանապատը՝ այստեղ աճող որդանխոտ ափամերձ տեսակի հացագիով, որի վրա ապրում է հայկական որդան կարմիրը: Արարատյան որդան կարմիրը էնդեմիկ միջատ է, որը գուեթե 3 հազարամյակ Յայկական



Նկ. 109 Մրավարդենու արգելավայրում դահղանվում է ռելիկտային մրտավարդ կովկասյան տեսակը



Նկ. 110 «Որդան կարմիր» արգելավայրում ղահղանվում է որդան կարմիր եզակի դողուպացիան (1), հանդիտում է հարավային եղեգն (2) և այլ բույսեր

Լեռնաշխարհի տարածքում օգտագործվել է կարմիր մերկանյութ՝ կարմին ստանալու համար: Այս ներկն ունի բարձր կայունություն (չի գունաթափվում մի քանի հազարամյակ), անվտանգ է և կարող է կիրառվել սննդի, թերև արդյունաբերության, պարֆյումերիայի և այլ ոլորտներում: Որդանից անջատված ճարպն օգտագործվում է թժկության մեջ՝ որպես հակաբորբոքային միջոց: Արարատյան դաշտի աղուտների յուրացման հետևանքով միջատի զբաղեցրած երթեմնի 11000 հա տարածքից այժմ պահպանվել է ընդամենը 217 հա: Որդան կարմիրն ընդգրկված է նախկին ԽՍՀՄ կարմիր գրքում: Միջատի քանակը տարեցտարի նվազում է:

Արարատյան հարթավայրի այս տարածքում, որպես բնության չափանմուշ, պահպանվել է հալոֆիտ բուսականության մի փոքր հողակտոր՝ մի քանի հազվագյուտ տեսակներով, ինչպիսիք են բորակաթուփիզ, կալախոտ կասպիականը, աղահասկիկ մերձկասպյանը, կարմրանը, հարավային եղեգնը և ուրիշներ (նկ. 110):

**Գոռավանի արգելավայր:** Ստեղծվել է 1958թ. և զբաղեցնում է 200 հա տարածություն: Գտնվում է Արարատյան գոգավորությունում՝ Վեդի գետի ձախ ափին, Ուրծի լեռնաշղթայի նախալեռներում՝ 1100-1200մ բարձրության վրա (նկ. 93):



Նկ. 111 Գոռավանի արգելավայրում ղահղանվում է գեղածնկիկ մատիտեղանմանը

»» 68. Անտառը որպես մոլորակի կարևորագույն բուսական պաշար

Պահպանության օբյեկտներն է ավազային անապատին յուրահատուկ կենդանական և բուսական աշխարհը: Ավազային բուսականությունը ներկայացված է Հայաստանի Կարմիր գրքում գրանցված մի շարք տեսակներով, ինչպիսիք են՝ գազը, անհետացող գեղածնկիկ մատիտեղանմանը, կնճիթաբերթիկ սապատափորը և ուրիշներ (նկ. 111):

## 68. Անտառը որպես մոլորակի կարևորագույն բուսական դաշտ

Անտառների նշանակությունը բնության մեջ և մարդու կյանքում: Ֆոտոսինթեզի շնորհիվ կանաչ բույսերը պայմանավորում են կյանքի գոյությունը երկրի վրա: Ֆոտոսինթեզը բարդ կենսաքիմիական գործընթաց է, որի ժամանակ բույսերը կանաչ գունանյութ քլորոֆիլի միջոցով արեգակնային ճառագայթման էներգիան փոխակերպում են ածխածնի երկօքսիդից և ջրից ստացված օրգանական միացությունների քիմիական էներգիայի: Այսպիսով՝ բույսերը հանդիսանում են օրգանական նյութի ստեղծողներ, սննդային շղթաների հիմք և ապահովում են այլ օրգանիզմների գոյությունը:

Մոտավոր հաշվարկներով ցամաքի և օվկիանոսի բույսերը տարեկան օգտագործում են ավելի քան 60 մլրդ տ ածխածին: Տարեկան ցամաքի բույսերը սինթեզում են մոտ 122 մլրդ տ, իսկ օվկիանոսի բուսականությունը՝ 55 մլրդ տ օրգանական նյութ: Ֆոտոսինթեզի արդյունքում առաջացած օրգանական նյութերի էներգիայի քանակն ավելի քան 100 անգամ գերազանցում է աշխարհի էլեկտրակայայնների կողմից արտադրվող էներգիային: Բացի այդ, ֆոտոսինթեզի հետ է կապված նաև մթնոլորտի հագեցումը թթվածնով, որն առաջանում է բուսական բջջում արեգակնային ճառագայթների ազդեցության տակ ջրի քայլայնան արդյունքում: Մեկ միջին չափի ծառը տալիս է այնքան թթվածին, որքան անհրաժեշտ է երեք մարդու շնչառության համար:

Բույսերը սինթեզել են հսկայական քանակությամբ օրգանական նյութ, որի մի մասն էլ պահպանվել է մինչև մեր օրերը նավթի պաշարների, բնական գազի, քարածիխ, տորֆի ձևով: Բացի ածխածնից, ջրածնից և թթվածնից օրգանական նյութերի կազմի մեջ մտնում են նաև ազոտի, ֆոսֆորի, ծծմբի և այլ տարրերի ատոմներ, որոնք հողից կլանում են բույսերը և որոնք ընդգրկվում են բարդ քիմիական գործընթացների շրջապտույտի մեջ: Կենդանիների և բույսերի մասից հետո նրանց մարմինները կազմող օրգանական նյութերը քայլայվում են մինչև պարզագույն անօրգանական մոլեկուլներ՝ հիմնականում մանրների գործունեության շնորհիվ: Դրանով է հիմնականում ապահովվում հողի բերրիությունը:

Անտառները նաև բազմաթիվ կենդանիների և թռչունների գոյության միջավայր են, մեղմացնում են կլիմայական պայմանները, փոքրացնում են ջրի մակերեսային հոսքը, ստեղծում են նպաստավոր միկրոկլիմա գյուղատնտեսական կուլտուրաների համար, ամրացնում են ավազները և խոչընդոտում են ջրերի աղտոտմանը (նկ. 112):

Մարդու համար անտառը սննդի, դեղամիջոցների, տեխնիկական հումքի, շինարարական նյութերի աղբյուր է: Անտառները դրական են ազդում մարդու հոգեվիճակի վրա, մեծ նշանակության ունենալի հանգստի և առողջության վերականգնման համար:

Մոլորակի անտառային դաշտաների կրծառումը և դրա հետևանքները: Երկրի բուսական պաշարների շարքում ամենակարևոր դերը պատկանում է անտառներին: Մարդու տնտեսական գործունեության հետևանքով ամենաշատը տուժեցին անտառները և բոլորից շուտ պահպանության առարկա դարձան:

Բնական և մարդու կողմից տնկված անտառները գրավում են մոտավորապես 40 մլն կմ<sup>2</sup> տարածք կամ ցամաքի մակերեսի մոտ 1/3-ը: Մոլորակի անտառների մոտավորապես 30%-ը գրավում են փշտերևային անտառները, իսկ մնացածը՝ տերևայինները (նկ. 113):



Նկ. 112 Անտառների բազմաթիվ կենդանիների և թշումների գոյության միջավայր են, մեղմացնում են կլիման, փորացնում են ջրի մակերեսային հոսքը, ստեղծում են նորաստավոր միկրոկլիմա գյուղատնտեսական կուտուրաների համար, ամրացնում են ավազները և խոշոշում են ջրերի աղտօնանը

Անտառների ոչնչացումն սկսվել է դեռ շատ դարեր առաջ և շարունակվում է մինչև մեր օրերը: Այդ ընթացքում ոչնչացվել է Երկիր մոլորակը պատող անտառների մոտ 2/3 մասը: Անտառային պաշարները տուժել են արդյունաբերական հեղափոխության հետ: Այդ ընթացքում անտառների 500 լին հա մակերեսը ոչնչացվել մարդու կողմից և վերածվել է անկենդան անապատների (Նկ. 114): Անտառների ժամանակակից բաշխվածությունը ըստ մայրցամաքների բերված է նկար 113-ում:

Առավել արագ հատվում են արևադարձային անտառները: Նրանց մակերեսի կրճատման արագությունը կազմում է 26 հա մեկ րոպեում, և մտավախություն կա, որ դրանք 25 տարի հետո կվերանան:

Խոնավ արևադարձային անտառի հատված տարածքները չեն վերականգնվում, իսկ նրանց տեղում ձևավորվում են թիզ արդյունավետ համակեցություններ, և ուժեղ էրոզիայի ռեպրում սկսվում է անապատացման գործընթացը (Նկ. 115):

Անտառահատումների հետ կապված կրճատվում է գետերի ջրատարությունը, իջնում է գրունտային ջրերի մակարդակը, ցամաքում են լճերը, ուժեղանում է հողերի էրոզիան, կլիման դառնում է չորային և բարեխառն, հաճախ առաջանում են երաշտ և փոշե փոթորիկներ, աճում է ջրհեղեղների հաճախությունը և հզորությունը:

»» 68. Անտառը որպես մոլորակի կարևորագույն բուսական պաշար



Նկ. 113 Փշատեսային և տերևային անտառների բաշխվածությունը ըստ աշխարհամասերի

Հայաստանի Հանրապետության անտառների վիճակը և դադարանությունը: Հայաստանը համարվում է սակավանտառ երկիր: Կլիմայական պայմանների փոփոխությունների հետևանքով փոփոխվել է հիմնական անտառ կազմող ծառատեսակների կազմը, նրանց տարածման արեալը և հետևաբար ընդհանուր անտառապատվածության աստիճանը: Հայ գիտնականների բազմաթիվ տվյալների համաձայն՝ Հայաստանի տարածքի 35-40% ծածկված է եղել անտառներով: Հայաստանի ներկա սակավանտառությունը պայմանավորված է կլիմայական և հիմնականում մարդագործությունների բացասական ազդեցությամբ (Ակ. 116):

Հայաստանի անտառային ֆոնդը 1993թ. տվյալներով կազմում է ընդամենը տարածքի 11,2%, որը մոտավորապես կազմում է 334,1 հազար հա: Անտառները տարածված են անհամաչափ, նրանց մոտ 62%-ը գտնվում են Տավուշի, Լոռի և մարզերում, 36%-ը՝ Սյունիքի մարզում, մնացած 2%-ը սփռված է Հայաստանի մյուս մարզերով: Ընդհանուր առմամբ անտառային համակեցությունները տարածված են նախալեռնային, ստորին և միջին լեռնային գոտիներում: Անտառների ստորին սահմանը անցնում է ծովի նակերևույթից 500 մ բարձրության վրա (Տավուշի մարզ), իսկ վերին սահմանը հասնում է մինչև 2300-2400 մ բարձրությունները:

Հայաստանի անտառներում աճում են մոտ 200 տեսակի ծառեր և թփեր: Այստեղ անտառները հիմնականում լայնատերև են, որոնցում գերազանցում են կաղնին, բոխին, հաճարենին: Ասեղնատերևավոր տեսակներից տարածված են հիմնականում գիհին և սոճին: Տարածված են նաև հացի, թխկի, փոշնի, կեռասենի, տանձենի, խնձորենի տեսակները, որոնք, որպես ուղեկցող, մասնակցում են հիմնական ծառատեսակների ծառութների ձևավորմանը:

Հայաստանի անկախացումից հետո էներգետիկ և տնտեսական ճգնաժամների պայմաններում Հայաստանի անտառները մեծ կորուստներ կրեցին: Անցած 10 տարիների ընթացքում հատվել է ավելի քան 6-7 մլն խորանարդ մետր անտառանյութ: Զկարգավորված հատումների պատճառով մեծ վնաս է հասցվել անտառային գենոֆոնին և կենսաբազմազանությանը:

Վերջին ժամանակներում կլիմայի ընդհանուր տաքացման, ինչպես նաև անտառների արհեստական նոսրացման հետևանքով ի հայտ են եկել բազմաթիվ վնասակար գործոններ, որոնց թվուն



Նկ. 114 Անտառների անխնա հատման հետևանքները




Նկ. 115 Խոնավ արևադարձային անտառի հատված տարածմանը չեն վերականգնվում, և ուժեղ էրոզիայի դեղում կարող է սկսվել անաղատացման գործընթացը

»» 68. Անտառը որպես մոլորակի կարևորագույն բուսական պաշար

առավել վտանգավոր են հիվանդությունների հարուցիչները, կրծողները և անտառների հրդեհների ավելացումը: Օրինակ՝ հրդեհների դեպքեր նկատվում են ոչ միայն ամռանն ու աշնանը, այլև արդեն գարնանն ու ձմռանը:

Հայաստանում անտառների պահպանության նպատակով մշակվել և 1994թ. ընդունվել է անտառային օրենսգիրքը: Այս օրենսգիրքը պետք է նպաստի անտառների գիտականորեն հիմնավորված պահպանությանը, պաշտպանությանը, վերարտադրությանը և արդյունավետ օգտագործմանը՝ ելնելով անտառների էկոլոգիական, սոցիալական և տնտեսական նշանակու-



Նկ. 116 Հայաստանի Հանրապետության տարածքի ամրաշղագործվածությունը

թյունից: Ըստ այս օրենսագրքի՝ անտառները և անտառային տնտեսության կարիքների համար հատկացված հողերը կազմում են ՀՀ անտառային ֆոնդը: ՀՀ անտառային օրենսգրքի հիմնական խնդիրներն են՝ անտառի օգտակար բնական հատկությունների պահպանումը, վերարտադրությունն ու արտադրողականության բարձրացումը, անտառային պաշարների բազմակողմանի և արդյունավետ օգտագործումը: Բացի նշվածից, անտառային օրենսգրքում կարգավորվում են մի շարք կարևոր հարցեր: Դրանցից են անտառների դասակարգումը Հայաստանի Հանրապետությունում, հատման տարիքի որոշումը, անտառօգտագործման կարգավորումը և այլն: Ըստ ՀՀ անտառային օրենսգրքի՝ Հայաստանի անտառները դասված են մի քանի խմբի՝ պաշտպանական, կանաչ գոտիներ, կուրորտային, արգելոցային, գետամերձ և ճանապարհամերձ արգելված գոտիներ և երկաթուղիների պաշտպանիչ անտառային շերտեր:

## Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ է կենսաբանական բազմազանությունը:
  2. Ո՞վ է առաջին անգամ կիրառել «կենսաբանական բազմազանություն» բառակապակցությունը:
  3. Թվեք և նկարագրեք կենսաբազմազանության մակարդակները:
  4. Ինչպիսի՞ն է տեսակների բաշխվածությունը:
  5. Նկարագրեք ՀՀ կենսաբազմազանությունը:
  6. Որո՞նք են տեսակների անհետացման պատճառները: Նկարագրեք մարդածին գործոնները:
  7. Տեսակների անհետացման ինչպիսի՞ բնական գործոններ են ձեզ հայտնի:
  8. Ի՞նչ է Կարմիր գիրքը և ի՞նչ նշանակություն ունի տեսակների պահպանության գործում:
  9. Նկարագրեք Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Կարմիր գիրքը:
  10. Որո՞նք են ՀՀ Կարմիր գրքերը:
  11. Ե՞րբ է լուս տեսել Քայաստանի բույսերի Կարմիր գիրքը: Նկարագրեք այն:
  12. Ե՞րբ է լուս տեսել Քայաստանի կենդանիների Կարմիր գիրքը: Նկարագրեք այն:
  13. Որո՞նք են հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանության ռազմավարության հիմնական տարրերը: Նկարագրեք:
  14. Ի՞նչ նշանակություն ունի կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջազգային համագործակցությունը :
  15. Ի՞նչ նշանակություն ունի CITES-ի կոնվենցիան:
  16. Թվեք ՀՀ օրենքները, որոնք վերաբերում են կենսաբազմազանության պահպանությանը:
  17. Ինչպե՞ս է իրականացվում հազվագյուտ տեսակների տարածքային պահպանությունը:
  18. Ինչպե՞ս են ստեղծվում պահպանության հատուկ տարածքները:
  19. Տվյալ պահպանության հատուկ տարածքների դասակարգումը:
  20. Քայաստանի հատուկ պահպանվող տարածքները ո՞ր դասերին են պատկանում:
  21. Որքա՞ն տարածք են զբաղեցնում հատուկ պահպանվող տարածքներն աշխարհում:
  22. Որո՞նք են ՀՀ արգելոցները: Նկարագրեք:
  23. Որո՞նք են ՀՀ ազգային պարկերը: Նկարագրեք:
  24. Որո՞նք են ՀՀ արգելավայրերը: Նկարագրեք:
  25. Ի՞նչ նշանակություն ունեն անտառները բնության մեջ և մարդու կյանքում:
  26. Ինչպիսի՞ն են մոլորակի անտառային պաշարները:
  27. Ինչո՞ւ են կրծատվում մոլորակի անտառային պաշարները, և ի՞նչ հետևանքներ կարող են առաջանալ:
  28. Նկարագրեք ՀՀ անտառային պաշարները:
  29. Ինչպե՞ս է իրականացվում անտառների պահպանությունը ՀՀ-ում:

## ԳԼՈՒԽ 10. ՇՐՋԱՎԱ ՄԻԶԱՎԱՅՐԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

### 69. Մարդու առողջության էկոլոգիական աստեկաները

Միջավայրի վիճակը և մարդու առողջությունը: Գլոբալ էկոլոգիական ճգնաժամը, որն սկսվել է 20-րդ դարի վերջում, բերեց մարդու գոյության միջավայրի խիստ վատքարացմանը: Օդի, ջրի, հողի և սննդամբերների աղտոտումը, էկոլոգամագնիսական ճառագայթների, աղմուկի ազդեցությունը, մարդու՝ բնության հետ կապերի ծևափոխությունը և սահմանափակումը բացասաբար են ազդում մարդու առողջության վրա:

Էկոլոգիական տեսանկյունից հիվանդությունը դիտվում է որպես օրգանիզմի անբավարար աղապտացիա միջավայրի փոփոխությունների նկատմամբ: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ առողջությունը միայն հիվանդության բացակայությունը չէ, այլ լիակատար ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական բարեկեցության վիճակը: Առողջության կորստի քանակական ցուցանիշները արտահայտվում են հիվանդացության, ծննդիության, մահացության, կյանքի տևողության, ֆիզիկական զարգացածության և այլ ցուցանիշներով: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարդկանց առողջական վիճակի միայն 20-25%-ը է կախված անհատի գենետիկական չափանիշներից, իսկ 75-80%-ը՝ կյանքի սոցիալ-տնտեսական պայմաններից (կենսակերպ, միջավայրի վիճակ, առողջապահության մակարդակ և այլն):

Հիվանդացության և մահացության մակարդակների կախվածությունը բնական միջավայրի վիճակից դիտվում է ինչպես առանձին պետությունների, այնպես էլ տարբեր շրջանների օրինակներով:

Միջավայրի առողջությունը: Բնական միջավայրի բարձր որակի պահպանությանը ուղղված հոգատարությունը իինք է դնում մարդու առողջության բարձր մակարդակի ապահովման համար: Այսպիսով, բնության պահպանությունը դիտվում է ոչ միայն որպես կենդանի բնության նկատմամբ մարդասիրական մոտեցումների համակարգ, այլ նաև որպես մարդու առողջությունը և կենսունակությունը ապահովելու անհրաժեշտություն:

Շրջակա միջավայրի առողջության առավել ապահով ինդիկատոր է կենսաբանական բազմազանության վիճակը տեղային և գլոբալ մակարդակներով: Պատահական չէ, որ 1992 թ. ՈՒԽ դե ժանեյրոյում կայացած ՄԱԿ-ի՝ Շրջակա միջավայրի և զարգացման հարցերով երկրորդ կոնֆերանսի արդյունքում ընդունվեց երկու մինյանց լրացնող փաստաթուղթ՝ առաջինը՝ «Բնության և հասարակության կայուն զարգացման հիմնական դրույթներ», և երկրորդը՝ «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիա: Հավանաբար, կենսաբազմազանության վիճակը հիմնականում պայմանավորում և թույլ է տալիս գնահատել միջավայրի առողջությունը, իսկ առողջ միջավայրը ապահովում է էկոլոգիական անվտանգությունը՝ դաշնալով հասարակության և բնության կայուն զարգացման էկոլոգիական բաղադրիչը: Կայուն զարգացումը մարդկության այժմյան պահանջնների ճիշտ բավարարումն է, որը չի սահմանափակի ապագա սերնդի երկարատև գոյատևման հնարավորությունները երկրի վրա:

### 70. Միջավայրի ֆիմիական աղտոտումը

Տարբեր հիվանդություններ առաջացնող նյութերի եւ գործոնների հիմնական խմբերը: Նյութերը, որոնք բացասաբար են ազդում մարդու օրգանիզմի վրա և առաջ են բերում զանազան հիվանդություններ, սովորաբար միավորվում են մի քանի խմբերում: Դրանցից կարևորագույններն են.

## »» 70. Միջավայրի քիմիական աղտոտումը

- Կանցերոգենները, որոնք առաջացնում են չարորակ նորագոյացություններ: Ներկայում հայտնի է նման նյութերի մոտ 500 տեսակ: Առավել ուժեղներին են դասվում բենզապիրենը, ուլտրամանուշակագույն ճառագայթները, ռենտգենյան ճառագայթները, էպօքսիդային խեժերը, նիտրիտները, նիտրոզամինները, ասբեստը և այլն:
- Մուտագենները առաջ են բերում քրոմոսոմների կառուցվածքի և քանակի փոփոխություններ: Դրանցից են՝ ռենտգենյան ճառագայթները, գամմա-ճառագայթները, նեյտրոնները, բենզապիրենը, կոլխիցինը, որոշ վիրուսներ և այլն:
- Տեռատոգենները առաջ են բերում անհատական զարգացման արատներ, այլանդակություններ: Հաճախ որպես տեռատոգեններ հանդիսանում են գալիս մուտագենները, ինչպես նաև այնպիսի աղտոտիչներ, ինչպիսին են պեստիցիդները, պարարտանյութերը, աղմուկը և այլն:

Մարդու տնտեսական գործունեության արդյունքում առաջացել են նոր, անցյալում անհայտ հիվանդություններ: Այդպիսի հիվանդությունները սովորաբար դասվում են առանձին խմբի մեջ, որը կոչվում է տեխնածին հիվանդությունների խումբ: Դրանց են վերաբերում այն հիվանդությունները, որոնք առաջանում են կապարով, կադմիումով, սնդիկի և այլ միացություններով թունավորման և այլ ֆիզիկական գործոնների ազդեցության հետևանքով:

Առողջության համար վնասակար օրգանական նյութեր: Շատ օրգանական միացություններ դասվում են թունավոր և գերկայուն միացությունների խմբին: Դրանցից առավել վտանգավոր են հալոգենացված ածխաջրածինները և պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինները (ՊԱԱ):

Հալոգենացված ածխաջրածիններ: Այս խմբին են դասվում այն օրգանական միացությունները, որոնց մոլեկուլներում ջրածնի մեկ կամ մի քանի ատոմներ տեղակալված են քլորի, բրոմի, յոդի կամ ֆլորի ատոմներով: Դրանցից շատերը շատ կայուն են, հեշտ կլանվում են օրգանիզմների կողմից՝ կուտակվելով նրանց հյուսվածքներում և օրգաններում: Այդպիսի միացություններ են պոլիվինիլբրոդը, պոլիբրուրացված բիֆենոլները, դիբրոդիֆենիլբրուրեանը (ԴԲՏ) և այլն: Այս խմբին են նաև դասվում խիստ թունավոր միացություններ՝ դիօքսինները:

Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածիններ (ՊԱԱ): Առաջանում են հիմնականում օրգանական նյութերի ոչ լրիվ այրման արդյունքում: Առավել լայն տարածված են բենզոլը և բենզապիրենը, որոնք համարվում են ուժեղ կանցերոգեններ:

Առողջության համար վնասակար անօրգանական միացություններ:

**Ծանր մետաղներ:** Մետաղները, որոնց ատոմական զանգվածը մեծ է, քան երկաթինը, համարվում են ծանր մետաղներ: Դրանցից շատերը, օրինակ՝ ցինկը, պղինձը, մանգանը, երկաթը և այլն, անհրաժեշտ են օրգանիզմների կենսագործունեության համար: Միաժամանակ ծանր մետաղներից շատերը թունավոր են օրգանիզմի համար: Նրանք ընդունակ են հեշտ և ամուր կապեր առաջացնել սպիտակուցների մոլեկուլների հետ, ինչը բերում է վերջիններիս ֆունկցիաների խախտնան: Առավել վտանգավոր են կապարը, կադմիումը, սնդիկը և այլ մետաղներ: Միջավայրում ծանր մետաղների կուտակման հիմնական աղբյուր են հանդիսանում վառելանյութի այրումը, մասնավորապես կապարի միացություններ պարունակող բենզինի պեստիցիդները, որոշ օրգանական միացություններ, արտադրական թափոններ, ծխախոտի ծուխը և այլն: Կենցաղում պետք է զգուշորեն վարվել սնդիկային ջերամաշափերի հետ:

## 71. Միջավայրի կենսաբանական աղտոտումը

Ինֆեկցիոն հիվանդություններ: Բացի քիմիական աղտոտիչներից, բնական միջավայրում հանդիպում են նաև կենսաբանական աղտոտիչներ, որոնք նարդու մոտ առաջ են բերում զանազան հիվանդություններ: Դրանք հիվանդաբեր մանրէներն են, վիրուսները, հելմինտները և նախակենդանիները, որոնք կարող են գտնվել մթնոլորտում, ջրում, հողում, կենդանիների և մարդկանց օրգանիզմներում (նկ. 117):



Նկ. 117 Մարդու տարածված վիրուսային հիվանդություններ են գրիպը (1), կարմրախածը (2), հերպեսը (3), խոզուկը (4), գորտնուկը (5) և սնկային՝ զանազան միկոզները (6)


Առավել վտանգավոր են ինֆեկցիոն հիվանդությունների հարուցիչները: Դաճախ հիվանդության աղբյուր է ծառայում հողը, որում միշտ ապրում և բազմանում են փայտացման, բոտուլիզմի, սնկային և այլ հիվանդությունների հարուցիչներ: Դիվանդաբեր մանրէները հողից կարող են անցնել գրունտային ջրեր և համաժարակների պատճառ դառնալ: Այդ տեսակետից առավել աղտոտված են լինում ջրի բաց աղբյուրները՝ գետերը, լճերը և ձափիճները:

Դատուկ խումբ են կազմում վարակիչ այն հիվանդությունները, որոնք փոխանցվում են հիվանդների հետ սերտ շփումների դեպքում: Այդպիսի հիվանդություններ են ԶԻՍՅ-ը, սիֆիլիսը, հոնորեան, տրախոնման, սիբիրյան խոցը և այլն (նկ. 118):

Դիվանդաբեր օրգանիզմները բնության մեջ: Մարդը, ներխուժելով բնություն, հաճախ խախտում է դիվանդաբեր օրգանիզմների գոյության բնական պայմանները:

Մարդիկ և տնային կենդանիները կարող են վարակվել բնական-օջախային հիվանդություններով՝ հայտնվելով հիվանդության բնական օջախի տարածքում: Նման հիվանդություններ են տուլարեմիան, մալարիան, կուրու հիվանդությունը և այլն:

»» 72. Միջավայրի աղտոտումն աղմուկով



Նկ. 118 Մարդու վտանգավոր հիմնադրույթան՝ ԶԻՎՀ-ի հարուցիչ՝ ՄիԱՎ-ի վիրուսը



Նկ. 119. Միջամաները, սպերը և այլ կենդանիներ հանդիսանում են բազմաթիվ հիվանդությունների հարուցիչների փոխանցողներ

Բնական-օջախային հիվանդությունների յուրահատկությունն այն է, որ դրանց հարուցիչները բնության մեջ գոյություն ունեն խիստ որոշակի տարածքում և կապված չեն մարդու կամ տնային կենդանիների հետ: Դրանցից մի քանիսը մակարութում են վայրի կենդանիների օրգանիզմներում: Դարուցիչների փոխանցումը մի կենդանուց մյուսին, ապա՝ մարդուն կատարվում է հիմնականում փոխանցողների միջոցով: Դրանք հիմնականում միջատներն ու տզերն են (Նկ. 119):

## 72. Միջավայրի աղտոտումն աղմուկով

**Զայնը և նրա աղբյուրները:** Մարդը միշտ ապրել և ապրում է ձայների և աղմուկի աշխարհում: Զայն են անվանում մեխանիկական այն տատանումները, որոնք ունեն 16-20 հազար հց տատանման հաճախություն և ընկալվում են մարդու լսողական վերլուծիչով: Աղմուկն անկանոն միահյուսված բարձր ձայների ամբողջությունն է:

Բնության մեջ բարձր ձայներ հազվադեպ են հանդիպում, իսկ աղմուկը համեմատաբար թույլ է և կարծատ:

Աղմուկի մակարդակը չափվում է ձայնային ճնշումն արտահայտող միավորներով, որոնք կոչվում են դեցիբելներ (ԴԲ): Աղմուկի 20-30 դեցիբելանոց մակարդակը գրեթե անվնաս է մարդու համար. դա բնական աղմկային ֆոնն է: 130 դեցիբելից բարձր ձայնը մարդու մոտ առաջացնում է ցավային զգացումներ, իսկ 150 դեցիբելի դեպքում դառնում է անդիմանալի (Նկ. 120):

Շատ բարձր է արդյունաբերական կենտրոնների և կենցաղային տեխնիկայի աղմուկի մակարդակը:


**Զայների ազդեցությունը մարդու վրա:** Յուրաքանչյուր մարդ աղմուկն ընկալում է տարբեր կերպ: Շատ բան կախված է տարիքից, խառնվածքից, առողջության վիճակից: Բարձր աղմուկի անընդհատ ազդեցությունը կարող է ոչ միայն բացասաբար ազդել լսողության վրա, այլ նաև առաջացնել գլխապտույտ, գլխացավեր, արագ հոգնածություն:

Ժամանակակից աղմկալի երաժշտությունը ևս վատացնում է լսողությունը և առաջ է բերում նյարդային հիվանդություններ:

Ժամանակակից բժշկությունը խոսում է «աղմկային հիվանդության» տարածման մասին, որը զարգանում է բարձր աղմուկի երկարատև ազդեցության հետևանքով և ուղեկցվում է լսողության և նյարդային համակարգի խանգարմամբ:



Նկ. 120. 130 դեղիբելից բարձր ճայնը մարդու մոտ առաջացնում է ցավային զգացումներ



Նկ. 121. Ներկայումս սննդամթերի արդյունաբերության մեջ կիրավող հավելումների թիվը հարյուրից ավելի է

Աղմուկը նկատելի վնաս է հասցնում մարդու առողջությանը, բայց միաժամանակ բացարձակ լրությունը հոգեպես ծնշում է մարդուն: Գիտնականները հաստատել են, որ որոշակի հաճախության ցածր ձայները օգտակար են, անգամ խթանում են մտավոր գործունեությունը:

### **73. ԱԱԾամթերթի աղտումը**

**Նիւթատներ:** Նիւթրատների հիմնական աղբյուրը հանքային NO<sup>3</sup> իոն պարունակող պարարտանյութերն են: Նիւթրատների կուտակումը արմատապտույներում, բանջարեղենում, ջրում սովորաբար կապված է պարարտանյութերի ոչ ճիշտ կիրառման հետ: Նիւթրատները համարյա թունավոր չեն, սակայն ընկնելով մարդու օրգանիզմ՝ բակտերիաների ազդեցությամբ վերածվում են նիւթրիտների NO<sub>2</sub>: Վերջիններս կարող են առաջացնել նիւթրոզամիններ, որոնք գնահատվում են որպես ուժեղ կանցերոգեններ: Նիւթրոզամինների մեծ քանակություններ հայտնաբերվել են ծխախոտի ծխում: Նիւթրատների աղբյուր են հանդիսանում նաև որոշ սննդային հավելումներ:

ՍԱՆԴԱՅԻՆ հավելումներ: ՍԱՆԴԱՅԻՆ հավելումներն առավել լայն կիրառություն են գտել քաղցրավենիքի և մսամթերքի արտադրություններում: Դրանցից են բազմաթիվ դեղամիջոցներ, կոնսերվանտներ, ներկանյութեր, օրգանական և հանքային նյութեր, որոնք նպաստում են մթերքի արտաքին տեսքի լավացմանը, պահպանման ժամկետների երկարացմանը և այլն (նկ. 121):

Այժմ արտադրության մեջ օգտագործվում են մոտ հարյուր հավելումներ: Դրանց մեջ նաև, իհարկե, անվնաս են, սակայն մյուսների ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա կամ վատ է ուսումնահրված, կամ էլ վտանգավոր է արդութեան համար:

Կենդանիների կերպարագիր հավելումներ:

Կենդանաբուծության ժամանակակից եղանակները, որոնք ուղղված են ընդայնելու

#### »» 74. Լանդշաֆտը որպես առողջության գործոն

մսամթերքի արտադրության ծավալները և բազմազանությունը, նույնպես կապված են բազմաթիվ կերային հավելումների և դեղանյութերի կիրառման հետ: Այս դեպքում հավելումները նպաստում են կերերի լավ յուրացմանը և կենդանիների արդյունավետության բարձրացմանը:

Կենդանաբուծության մեջ կիրառվում է դեղամիջոցների մոտ 300 անուն, որոնցից շատերը կարող են կուտակվել մսի մեջ, ապա անցնել մարդու օրգանիզմ (նկ. 122):

Ինտենսիվ կենդանաբուծության մեջ լայն կիրառվում են նաև էսթրոգենները (իգական սեռական հորմոնները) և թիրեոստատիկները, որոնք նպաստում են մկանային համակարգի արագ աճին:

Հաստատված է, որ նման նյութերը, ընկնելով մարդու օրգանիզմ, իջեցնում են դինարդողականությունը տարբեր հիվանդությունների նկատմամբ, իսկ էսթրոգեններում հայտնաբերված են նաև կանցերոգեն և տեռատոգեն ազդեցություններ:

Բացի այդ, սննդամթերքները, որոնք ստացվում են ժամանակակից ինդուստրիալ եղանակներով, հանդիսանում են մարդկանց ալերգիկ հիվանդությունների առաջացման պատճառներից մեկը:

#### 74. Լանդշաֆտը որպես առողջության գործոն

Լանդշաֆտը և մարդու հոգեբանական վիճակը: Հաստատված է, որ շրջապատող լանդշաֆտը կարող է տարբեր ազդեցություններ ունենալ մարդու հոգեհոգական վիճակի վրա՝ խթանելով կենսական լարվածությունը և հանգստացնելով նյարդային համակարգը: Բուսական կենսացենոզները, հատկապես անտառները, ունեն մեծ առողջարար ազդեցություն:

Հավանական է, քաղաքաբնակների կյանքի կարծ տևողությունը գյուղաբնակների համեմատությամբ, պայմանավորված է նաև քաղաքի բնապատկերների սակավությամբ: Մարդու տրամադրությունը, աշխատունակությունը, ակտիվությունը և առողջությունը կախված են նրանից, թե ինչ պայմաններում է ապրում նա, ինչպիսին է առաստաղների բարձրությունը նրա բնակարանում և որքանով են ձայնամեկուսիչ տան պատերը, ինչպես է մարդը հասնում իր աշխատանքի վայրը, ուն հետ է նա ընդհարվում և ինչպես են շրջապատի մարդիկ վերաբերվում նրան:



Նկ. 122. Կենդանաբուծության մեջ կիրառվող դեղամիջոցներից շատերը կարող են կուտակվել մսի մեջ, ապա անցնել մարդու օրգանիզմ



Նկ. 123. Աղմկային աղտոտումը ժամանակակից բաղաների լուրջ հիմնախնդիրներից է



Նկ. 124. Քաղաքներում անհրաժեշտ է մեծացնել կանաչապատճենագործությունը

Քաղաքի աղտոտված օդը, թունավորելով արյունը ածխածնի օքսիդով, չժխող մարդու վրա թողնում է նույն վնասակար ազդեցությունը, ինչ օրվա ընթացքում մեկ տուփ ծխախոտը՝ ծխող մարդու:

Ժամանակակից քաղաքներում լուրջ բացասական գործոն է հանդիսանում աղմկային աղտոտումը (նկ. 123):

Յաշվի առնելով կանաչ տարածքների բարենպաստ ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ անհրաժեշտ է մեծացնել կանաչապատճենագործությունը ինչպես քաղաքի շուրջը, այնպես էլ նրա ներսում (նկ. 124):

»» 74. Լանդշաֆտը որպես առողջության գործոն

## Հարցեր կրկնության համար

1. Ինչպե՞ս է մարդու առողջությունը կապված միջավայրի վիճակի հետ:
2. Ինչո՞ւ է կենսաբազմազանության վիճակը հանդիսանում միջավայրի առողջության ինդիկատոր:
3. Որո՞նք են կանցերոգեն նյութերը: Բերե՛ք օրինակներ:
4. Որո՞նք են մուտագեն նյութերը: Բերե՛ք օրինակներ:
5. Որո՞նք են տեռատոգեն նյութերը: Բերե՛ք օրինակներ:
6. Առողջության համար վնասակար օրգանական նյութերի ինչպիսի՝ խմբեր գիտեք: Նկարագրե՛ք:
7. Առողջության համար վնասակար անօրգանական նյութերի ինչպիսի՝ խմբեր գիտեք: Նկարագրե՛ք:
8. Ինչպիսի՝ ինֆեկցիոն հիվանդություններ գիտեք:
9. Բնության մեջ կա՞ն արդյոք հիվանդաբեր օրգանիզմներ:
10. Ի՞նչ է ձայնը: Ի՞նչ միավորներով է չափվում այն:
11. Ի՞նչ է աղմուկը: Ի՞նչ միավորներով է չափվում այն:
12. Ինչպե՞ս են ազդում ձայները մարդու վրա:
13. Սննդամբերքի ի՞նչ աղտոտիչներ գիտեք: Նկարագրե՛ք:
14. Ինչպե՞ս է կապված մարդու առողջությունը լանդշաֆտի հետ:

## Բացատրական բառարան

- Ա -

Աքիոնիկ (ոչ կենսածին) գործոն - անկենդան բնության բոլոր բաղադրամասերն են՝ լույսը, ջերմաստիճանը, խոնավությունը, ջրի, հողի, մթնոլորտի քիմիական բաղադրությունը, ճառագայթման ֆոնը և այլն:

Ագրոէկոհամակարգ – օյուղատնտեսական արտադրանք ստանալու համար մարդու կողմից ստեղծված և կանոնավոր հսկվող կենսահամակարգ է:

Ազոնֆիլսացիա-մթնոլորտային մոլեկուլային ազոտի քիմիական փոխակերպումն է նիտրատների կամ ամոնիակի, որոնք կարող են օգտագործվել բույսերի կողմից՝ ամինաթթուներ և ազոտ պարունակող այլ միացություններ սինթեզելու համար:

Աերոբներ-օրգանիզմներ, որոնց կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիան ստացվում է ազատ թթվածնի մասնակցությամբ, օրգանական նյութերի օքսիդացման արդյունքում:

Ալլենի կանոն – ցուրտ պայմաններում ապրող տաքարյուն կենդանիների վերջույթները կարծ են, իսկ մարմինը՝ ավելի փոքր և հավաք:

Անարիոգ (թարմված կյանք) - գործընթաց է, որի ժամանակ խիստ նվազում է օրգանիզմների նյութափոխանակության ուժգնությունը, էներգիան ծախսվում է խիստ տնտեսաբար, և օրգանիզմները կտրուկ բարձրացնում են իրենց դիմացկունությունը:

Անաղատացում – համանուրակային էկոլոգիական հիմնախնդիր է, ներառում է շրջակա միջավայրում ընթացող անցանկալի և աղետաբեր գործընթացների և դրանց հետևանքների ամբողջությունը:

Անհետացող տեսակ - տեսակ, որի ընդհանուր թվաքանակը նվազել է մինչև համեմատաբար ցածր մակարդակ. նման պայմաններում տեսակը կարող է անհետանալ:

Աղոտում - մարդու առողջության, կենդանիների և բույսերի, ինչպես նաև էկոհամակարգերի գործունեության համար վնասակար պինդ, հեղուկ, գազային նյութերի, միկրոօրգանիզմների և էներգիայի ներմուծումն է շրջակա միջավայր:

Անաերոբներ - օրգանիզմներ, որոնք ապրում են ազատ թթվածնի բացակայության պայմաններում և կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիան ստանում են առանց ազատ թթվածնի մասնակցության, օրգանական նյութերի օքսիդացման հաշվին:

Ավտոռոֆ - օրգանիզմ, որն օգտագործելով Արեգակի էներգիան (ֆոտոսինթեզ) կամ քիմիական ռեակցիաներից ազատված էներգիան (քեմոսինթեզ)՝ անօրգանական միացություններից սինթեզում է օրգանական նյութեր:

- Բ -

Բերգմանի եղանակային կանոն – տեսակի սահմաններում կամ մոտ տեսակների միատարր խմբերում մարմնի խոշոր չափեր ունեցող կենդանիներն զբաղեցնում են իրենց տարածքի առավել ցուրտ մարգերը:

Բիոտոլոգ - կենսացենոզի կողմից զբաղեցված, ըստ միջավայրի ոչ կենսածին գործոնների հարաբերականորեն միատարր տարածքն է:

Բիոնիկ (կենսածին) գործոն - կենդանի օրգանիզմների՝ միմյանց վրա ազդեցության բոլոր հնարավոր ձևերն են: Կենդանի օրգանիզմների ամբողջությունն է, որն իր կենսագործունեությամբ ազդում է այլ օրգանիզմների վրա:

Բուսածին գործոն – օրգանիզմների և շրջակա միջավայրի վրա բույսերի ունեցած ազդեցությունն է:

**- Գ -**

**Գառողեիկանոն – էկոլոգիապես մոտ տեսակների մրցակցային բացառումը կարող է արտահայտվել այնպես, որ երկու տեսակներ չեն կարող միմյանց հարմարվել նույն էկոլոգիական խորշում:**

**Գեն - ԴՆԹ-ի մոլեկուլի հատված, որը պարունակում է որոշակի տեղեկատվություն և ապահովում է օրգանիզմի որոշակի հատկանիշի զարգացումը և փոխանցումը հաջորդ սերունդներին:**

**Գենոտիպ - առանձնյակի գեների ամբողջություն, որը պայմանավորում է նրա ժառանգական հատկանիշները:**

**Գենոֆոնդ - տվյալ պոպուլյացիայի կամ տեսակի բոլոր առանձնյակների գեների ամբողջությունն է:**

**Գերմակաբուծություն (հիպերպարազիտիզմ) - մակաբուծության ձև է, երբ մակաբույժը միջավայր է հանդիսանում այլ մակաբույժի համար:**

**Գլոբալ (համամոլորակային) տարածում - տեխնածին գործոններով պայմանավորված՝ մթնոլորտի և ջրոլորտի միջին ջերմաստիճանի համամոլորակային բարձրացումն է:**

**Գլոբերի կանոն - ավելի խոնավ և զով պայմաններում ապրող կենդանիներն ունեն մարմնի ավելի մուգ գունավորում (պիզմենտացիա):**

**- Ե -**

**Էկզոսֆերա - իոնասֆերային հաջորդող, մթնոլորտի մոտ 800 կմ-ից բարձր գտնվող շերտն է:**

**Էկոլոգիա - կենսաբանության մի ճյուղն է (կենսաէկոլոգիա), որն ուսումնասիրում է օրգանիզմների (առանձնյակ, պոպուլյացիա, կենսացենոգ և այլն)՝ միմյանց և միջավայրի գործոնների հետ փոխադարձ կապերը:**

**Էկոլոգիական խորց - միջավայրի գործոնների ամբողջությունն է, որի սահմաններում բնակվում են և երկար ժամանակ կարող են գոյություն ունենալ այս կամ այն տեսակի օրգանիզմները:**

**Էկոլոգիական խորցը հանդիսանում է օրգանիզմների տեղը բնության մեջ:**

**Էկոլոգիական վայենտականություն (առաձգականություն) - էկոլոգիական գործոնի այս կամ այն սահմանի հանդեպ օրգանիզմների հարմարվելու ընդունակությունն է:**

**Էկոլոգիական գործոն - միջավայրի ցանկացած պայման, որի հանդեպ օրգանիզմները ցուցաբերում են հարմարվողական ռեակցիա:**

**Էկոհամակարգ - էկոլոգիայի հիմնական գործառական միավորն է, որն իր մեջ ներառում է օրգանիզմները և անկենդան միջավայրը, որոնք փոխազդում են այնպես, որ էներգիայի անընդհատ հոսքն ստեղծում է որոշակի կառուցվածք և նյութերի շրջանառություն նրա կենդանի և անկենդան բաղադրիչների միջև:**

**Էկոհամակարգ - ժամանակային և տարածական առումով սահմանափակ բնական համակարգ, որը ձևավորում է իրար հետ նյութերի և էներգիայի փոխանակությամբ կապված կենդանի օրգանիզմների և դրանց գոյության միջավայրի կողմից:**

**Էկտոն - արտաքուստ իրարից տարբերվող հարակից համակեցությունների միջև գոյություն ունեցող անցումային գոտին է:**

**Էկտոնակարույծներ - մակաբույժներ են, որոնք ապրում են տիրոջ մարմնի վրա:**

**Էներգենտություն - համակարգի հատկությունները պայմանավորված են ոչ միայն նրանում գտնվող տարրերով, այլ նաև դրանց միջև գոյություն ունեցող փոխազդեցություններով:**

**Էներգիայի հոսքը էկոհամակարգերում - օրգանական նյութերի քիմիական կապերի էներգիայի անցումն է օրգանիզմների մի մակարդակից հաջորդներին:**

Ենդրմակաբուծներ – մակաբույծներ են, որոնք ապրում են տիրոջ մարմնում:

Եվրիփինսներ – այսպես են կոչվում էկոլոգիապես դիմացկուն տեսակները:

Եվտրոֆիկացում – ջրամբարի հարստացումը կենսածին տարրերով, որի ժամանակ դիտվում է պլանկտոնային ջրիմուռների ավելցուկային աճ, ապա լուծված թթվածնի քանակի նվազում՝ ռեդուցենտների կողմից մահացած ջրիմուռների քայլայման արդյունքում:

Երոզիա - լեռնային ապարների, հողի կամ ուրիշ մակերևույթների քայլայումն է, որի արդյունքում խախտվում են դրանց ամբողջականությունը և ֆիզիկաքիմիական հատկությունները: Սովորաբար այն ուղեկցվում է մի տեղից դեպի մյուսը մասնիկների տեղափոխմամբ:

- Թ -

Թթվային տեղումներ - անձրևներ, մառախուղ, ձյուն, որոնց pH < 5,6-ից:

- հ -

Իոնոսֆերա - մեզոսֆերային հաջորդող, մթնոլորտի 85-ից մինչև մոտ 800կմ բարձրություն ունեցող շերտն է:

- Լ -

Լինոեմանիօրենֆ-սննդային շղթայի յուրաքանչյուր հաջորդողակում, նախորդի համեմատությամբ, կորչում է եներգիայի 80 - 95%-ը, սննդի եներգիայի միայն 5 - 20%-ն է (միջին հաշվով՝ 10%-ը) անցնում կենդանու մարմնի նոր կառուցված նյութի մեջ: Եներգիայի այդպիսի մեծ կորուստների պատճառով սննդային շղթաները շատ երկար լինել չեն կարող և հիմնականում բաղկացած են 3-5 օդակներից:

- Կ -

Կանցերոգեններ - նյութեր կամ ֆիզիկական գործոններ, որոնք ընդունակ են առաջացնել չարորակ գոյացություններ և նպաստել նրանց զարգացմանը:

Կենդանածին գործոն - օրգանիզմների և շրջակա միջավայրի վրա կենդանիների ունեցած ազդեցությունն է:

Կենսաբանական արտադրանք - էկոհամակարգերում օրգանական նյութերի ստեղծման արագությունն է:

Կենսազանգված - էկոհամակարգերում կենդանի օրգանիզմների մարմնի զանգվածն է:

Կենսահնդիկացիա - շրջակա միջավայրի աղտոտիչների հայտնաբերումն է խիստ զգայուն օրգանիզմների կիրառման եղանակով:

Կենսածկ բնակատեղի հիմնական պայմանների և կյանքի որոշակի ձևի հանդեպ բույսերի և կենդանիների մորֆոլոգիական հարմարվողականության տիպն է:

Կենսացենոզ - ըստ կազմության, տեսակների և առանձնյակների թվի միջավայրի արիոտիկ գործոնների միջին մակարդակին համապատասանող կենդանի օրգանիզմների ամբողջությունն է, որում օրգանիզմները սերտ փոխկապակցված են և անընդհատ բազմացման շնորհիվ պահպանում են իրենց գոյությունը:

Կենսացենողի էկոլոգիական կառուցվածք – կենսացենողի օրգանիզմների էկոլոգիական խմբերի կառուցվածքն է, որոնք համակեցության տարբեր էկոլոգիական խորշերում կատարում են որոշակի գործառույթներ:

**Կենսոլորտ** - անընդհատ փոխազդեցության մեջ գտնվող կենդանի օրգանիզմներով բնակեցված երկրի թաղանք:

**Կյանքի (գոյության) դայնաններ** - միջավայրում օրգանիզմների համար անհրաժեշտ տարրերի և նյութերի ամբողջությունն է, որոնց հետ նրանք գտնվում են սերտ կապի մեջ և առանց դրանց գոյություն ունենալ չեն կարող:

### - Ը -

**Համակեցություն** - տարածության բնական ծավալում համատեղ ապրող ավտոտրոֆ և հետերոտրոֆ օրգանիզմների համակարգն է:

**Հարմարում** - օրգանիզմի կառուցվածքային և ֆունկցիոնալ փոփոխություններն են, որոնք նպաստում են առավել լավ հարմարվելուն շրջակա միջավայրին, գոյատևելուն և սերունդ տալուն:

**Նետրոնրժներ** - օրգանիզմներ, որոնք կարող են որպես սնունդ օգտագործել միայն այլ օրգանիզմների կողմից սինթեզված օրգանական նյութերը:

**Շումուս** - հողի օրգանական նյութ, որը կազմված է կենդանիների և բույսերի մնացորդներից:

### - Ա -

**Մակարույթ** - այն օրգանիզմն է, որը որպես սննդի աղբյուր և բնակատեղ օգտագործում է այլ տեսակի օրգանիզմ (տիրոջը):

**Մակերևութային ջրեր** - Երկրի մակերևույթի բոլոր ջրամբարները՝ լճերը, գետերը և այլն, բացի ստորերկրյա ջրերից:

**Մարդածին գործոն** - շրջակա միջավայրի, օրգանիզմների, կենսացենողների, էկոհամակարգերի և կենսոլորտի վրա մարդու ունեցած ցանկացած ազդեցությունն է:

**Մթնոլորտ** - մոլորակի գազանման թաղանթ, որը կազմված է գազային խառնուրդից, ջրային գոլորշիներից և փոշուց:

**Մթնոլորտային տեղումներ** - ջրային գոլորշի, որը մթնոլորտում անցնելով հեղուկ կամ պինդ վիճակի՝ ընկնում է Երկրի վրա:

**Մինիմումի օրենք** - օրգանիզմի կենսագործումների անտեսավորության խնտենսիվությունը պայմանավորված է գործոնի օպտիմալ սահմանից ցածր գտնվող ինտենսիվությամբ: Մինիմումի օրենքը սահմանվել է Յու. Լիբիլսի կողմից:

**Մոնիթորինգ** - հետազոտվող տարածքում քիմիական աղտոտումների վերլուծական ուսումնասիրությունն է:

**Մուտացեններ** - նյութեր կամ ֆիզիկական գործոններ, որոնք կարող են առաջ բերել մուտացիաներ:

**Մուտացիա** - օրգանիզմի մեկ կամ մի քանի գեների պատահական փոփոխությունն է:

**Մեզոսֆերա** - ստրատոսֆերային հաջորդող, մթնոլորտի 55-ից մինչև 85 կմ բարձրություն ունեցող շերտն է:

- Ա -

Նյութերի հսկը էկոհամակարգերում – քիմիական տարրերի ձևով նյութերի տեղափոխությունն է ավտոտրոֆ օրգանիզմներից ռեդուցենտներին և հետո քիմիական ռեակցիաներով, առանց կենդանի օրգանիզմների մասնակցության, նորից ավտոտրոֆ օրգանիզմներին:

- Զ -

Տրօակա միջավայր - տվյալ առանձնյակի կամ պոպուլյացիայի նկատմամբ արտաքին բոլոր օբյեկտների և գործոնների համակարգն է:

- Պ -

Պեստիցիդ - նյութ, որն օգտագործվում է վնասատուների և մոլախոտերի ոչնչացման համար: Կախված նրանից, թե որ օրգանիզմների դեմ են դրանք ուղղված՝ պեստիցիդները բաժանվում են խմբերի: Յերբիցիդները ոչնչացնում են բույսերին, ինսեկտիցիդները՝ միջատներին, ֆունգիցիդները՝ սնկերին և այլն:

Պլանկտոն-ջրային շերտում կախված, ակտիվարժման ընդունակություն չունեցող օրգանիզմների ամբողջությունն է: Դրանք մասր կենդանիներ են (զոռավանկուն) և բույսեր (Փիտոպլանկտոն), որոնք չեն դիմադրում ջրային հոսանքներին:

Պողովյացիա - որոշակի տարածքում երկար ժամանակ գոյություն ունեցող, ազատ խաչասերվող, բեղուն սերունդ տվյող, նույն տեսակի առանձնյակների այլ խմբերից հարաբերականորեն մեկուսացված առանձնյակների ամբողջությունն է:

Պողովյացիայի թվաքանակ - տվյալ տարածքում կամ տվյալ ծավալում պոպուլյացիայի առանձնյակների ընդհանուր թիվն է:

Պողովյացիայի խտություն-միավոր տարածքում կամ ծավալում պոպուլյացիայի առանձնյակների թիվն է կամ կենսազանգվածը:

Պողովյացիայի ծնելիություն - որոշակի ժամանակահատվածում պոպուլյացիայում ծնված առանձնյակների թիվն է, պոպուլյացիայի հատկությունն է մեծացնելու իր թվաքանակը:

Պողովյացիայի մահացություն - որոշակի ժամանակահատվածում պոպուլյացիայում մահացող առանձնյակների թիվն է:

- Զ -

Զերմային աղտոտում - մեծ քանակությամբ զերմության թափանցումն է մթնոլորտ կամ ջրի մեջ:

Զերմահաղորդականություն - զերմային շարժման շնորհիկ զերմության հաղորդումն է մարմնի ավելի տաք հատվածներից դեպի ավելի սառը հատվածներ:

Զերմոցային գազեր - գազեր ( $\text{CO}_2$ ,  $\text{CH}_4$  և այլն), որոնք ընկնում են մթնոլորտ՝ առաջացնելով զերմոցային էֆեկտ:

Զերմոցային էֆեկտ - նթնոլորտի զերմաստիճանի բարձրացում՝ նրանում ածխաթթու գազի և այլ գազերի պարունակության բարձրացման հետևանքով, որը բերում է մթնոլորտի կողմից զերմային ճառագայթման կլանման մեծացմանը:

Զրոլորս - երկրի ընդերքային, հողային, մակերևութային, օվկիանոսային, մթնոլորտային ջրերի ամբողջությունը:

**- Ա -**

Սահմանափակող գործոնի օրենք - առավել նշանակալի է այն գործոնի ազդեցության ուժը, որը բոլորից ավելի շատ է շեղվում օրգանիզմի համար բարենպաստ (օպտիմալ) արժեքներից:

Սահմանային էֆեկտ - էկոտոռոնում տեսակների բազմազանության և խտության գերազանցումն է հարևան յուրաքանչյուր կենսացենոզի տեսակների թվի նկատմամբ:

Սննդային շղթա - էկոհամակարգերում էվոլյուցիայի ընթացքում ստեղծված՝ իրար հետ փոխադարձ կապված այնպիսի տեսակների շղթան է, որոնք հաջորդաբար նյութեր և էներգիա են ստանում: Տեսակների առանձնյակների միջև գոյություն ունեցող այդպիսի կապերը կոչվում են սննդային կապեր:

Ստենորինսմեր - այսպես են կոչվում էկոլոգիապես թույլ դիմացկուն տեսակները:

Սոնրերկրյա ջերեր - երկրի ստորին շերտերում կուտակված ջուրն է:

Սրատոսֆերա - տրոպոսֆերային հաջորդող մթնոլորտի 10-18-ից մինչև մոտ 55կմ բարձրություն ունեցող շերտն է:

Սուկցեսիա-նույն տարածքում բնական գործոնների կամ մարդու ազդեցությամբ կենսացենոզների աստիճանական, անհետադարձ, ուղղորդված հերթափոխն է:

**- Տ -**

Տարրերի անհրաժեշտ բազմազանության սկզբունք - ցանկացած էկոհամակարգ չի կարող կազմված լինել բացարձակ միատեսակ էլեմենտներից, քանի որ էլեմենտների բազմազանությունը համակարգի գործունեության անհրաժեշտ պայման է:

Տեսակ - առանձնյակների այնպիսի ամբողջություն, որոնք ունեն ձևաբանական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունների ժառանգական նմանություն, ազատ խաչասերվուն և բեղուն սերունդ են տալիս և բնության մեջ գրավում են որոշակի մարգ՝ արեալ:

Տրոդոսֆերա - մթնոլորտի մինչև 10-18կմ (կախված լայնությունից) բարձրություն ունեցող ստորին շերտ:

**- Ձ -**

Ջարողություն - երկրագնդի արտաքին կարծր թաղանթն է, որը կազմված է վերին՝ նստվածքային ապարների ու գրանիտի, և ստորին՝ բազալտի շերտերից:

**- Օ -**

Օգնային շերտ - պահպանում է երկրի վրա ապրող բոլոր կենդանի օրգանիզմներին արեգակի վնասակար կարճալիք ճառագայթներից: Օգնային շերտը գտնվում է ստրատոսֆերայի ստորին մասում՝ 20-25կմ բարձրության վրա:


**- Ֆ -**

Ֆաունա - որոշակի տարածքում ապրող կենդանիների տեսակների ամբողջությունն է:

Ֆլորա - որոշակի տարածքում ապրող բույսերի տեսակների ամբողջությունն է:

Ֆունսինթեզ - բույսերի օրգանիզմում ընթացող քիմիական գործընթաց, որի ժամանակ ածխաթթու գազից և ջրից, արեգակնային էներգիայի հաշվին, սինթեզվում են օրգանական նյութեր և անօատվում է թթվածին:

գ



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԱՍ Գ

ՄԱՐԴ-ԲՆՈՒԹՅՈՒՆ

ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## ՆԱԽԱԲԱՆ

Մարդն Աստծու որդին է: Յայրը, հոգածությամբ արարելով անսահման բարդ, զարմանահրաց ու գեղեցիկ մի աշխարհ, այն հանձնեց իր որդուն, որպեսզի մարդն ապրեր Երկրի խաղաղ ու հարմարավետ գրկում և վայելեր նրա առատ բարիքները՝ տեր լինելով ողջ արարչությանը: Արդյո՞ք տեր լինելը նշանակում էր ստրկատիրոջ դաժանությամբ շահագործել Երկրը, ինչը շահարկում են քրիստոնեությանը մեղադրանքներ ներկայացնողները: Արդյո՞ք Աստվածաշունչը բազմիցս չի նշում, որ մարդը Երկրի սեփականատերը չէ: Արդյո՞ք քրիստոնեական վարդապետությունն իր հետևորդներին չի ուսուցանում՝ ինչպես է պետք վերաբերվել Երկրին, մեզ բարիք տվող ծառ ու ծաղկին, կենդանիներին: Զեռնարկի այս մասի նպատակն է տալ այս հարցերի պատասխանները, ինչպես նաև՝ ներկայացնել այն փաստարկները, որոնք կծառայեն մարդկանց մեջ բնության նկատմամբ ճիշտ վերաբերմունք ձևավորելուն: Այստեղ կարելի է պատասխաններ գտնել նաև այն տեսություններին, որոնք հանիրավի մեղադրում են քրիստոնեական վարդապետությանը՝ իր հետևորդների մեջ Երկրի՝ նրա բնական ռեսուրսների և բուսական ու կենդանական ներկայացուցիչների նկատմամբ անարդարացի, սպառողական մոտեցում դաստիարակելու համար: Զեռնարկի այս մասում ոչ միայն կիաստատենք, որ քրիստոնյաներիս բարի և սիրող Աստվածն իր հետևորդներին շրջապատող բնության հանդեպ բարության ու հոգատարության դասեր է տվել, այլև կներկայացնենք այն լուծումները, որ Աստվածաշունչն է առաջարկում էկոլոգիական աղետները կանխելու, հետևանքավերացման աշխատանքները կատարելու և, ի վերջո, Երկրային դրախտի երանելի տեսիլքն իրականություն դարձնելու համար:

Բազմաթիվ են փաստերը, որ Աստված անսահման բարի ու հոգատար է ոչ միայն իր որդու՝ մարդու հանդեպ, այլև ողջ արարչության: Նա հոգ է տանում անգամ դաշտային շուշանի ու թռչնակի մասին, և Նրա վերաբերմունքն օրինակ է մարդու համար: Սուրբ Գրքին ծանոթ ամեն քրիստոնյա թերևս անմիջապես կիիշի «Զար մշակների» և «Տասը մնասների» առակները, ինչպես նաև՝ տասնյակ համարներ Ծննդոց, Ղևտական, Բ Օրինաց, Յոթի գրքերից, Դավթի սաղմոսներից ու մարգարեւություններից, առաքյալների նամակներից: Զգտելով կատարելության՝ նամանվել Յիսուս Քրիստոսին ամեն հարցում՝ մարդը քրիստոնեաբար՝ հոգատարությամբ կվերաբերվի նաև արարչությանը: Քրիստոնեությունն այդ է ուսուցանում իր հետևորդներին:

Եվ, այնուամենայնիվ, չենք կարող Ժխտել, որ էկոլոգիական աղետների մեջ մասի հիմքը զարգացած Երկրների տնտեսական քաղաքականությունն է, իսկ այդ Երկրների թվում են նաև քրիստոնեությունը դումինանտ կրոն ընդունած մի շարք պետություններ: Դա նշանակո՞ւմ է արդյոք, որ էկոլոգիական աղետների համար անմիջականորեն մեղավոր է քրիստոնեությունը: Միանշանակ՝ ոչ, քանի որ այդ «քրիստոնյա» Երկրների մշակած ծրագրերը չեն հիմնվել քրիստոնեական կենարար սկզբունքների վրա, և Երկրի այս ճգնաժամային դրությունը պայմանավորված է հենց հասարակական գիտակցության մեջ ոչ քրիստոնեական արժեհամակարգի ձևավորմամբ:

Մարդու և շրջակա միջավայրի միջև հարաբերությունները խախտվել էին արդեն նախապատմական ժամանակներում, և նրա պատճառը մարդու մեղանչումն էր և նրա օտարացումն Աստծուց: Մեղքը կործանարար ներգործություն էր ունենում ոչ միայն հենց մարդու վրա, այլև ամբողջ շրջապատող աշխարհի: «Քանի որ, - գրում է Պողոս առաքյալը, - ստեղծվածները ունայնությանը հնագանդվեցին (ոչ իրենց կամքով, այլ նրա համար, որ Աստված հնագանդեցրեց նրանց) այն հույսով, որ ստեղծվածներն իրենք էլ ազատվեն ապականության ծառայությունից՝ Աստծու որդիների փառքի ազատության հասնելու համար. քանզի գիտենք, որ բոլոր ստեղծվածները հեծեծում են և Երկունքի ցավի մեջ են մինչև այժմ» (Ղոռմ. 8:20-22):

Առաջին մարդկային հանցագործությունն արտացոլվեց բնության մեջ, ինչպես՝ հայելու: Մեղքի սերմը, ներգործելով մարդու սրտի մեջ, պտղաբերեց երկրի վրա, ինչպես Սուրբ Գիրքն է վկայում, «փուշ ու տատասկ» (Ծննդ. 3:18): Մարդու և շրջապատող աշխարհի օրգանական միությունը, որ գոյություն ուներ մինչև մեղանչումը (Ծննդ. 2:19-20), դարձավ անհնարին: Բնության հետ իրենց հարաբերությունների մեջ, որոնք ձեռք էին բերել սպառողական բնույթ, մարդիկ հաճախ դեկավարփում էին եսապաշտական դրդապատճառներով: Նրանք մոռանում էին, որ Տիեզերքի միակ Տերն Աստված է (Սաղմ. 23:1), Ում պատկանում են «Երկինքն ու.... երկիր և նրա մեջ գտնվող ամեն ինչ» (ՔՕր. 10:14), մինչդեռ մարդը, սուրբ Յովիհան Ուկերերանի արտահայտությամբ, միայն «տան կառավարիչ» է, ում վստահված է աշխարհի հարստությունը: Այդ հարստությունը՝ «օդը, արեգակը, ջուրը, հողը, երկինքը, ծովը, լույսը, աստղերը», ինչպես նկատում է նույն սուրբը, Աստված «բաժանեց բոլորի միջև հավասար՝ որպես թե Եղբայրների միջև» ([15], էջ 51): Բնության վրա «իշխելը» և երկրին «տիրելը» (Ծննդ. 1:28), որոնց կոչված էր մարդը՝ ըստ Աստծու ծրագրի, ամենաթողություն չեն նշանակում: Դրանք միայն վկայում են, որ մարդը Երկնային Տանուտերի պատկերի կրողն է և որպես այդպիսին՝ պարտավոր է, ըստ սուրբ Գրիգոր Նյոււացու, ցույց տալ իր արքայական արժանապատվությունը ոչ թե շրջապատող աշխարհին տիրելով և բռնանալով նրա հանդեպ, այլ «մշակելով» և «պահպանելով» (Ծննդ. 2:15) բնության վեհասքանչ թագավորությունը, որի համար նա պատասխանատու է Աստծու առաջ ([15], էջ 51):

Q

Մինչդեռ այսօր անցնող յուրաքանչյուր րոպեի հետ բնապահպանական խնդիրներն առավել են ահագնանում, քանի որ գործնականում արվում է շատ ավելի քիչ, քան բավարար է էկոլոգիական հավասարակշռությունը վերականգնելու համար: Ե՛վ անհատ գործարարները, և՝ պետությունները բավական երկար ժամանակ անտեսեցին գործարանների վտանգավոր արտանետումների, առողջապահ աղետավոր փորձարկումների, կանաչ տարածքի նվազման հետևանքով ծագած խնդիրները, ինչպես նաև մի շարք այլ բնակործան երևույթներ՝ չցանկանալով լուրջ ներդրումներ ունենալ մի ոլորտում, որն առաջիկայում շահութաբեր չէր լինելու: Ժամանակը լոկ պիտի ապացուցեր, որ չխնամված, շահագործված ու վատնված բնությունը կարող է պատճել, և նրա բերած աղետները կարող են լինել անկանխատեսելի ծանր ու դաժան: Տնտեսությանը բնական աղետների հասցրած վնասները հաճախ ավելին են, քան ի գորու են կրել պետությունները: Առողջությանը հասցրած ախտահարումներն անհետևանք վերացնելու երաշխիքներ տալ ոչ չի կարող: Էկոլոգիական խնդիրների հետևանքներն իրենց դրոշմն են դնում մարդու գենոֆոնի վրա՝ անեծքի պես փոխանցվելով նրա սերունդներին:

Այսօր Երկրի տեսքն աղավաղվում է մոլորակային մասշտաբներով: Վնասված են ընդերքը, հողը, ջուրը, օդը, կենդանական և բուսական աշխարհները: Մեզ շրջապատող բնությունը գործնականորեն ամբողջությամբ ներգրավված է մարդու կենսապահովման մեջ, իսկ մարդն այլևս չի բավարարվում նրա բարիքների բազմազանությամբ, այլ անզուսպ կերպով շահագործում է ամբողջ էկոհամակարգեր: Մարդու գործունեությունը, որ հասել է կենսոլորտային գործընթացների հետ համաչափելի մասշտաբների, անընդհատ աճում է գիտության և տեխնիկայի զարգացման տեմպերի արագացման շնորհիվ: Արտադրական թափոններով բնական միջավայրի համատարած աղտոտումը, ոչ ճիշտ ազդութեանիկան, անտառների և հողային ծածկույթի ոչնչացումը բերում են կենսաբանական ակտիվության ճնշմանը և կյանքի գենետիկական բազմազանության անշեղ կրծատմանը: Սպառվում են ընդերքի անվերականգնելի հանքային ռեսուրսները, կրծատվում են մաքուր ջրի պաշարները: Առաջանում են բազմաթիվ թունավոր նյութեր, որոնցից շատերը չեն մասնակցում բնական շրջապատույտին և կուտակվում են կենսոլորտում: Էկոլոգիական հավասարակշռությունը խախտված է. մարդը կանգնած է բնության մեջ անշրջելի կործանիչ գործընթացների ծագման փաստի առջև:

Այս ամենը տեղի է ունենում հասարակական սպառնան չտեսնված և չարդարացված աճի պայմաններում բարձր զարգացած երկրներում, որտեղ ճշխության շուայլության ձգտումը դարձել է կյանքի կանոն: Այդպիսի վիճակը արգելքներ է առաջացնում համամարդկային սեփականություն հանդիսացող բնական ռեսուրսների արդարացի բաշխման հարցում: Եկոլոգիական ճգնաժամի հետևանքները ցավալի են ոչ միայն բնության համար, այլև մարդու, որ գտնվում է նրա հետ օրգանական միության մեջ: Արդյունքում երկիրն այսօր գլոբալ եկոլոգիական աղետի շեմին է:

Եկոլոգիական ճգնաժամն ստիպում է վերանայել մեր հարաբերությունները շրջապատող աշխարհի հետ: Այսօր ավելի ու ավելի հաճախ են քննադատվում բնության հանդեպ մարդու գերիշխանության հայեցակարգը և նրա հետ փոխհարաբերության մեջ սպառողական սկզբունքը: Այսպես, բացահայտվում են գործունեության այն տեսակները, որոնք վնաս են պատճառում բնական միջավայրին, իսկ դրանք հասարակական կյանքի տարբեր ոլորտներում են՝ տնտեսություն, պետական կառավարում, ռազմական ուժերի համալրում և գործողությունների ծավալում, որոնցից յուրաքանչյուրը բնությանը հասցվող վնասների իր բաժինն ունի, բնության հանդեպ՝ իր պարտավորությունները:

Այսօր մշակվում են բնության պաշտպանության համակարգեր. վերանայվում են տնտեսավարման մեթոդները, փորձեր են ձեռնարկվում ստեղծելու ռեսուրսախնայիչ տեխնոլոգիաներ և անթափոն արտադրություններ, որոնք միաժամանակ կարող կլինեն «Ներկառուցվել» բնության բնական շրջապատույթի մեջ: Զարգանում է եկոլոգիական բարոյագիտությունը: Նրանով առաջնորդվող հասարակական գիտակցությունն արտահայտվում է կյանքի սպառողական ձևի դեմ, պահանջում է բարձրացնել բնությանը հասցված վնասի համար բարոյական և իրավաբանական պատասխանատվությունը, առաջարկում է մտցնել եկոլոգիական կրթություն և դաստիարակություն, կոչ է անուն միավորել շրջակա միջավայրի պահպանության ջանքերը լայն միջազգային համագործակցության բազայի վրա:

Եկեղեցին ըստ արժանվույն գնահատում է այն գործերը, որոնք ուղղված են եկոլոգիական ճգնաժամի հաղթահարմանը, և կոչ է անուն ակտիվիտեն համագործակցել Աստծու ստեղծագործության պաշտպանությանն ուղղված հասարակական միջոցառումներին ([15], էջ 51): Միևնույն ժամանակ նա նշում է, որ նմանատիպ ջանքերն ավելի արդյունավետ կլինեն, եթե այն հիմքերը, որոնց վրա կառուցվում են մարդու հարաբերությունները բնության հետ, կրեն ոչ թե զուտ մարդասիրական, այլև քրիստոնեական բնույթ: Եկոլոգիայի խնդիրներում Եկեղեցու դիրքորոշման գիտակող սկզբունքներից մեկը Աստծու արարած աշխարհի միության և ամբողջականության սկզբունքն է: Քրիստոնեական Եկեղեցին մեզ շրջապատող բնությունը չի դիտում մեկուսացված վիճակով՝ որպես փակ կառուցվածք: Բուսական, կենդանական և մարդկային աշխարհները փոխկապակցված են: Քրիստոնեական տեսակետից բնությունը ոչ թե ռեսուրսների մի շտեմարան է՝ նախատեսված եսապաշտական և անպատասխանատու սպառնան համար, այլ տուն է, որտեղ մարդը ոչ թե տեր է, այլ կառավարիչ, տնտես: Եվ դեռ ավելին, բնությունը տաճար է, որտեղ մարդը քահանա է, պաշտոնյա, ընդ որում ոչ թե բնության, այլ միակ Արարչի: Բնությունը որպես տաճար ընդունելու հիմքում ընկած է աստվածակենտրոնության գաղափարը: Աստված, որ տալիս է «ամեն բանի կյանք ու շունչ և ամեն ինչ» (Գործք 17:25), կյանքի Աղբյուրն է: Ուստիև ինքը կյանքն իր դրսնորումների բազմազանության մեջ կրում է սրբազն բնույթ՝ լինելով Աստծու պարզե, որի ոտնահարումը մարտահրավեր է՝ նետված ոչ միայն աստվածային արարչագործությանը, այլև իրեն՝ Տիրոջը:

Նշենք կրկին, որ մարդու գործունեությունն է, որ տարբեր ոլորտներում դրսնորվելով՝ այսօր երկիրը հասցրել է եկոլոգիական ճգնաժամի: Այնպես որ եկոլոգիական խնդիրները, ըստ եռթյան, կրում են

մարդաբանական բնույթ, քանի որ մարդուց են ծնունդ առել և ոչ թե բնությունից: Ուստիև, շրջակա միջավայրի ճգնաժամով պայմանավորված շատ հարցերի պատասխաններ պարունակվում են մարդկային հիգիեն և ոչ թե զուտ տնտեսության, կենսաբանության, տեխնոլոգիայի կամ քաղաքականության ոլորտներում: Բնությունը, իրապես, այլակերպվում կամ կործանվում է ոչ թե ինքն իրեն, այլ մարդու ազդեցության արդյունքում: Իսկ մարդու գործունեությունը նրա գիտակցության դրսնորումն է, և այսօր բնապահպան տեսաբանների, ինչպես նաև աստվածաբանների խնդիրն են նախ և առաջ մարդու գիտակցության մեջ «վերականգնել էկոլոգիական հավասարակշռությունը՝ ժամանակը, երբ մարդն ապրում է բնության հետ կատարյալ ներդաշնակության մեջ: Եթե մարդու մեջ կրկին տիրի աստվածային արարչագործության լրման այն պահը, երբ նա տեր կանգնեց իր հարաբաններին, ծանրթացավ երկրի կենդանական աշխարհի յուրաքանչյուր ներկայացուցչի և անվանակչության նրան, մարդը կփորձի իրականություն դարձնել իր հոգու երազը: Նա կծովի վերագտնել երկրային դրախտը, որն իր նախահայրը կորցրեց մեղքի պատճառով և որից ամեն օր մի քայլ հեռանում է ինքը՝ իր և իր ժամանակակիցների մեղքերի պատճառով:

Բազմարիվ են փաստերը, որ մարդու հոգևոր վիճակը վճռորոշ դեր է խաղում, քանի որ ազդում է շրջակա միջավայրի վրա ինչպես արտաքին ներգործության դեպքում, այնպես էլ այդ ներգործության բացակայության պայմաններում: Յին Կոտակարանում պատմվում է, որ Աստված մարդկանց մեղքերի պատճառով բազմիցս պատժել է նրանց երաշտով, խորշակով և այլ բնական աղետներով: Նաև Եկեղեցական պատմությունից հայտնի են բազում օրինակներ, երբ քրիստոնեական ճգնավորների սերը բնության հանդեպ, նրանց աղոթքը շրջապատող աշխարհի համար, նրանց կարելցանքը արարածների նկատմամբ ամենաբարերար կերպով են ազդել կենդանի էակների վրա:

Մարդաբանության և էկոլոգիայի փոխադարձ կապը առավելագույն պարզությամբ է բացահայտվում մեր օրերում, երբ աշխարհն ապրում է միաժամանակ երկու ճգնաժամ՝ հոգևոր և էկոլոգիական: Ժամանակակից հասարակության մեջ մարդը հաճախ կորցնում է կյանքի ընկալումը՝ որպես Աստծու պարզեցի, իսկ երբեմն նույնիսկ՝ հենց իմաստը կյանքի. այն երբեմն հանգեցվում է զուտ ֆիզիկական գոյության: Շրջապատող բնությունը կյանքի նկատմամբ ննան վերաբերմունքի դեպքում այլևս չի ընկալվում որպես տուն և առավել ևս՝ որպես տաճար. այն դառնում է լոկ «բնակության միջավայր»: Հոգևոր անկում ապրող անհատը բերում է բնության անկմանը, քանի որ ի վիճակի չէ աշխարհի վրա վերափոխող ներգործություն ցուցաբերել: Սեղքով կուրացած մարդկությանը չեն օգնում և ահօելի տեխնիկական հնարավորությունները: Կյանքի իմաստի, խորհրդի, հրաշքի նկատմամբ անտարերրության պայմաններում դրանք իրական օգուտ չեն բերում, իսկ երբեմն էլ վնաս են պատճառում: Գործունեության մեջ հոգևոր կողմնորոշում չունեցող մարդու ունեցած տեխնիկական հզորությունը, որպես կանոն, ծնում է ցնորական հույսեր մարդկային մտքի և առաջադիմության ուժի անսահման հնարավորությունների նկատմամբ:

Եկոլոգիական ճգնաժամի լիարժեք հաղթահարումը հոգևոր ճգնաժամի պայմաններում աներևակայելի է: Այս պնդումը բոլորովին չի նշանակում, թե Եկեղեցին կոչ է անում դադարեցնել բնապահպանական գործունեությունը: Սակայն նա մարդու և բնության փոխհարաբերությունների մեջ դրական փոփոխությունների նկատմամբ հույսը կապում է հասարակության՝ դեպի հոգևոր վերածնունդ ծգտման հետ: Եկոլոգիական խնդիրների մարդածին հիմքը ցույց է տալիս, որ մենք շրջապատող աշխարհը փոխում ենք մեր ներաշխարհին համապատասխան ձևով, ուստիև բնության ձևափոխումը պիտի սկսվի հոգու այլակերպումից: Ըստ Երանելի Մաքսիմ Խոստովանողի՝ մարդը կարող է ամբողջ երկիրը դրախտի վերածել միայն այն ժամանակ, երբ նա դրախտը կրի իր իսկ ներսում ([15], էջ 52):

## ԳԼՈՒԽ 11. ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

### 75. Աշխարհի արարումը

Աշխարհի և մարդու արարումն անբաժանելի Սուրբ Երրորդության՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու գործն է: Աշխարհի արարչության դրդապատճառ է ծառայել Աստծու անսահման սերը, բարությունը, Նրա ցանկությունը՝ ունենալ մասնակիցներ իր փառքին և իր երանությանը:

Աստված արարել է աշխարհին իր ազատ կամքով և ոչ թե ինչ-որ անհրաժեշտությունից ելնելով: «Տերն ինչ որ ցանկացավ, կատարեց երկնքում ու երկրի վրա, ծովում և բոլոր անդունդներում» (Սաղմ. 134:6): Սուրբ Գիրքը չի բացատրում արարչագործության խորհրդի եռթյունը, բայց այն ցույց է տալիս մեզ, որ աշխարհի արարչագործության կերպը համապատասխանում է Աստծու ամենակատար եռթյան հատկություններին: Այն սովորեցնում է, որ արարչագործությունն ինչ-որ արտաքին պատահական պատճառներով չէր դրված, այլ նախասահմանված է Աստծու կողմից ի հավիտենից: «Ի հավիտենից հայտնի են Տիրոջը իր բոլոր գործերը» (Գործք 15:18):

Ըստ Սուրբ Եկեղեցու ուսմունքի՝ Աստված «Արարիչն է երկնքի և երկրի, երևելիների և աներևույթների» («Հավատանք»): Արարչագործության կերպը մարդկային նտոքի համար անհասանելի է: Այդ խորհրդուն ընթանական կարելի է միայն հավատով: «Հավատո՞վ ենք իմանում, որ աշխարհներն ստեղծվել են Աստծու խոսքով՝ անտեսանելի բաներից տեսանելի դառնալով» (Եբր. 11:3):

Սուրբ Գիրքը սովորեցնում է, որ դեռևս մինչև աշխարհի ստեղծումը Աստծու ստեղծագործ ծրագրի մեջ կար աշխարհի բոլոր իրերի, առարկաների և էակների գոյության գաղափարը: Աշխարհի ստեղծագործության գործողությունը աշխարհի մասին Աստծու հավիտենական գաղափարների, մտահղացումների, ծրագրերի նյութականացումն էր ժամանակի և տարածության մեջ: Այսինքն՝ Աստված ի հավիտենից նախագծել էր այն ամենը, ինչ որ հիմնա ժամանակի մեջ կատարվում է:

Աշխարհը՝ երկիրը, արարածները, մարդը, ամենասկզբում կատարյալ էր, այսինքն՝ համապատասխանում էր Արարչի կողմից իր համար սահմանված նպատակին: Արարչության ամեն մի օրը Սուրբ Գիրքն ավարտում է հետևյալ բառերով. «Աստված տեսավ, որ լավ է» (Ծննդ. 1:4): Արարչագործության կատարելությունը պետք է հասկանալ այն իմաստով, որ ստեղծված աշխարհը և ամեն ինչ նրանում կարգավորված է իր կոչմանը համապատասխան՝ խելամտորեն և նպատակահարմար ձևով: Ամեն մի արարածի տրված է նրա համար հնարավոր կյանքի լիարժեքություն, կատարելություն և լիակատար բարեկեցություն: Աստված է առաջնորդում աշխարհը դեպի վերջնական նպատակ: Խև ո՞ր է այն:

Գիտենք, որ մարդկանց փրկությունն աշխարհի կեցության ավարտունության անսուտ պայմանն է, և Աստծու հիմնական հոգատարությունն ուղղված է դրան: Նրա կարևորագույն հոգսն է՝ մեղավորներին դարձի բերել և դարձի եկածներին մաքրել և հոգեղինացնել, քանի որ նրանց՝ նախաստեղծ մարդու մաքրությունը վերստացածների միջոցով է, որ աշխարհն էլ պիտի վերստանա իր դրախտային վիճակը:

Աշխարհի ընթացքի վերջին փուլը կլինի նրա հոգեղինացումը բանական արարածների մեջ՝ բարոյական կարգով, և արարչությունն սպասում է Աստծու որդիների նորոգված և վերականգնված փառավոր հայտնությանը: Այդժամ միայն, նորոգվելով փրկված և սրբված մարդու միջոցով՝ այն վերստին կապրի կատարյալ խաղաղության ու ներդաշնակության մեջ: Արարչությունը ոչ թե պարզապես սպասում է այդ հայտնությանը՝ որպես լոկ հանդիսատես, այլև որպես այդ ապագա փառքի լիարժեք մասնակից՝ ձգտում է դրել մարդուն, որ գտնի իր և մյուս բոլորի և ամեն բանի փրկության ճանապարհը:

Գալիք լուսավոր վիճակն արդեն սերմանված է և հասունանում է արարչության խորքում, ինչպես պտուղը մոր որովայնում, և պատրաստվում է դրսնորվելու: Այս բանը կանխազգալով՝ հոգոց է հանում արարչությունը՝ տոշորվելով այդ ամենի իրականացումը շուտափույթ զգալու ցանկությամբ: Քանի որ, մինչդեռ նրան սպասվում է այդպիսի լուսավոր վիճակ, նա դեռևս պիտի ծառայի ունայնությանն ու ապականությանը (տե՛ս Հոռմ. 8:20):


## 76. Մարդու արարումը

Մարդու արարումն Աստծու հատուկ ստեղծարար գործունեությունն էր: Այդ արարման կարևոր մի պահ էր Սուրբ Երրորդության նախորոշող խորհուրդը: Ոչ թե Երկրին հրաման տրվեց՝ «Թող արտադրի», այլ Ամենասուրբ Երրորդության խորհրդի մեջ հնչեց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով և ննանությանք» (Ծննդ. 1:26):

Եվ ստեղծվեց մարդը՝ Աստծու արարչագործության պսակը: Յայրերից ոմանք մարդու բնությանը վերագրում են եռանանություն: Մարդու մեջ, ըստ նրանց տեսության, ընդունվում է երեք տարր՝ մարմին, շունչ և հոգի: Մարդու բնության եռանանության գաղափարին էին հանգել դեռ հույն փիլիսոփաներ Պլատոնը և Արիստոտելը ([9], էջ 63, 75): Առաջին դարում այդ ուսուցումն իր ամփոփումն է գտնում Պողոս առաքյալի նամակների մեջ, որտեղ մարդու հոգևոր բնության մեջ զանազանվում են շունչը և հոգին, իսկ ամբողջ մարդը ներկայացվում է բաղկացած մարմնից, շնչից և հոգուց (Եբր. 4:12, Աթեն. 5:23): Եկեղեցու հին ուսուցիչները՝ սուրբ Անտոն Մեծը, հսահակ Ասորին, Եփրեմ Ասորին և ուրիշներ, համամիտ էին այս տեսակետին ([17], էջ 69, [18], էջ 368, 707):

Մարմինը մարդկային բնության ստորագույն բաղադրիչն է: Այն նախատեսված է լինելու հոգու անբաժանելի ուղեկիցն ու համագործակիցը նրա բոլոր նախաձեռնություններում և գործողություններում, լինելու նրա ծառայողական գործիքը: Աստված սկզբում ստեղծեց մարմինը Երկրի հողից. սակայն դա մեռած մարմին չէր, այլ կենդանի՝ կենդանական շնչով: Ավարտելով մարդու արարումը՝ Աստված նրա անձին կենդանության շունչ փչեց (Իր աստվածային կյանքի շնչառությունը և հոգին): «Եվ մարդը եղավ կենդանի էակ» (Ծննդ. 2:7): Մարդը հոգևոր էակ դարձավ: Այն հոգին, որ Աստված փչեց մարդու վրա, նրան բարձրացրեց կենդանական շնչից. Նա դարձավ բանական էակ՝ միակը նյութական աշխարհում:

Յոգու շարժիչ սկզբունքներն են հավատն Աստծու համեթա և Աստծու Երկյուղը կամ համակողմանի կախվածության զգացումն Աստծուց՝ Ամենակալից, Նախախնամողից և Պարգևիչից: Յոգին աստվածահաղորդության օրգանն է՝ Աստծուն ճանաչող, Աստծուն փնտրող և Աստծով ապրող զգայարանը: Յոգու նպատակն ու



Եփրեմ Ասորի և Յովհան Ոսկեբերամ, ծաղկող՝ Յովհաննես, 1418թ.

### »»76. Մարդու արարումը

Կոչումն է հաղորդակցվել Աստծու և հոգևոր աշխարհի հետ, մարդուն ներածել Աստծու մեջ և Նրա հետ կենդանի հաղորդակցությամբ՝ Երանության մեջ, քանի որ միայն Աստծու մեջ է մարդու հոգին հանգիստ գտնում, այնտեղ է նրա դրախտը և Ավետյաց Երկիրը:

Աստված մարդուն արարել է իր պատկերով և նմանությամբ (Ծննդ. 1:26): Ի՞նչ է դա նշանակում, և Սուրբ Եկեղեցու հայրերն ինչպես են տարբերակում պատկերն ու նմանությունը:

Ամենողորմ Տերը, ստեղծելով մարդուն՝ ըստ իր պատկերի, դրանով ցույց տվեց նրա նպատակը՝ հաղորդակցություն իր հետ: Այդ նպատակին հասնելու միակ միջոցը նրա կամքի նախանձախնդրութեն կատարումն է: Աստված դրոշմել է իր կամքը մարդու մաքուր և անարատ խղճի մեջ: Առանց խղճի առաջնորդության մարդը չի կարող աստվածահաճո կյանք ապրել:


Նշենք հետևյալ շնորհները, որոնցով հատկությունը է Աստծու պատկերը մարդու մեջ.

1. Քավիտենական Աստված օժտել է մարդուն հոգու անմահությամբ:
2. Աստված կատարելապես ազատ է իր գործողությունների մեջ: Մարդուն ևս նա տվել է ազատ կամք և որոշակի շրջանակներում ազատ գործողությունների կարողություն:
3. Աստված գերիմաստություն է: Մարդն էլ օժտված է բանականությամբ, որ ընդունակ է չսահմանափակվելու միայն Երկրավոր կենդանական պահանջներով և իրերի տեսանելի կողմով, այլ թափանցել խորը, ճանաչել ու բացատրել նրանց ներքին հմաստը բանականությամբ, որ կարող է բարձրանալ դեպի աներևույթը և իր մտքով ձգտել դեպի Պատճառը բոլոր գոյություն ունեցողների՝ դեպի Աստված: Մարդու բանականությունը գիտակցված ու ճշմարտապես ազատ է դարձնում նրա կամքը, քանի որ նա կարող է ընտրել իր համար ոչ թե այն, ինչին հակամետ է իր ցածրագույն բնությունը, այլ այն, ինչ որ համապատասխանում է նրա բարձրագույն արժանապատվությանը:
4. Աստված արարել է մարդուն իր բարությամբ. և նա իր սիրով երեք չի լրել ու չի լրում նրան: Եվ մարդը, որ հոգի է ստացել Աստծու՝ իր դեմքին շունչ փշելով, ձգտում է, որպես իրեն հարազատ մի բանի, իր Գերագույն Սկզբին՝ Աստծուն՝ Նրա հետ միություն փնտրելով ու փափագելով:

Այսպիսով, մարդու ձգտումը և սերն առ Աստված նրա մեջ Աստծու պատկերի արտահայտությունն են: Ընդհանրացնելով կարելի է ասել, որ հոգու բոլոր բարի և առաքինի հատկություններն ու



Զարարիա Ավանցի, Մարտիրոսյան 6-րդ օրը, 1595թ.



Չաքարիա Ավանցի, Եվայի ստեղծումը, 1595թ.

կամենում էր, որ մարդն իր ազատ կամքի դրսնորմանք հասներ նմանության կատարելությանը:

Նախաստեղծ մարդու խնդիրն էր իր ստացած աստվածային պարգևներն անվերջ օարգացնելը: Մարդու մարմնավոր ուժերի զարգացման համար Աստված պատվիրեց Արամին մշակել դրախտը (Ծննդ. 2:15): Դրախտում Աստված տնկել էր Կյանքի ծառը, որի նպատակն էր մարդկային կյանքի հավերժական պահպանումը. այդ ծառի պտուղներից ճաշակելով՝ մարդը մարմնով էլ կլիներ անցավ և անմահ: Իսկ հավիտենական կյանքն աստվածանմանության տանող ճանապարհին մարդու անսահման բարոյական առաջադիմությանը պիտի ծառայեր:

Փաստորեն, դառնալ «ըստ նմանության» կախված է մեր կամքից և ձեռք է բերվում մեր համապատասխան գործունեությամբ: Ուստի աստվածային «խորիրդի» մասին ասված է. «Ստեղծենք մեր պատկերով և նմանությամբ» (Ծննդ. 1:26), իսկ բուն արարչության գործողության մասին. «Աստծու պատկերով ստեղծեց նրան» (Ծննդ. 1:27): Աստվածային «խորիրդով», ինչպես մտածում է սուրբ Գրիգոր Նյուսացին, մեզ հնարավորություն է տրված լինելու «ըստ նմանության» ([12], էջ 99):

Մարդու բարոյական ազատությունը փորձելու և բարու մեջ վճռականորեն հաստատելու համար Աստված մարդուն պատվիրեց չճաշակել բարու և չարի գիտության ծառից: Մարդը չինազանդվեց

կարողությունները մարդու մեջ Աստծու պատկերի արտահայտություններն են: Յավելենք. սուրբ Յայրերի և Եկեղեցու վարդապետների մեջ մասը Աստծու պատկերը տեսնում է հենց հոգու բնության մեջ, իսկ նմանությունը՝ մարդու բարոյական կատարելագործման, առաքինության ու սրբության, Սուրբ Յոդու պարզմներին հասնելու մեջ ([12], էջ 98-99): Յետևաբար, Աստծու պատկերը մենք ստանում ենք Աստծուց՝ մեր կյանքի հետ, իսկ նմանությունը պիտի ձեռք բերենք ինքներս՝ դրա համար Աստծուց ստանալով միայն հնարավորություն:

Նմանությունը մարդուն տրված է որպես իդեալ, որին նա կարող է մոտենալ՝ իր բնության աստվածապարզն ուժերն ու ընդունակությունները բացահայտելով: Նախաստեղծ մարդու մոտ այդ նմանությունն այնքան անբողջական էր, ինչքան որ դա հնարավոր է մարդկային բնության համար:

Աստված մարդուն ստեղծել էր անմեղ, սակայն կատարելության ճանապարհին նա դեռ պիտի ինքնահաստատվեր: Նախաստեղծ մարդու բնության կատարելությունը հոգևոր բարոյական իմաստով լիարժեք չէր, քանի որ այդ կատարելության լրիվությանը մարդը կարող էր հասնել՝ ճանաչելով ծշմարտությունը և հաստատելով իր ուժերը բարու մեջ: Աստված

## »»76. Մարդու արարումը

և առաջին մեղքը գործելով՝ կորցրեց շատ բան, սակայն ողորմած Աստծու կամքով պահպանեց իր պատկերը՝ իր Հոր և Աստծու պատկերը: Մարդու մեջ Աստծու պատկերի արտաքին նշանն է Աստծուց նրան պարզեցած իշխանությունը երկրի բոլոր արարածների վրա (Ծննդ. 1:26):

Մարդիկ դրախտում երանելի վիճակի մեջ են: Եվ այդ երանությունն ավելի ու ավելի կաճեր և մշտական կդառնար, եթե նրանք պահեին Աստծու պատվիրանը և դրա միջոցով հավերժ հաստատվեին բարու և Աստծուն հնազանդվելու մեջ, պահպանեին մարմնի ու հոգու կատարյալ առողջությունն ու անմահությունը և աստվածային կատարյալ արարչագործության վրա՝ մարդկային կատարյալ տիրապետությունը:

## ԳԼՈՒԽ 12. ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐԻ ՄԱՍԻՆ

### 77. Աստծու ընդիանուր նախախնամությունն աշխարի մասին

Աստված, արարելով Երկինքն ու Երկիրը, չքողեց նրանց մենակ՝ մարդու տիրապետության տակ, չլքեց նրանց՝ զրկելով իր հոգածությունից ու խնամքից: «Հմ Յայր մինչև այժմ գործում է, ուրեմն ես ևս գործում եմ» (Յովհ. 5:17): Տեր Յիսուս Քրիստոսի այս խոսքերն աշխարի մասին Աստծու մշտական խորհրդածության ապացույցն են: Չնայած Աստված յոթերորդ օրը հանգստացավ իր կատարած բոլոր գործերից (Ծննդ. 2:3), սակայն նա աշխարի չքողեց ինքնահոսի: «Աստված է տալիս ամեն բանի կյանք և շունչ... Մենք նրանով ապրում ենք և շարժվում ենք և կանք...» (Գործք 17:25, 28):

Այսպես կոչված «բնության օրենքների» մշտականությունն Աստծու կենդանի կամքի ներգործությունն է. իրենք իրենցով դրանք անզոր և անգործուն կլինեին: Աստված մշտապես հոգ է տանում իր ստեղծագործության կյանքի պահպանման համար: Մինչ օրս էլ նա արաշչությանն առաջնորդում է դեպի նրա համար նախասահմանված նպատակը, այլ խոսքով՝ անընդհատ նախախնամում է նրան: Աստծու նախախնամությունը, ըստ Եկեղեցու ուսուցման, Աստծու ամենազորության, իմաստության և բարության մշտական ներգործությունն է, որով Աստված պահպանում է արարածների կյանքն ու զորությունները, ուղղորդում դրանք բարի նպատակների, օժանդակում ամեն բարիքի, իսկ բարուց հեռանալու հետևանքով առաջացած չարիքը խափանում կամ վերացնում է և այն դարձնում է բարի հետևանքների ([12], էջ 108):

Աստծու նախախնամությունը գործում է առավելապես Երկու ուղղություններով՝ պահպանում և դեկավարում: Աստված պահպանում է բոլոր արարածների գոյությունն ու կյանքը՝ ինչպես բարձրակարգ, այնպես էլ՝ ստորակարգ (Յով 12:10), և նյութական աշխարի ու բարոյական աշխարի բոլոր գործողություններն ու իրադարձություններն ուղղորդում է իր կողմից սահմանված նպատակին: Աստծու նախախնամությունն ընդգրկում է ողջ տիեզերքը, այդ բվում և մեր Երկիրն իր բոլոր զորություններով և օրենքներով, աշխարի կյանքի համայն կարգ ու կանոնով ([13], էջ 202): Արտաքին աշխարի նկատմամբ Աստծու նախախնամությունն արտահայտվում է այն օրենքների և դրանց ենթակա զորությունների ներգործությամբ, որոնք արարչագործության ընթացքում դրվել են ամբողջ տիեզերքի իինքում: Այդ օրենքներն իրենց անընդհատ և ոչ կամայական ներգործությամբ որոշում են ողջ համաշխարհին գործնքացների ինքնակարգավորումը, որ ապահովում է և այս աշխարի կայունությունը, և նրա կողմից իր նպատակի իրականացումը ([13], էջ 202-203):

Եթե Աստծու հոգածությունից գուրկ չէ անբան բնության և ոչ մի էակ, ապա առավել ևս՝ որպես աստվածային նախախնամության առարկա է հանդես գալիս մարդկային ցեղը: Տերը մարդուն կարիքի մեջ չի թողնում և ազատում է զանազան վտանգներից, մանավանդ նրանց, ովքեր Աստծու Երկյուղն ունեն: Եվ չնայած Աստծու նախախնամությունը տարածվում է բոլոր մարդկանց վրա՝ և բարեպաշտների, և անօրենների, սակայն բարեպաշտներն արժանանում են Աստծու առանձնահատուկ հոգածությանը: «...Ամեն ինչ գործակից է լինում նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Աստծուն» (Յովո. 8:28):

Բանական արարածների հանդեպ Տերը սահմանում է մասնավոր և ընդիանուր նպատակներ, սակայն դրանց հասնել ոչ մեկին չի պարտադրում, այլ սպասում է, որ բանական արարածներն իրենք գիտակցեն այդ նպատակները և իրենք իրենց ազատորեն տրամադրեն դրանց հասնելուն: Աստծու նախախնամությունն ընդգրկում է ամբողջ թագավորություններ ու ժողովուրդներ: Պատահական չեն ծնվում և վերանում երկրի երեսից առանձին ժողովուրդներ: Աստծու նախասահմանումներն առանձին մարդու և ամբողջ ժողովուրդների համար Աստծու ծածուկ խորհուրդներն են՝ մեզ համար անհասանելի, անբացատրելի:

»»77. Աստծու ընդիամուլը նախախնամությունն աշխարհի մասին

Աստծու բարեհածությամբ է կանգուն տիեզերքի անսահման տարածությունը: «Միթե երկինքն ու երկիրը ես չե՞մ լցնում,- ասում է Տերը» (Երեմ. 23:24): «Երբ շրջում ես երեսդ նրանցից, խռովվում են նրանք, երբ նրանցից հանում ես նրանց շունչը, սպառվում և հող են դառնում: Ուղարկում ես քո շունչը և վերստեղծում նրանց, ու նորոգում երեսն երկրի» (Սաղմ. 103:29-30):

Աստծու նախախնամությամբ է ապրում ողջ բուսական աշխարհը: «Երկինքը նա պատեց ամպերով, երկրի համար պատրաստեց անձրևն իր, լեռներում խոտածեցրեց կրանջար՝ մարդկանց կարիքների համար» (Սաղմ. 146:8): Նա առանց իր խնամքի չի թողնում անգամ դաշտի շուշաններին՝ նրանց և մյուս ծաղիկներին զարդարելով մեզ հիացնող գեղեցկությամբ (Մատթ. 6:29):

Աստծու նախախնամությունը տարածվում է նաև կենդանական աշխարհի վրա: «Բոլորի աչքերը քեզ վրա են հառած հուսով, և դու ես տալիս նրանց կերակուրը ժամանակին, տալիս ես դու նրանց, և սնվում են նրանք: Բացում ես ծեռքը քո, և քո քաղցր կանքով հագեցնում ես բոլորին» (Սաղմ. 144:15-16): Աստված իր խնամատարությունից դուրս չի թողնում անգամ փոքրիկ թռչնակներին. «...Նրանցից մեկն անգամ առանց ծեր Յոր գետին չի ընկնում» (Մատթ. 10:29):

Նախախնամությունն աշխարհի կյանքն Աստծու Աջի մեջ մշտապես գտնվելու վիճակ է: «Աշխարհը չի կարող մնալ նի ակնթարթ անգամ, եթե Աստված վերցնի նրանից իր խնամատարությունը» (Երանելի Օգոստինոս ([12], էջ 108)): «Դայր Աստծու ամենազոր և ամենասուրբ խոսքը, պարուելով ամեն բան և ամենուրեք դրսնորելով իր զորությունները և լուսավորելով բոլոր երևելիներին և ամերևույթներին, ամեն բան ընդգրկում և պարունակում է իր մեջ, այնպես որ ոչինչ անմասն չի թողնում իր զորությունից, այլ ամեն բան և ամեն ինչի մեջ, յուրաքանչյուր էակ առանձին և բոլոր էակները միասին կենդանացնում և պահպանում է» (Սուրբ Աթանաս Սեծ, «Ընդդեմ հեթանոսների», կետ 42):

Ընդ որում, պետք է նշել ևս մի երևոյթ, որ բևեռում է մարդու միտքը երկյուղած հիացման մեջ: Արարիշը, ամեն բան իր Աջում բովանդակելով, արարչագործության պահից սկսած, բոլոր օրգանական էակներին և անգամ բուսական աշխարհի յուրաքանչյուր ներկայացուցչի շնորհել է իր բնությանն ու կազմվածքին համապատասխան չափով աճելու և զարգանալու, իր ուժերից օգտվելու և շրջակա միջավայրն օգտագործելու ազատություն: Ավելին, նրանցից յուրաքանչյուրը կարող է համապատասխանաբար փոխել իր ձևը, չափով կամ որոշ հատկություններ՝ հարմարվելով նոր շրջապատին կամ միջավայրի փոփոխություններին: Ավելի մեծ ազատություն Արարիշը տվել է մարդուն՝ երկրի վրա ամենաբարձր, բանական ու բարոյական իր արարածին:

Աստծու Դայրական հոգածության առարկան երկրի վրա առավելապես մարդն է: Աստված գիտե ամեն մեկի մտքերը (Սաղմ. 138:2), զգացումները (Սաղմ 7:10) և նույնիսկ հեծեծանքները (Սաղմ. 78:11), տալիս է ամեն մեկին իրեն անհրաժեշտը՝ մինչև իրենից այդ մասին խնդրելը (Մատթ. 6:32), և խոնարհում է իր ականջը խնդրողի աղոթքին (Սաղմ. 85:1)` կատարելով խնդրվածը, եթե միայն այն բխում է անկեղծ և կենդանի հավատից (Մատթ. 17:19), և եթե համապատասխանում է խնդրողի բարիքին, որ է Աստծու թագավորությունը փնտրելը (Մատթ. 6:33): Նա ուղղում է իր ճանապարհը չինացող մարդու քայլերը (Առակ. 20:24), Նա աղքատացնում ու հարստացնում է, խոնարհեցնում ու բարձրացնում, ցավ է պատճառում ու ամոքում, հարվածում է ու բժշկում (Յոր 5:18): Սիրելով արդարներին՝ Նա խնայում է նաև մեղավորներին, մինչև վերջ չի բարկանում և հավիտյան ոյն չի պահում (Սաղմ. 102:8-9), այլ երկար համբերում է, որպեսզի իր բարության շնորհիկ նրանց ապաշխարության բերի (Յորոն. 2:4): Աստծու այս համապարփակ անդադրում գործունեությունն աշխարհում արտահայտված է Դավատանքի մեջ՝ Դայր Աստծուն անվանելով «Ամենակալ»:

Աստծու նախախնամությունն, ըստ Եկեղեցու ուսուցման, բարի հետևանքների է հանգեցնում նաև ակներև չարիքները. դա հատկապես կարող են իրենց կյանքում զգալ Նրան հուսացողները:

Բնական, բնազդային, իսկ բանական աշխարհում նաև բարոյապես ազատ ցանկությունների մեջ բազմազանություն կա տիեզերքում, որի հետ ամենակարող Աստված է իր նախախնամությունն այնպես է զուգակցում, որ դրանք բոլորը բովանդակում են մեջ և ուղղորդում՝ համաձայն ընդհանուր նախախնամական ծրագրի: Բոլոր անկատարությունները, տառապանքներն ու հիվանդությունները, որոնք առաջանում են աշխարհում այդ բազմազան անհատական ցանկությունների բախումից, Աստծու բարեգորությունը շտկում և բժշկում է, հեռացնում թշնամությունը և ուղղորդում ամբողջ աշխարհի կյանքը դեպի ի վերուստ նրա համար նախանշված բարի նպատակ: Այդ նպատակը՝ բերկրության դրախտի կարոտն ու նորոգման իղձը, Նա հիշեցնում է մարդկային հոգուն՝ իր ներկայության խաղաղությամբ ու երջանկությամբ առաջնորդելով նրան անդադար փառաբանության պայծառ ճանապարհով ([12], էջ 109):

Եվ ինչքան էլ մարդկությունը շեղվի աշխարհում իրեն հատկացված կոչումից, ինչքան էլ նա ընկնի, ինչքան էլ մարդկային զանգվածները, իրենց չար դեկավարներին հետևելով, հակվեն մերժելու աստվածային պատվիրանները և մերժելու հենց Աստծուն, ինչպես հիմա տեսնում ենք, միևնույն է, աշխարհի պատմությունը պիտի ավարտվի աստվածային նախախնամությամբ նրա համար սահմանված նպատակի իրագործումով՝ աստվածային ճշմարտության լիակատար հաղթանակով: Եվ դրանից հետո պիտի բացվի Փառքի Թագավորությունը, երբ Աստված կլինի ամեն ինչ ամենքի մեջ (Ա Կորնթ. 15:28):

## 78. Աստծու նախախնամությունը մարդու մասին մինչև նրա անկումը

Ստեղծելով մարդուն՝ Արարիչն իր նախախնամությամբ չլքեց նրան: Աստվածային շնորհը մշտապես բնակվում էր մեր նախածնողների մեջ և նրանց ծառայում էր, Սուրբ Յայրերի արտահայտությամբ՝ որպես երկնային զգեստ: Նրանք ունեին Աստծու մերձավորության կատարյալ զգացողություն: Ինքն Աստված նրանց առաջին Դաստիարակն ու Ուսուցիչն էր, և արժանացնում էր նրանց իր անմիջական հայտնություններին: Երևալով նրանց՝ զրուցում էր ու հայտնում իր կամքը:

Ծննդոց գիրքը երկրորդ և երրորդ գլուխներում ներկայացնում է առաջին մարդկանց կյանքը: Աստված Ադամին ու Եվային դրեց դրախտում՝ Եղեմի այգում՝ «բերկրության դրախտում», որտեղ ամեն տեսակի գեղատեսիլ ու համեղ մրգեր տվող ծառեր բուսցրեց՝ պատվիրելով մշակել ու պահպանել իրենց բնակավայրը: Սքանչելի այդ վայրն առաջին մարդկանց մեջ ականա պիտի առաջացներ ուրախության զգացում ու բարձրացներ նրանց միտքը դեպի աշխարհի կատարելագույն Գեղանկարիչը: Իսկ աշխատանքը պիտի նպաստեր նրանց ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր ուժերի զարգացմանը: Ինչպես պատմում է Ծննդոցի հեղինակը, Աստված բոլոր կենդանիներին բերեց Ադամի մոտ, որ տեսնի, թե Ադամն ինչ անուն կտա դրանց: Պարզ է, որ դա մի կողմից նարդուն հնարավորություն տվեց ծանոթանալու կենդանական աշխարհի հարստության ու բազմազանության հետ, իսկ մյուս կողմից նպաստեց նրա մտավոր կարողությունների զարգացմանը, իր աչքերի առջև գտնվող աշխարհի հետ համեմատվելով՝ իրեն ավելի ամբողջական ճանաչելուն ու երկրային բոլոր էակների նկատմամբ իր թագավորական առավելությունը գիտակցելուն:

Դասկանալի է, որ առաջին մարդկանց նախնական վիճակը հոգևոր մանկության և հոգևոր պարզության վիճակ էր՝ զրուցված բարոյական մաքրության հետ: Սակայն այն բոլոր տվյալներն ուներ՝ նրանց բոլոր ուժերի արագ ու ներդաշնակ աճելու և զարգանալու համար՝ ուղղված Աստծուն բարոյապես նմանվելու և նրա հետ ամենասերտ միության հասնելու: Նրանց միտքը մաքուր էր, լուսավոր, դատողությունն՝ առողջ: Սակայն դրա հետ միասին այդ միտքը սահմանակակ էր ու կյանքի դժվարություններով չփորձված, ինչպես դա երևաց մեղանշման ժամանակ: Այն դեռևս պիտի զարգանար ու կատարելագործվեր:

### »»78. Աստծու նախախնամությունը մարդու մասին մինչև նրա անկումը

Բարոյական տեսակետից նախաստեղծ մարդը մաքուր և անմեղ էր, բայց նա դեռևս պիտի հաստատվեր բարու մեջ ու հոգևոր աճ ապրեր Աստծու օգնությամբ՝ սեփական գործունեության միջոցով: «Անհրաժեշտ էր,- գրում է սուրբ Իրինեոսը,- որ մարդը, կյանք ստանալով, աճեր, հետո՝ հասունանար, հասունանալով ամրանար, կատարելագործվելով փառավորվեր, փառավորվելով արժանանար Աստծուն տեսնելու» ([12], էջ 113):

Մարդն արարվել էր նաև առանց մարմնավոր արատի: Այդ մարմինը, իր զարմանահրաշ կառուցվածքով, անկասկած, Արարչից չի ստացել ոչ մի պակասություն՝ ոչ արտաքին, ոչ ներքին, օժտված էր բարմ ու անարատ գորություններով, իր մեջ չուներ ոչ մի խանգարվածություն և կարող էր ազատ լինել հիվանդություններից: Դիվանդություններն ու տառապանքները Ծննդոց գրքում ներկայացված են որպես մարդու անկման հետևանքներ և պատիժներ մեղքի դիմաց:

Ծննդոց գրքում, բացի դրանից, խորհրդավոր մի ցուցում է տրված կյանքի ծառի մասին, որից ճաշակումը հասանելի էր մեր նախածնողներին մինչև մեղանչումը և պահպանում էր նրանց ֆիզիկական մահվանից: Մահը մարդու համար անհրաժեշտություն չէր. «Աստված արարել էր մարդուն ոչ կատարյալ մահկանացու, ոչ էլ՝ անմահ, սակայն ընդունակ և մեկին, և մյուսին» (Թեոփիլոս Անտիոքացի ([12], էջ 113-114)): Սակայն ինչքան էլ կատարյալ լինեին մարդու բնական ուժերը՝ նա, լինելով սահմանափակ էակ, այն ժամանակ էլ բոլոր արարված էակների նման, կարիք էր զգում դրանք մշտապես ամրապնդելու կյանքի Աղբյուրի՝ Աստծու օգնությամբ: Մարդուն անհրաժեշտ էին համապատասխան միջոցներ՝ բարու ճանապարհին հաստատվելու համար: Այդպիսի սկզբնական միջոց էր բարու և չարի գիտության ծառից չճաշկելու պատվիրանը: Դա հնագանդության պատվիրանն էր: Կամավոր հնագանդությունը բարոյական հաջողության ճանապարհն է: Որտեղ կամավոր հնագանդություն կա, այնտեղ կա՝

1. մեծամտության ճանապարհի խափանում,
2. հարգանք ու վստահություն մեզանից բարձրի հանդեպ,
3. զսպվածություն (ժուժկալություն):

Դնագանդությունը բարերար կերպով է ներգործում մտքի վրա՝ խոնահեցնելով նրա ամբարտավանությունը, զգացմունքի վրա՝ սահմանափակելով ինքնասիրությունը, և կամքի վրա՝ ուղղելով մարդու ազատությունը դեպի բարին: Աստծու շնորհն օժանդակում և ամրացնում է նրան այդ ճանապարհին: Այս ճանապարհն էր սպասվում առաջին մարդկանց՝ մեր նախածնողներին:

Ժամանակակից մարդուն ընդհանրապես դժվար է, իսկ երբեմն էլ անհնար է պատկերացնել մարդու իսկական դրախտային վիճակը, որ նրա մեջ միավորում էր բարոյական մաքրությունը, մտքի պայծառությունը, նախաստեղծ բնության կատարելությունն ու մերձավորությունն Աստծու՝ ընդհանուր հոգևոր մանկականությամբ: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ բոլոր ժողովուրդների ավանդությունները խոսում են հենց այդպիսի վիճակի մասին, որ բանաստեղծների մոտ կոչվում է մարդկության «ոսկեդար» (չինական, հնդկական, պարսկական, հունական և այլ ավանդություններ):

Դերանոս հնադարի մեծ մտածողները համոզված էին, որ նախնիներն ավելի մաքուր ու բարոյական էին հետագա մարդկանցից (Սոկրատես), որ հնագույն կրոնական ավանդություններն ու գաղափարներն ավելի կատարյալ էին հետագա հեթանոսականներից, և դա այն պատճառով, որ առաջին մարդիկ ավելի մոտ էին Աստծուն, գիտեին Նրան՝ որպես իրենց Արարչի և Հոր (Պլատոն, Կիկերոն ([12], էջ 115)):

## ԳԼՈՒԽ 13. ՄԱՐԴՈՒ ԿՈՉՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԱՆԿՈՒՄԸ

### 79. Մարդու կոչումը

Բարձրացնելով մարդուն ամբողջ երկրի վրա, նրան շնորհելով բանականություն և ազատություն, զարդարելով նրան իր պատկերով՝ Արարիչն այդպիսով ցույց տվեց նրան իր հատուկ կոչումը: Մարդու հոգևոր հայացքի առաջ Աստված է և հոգևոր աշխարհը, իսկ մարմնավոր հայացքի առաջ՝ նյութական աշխարհը: Մարդու առաջնահերթ կոչումն Աստծու փառքն է: Մարդը կոչված է Աստծու հետ միությանը հավատարիմ մնալ, հոգով ձգտել Նրան, ճանաչել իր Արարչին, փառաբանել Նրան, բերկրանքով ցնծալ Նրան միանալու համար և խաղաղությամբ ապրել Նրա մեջ:

Սիրաքի իմաստուն որդին գրում է. «Տերը մարդուն ստեղծեց հոռից և դարձալ նրան վերադարձեց հողին: Նա մարդկանց տվեց հաշված օրեր ու ժամանակներ և նրանց իշխանություն տվեց այն ամենի վրա, ինչ կա երկրում: Ըստ իրենց բնույթի՝ զորությամբ զգեստավորեց նրանց և ըստ իր պատկերի արարեց նրանց: Մարդու ահը դրեց ամեն կենդանի էակի վրա՝ տիրելու համար գազաններին և թռչուններին: Մարդկանց միտք, լեզու, աչք, ականջ և սիրտ տվեց՝ դրանցով իմացություն ստանալու համար: Նրանց լցրեց գիտության հանճարով և նրանց ցույց տվեց չարն ու բարին: Իր աչքը դրեց նրանց սրտի մեջ՝ ցույց տալու համար նրանց իր գործերի մեծությունը, որպեսզի օրինեն իր սուրբ անունը. նաև, որպեսզի պատմեն իր գործերի մեծությունը: Ավելացրեց նրանց գիտությունը և նրանց ժառանգություն տվեց կյանքի օրենքը: Դավիտենական ուխտ հաստատեց նրանց հետ և իր դատաստանները ցույց տվեց նրանց» (Սիր. 17:1-10): Քանի որ, եթե բոլոր արարածները կոչված են ըստ իրենց ընդունակությունների փառաբանելու Արարչին, ինչպես այդ մասին ասվում է, օրինակ, 148-րդ սաղմոսում, ապա իհարկե, մարդը՝ որպես արարչագործության պսակ, կոչված է լինելու Աստծու փառքի գիտակից, բանական, մշտական և կատարելագույն արտահայտչանիցոցը երկրի վրա:

Այդ բանի համար մարդը պիտի արժանի լինի իր Նախապատկերին: Այլ կերպ ասած՝ նա կոչված է կատարելագործվելու, պաշտպանելու իր նմանությունն Աստծուն, վերականգնելու այն, ամրապնդելու: Կոչված է բարի գործերի միջոցով զարգացնելու և կատարելագործելու իր բարոյական կարողությունները: Դա է պահանջում մարդու հոգատարությունն իր իսկ սեփական բարիքի համար: Ուստի մարդու կյանքի նպատակը երանությունն է Աստծու մեջ:

Մարդու անմիջական ֆիզիկական հայացքն ուղղված է աշխարհին: Մարդը նշանակված է լինել երկրավոր արարածների պսակը և բնության թագավորը, ինչպես նշված է Ծննդոց գրքի առաջին գլխում: Ահա թե ինչում դա պիտի արտահայտվի: Որպես Աստծու պատկեր, որպես որդի և ժառանգորդ երկնավոր Հոր տան մեջ՝ մարդը նշանակված է լինելու միջնորդ Արարչի և երկրավոր արարչության միջև. մասնավորապես, նա նախասահմանված է լինելու


1. Նրա մարդարեն, որպեսզի խոսքով ու գործով նրանում Աստծու կամքը հռչակի,
2. Նրա քահանայապետը, որպեսզի բոլոր երկրածինների անունից գոհաբանության ու շնորհակալության զոհաբերություններ առաքի առ Աստված և երկնային օրինություններ իշեցնի երկրի վրա,
3. Նրա գլուխն ու թագավորը, որպեսզի իր մեջ կենտրոնացնելով բոլոր երևելի արարածների կյանքի նպատակները՝ կարողանա իր միջոցով ամեն բան Աստծու հետ միացնել, և այդպիսով երկրավոր արարածների ամբողջ շղթան պահպանի ներդաշնակ միության ու կարգավորվածության մեջ ([12], էջ 101-102):

»»79. Մարդու կոչումը

Այդպես էր ստեղծված առաջին մարդը՝ ունակ կատարելու իր համար նախասահմանվածը, լնդ որում՝ ազատ, հոգաբարձրակամ, ուրախությամբ, հոգու մղումով և ոչ թե հարկադրաբար: Մինչդեռ այսօր աստիճանաբար ավելի մեծ խնդիր է դառնում քնությունը պահպանելու և ներկայումս ահռելի չափեր ընդունած կենդանական և բուսական աշխարհների քայքայումը կանխարգելելու անհրաժեշտությունը: Այդ առումով օգտագործվում է «ճգնաժամ» բառը, որը միանգամայն ճգրիտ է բնորոշում իրավիճակը: «ճգնաժամը» (կրտսէ) հունարեն բառ է, որ, վերջին հաշվով, նշանակում է դատաստանի ճգնաժամային վիճակն այն պահն է, երբ հարցականի տակ է դրվում նախսկինում եղած ամեն բան: Ճգնաժամի՝ որպես դատաստանի գաղափարը շատ կարևոր է. այն կարող է լինել Աստծու դատաստանը մեր հանդեպ, այսինքն՝ մի պահ, երբ բնությունը զայրույթով, վրդովմունքով հրաժարվում է համագործակցել մեզ հետ: Այն կարող է լինել նաև մի պահ, երբ մենք պետք է ինքներս դատենք մեզ և շատ բաների մեջ դատապարտենք: Մեր խիլճն է հարցնում՝ ի՞նչ ենք արել մենք մեր երկրի հետ վերջին հիսուն տարիների ընթացքում: Հարցն այն չէ, թե մեզ համար շահավետ է, որ երկրը լինի բերրի և նրա վրա ամեն բան ընթանա հնարավորինս ավելի լավ, այլ թե ո՞րն է մեր բարոյական պատասխանատվությունը աշխարհի առաջ, աշխարհի, որն Աստված արարել է սիրուց դրդված և սիրով, և որին նա կոչել է հաղորդակցվելու իր հետ:

Երկրի վրա, ջրերի խորքում կամ երկնական բարձունքներում ապրող յուրաքանչյուր արարած հաղորդակցվում է Տիրոջ հետ: Հասկանալի է, որ նրանցից ամեն մեկն Աստծու հետ հաղորդակցվում է յուրովի, սակայն չկա այնպիսի արարած, որն Աստծու հետ չունենա որևէ կապ, հակառակ դեպքում հրաշքի գաղափարն անհնար կլիներ: Երբ Քրիստոսը հրամայում է ալիքներին հանդարտվել, քանուն՝ դադարել (Մարկ. 4:35-41), ապա դա խոսում է ոչ թե այն մասին, որ Նա բնության նկատմամբ օժտված է ինչ-որ մոգական իշխանությամբ, այլ այն մասին, որ Աստծու խոսքն ինչ-որ ձևով ընկալվում է Նրա ամեն մի արարածի կողմից:

Բացի դատաստանի գաղափարից՝ «ճգնաժամ» բառի մեջ կա մեկ այլ իմաստ ևս: Չինարեն այն նշանակում է «բացված հնարավորություն», և սա շատ կարևոր է: Դատաստանի գաղափարը խոսում է անցածի մասին, սակայն երբ դու քեզ գնահատել ես, երբ գնահատել ես այն վիճակը, որի մեջ գտնվում ես, երբ դու քո հանդեպ դատը վճռել ես, հաջորդ քայլը պիտի լինի առաջ գնալ և ոչ թե հետ նայել: Իրապես, դատաստանի ժամանակ մարդը խորացած նայում է իր խղճից ներս, ուշադիր զննում է, թե ինչ է արել ինքը՝ և անձնապես, և համայնքար՝ որպես մարդկություն, և հետո մտածում է, թե ուր գնա: Եվ այդ պահին, երբ մենք սկսում ենք մտածել ապագայի մասին,



Ծերում ծաղկող, քրիստոսի հրացք ծովում, 1391թ.

մենք խոսում ենք հնարավորի մասին: Մենք դեռ չենք հասել այնպիսի պահի, եթե ոչ դարձը կա, ոչ էլ դեպի առաջ տանող ճանապարհ: Եթե այլևս ոչ մի ճանապարհ չի լինի ոչ դեպի անցյալը, ոչ էլ առաջ, կամ աշխարհի վախճանը. դեռ դրան չենք հասել: Սակայն մենք բոլորս պատասխանատու ենք ինչ-որ բանի համար այս բնության մեջ, որում ապրում ենք. բոլորս էլ թունավորում ենք հողը, օդը, ջուրը, բոլորս էլ ինչ-որ չափով ու ծնով մասնակցում ենք Աստծու արարչագործության քայլայմանը: Ուստի լավ կլիներ մտածենք այն մասին, թե ինչ կապ կա Աստծու, իր արարած աշխարհի և մարդու միջև:

Նախ, տեսնենք՝ այդ մասին ինչ է ասում Արարիչը: Սուրբ Գրքի բազմաթիվ հատվածներից ակնհայտ է, որ ամեն բան, ինչ որ գոյություն ունի, ստեղծել է Աստված: Դա նշանակում է, որ Նա Իր իշխանական խոսքով գոյության է կոչել այն, ինչ նախկինում չկար: Ընդ որում, գոյության է կոչել, որպեսզի ամեն բանի տա երանություն, ամեն բան բերի հասցնի սրբության և կատարելության վիճակի:

Այն պահին, եթե Աստված արարեց բոլոր արարածներին ու մարդուն, Աստված նրանց արարեց սիրուց, արարեց նրանց, որպեսզի նրանց հետ կիսի այն հարստությունը, ինչ որ հենց Իրեն էր պատկանում. ավելին՝ կիսվելու ոչ միայն Իրեն պատկանող հարստությանք, այլև հենց Ինքն Իրենով: Պետրոս առաքյալի նամակից մենք գիտենք, որ մեր մարդկային կոչումը ոչ միայն Աստծուն ճանաչելը, Նրան երկրպագելը, Նրան ծառայելն է, ոչ միայն Նրա առջև դրդալն է, Նրան սիրելն է, այլև, ի վերջո, աստվածային բնությանը հաղորդակից լինելը (Բ Պետր. 1:4), այսինքն՝ Աստծուն այնպես հաղորդվելը, որ աստվածային բնությունը պատվաստվի մեզ, և մենք այդ հարաբերության մեջ նմանվենք Քրիստոսին: Սուրբ Իրինեոս Լիոնացին ասում է, որ ժամանակների վախճանին, եթե ողջ արարչությունը կիասնի իր գոյության լրումին, եթե մարդը կիասնի իր լրումին, ամբողջ մարդկությունը, Աստծու Միածին Որդու հետ միացած, Սուրբ Հոգու գորությանը կդառնա Աստծու միածին որդի: Ահա մեր կոչումը վերջին հաշվով: Բայց և, դա չի նշանակում, որ մարդը կոչված է դրան, իսկ մնացած արարածները՝ ոչ ([14], էջ 371):

Սուրբ Գրքում կարդում ենք, որ Աստված արտասանում է խոսքը, և սկսում է գոյություն ունենալ այն, ինչ երբեք նախկինում չկար: Նախ երևում է լույսը: Աստված արտասանում է ստեղծագործ խոսքը, և հանկարծ ծագում է լույսը, որը հանդիսանում է իրականության գոյության սկիզբը: Յետո մենք տեսնում ենք, որ մյուս արարածներն են առաջանում Աստծու հրամանով՝ կարծես թե քայլ առ քայլ կատարելագործվելով, և հասնում ենք այն պահին, եթե արարվում է մարդը: Թվում է՝ մարդն արարչագործության գագաթն է: Սակայն մարդու արարման պատմությունը շատ հետաքրքիր է: Մեզ չի ասվում, որ Աստված, ստեղծելով ամենաբարձր, զարգացած կենդանիներին, հետո անում է հաջորդ քայլը, որպեսզի ստեղծի էլ ավելի կատարյալ կենդանի եակ: Մեզ ասվում է, որ եթե բոլոր արարածները ստեղծվել էին, Աստված վերցնում է երկրի հողը և արարում է մարդուն այդ հողից: Այսպես, մարդը ստեղծված է, կարծես թե, ամբողջ տիեզերքի հիմնական նյութից: Եվ սա մարդուն հարազատ է դարձնում երկրի ամենացածրակարգ արարածներին: Մենք ստեղծված ենք նույն նյութից: Այդ պատճառով մենք ուղիղ կապի մեջ ենք նրանց հետ: Սակայն մարդու մեջ կան նաև հոգևոր աշխարհից տարրեր, ուստի մարդը պատկանում է և հոգևոր աշխարհին, և նյութական: Եկեղեցու հայրերը, հաշվի առնելով սա, համարում են, որ նրա հիմնական կոչումը բոլոր արարածների հոգեղինացումն ու նրանց՝ Աստծու մոտ բերելն է ([14], էջ 372):

Մարդն առանց Աստծու օգնության չէր կարող իրականացնել այդ սրբազան կոչումը: Եվ Աստված մարդացավ, մարմնացավ, ծնվեց Սուրբ Կույս Մարիամից: «Բանը մարմին եղավ և բնակվեց մեջ» (Հովհ. 1:14), «Նրա մեջ է բնակվում Աստվածության ամբողջ լիությունը մարմնապես» (Կող. 2:9): Հիսուս Քրիստոս՝ Աստծու մարմնացած խոսքը, կատարյալ Աստված է և կատարյալ մարդ:

Աստծու Որդին կատարյալ մարդ էր երկու առումով: Նախ, Նա հասել է այն ամենի լրիվությանը, ինչ որ մարդը կարող է լինել. դարձել է մի՝ Աստծու հետ: Եվ երկրորդ, Նա կատարյալ է նրանով, որ Նա բուն իմաստով մարդ է, Նա դարձել է Ադամի սերունդ. և Նրան պատկանող մարմնավորությունը մեր մարմնավորությունն է: Եթե մենք մտածում ենք արարածների մասին, այն երկրի մասին, որի վրա մենք ապրում ենք, աշխարհի մասին, որ մեզ շրջապատում է, տիեզերքի մասին, որի մի փոքրիկ մասնիկն ենք, մենք պիտի պատկերացնենք ու հասկանանք, որ մեր մարմնավորությամբ ազգակից ենք այն ամենին, ինչ նյութական է տիեզերքում: Քրիստոս նույնապես, լինելով մարդ, իր մարմնավորությամբ ազգակից է ամբողջ արարչությանը՝ բոլոր արարածներին: Մենք հաճախ խոսում ենք մարմնացման մասին՝ որպես մի երևույթի, որ կատարվել է միայն մարդու համար, մարդկության համար: Մենք ասում ենք՝ Աստված մարդացավ, որպեսզի մեզ փրկի մեղքից, որպեսզի հաղթի մահկանը, որպեսզի վերացնի անջրաբետն Աստծու և մարդու միջև: Սակայն Քրիստոս մարմնացավ նաև բոլոր արարածների համար. նյութական աշխարհը նույնապես պիտի հաղորդվեր Քրիստոսի մարմնավորման հրաշքին, և օրինվեր ու սրբվեր Քրիստոսի մարմնավորությամբ և Սուրբ Հոգու շնորհով (Եկեղեցու խորհուրդներով ու կարգերով՝ մարդու աղոթքներով ու միջնորդությամբ): Եթե մարդն ստեղծվեց, նրան հնարավորություն էր տրված վայելել դրախտի բոլոր պտուղներից (բացի մեկից), բայց նա իր գոյության համար կախված չէր այդ պտուղներից: Մարդը դրախտում ապրում է՝ Աստծու հետ հաղորդակցվելով Նրա ստեղծագործ խոսքի միջոցով (իշենք Քրիստոսի պատասխանը սատանային. «Միայն հացով չէ, որ կապրի մարդ, այլ՝ Աստծու ամեն խոսքով» (Ղոկ. 4:4)):

Պատվիրանազանցությունից հետո նախ մարդը բաժանվեց Աստծուց, ապա մարդը բաժանվեց մարդուց, և վերջապես, մեղքը փշրեց մարդու և շրջապատող աշխարհի հարաբերությունների ամբողջականությունը, ներդաշնակությունը: Մարդը, հեռանալով Աստծուց, կորցրեց միայն Աստծու խոսքով ապրելու հնարավորությունը: Աստված մարդուն հնարավորություն տվեց իր կյանքի որոշ մասը ստանալ երկրի պտուղներից և խնդիր դրեց մարդու առաջ՝ մշակել այդ երկիրը (հողը): Առանց դրա մարդը կմեռներ, նա այլևս չէր կարող ապրել միայն Աստծով:

Մարդը կարծես թե արմատավորված է և Աստծու մեջ, Ում նա մինչև վերջ չի կորցրել, և երկրի մեջ, ուր նա ընկըմվել է արմատներով, ինչ որ նա չպիտի աներ, քանի որ նրա կոչումն էր այդ երկիրը (բոլոր արարածների աշխարհը) բերել Աստծուն՝ լինելով, ինչ-որ իմաստով, առաջնորդ: Մենք կարդում ենք Աստվածաշնչում, որ մարդուն ասված էր տիրել երկրին (Ծննդ. 1:28), և հաճախ մեկնում ենք դա հետևյալ իմաստով. իշխանություն ունենալ նրա նկատմամբ, իշխել նրա վրա: Սակայն տիրելը պարտադիր չէ այդպես հասկանալ: Մարկոսի Ավետարանում կարդում ենք. «Գիտենք, որ հեթանոսների մեջ իշխանավորներ համարվածները տիրում են նրանց. և նրանց մեծամեծները իշխում են նրանց վրա. ձեր մեջ այդպես չպետք է լինի, այլ ձեզնից ով կամենա մեծ լինել, թող լինի ձեր սպասավորը. և ձեզնից ով կամենա առաջին լինել, բոլորին ծառա թող լինի» (Մարկ. 10:42-44): Սա էլ հենց մարդու կոչումն էր. լինել ծառա ոչ թե ինչ-որ նվաստացուցիչ իմաստով, այլ լինել ծառա որց արարչությանը՝ բարձրացնելով այն դեպի Աստված, որպեսզի այն աստիճանաբար հաստատվեր Աստծու մեջ և հավիտենական կյանք ունենար ([14], էջ 376):

Քրիստոնեությունը նյութին տալիս է բացարձակ և վերջնական նշանակություն: Մատերիալիստի համար նյութը շինանյութ է: Քրիստոնյայի համար նյութն այն է, ինչը ևս, ի վերջո, պիտի մտնի Աստծու թագավորություն, փայլի աստվածային հաղորդակցությամբ, եթե «Աստված ամեն ինչ լինի ամենքի մեջ» (Ա Կորնթ. 15:28): Նյութապաշտի վերաբերմունքը պահանջում է որոշակի կենսակերպ, իսկ քրիստոնյայի վերաբերմունքը՝ որոշակի արմատական նոտեցում ամեն բանի նկատմամբ: Սուրբ Իսահակ Ասորին ասում է, որ միայն նա կարող է աղոթել մաքուր աղոթքով, ով արդեն հաշտվել է Աստծու հետ, իր հետ, իր մերձավորի հետ և բոլոր այն առարկաների հետ, որոնց

ինքը դիպչում է. այսինքն՝ նա, ով ամեն առարկա դիտարկում է որպես հնարավոր սրբություն ([14], էջ 380):

Կարելի է այսպես արտահայտվել. մեզանից յուրաքանչյուրի մարմինը պոտենցիալ մասունք է, քանի որ ամեն մեկս կոչված է սրբության: Սա նշանակում է, որ ոչ մի առարկայի չի կարելի վերաբերվել այնպես, իբրև թե այն էական չէ: Պատմում են, որ մի մարդ, մտածմունքի մեջ, անփութորեն շպրտում է լաթը, որով սրբել էր սեղանը, և հանկարծ սրավիվելով հետ է վերցնում այն ու տեղը դնում ասելով՝ ների՞ր: Սա կարող է անհեթեթություն թվալ, սակայն այն խոսում է նյութական իրականության նկատմամբ ամբողջապես ճշմարիտ վերաբերմունքի մասին: Ամեն մեկս ինչ-որ բանի դիպչում է, ինչ-որ առարկայից օգտվում: Իսկ ինչպես ենք օգտվում դրանցից և, ինչու չէ, նաև՝ այլ մարդկանցից: Եթե ես վերաբերվում եմ իմ մերձավորին այնպես, կարծես նա միայն առարկա է, որն իմ կյանքում կամ խոչընդոտ է, կամ օգնություն, կամ էլ իմ հրապուրանքի, գայթակղության, ցանկության առարկան, ես նրան իր եմ դարձնում և նրան գրկում եմ արժանապատվությունից ոչ միայն որպես մարդ, այև՝ որպես իր, քանի որ անգամ իրի նկատմամբ այդպես չի կարելի վերաբերվել:

Սրբերի ու սրբակենցաղ մարդկանց օրինակով կարող ենք տեսնել, որ կատարելության տանող ճանապարհը հասանելի է ամեն մարդու, ստեղծված է ամեն մեկի համար և որ արարչության պահպանման, սրբագործման ու կատարելագործման ուղին էլ դա է: Աստված պարզապես չի արարել և թողել, որ արարչությունն ապրի: Նա մնում է կապված իր յուրաքանչյուր արարածի հետ և կանչում է նրան իր մոտ՝ օգնելով, որ ամեն մեկն աճի իրեն տրված հնարավորությունների ամբողջական չափով՝ անմեղությունից հասնելով սրբության, մաքրությունից՝ վերափոխման:

Իսկ արարչության ու Արարչի միջև միակ «կամուրջը»՝ մարդը, տեսնո՞ւմ է արդյոք իր դերն ու դրա ողջ կարևորությունը: Նա ընթանում է դեպի կործանո՞ւմ և մյուս արարածների համար էլ փակում ճանապարհը դեպի պայծառակերպված կյանք, թե՝ ծառայում է իր բարձր կոչմանը: Չե՞ որ հարցն այն չէ, թե «այն, ինչ որ մենք անում ենք երկրի հետ, մեր մարդկային կոչման խախտում է». և դա ահազանգ է, որ մարդը կորցնում է իր իշխանական, տիրական կոչումը:


## 80. Մարդու անկումը

Նախ՝ ինչո՞ւ էր հնարավոր մարդու անկումը (պատվիրանազանցությունը):

Արարիչը մարդուն ստեղծելիս երեք մեծագույն շնորհներով է օժտել նրան՝ ազատությամբ, բանականությամբ և սիրով: Այդ շնորհներն անհրաժեշտ են մարդու հոգևոր աճի և երանության համար:

Սակայն, որտեղ ազատություն, այնտեղ հնարավոր է տատանում ընտրության ժամանակ, գայթակղություն: Այս կործանարար երևոյթի հիմնական դրսևորումներն են.

- Գայթակղությունն մտքի համար. Երբ մարդը հպարտանում է մտքով, Աստծու իմաստությունն ու բարությունը ճանաչելու փոխարեն փնտրում բարու և չարի գիտությունը՝ ճանաչողությունն Աստծուց դուրս, ճգտում իրեն «աստված» զգալ:
- Գայթակղություն սիրո զգացմունքի համար. Երբ Աստծու և մերձավորի նկատմամբ սիրո փոխարեն մարդը սիրում է լոկի իրեն և այն ամենը, ինչը բավարարում է ստորցանկությունները, տալիս ժամանակավոր հաճույք: Գայթակղության և անկման այս հնարավորությունը կանգնած էր մարդու դեմ, և առաջին մարդը չղիմացավ ու պարտվեց:



Սարգիս Խիզանցի, Աղամն ու Եվան դրախտում և դրախտից արտախված, 1604թ.

Են վայելել մեր Նախածնողները երանական դրախտային կյանքը: Խոսելով նրանց անկնան մասին՝ նա նշում է, որ իրենք իրենցով չեկան գայթակղության, այլ փորձիչը նդեց դրան (Ծննդ. 3:1-6): Թրիստոնեական Եկեղեցին նիշտ փորձիչ օծի անվան տակ հասկացել է սատանային, որն առավելագույնս համապատասխանում է փորձիչի շողոքորթությանը, հնարագիտությանը և թունավորությանը:

Իսկ ո՞րն էր պտղի ճաշակման մեղանչականությունը: ճաշակելու արգելքը մարդու ազատ կամքի փորձարկումն էր: Նախածնողների հանցանքն այն էր, որ գայթակղվելով օծից՝ նրանք խախտեցին Աստծու ուղղակի պատվիրանը՝ չուտել մի որոշակի ծառի գրավիչ պտուղներից: Այդ պատվիրանի կատարումն արտահայտում էր և հնազանդություն Աստծուն, և վստահություն Աստծու խոսքներին, և խոնարհություն, և ժուժկալություն. պարզ ու բնական առաջինությունների գումար: ճաշակումն իր հետևից անմիջապես բերեց ցավալի բարոյական և ֆիզիկական հետևանքներ:

**Պատվիրանազանցության բարոյական հետևանքները:** Պտղի ճաշակումը բարոյական անկնան սկիզբն էր միայն: Սակայն այնքան որոշակի էր ու կործանիչ, որ ակնհայտ դարձավ նախկին սրբությանն ու արդարությանը վերադառնալու անհնարինությունը, և ընդհակառակը՝ ի հայտ եկավ Աստծուց ավելի ու ավելի հեռանալու հակումը: Անշուշտ, գիտելիքն անբաժանելի է

Այս հարցի մասին Յովիան Կրոնշտադցին ասել է. «Ինչո՞ւ է Աստված թույլատրել իր սիրելի ստեղծագործության և բոլոր երկրավոր արարածների պսակի՝ մարդու անկումը: Այս հարցին պետք է պատասխանել այսպես. եթե մարդուն թույլ չտրվեր մեղանչել, ապա նրան պետք չէր ստեղծել Աստծու պատկերով և նմանությամբ, պետք չէր նրան օժտել ազատ կամքով, որը Աստծու պատկերի անբաժանելի հատկանիշն է, այլ պետք էր նրան ենթարկել անհրաժեշտության օրենքին՝ անշունչ արարածների նման՝ երկնքի, արեգակի, աստղերի, երկրագնդի և բոլոր տարերգների կամ էլ անքան կենդանիների նման. սակայն այդ դեպքում երկրի վրա չէր լինի երկրավոր արարածների թագավոր, Աստծու բարության, ինաստության, ստեղծագործական ամենազորության և նախախնամության բանական երգաբանող. այդ դեպքում մարդը ոչ մի բանով չէր կարող ապացուցել իր հավատարմությունն ու նվիրվածությունն Արարչին, իր անձնուրաց սերը. այդ դեպքում չէին լինի պայքարի սխրանքներ, վաստակներ և անթառամ պսակներ հաղթանակի համար, չէր լինի հավիտենական երանություն, որը պարզ է՝ Աստծուն հավատարմության և նվիրվածության համար և հավիտենական հանգիստ՝ երկրավոր պանդիստության գործերից ու սխրանքներից հետո» ([12], էջ 125-126):

Ծննդոցի հեղինակը չի հայտնում՝ երկա՞ր կյանքը: Խոսելով նրանց անկնան մասին՝ նա նշում է, որ իրենք իրենցով չեկան գայթակղության, այլ փորձիչը նդեց դրան (Ծննդ. 3:1-6): Թրիստոնեական Եկեղեցին նիշտ փորձիչ օծի անվան տակ հասկացել է սատանային, որն առավելագույնս համապատասխանում է փորձիչի շողոքորթությանը, հնարագիտությանը և թունավորությանը:

կյանքից. դրա խորհրդանիշը դրախտում կողք կողքի տնկված կենաց ու գիտության ծառերն էին: Դա նշանակում էր, որ Աստված չէր արգելել գիտությունը, բայց պահանջում էր, որ գիտելիքի ձգտողները լինեին բարի կյանքի մարդիկ, այսինքն՝ ապրեին Աստծու պատվիրաններով: Ոչ թե գիտության ձգտելն է ինքնին հանցանք կամ մեղք, այլ այդ գիտությունն ունենալու ցանկությունը առանց բարի կյանքի, այն ստանալը ոչ թե Աստծու պատվիրանազանցության հետ մարդու մեջ անմիջապես մտավ մեղքի սկզբունքը՝ «մեղքի օրենքը»: Այս մասին Պողոս առաքյալը գրում է. «Գիտեմ, որ ոչ մի բարի բան չի բնակվում իմ մեջ, այսինքն՝ իմ մարմնի մեջ, որովհետև կամենալը կար իմ մեջ, իսկ բարին գործելը՝ ոչ: Հաճելի է ինձ Աստծու օրենքը՝ ներքին մարդու տեսակետից, բայց իմ մարմնի անդամների մեջ տեսնում եմ այլ օրենք, որ պայքարում է իմ մտքի օրենքին հակառակ և ինձ գերի է դարձրել մեղքի օրենքին, որ կա իմ մարմնի անդամների մեջ» (Յոն. 7:18, 22-23): Մարդու մեջ մեղանչական հակումները գրավեցին իշխող դիրք, և նա դարձավ «մեղքի ծառա» (Յոն. 6:6, 12-13): Նրա մեջ խամրեցին միտքն ու զգացմունքը, այդ պատճառով բարոյական ազատությունն ինքն էլ սկսեց նրա մեջ հակվել ոչ թե դեպի բարին, այլ դեպի չարը: Մարդու կենսագործունեության դրդապատճառների հիմքում հայտնվեցին կիրքն ու հպարտությունը: Դրանց մասին կարդում ենք Յովիաննես առաքյալի առաջին ընդհանրական թղթում (Ա Յովի. 2:15-16). «Սի՝ սիրեք աշխարհը, ոչ էլ՝ ինչ որ աշխարհի մեջ կա: Եթե մեկը սիրում է աշխարհը, Յոր սերը նրա մեջ չէ, քանի որ այն ամենը, ինչ որ աշխարհի մեջ կա, մարմնի ցանկություն է, աչքերի ցանկություն և այս կյանքի ամբարտավանություն, որ Յորից չէ, այլ՝ այս աշխարհից»:

Մարմնական ցանկությունը հոգու իշխանության թուլացումն է մարմնի նկատմամբ, ցածր, մարմնավոր կորերին՝ աչքերի ցանկությանը, կուտքերին ու կապվածություններին, երկրավոր ժլատությանն ու ազահությանը, նախանձին, ամբարտավանությանը, մեծամտությանը, ինքնամեծարմանն ու փառանոլությանը ենթարկվելու: Ժամանակակից հոգեբանական դիտարկումները հետազոտողներին բերում են այն եզրակացության, որ կիրքը և հպարտությունը (ուրիշների նկատմամբ գերազանցության մոլուցքը) ընկած մարդու ձգտումների հիմնական լծակներն են ([12], էջ 130-131):

**Պատվիրանազանցության ֆիզիկական հետևանքները:** Մեղքի ֆիզիկական հետևանքներն էին հիվանդությունները, ծանր աշխատանքը, մահը: Դրանք մարդկանց բարոյական անկման, Աստծուց բաժանվելու, հեռանալու բնական արդյունքն էին: Մարդիկ հնազանդվեցին աշխարհի ապականացու սկզբունքներին, որոնցում գործում են քայքայումն ու մահը: Մարդկանց մեջ թուլացավ սնուցումը կյանքի և բոլոր ուժերի մշտական նորոգման Աղբյուրից: Տեր Յիսուս Քրիստոս մատնանշեց հիվանդության կախումը մեղքից անդամալույթին բժշկելիս. «Ահավասիկ առողջացար, այլս մի մեղանչիր, որպեսզի մի ավելի չար բան չպատահի թեզ» (Յովի. 5:14):

Մեղքի հետ մարդկային ցեղի մեջ մտավ մահը: Մարդն ստեղծված է անմահ հոգով, և նա կարող էր մնալ անմահ նաև մարմնով, եթե չհեռանար Աստծուց: «Աստված մահ չի ստեղծել», - ասվում է Իմաստության գրքում (Իմաստ. 1:13): Մարդու մարմինը, ինչպես դա գեղեցիկ արտահայտել է երանելի Օգոստինոսը, օժտված չէ «մահանալու անհնարինությամբ», սակայն այն օժտված էր «չմահանալու հնարավորությամբ», որը նա կորցրել է ([12], էջ 131): Ծննդոցի հեղինակը հայտնում է, որ չմահանալու այդ հնարավորությունը պահպանվում էր դրախտում՝ ծաշակելով կենաց ծառի պտույններից, որից գրկվեցին մեր նախածնողները՝ դրախտից արտաքսվելով: Ահաքյալը մահը համարում է «տուրք», այսինքն՝ վարձ, հատուցում մեղքի դիմաց. «Քանի որ մեղքի վարձը մահն է» (Յոն. 6:23):

**Դժբախտություններն ու մահը՝ որպես Ասծու դատիժներ:** Ֆիզիկական դժբախտությունները, լինելով մեղքի հետևանքներ, միաժամանակ աստվածային պատիժներ են, ինչպես որ դա արտահայտված է Աստծու խոսքերի մեջ: Յասկանալի է, որ այդ պատիժները տրված են որպես

միջոց՝ մարդուն հետ պահելու հետագա և վերջնական անկումից: Ընկած մարդու աշխատանքների և հիվանդությունների նշանակության մասին սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացին ասում է, որ մարդը, «իրեն որպես բաժին ստանալով հյուծիչ պահքն ու վշտերը, մատնվեց կարծես թե ինչ-որ մի սանձի՝ հիվանդությունների, չար տառապանքների և կյանքի այլ դառնությունների: Այն բանի համար, որ գործերից ու վշտերից ազատ կյանքում խելամտորեն չզայտեց իրեն, նա մատնվում է դժբախտությունների, որպեսզի տառապանքներով բուժի իր մեջ այն հիվանդությունը, որ հասել է իրեն երանության մեջ» ([12], էջ 132):

Նման ձևով է դատում այդ սուրբ հայրը նաև մահվան մասին: «Մահվանը օրենսդիրը դադարեցնում է մեղքի տարածումը. և հենց պատժի մեջ ի հայտ է բերում մարդասիրությունը: Քանի որ Նա, պատվիրանը տալով, հանցագործության հետ միացրեց մահը, և քանի որ հանցագործն ընկավ այդ պատժի տակ, ապա այնպես է կազմակերպում, որ պատիճն ինքը ծառայի փրկության համար: Քանի որ մահը քայլքայում է մեր այդ կենդանական բնությունը և, այդպիսով, մի կողմից դադարեցնում է չարի գործունեությունը, իսկ մյուս կողմից փրկում է մարդուն հիվանդություններից, ազատում գործերից, դադարեցնում է վշտերն ու հոգսերը և վերջ տալիս մարմնավոր տառապանքներին: Այսպիսի մարդասիրությանը է շաղախել Դատավորը բուն պատիժը» ([12], էջ 133):

Ասծութագավորության կորուստը՝ որոյն դատվիրանազանցության ծանրագույն հետևանք: Սակայն մեղքի վերջնական, վերջին և ամենակարևոր հետևանքը ոչ թե հիվանդություններն ու ֆիզիկական մահն էին, այլ՝ դրախտի կորուստը: Դրախտի կորուստը համարժեք էր Աստծու թագավորության կորստին: Աղամի մեջ ամբողջ մարդկությունը զրկվեց ապագա երանությունից, որ Աղամն ու Եվան մասամբ ճաշակել էին դրախտում: Փոխանակ առջևում հավիտենական կյանքը տեսնելու՝ մարդկությունը տեսավ մահը և նրա հետևում՝ դժիխքը, խավարը և Աստծուց մերժված վիճակը:

Ս. Յովիան Ոսկեբերանն ասում է. «Քանի դեռ Աղամը չէր մեղանչել, գազանները նրա ծառաներն էին և հինազանդպում էին նրան, իսկ նա՝ որպես ծառաների, անուններ տվեց նրանց: Սակայն երբ նա նրագունեցրեց իր պատկերը մեղքով, գազանները չճանաչեցին նրան, և ծառանները վերածվեցին թշնամինների: Քանի դեռ Աղամը պահպանում էր իր՝ Աստծու պատկերով ստեղծված կերպարանքը մաքուր, գազանները ենթարկվում էին նրան՝ որպես ծառաներ, սակայն երբ նա խավարեցրեց այդ պատկերն անհնազանդությամբ, նրանք չճանաչեցին իրենց տիրոջը, ատեցին նրան որպես օտարի... Իմիջիայլոց, չնայած Աղամը խախտեց ամբողջ պատվիրանը և զանց առավ ամբողջ օրենքը՝ Աստված զրկեց նրան ոչ ամբողջ պատվիշը և խլեց նրանից ոչ ամբողջ իշխանությունը, այլ հանեց նրա իշխանությունից միայն այն կենդանիններին, որոնք նրա կյանքի համար շատ անհրաժեշտ չէին, իսկ անհրաժեշտներին և օգտակարներին թողեց նրան ծառայելու»: Ըստ երանելի թեոդորիտոսի՝ Աղամը, փափագելով լինել Աստված, կորցրեց նաև Աստծու պատկերը ([12], էջ 135-136):

Ասծու ողորմածությունն ընկած մարդու հանդեմ: Մարդու մեղանչումից հետո Աստված չմերժեց մեղավոր մարդուն: Նա չխլեց նրանից ոչ իր պատկերը, որ տարբերում է նրան կենդանական աշխարհից, ոչ նրա կամքի ազատությունը, ոչ բանականությունը, որով կարող էր հասու լինել հոգևոր սկզբունքներին, ոչ էլ նրա մյուս կարողությունները: Աստված նրա հետ վարվեց որպես բժիշկ և դաստիարակ: Նա հագուստներով ծածկեց Աղամի մերկությունը: Չափավորեց նրա ինքնահավանությունն ու հպարտությունը, մարմնավոր ցանկություններն ու կրթերը բուժական միջոցներով՝ աշխատանքով և հիվանդություններով՝ դրանց տալով նույնիսկ դաստիարակչական նշանակություն: Մենք ինքներս կարող ենք տեսնել մեր հոգու վրա աշխատանքի դաստիարակիչ ազդեցությունը և հիվանդության մաքրիչ ներգործությունը: Աստված մարդուն ենթարկեց ֆիզիկական մահվան, որպեսզի նրան չմատնի վերջնական հոգևոր մահվան, որպեսզի նրա մեջ մեղանչական սկզբունքը չզարգանա մինչև ծայրահեղ սատանայական սահմաններ:

Սակայն տառապանքների և մահվան բնական սանձն արմատախիլ չի անում հենց չարի աղբյուրը:

Այն միայն կասեցնում է չարի զարգացումը: Մարդկությանը չափազանց անհրաժեշտ էր այնպիսի մի ուժ, գերբնական այնպիսի մի օգնություն, որը նրա ներսում հեղաշրջում կատարեր և նրան հնարավորություն տար՝ աստիճանաբար ավելի ու ավելի խոր անկումից դառնալու դեպի մեղքի հանդեպ հաղթանակը և դեպի աստիճանական վերելքն առ Աստված:

Աստծու նախախնամությունը նախագուշակել էր մարդու չամրապնդված ազատ կամքի ապագա անկումը: Կանխատեսելով անկումը՝ նախապես կազմակերպել էր և բարձրացումը: Աղամի մեղանչումը մարդկության համար անուղղելի կործանում չեղավ: Աստծու նախահավիտենական որոշմանը վերածնող ուժ հանդիսացավ Աստծու Որդու՝ Երկիր իջնելը:

»»81. Էկոլոգիական ճգնաժամը և քրիստոնեությունը

## ԳԼՈՒԽ 14. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՋԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### 81. Էկոլոգիական ճգնաժամը և քրիստոնեությունը

20-րդ դարի վերջին երեք տասնամյակներում հակաքրիստոնեական շարժման ալիքների մեջ նոր տատանում մտավ. իհնա ընդունված է «քրիստոնեությանը մեղադրել ոչ թե նրա հետամնացության, ոչ թե գիտատեխնիկական առաջընթացին նրա հակազդեցության համար, այլ, ընդհակառակը, նրա համար, որ պարզվում է հենց քրիստոնեությունն էլ առաջացրել է այդ առաջընթացը և նրա հետ կապված բոլոր խնդիրները» ([19], էջ 365):

Այդ խնդիրների մեջ ակնառու տեղ ունի էկոլոգիական ճգնաժամը, և արդ, տարբեր կրոնների կամ կրոնական ուղղությունների ներկայացուցիչներ, իրենց վարդապետություններից ու ծիսարաններից մեջբերումներ անելով, հավաստում են, որ իրենց դավանանքը բնապահպան է, երկրասեր, և հընթաց մեղադրանքներ են ներկայացնում քրիստոնեական եկեղեցուն՝ փորձելով էկոլոգիական աղետների իհնք տեսնել քրիստոնեական վարդապետությունը ([23], էջ 70-71, 77-78, 155-172, 163, 214, 217, 248; [20], էջ 191): Նման հոդվածների, աստվածաբանական աշխատությունների հեղինակների թվում են նաև լուրջ աստվածաբանական կրթություն ստացած և այս ոլորտում հայտնի գիտնականներ: Եվ, այնուամենայնիվ, պիտի փաստենք, որ այսօրինակ պնդումներն առավել հաճախ արդյունք են տգիտության և Աստվածաշնչին ու քրիստոնյա վարդապետների գրվածքներին անտեղյակության: Չեռնարկի այս մասն ամբողջապես նվիրված է Երկրի և նրա պահպանության նկատմամբ քրիստոնեության դիրքորոշմանը, սակայն իհնա ուղղակիորեն պատասխաննենք հնչող որոշ հաճախաղեա մեղադրանքների:

Ահա նմանօրինակ մի մեղադրանք. «Քրիստոնեությունը արտաէկոլոգիական է, ուստիև թույլատրում է զուտ օգտապաշտական մոտեցում բնության նկատմամբ: Նոր ժամանակների եվլուպան իրականացրել է քրիստոնեության մեջ բարնված ներուժերն այն ինաստով, որ ցույց է տվել անշունչ բնության գոյության ռացիոնալությունը» ([20], էջ 191):

Այո՛, քրիստոնեությունն ընդունում է, որ աշխարհը կարգավորված է նպատակահարմաք ձևով, որ այն կառավարվում է Արարչագործ Բանականության կողմից տրված օրենքներով, և որ մարդը կարող է հասու լինել այդ օրենքներին և նույնիսկ կոչված է դրան. «Ես սիրու տվի իմաստությամբ քննելու և խորհելու այն ամենի մասին, ինչ եղել է արեգակի ներքո: Աստված դաժան զբաղմունք է տվել մարդու որդիներին, որ զբաղվեն արեգակի ներքո» (Ժող. 1:13): Սակայն կարելի՞ է սրանից եզրակացնել, թե աստվածատուր այդ բանականությունը Երկրակործան ուժն է: Ոչ, անշուշտ: Իրապես, անմտություն է ենթադրել, թե տիեզերքի օրենքների, ներքին տիեզերական փոխկապակցությունների իմացությունն Աստված շնորհել է մարդուն՝ իր արարած Երկիրը կործանելու համար: Ընդհակառակը, իմաստնանալով՝ մարդը հնարավորություն է ստանում գտնել լուծումներ իր և իր պատասխանատվության ներքո գտնվող արարածների խնդիրներին, այսինքն՝ միջոցներ էկոլոգիական ճգնաժամի վերացման համար:

Ըստ քրիստոնեության՝ մարդը պատասխանատու է ամբողջ տիեզերքի համար. «Աստված օրինեց նրանց և ասաց. «Ամեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք Երկիրը, տիրեցե՛ք դրան, իշխեցե՛ք ծովի ձկների, Երկնքի թռչունների, ողջ Երկրի բոլոր անաստոնների ու Երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»» (Ծննդ. 1:28): Նշենք, որ էկոլոգիական հակաքրիստոնյաներին տհած է հատկապես աստվածաշնչյան նշված տողը: Այստեղ մարդն առանձնացվում է կենդանիներից, բարձրացվում է նրանցից և ավելին, մարդու և կենդանական աշխարհի միջև հարաբերությունները բանաձևում են տիրապետության եզրերով. «Իշխեցե՛ք»: Նախարանում մենք արդեն անդրադարձել ենք այն հարցին, թե քրիստոնեական եկեղեցին ինչպես է ընկալել բնության վրա իշխելը և Երկրին



Յովսիան, Թօնէսու առակը, 1306թ.

**Տիրելը:** Սակայն տեղին է հիշել տասը մնասների առակը (Ղուկ. 19:11-27). մարդը Տիրոջից իշխանություն է ստացել բնության վրա ոչ միայն այն պահպանելու և անաղարտ, անխաթար տեսքով Տիրոջը վերադարձնելու, այլև՝ «շահարկելու», այսինքն՝ առավել բարձրացնելու, սրբացնելու, պայծառացնելու, հոգեղինացնելու և Աստծու մեջ հաստատելու ([14], էջ 372, 376): Եթե մարդը միայն բնության մի մասնիկը լիներ, ապա նրա ճակատագիրը կախված կլիներ ընդհանուր տիեզերքի ճանապարհներից: Սակայն քրիստոնեությունը հավաստում է, որ աշխարհի ճակատագրերը կախված են մարդու ընտրությունից. «Թող անհջալ լինի երկիրը քո արածի պատճառով... փուշ ու տատասկ թող բուսեցնի քեզ համար այն» (Ծննդ. 3:17-18, տե՛ս նաև Յոռմ. 8:20-22): Նախնադարյան մարդկության մեղքերի պատճառով ջրհեղեղ եղավ երկրի վրա և ջնջեց նրա վրայից նախկին կյանքը: Սակայն քանի դեռ երկրի վրա կան արդարներ, անաստվածների մեղքը մինչև վերջ չի կարող աղճատել արարչության դեմքը (տե՛ս Հայտն. 7:2-3):

Աստված մարդուն բարձր դասեց կենդանիներից, իսկ կենդանիներին՝ բույսերից (Ծննդ. 1:30): Սակայն մարդն իշխանության բարձրագույն աստիճանը չէ: Նա ինքնիշխան չէ: Նա բարձր է աշխարհից, սակայն մարդուց բարձր Աստված է: Աստված մարդուն՝ որպես իր տեղակալի, դրեց աշխարհից բարձր և ասաց. «Ես քեզ այս առավելությունն աշխարհի հանդեպ տվել եմ, որպեսզի դու կարողանաս աշխատել նրա հետ՝ այդ աշխատանքով փոխելով և ինքդ քեզ, և այդ աշխարհը» ([19], էջ 371): Իսկ երբ աթեխստական լուսավորությունը դուրս մղեց եվրոպական

## »»81. Էկոլոգիական ճգնաժամը և քրիստոնեությունը

զանգվածային մշակույթից աստվածային Դատաստանի գաղափարը, այդժամ մարդն սկսեց իրեն զգալ ինքնիշխան: Նա սկսեց համարել, որ որևէ մեկի առաջ պատասխանատու չէ իր արարքների համար, որոնցից տուժում են և մարդիկ, և բնությունը՝ զուրկ բողոքելու հնարավորությունից: Այսպիսով, ինքնիշխանությունը հակընդդեմ է քրիստոնեությանը և հատուկ՝ անհավատությանը, մինչեւ այսօր տարօրինակ է, բայց քրիստոնյամերին են մեղադրում անհավատների մեղքերի մեջ:

Ըստ քրիստոնեության՝ մարդը չի կարող ինքնակամ տնօրինել աշխարհում. նա պիտի ձգտի կատարել Աստծու կամքը: Այսպիսով, մարդն աշխարհի տերը չէ, նա վարձակալ է նրանում: Նա պիտի պատասխան տա Տիրոջը: «Ուու ուրիշ ես, քան աշխարհը, ուստիս քեզ վրա ավելի մեծ է պատասխանատվությունը և քեզ համար, և քեզ շրջապատող աշխարհի համար: Եվ այդ պատասխանատվությունը Նրա առաջ է, Ով Վեր է և քեզանից, և աշխարհից» ([19], էջ 368): Եվ փաստենք, որ միայն այն վիճակը կարող է ընկալվել որպես պատասխանատու, որն ազատ է և հշխանական: Պատասխանատու կարող է լինել այն կառավարիչը, որ նախ որոշակիորեն անկախ է այն ամենից, ինչ հանձնված է իր պատասխանատվությանը, և երկրորդ, հշխանություն ունի օգտագործելու իր այդ ազատությունը՝ ազդելու համար իր պատասխանատվության ոլորտում տեղի ունեցող իրադարձության վրա:

Ահա՝ մեկ ուրիշ մեղադրանք. «Աստված այստեղ (Նոր Կտակարանում) անխիղճ է և օրինակ է տալիս նրանց, ովքեր վախենում են բնության նկատմանք բարոյական վերաբերմունքի մեջ սնահավատություն տեսնել: Քրիստոսը չորացրեց թգենին. սա վկայում է Նոր Կտակարանում բնության ու մարդու ոչ էկոլոգիական պատկերի մասին» ([20], էջ 189-190):

Իսկապես, Ավետարանում նկարագրվում է, թե ինչպես Քրիստոսը չորացրեց թգենին (Մատթ. 21:18-22): Սակայն դա միակ կենդանի էակն է, որին կենսագրկեց Քրիստոսը՝ Արարիչն ամեն մի կենդանի էակի: Ճարկ է նշել, որ ցանկացած հեթանոսական պաշտամունքում (ինչպես, ինչիշխայլոց, նաև հինկտակարանյան հուլյայականում) կանոնավոր զոհաբերումների ընթացքում սպանվում են հազարավոր կենդանիներ. օրինակ՝ 1-ին դարի հրեա պատմիչ Յ. Փլավիոսի վկայությանք՝ Զատկին մորթվում էր 265 հազար օառ... ([19], էջ 370): Եվ, այնուամենայնիվ, ինչո՞ւ թգենին անհձվեց: «Աշակերտների համար, որպեսզի նրանց ոգևորի: Քանի որ Քրիստոսը միշտ բարիք էր գործում և ոչի չէր պատժում, մինչեւ Նրան անհրաժեշտ էր ցույց տալ նաև իր արդարադատության և վրեժինդրության փորձը, որպեսզի և աշակերտները, և հրեաները գիտենային, որ չնայած Նա կարող էր և չորացնել, թգենու նմանությամբ, իրեն խաչողներին, սակայն կամավորակես իրեն մատնում է խաչելության և չի չորացնում նրանց. այսինքն՝ Նա չուզեց ցույց տալ դա մարդկանց վրա, այլ ցույց տվեց իր արդարադատությունը բույսերի վրա» ([21], էջ 682-683): Նշենք նաև, որ նախ Յիսուսը անիծեց և չորացրեց անպտուղ թգենին (իսկ ո՞ր այգեպանը չի կտրում անպտուղ ծառը՝ պատգամելով մեզ կենդանի, պտղաբեր հավատը ունենալ, այսինքն՝ զարդարվել առաքինություններով և բարի գործերով, և երկրորդ՝ ի պատասխան աշակերտների զարմանքի՝ ցույց տվեց աստվածային պարզմերի ձեռքբերման ուղին. «Եթե հավատք ունենաք ու չերկմտեք... ամեն ինչ, որ ուզեք աղոթքի մեջ... կատանաք» (Մատթ. 21:21-22):

Քրիստոնեությունը երբեք չի սովորեցրել անսահմանորեն ընդարձակել անձի պահանջները և կոչ չի արել շահագործելու երկրներ և ժողովուրդներ: Քրիստոնեությունն ուսուցանում է զսպել սեփական անձի պահանջները, տիրապետել իրեն և կարողանալ զիջել, կարողանալ պահք պահել, կարողանալ սահմանափակվել քչով:

Քրիստոնեական քարոզը իիշեցնում է. «Խղճի պահպանությունը բազմազան է, քանզի մարդը պետք է պահպանի իր խղճը թե՛ Աստծու, թե՛ մերձավորի և թե՛ առարկաների նկատմանք: ... Խղճի պահպանությունը առարկաների հանդեպ այն է, որ անփութորեն չվերաբերվենք որևէ իրի հետ,

թույլ չտանք, որ այն փշանա, և չգտենք այն, ինչպես որ պատահի: Իսկ եթե տեսնում ենք մի կողմ նետված ինչ-որ իր, ապա չպետք է անտեսել այն, այլ հարկ է վերցնել և դնել իր տեղը:

...Մեկի համար կարող էր բավարար լինել մեկ ծածկոցը, սակայն նա փնտրում է ուրիշ ավելի լավը... այդպիսին տակավին հեռու է առաջադիմությունից: ...Նմանապես և կերակրի պարագայում. մեկը կարող է իր կարիքները բավարարել կամ բանջարեղենի փոքր-ինչ քանակությամբ, ուստի կամ մի քանի ձիթապտղով, սակայն չի ուզում այդ, այլ փնտրում է այլ կերակուր՝ ավելի համեղը և լավը. այս բոլորը խոճին դեմ է» ([10], էջ 75-77): Աբրա Դորոթեասը նշում է, որ ավելի լավին, գեղեցիկին կամ շատին ձգտելը լինում է «փառասիրությունից կամ էլ տրտնությունից մղված» ([10], էջ 77): Նկատենք, որ քրիստոնեական որևէ վանքում երբեմ չի գրանցվել «Էկոլոգիական ճգնաժամի» երևույթ: Եվ հենց այն հասարակությունը, որ վճռականորեն հայտարարեց իր «աշխարհիկ» բնույթի մասին՝ մերժելով Աստծուն և աստվածայինը, եղավ էկոլոգիական ճգնաժամի հետ բախվող հասարակությունը:

Կ. Ս. Աբրահամը «Աստվածաբանական պատասխան էկոլոգիական ճգնաժամին» հոդվածում նշում է, որ Հնդկաստանի մշակույթի վրա մեծ ազդեցություն է ունեցել քրիստոնեությունը, որն այստեղ են բերել բողոքական քարոզիչները (հարկ է նշել, որ դեռևս առաքելական շրջանում, ավանդության համաձայն, քրիստոնեությունը Հնդկաստան է բերվել Թովմաս առաքյալի շնորհիվ – ծանոթ. հետ.): «Մենք հակված ենք մտածել,- գրում է նա,- որ բնությունը [քրիստոնեական] աստվածաբանության մեջ հազիվ թե տեղ ունի: Ժամանակի հետ Եկեղեցիները որդեգրեցին խորհրդանշներ ու սովորույթներ՝ վերցված մեր բնական միջավայրից: Բայց դրանք միայն եզակի դեպքերում թափանցեցին մինչև մտածողություն և գործնական կյանք» ([23], էջ 70-71):

Ակնհայտ է, որ հեղինակը ծանոթ չէ քրիստոնեական վարդապետությանը, քանի որ Աստվածաշնչից կարելի է բնությանը նվիրված, արարչության գեղեցկությունը գովերգող, Երկրի և անգամ նրա ամենափոքրիկ բնակիչների (օրինակ, դաշտային շուշանի ու թռչնակի) նկատմամբ Արարշի սերն ու հոգատարությունն արտահայտող բազմաթիվ մեջբերումներ անել: Իսկ ինչ վերաբերում է նշված խորհրդանշների ու սովորույթների՝ գործնական կյանք թափանցելուն, ապա փաստենք միայն, որ կրոնական որևէ սկզբունք գործնականում ապրելը գուտ անհատական է: Այո՛, ցավոք, բնությունը պահպանելուն առնչվող պատվիրանները ևս հաճախ են խախտվում, ինչպես չեն պահպում նաև մյուս պատվիրանները՝ պաշտամունքային, միջանձնային և այլն: Եթե պահպեին դրանք բոլորը, ապա մարդը կատարյալ կլիներ, Երկիրը՝ դրախտ:

Այս հոդվածում մի քանի անտեղի խորհրդների շարքում Կ. Ս. Աբրահամը մի անուղղակի խրատ էլ է տալիս: Հողվածի վերջում նա մեջբերում է բնության գեղեցկությանը և աստվածային գեղագիտությանը նվիրված հատվածներ Աքարվակեղայից, բուլղիստական աղորագործից, Ղուրանից և հավելում է. «Այս աղոթքները պիտի օրինակ լինեն բոլոր մյուս կրոններին հետևողների համար» ([23], էջ 77-78): Միայն նշելով, որ ոչ միայն տեսական վարդապետության մեջ, սաղմուներում և աղոթքներում է արտահայտվում քրիստոնյայի հոգածությունը բնության նկատմամբ, այլև կենդանի ու անկենդան բնության օրինության մի շարք ծեսերում՝ այստեղ մանրանանորեն չենք անդրադառնայս մեղադրանքին: «Սարդ-բնություն փոխսհարաբերությունն ըստ Յայ Եկեղեցու ծիսակարգի» վերնագրի ներքո փոքր մեկնարանություններով մեջբերված են Յայ Եկեղեցու սահմանած տասնյակ արարողակարգեր, որոնք բնության նկատմամբ քրիստոնյայի վերաբերմունքի առօրյա ծիսական-պաշտամունքային դրսնորումներն են:

Նմանօրինակ մեղադրական ուղղվածություն ունի Թ. Բերիհանե-Սելեսիի «Էկոլոգիան և եթովպական ուղղափառ աստվածաբանությունը» հոդվածը ([23], էջ 155-172): Այստեղ հեղինակը պատմում է, որ եթովպական Եկեղեցին աֆրիկյան սովորույթներից վերցրել է Երկիրը մարդկային

## »»81. Եկողիական ճգնաժամը և քրիստոնեությունը

և ոչ մարդկային էակների միջև բաժանելու ավանդույթը: Ոչ մարդկային արարածները՝ հոգիները, կարող են լինել չար ու բարի, սակայն նրանց բոլորին էլ ապրելու տեղ է պետք: Ընդունված ավանդույթի համաձայն՝ եթովպացիները տուն չեն կառուցել ջրի բնական պաշարների՝ գետերի, լճերի հենց ափերին, անտառներում: Սակայն բողոքական հոգևորականները, համարելով, որ նրանք պաշտում են հոգիներին, ինչպես նաև առարկաների, կտրել են տվել շատ հինավուրց ծառեր, ստիպել մարդկանց տուն կառուցել էկողիական կարևորություն ունեցող վայրերում: Թ. Բ. Սելեսին ասում է. «Թեպետ մյուս եկեղեցիները չեն ընդունում այս՝ եթովպահյի ավանդական դիրքորոշումը և հարգանքը, ակնկալվում է, որ դրան նրանք կիասնեն» ([23], էջ 163):

Ցավալի է, որ անտեղյակությունը պատճառ է դառնում նման կարծիքի ծևավորման համար: Դայ ուղղափառ աստվածաբանությունը, չպաշտելով բնությունն ու նրա առանձին երևույթները, բազմաթիվ արարողակարգեր է սահմանում, որոնցով քրիստոնյան դիմում է Արարչին՝ ողջ Երկիրը պահպանելու, հողից, բուսական ու կենդանական աշխարհից աղետներն ու փորձանքները հեռու պահելու խնդրանքներով:

Բնության նկատմամբ քրիստոնեության հոգատարության մասին հեգմանքով են խոսում նաև ավանդական, ցեղային կյանքի կողմնակիցները՝ համարելով, որ իրենք են հողի մարդիկ, իրենք գիտենքնության լեզուն, նրացավնուդարմանը, և մյուսները, այդքում և կրոնական առաջնորդներն ու վարդապետները, պիտի իրենց հետևեն: «Նրանց համար, ովքեր հրեա-քրիստոնեական հինքեր ունեն, օգտակար կլինի տեղաբնիկ ցեղերին համարել «հինկտակարանյան ժողովուրդ»: Նրանց պես մենք էլ առաջնորդվում ենք Արարչի ու արարչության մասին բանավոր ավանդությամբ: Ինչպես Մովսեսին, մեզ էլ ծանոթ է Երկրի սրբությունն ու հողի խոստումը....», - ասում է Սրբն Մակ-Քեյը ([23], էջ 214): Նա կարծում է, որ Քրիստոնեական եկեղեցու «նախնական պատկերացումները նրան մեկուսացել էին արարչությունից: Վախճանաբանական գաղափարներն «աշխարհն ատելու» փիլիսոփայության հիմքն էին դարձել, իսկ այն նպատակ էր դարձնում հոգևոր փրկությունը: Արդյունքում, ըստ հեղինակի, եվրոպական քրիստոնեությունն ասաց, որ աստվածաշնչյան հղումներն աշխարհի հանդեպ Աստծու սիրո մասին վերաբերում են միայն մարդկային էակների փրկությանը» ([23], էջ 217):

Յեղինակը, ինչպես այստեղ, այնպես էլ հետագա շարադրանքում որևէ հղումով չի հիմնավորում քրիստոնեության մասին իր այս կարծիքը, իսկ մենք նշենք, որ այս՝ մարդակենտրոնության մեղադրանքը հերթելու համար կարելի է հարյուրավոր մեջքերումներ անել: Յիշենք, օրինակ, որ Պողոս առաքյալը հռոմեացիներին հորդորում էր քայլել դեպի Աստված՝ կատարելության տանելով նաև արարչությանը, որն այժմ հեծում է սաստիկ ցավերի մեջ՝ սպասելով, թե երբ պիտի մարդը մերձենա Արարչին՝ երանության առաջնորդելով իրեն՝ ողջ արարչությանը: Յիշենք նաև, որ Դավիթը սաղմոսներում բազմից նշում է, որ Երկիրը Տիրոջն է (Սաղմ. 8, 18, 23). իսկ մենք Նրա մշակներն ու ծառաներն ենք և կոչված ենք ոչ թե իշխելու, այլ՝ ծառայելու (Մատթ. 23:11): Յիշենք, որ Աստված իր սիրով ստեղծեց ամեն բան՝ չգոյությունից գոյության կոչելով, և հանձնելով մարդուն՝ իր նախախնամությունից չգրկեց, քանի որ փոքրիկ թռչնակն անգամ առանց Նրա կամքի գետին չի ընկնում: Եվ փաստենք, որ Աստված, սիրելով իր արարչությունը, հորդորում է իր որդուն՝ մարդուն, նմանվել իրեն՝ սիրելով ու խնամելով Երկիրը:

Եվս մի ինչ-որ չափով տեղին, սակայն ուշացած մեղադրանք: «Մինչ Եկեղեցիների համաշխարհյան խորհուրդը «Արարչության նկատմամբ արդարության, խաղաղության և ներընդգրկման՝ ինտեգրացիայի» թեմայով աստվածաբանական անդրադարձներ է կատարում, միջավայրի հանդեպ վերաբերունք ձևավորելու հարցում Քրիստոսի Եկեղեցու դերի մասին խորհել ստիպող ուսումնասիրություններ անում, Աֆրիկայի Անկախ Եկեղեցիները համապատասխան

միջոցառումներ են ձեռք առնում անմիջապես այս ոլորտում: Նրանք առաջին հերթին միջավայրի պահպանության մասին գրականություն չեն արտադրում, այլ փրկությունն են լայնորեն քարոզում, որն ընդգրկում է բոլոր արարածներին, և իրենց պաշտամունքների ժամանակ նրանք պարում են մի նոր ուժմով՝ իրենց ոտնահարվածներով խորհրդանշելով հույս, որ Երկրի կործանումը կանգ է առնելու: Նրանք եթիկական նոր նորմեր չեն հանձնել թղթերին, բայց հազմնում են Երկիրը՝ նոր ծառերով ծածկելով նրա՝ մարդու սխալ գործունեության արդյունքում առաջացած մերկությունը: Այսպիսով, նրանք ապաշխարության նոր առաքելություն են կատարում. նրանք ապրում են Երկրապահապան բարոյականությամբ», - «Աֆրիկայի Անկախ Եկեղեցիներն ընդունում են միջավայրի եթիկայի մարտահրավերը» հոդվածում գրում է Ս. Լ. Դանիիլը ([23], էջ 248):

Ինչ խոսք, նախկին ԽՄՀՄ որևէ Երկրի քրիստոնեական Եկեղեցի չի կարող ծառատունկի կամ բնապահապանական այլ միջոցառումներ կազմակերպելու տպավորիչ թվեր ներկայացնել, քանի որ հայտնի պատճառներով սակավաթիվ են հոգևորականները և ծավալուն՝ նրանց աշխատանքը: Սակայն այս ոլորտում ևս բավական լուրջ առաջնթաց կա. Մայր Արոռ Սուրբ Էջմիածնի Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում գործում է «Կանաչ աստվածաբանություն» ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվում են հանդիպումներ, դասախոսություններ, հոգևոր դպրանոցի սաներն ստանում են համապատասխան գրականություն, ունկնդրում դասընթացներ: Իսկ նրանք ել մոտ ապագայում աշխատելու են հենց ժողովրդի հետ՝ իրենց համայնքներում սերմանելով հոգատարություն ու սեր բնության հանդեպ: Այն, մեզ մոտ գործը դեռ խոսքի ոլորտում է, սակայն խոսքը հենց այն հզոր գենքն է, որ Տերը հանձնեց իր աշակերտներին՝ պատվիրելով առաքելության ելելիս ոչ մի այլ բան իրենց հետ չվերցնել: Խոսքն այն գործիքն է, որով սկսվում է գործը, և գործը, ահավասիկ, սկսված է:

## 82. Աստվածառունչը և Եկեղեցին բնության մասին

Բնությունը, իր առաջ բազմազանությամբ, իրաշը է: Եվ ամբողջ տիեզերքը փառաբանում է Տիրոջը. «Օրինեցե՛ք Տիրոջը Երկրի վրայից, վիշապնե՛ր և բոլո՞ր անդունդներ, հուր և կարկուտ, ծյուն և սառնամանի՞ք, հո՞ղմ և մրրիկ, դուք, որ նրա խոսքն եք կատարում, լեռներ և բոլո՞ր բլուրներ, պտղաբե՛ր ծառեր և բոլո՞ր մայրիներ, գազաններ՝ և ամեն տեսակ անասուններ, սողուններ և ամեն տեսակ թևավոր թռչուններ» (Սաղմ. 148:7-10):

Սուրբ Պողոս առաքյալն ասում է. «Աստծու բոլոր ստեղծածները լավ են, և խոտան բան չկա» (Ա Տիմ. 4:4). ուստի բնությունը պետք է հարգել և պահպանել, քանի որ այն Աստծու արարչությունն է: Տերն արժենորում է բնության գեղեցկությունը. «Նայեցե՛ք վայրի շուշանին, ինչպես է աճում. ոչ ջանք է թափում և ոչ հյուսում: Ասում են ձեզ, որ Սողոմոնն իսկ իր ամբողջ փառքի մեջ չհագնվեց նրանցից մեկի նման» (Սատթ. 6:28-29):

Քրիստոնյան պիտի նույն օգացումներն ունենա բնության հանդեպ, ինչ որ ունեցել է Քրիստոսը: Մենք պիտի սիրենք բնությունը, մենք պիտի տեսնենք և զգանք նրանում Արարչին: Տերն ասում է. «Պիտի սիրես քո մերձավորին, ինչպես քո անձը» (Սատթ. 22:39): Ամերիկյան քրիստոնեական աստվածաբանները համարում են, որ ամեն մի արարած Աստծու ներկայությունն է, իսկ «մերձավորը» է կոհամակարգ է, և այս պատվիրանը ներառում է բոլոր մերձավորներին՝ ինչպես կենդանիներին, այնպես էլ՝ բոլոր սերերին ([11], էջ 19):

Ժամանակակից քրիստոնեական եկոնոմտվածաբանները համարում են, որ Աստված Աղամին տեղավորել է Եղեմի պարտեզում, որը կարելի է պատկերացնել որպես ամբողջ բնություն, «որպեսզի սա մշակի ու պահպանի այն» (Ծննդ. 2:15): Աստված հայտարարել է, որ այն ամենը, ինչ Նա ստեղծել է հինգ օրերի ընթացքում մինչև մարդու արարումը, «լավ» է: Այսպիսով ստացվում է, որ Աստված ներքին կարևորություն է տվել Էակների ամեն մի տեսակի և ոչ միայն մարդուն:

»»82. Աստվածաշունչը և Եկեղեցին ընության մասին

## ՇԵՂՄԱՆ ՀԱՆՈՒՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ

1. անբողջ արարաչությունը մի է,
  2. անբողջ արարչությունը լավ է,
  3. բոլոր արարածները բարիք են ([11], էջ 18):

Լեռան քարոզի մեջ Քրիստոսը ասում է, որ Աստծուց մոռացված չէ կոքը թռչուններից և ոչ մեկը, դաշտի շուշաններից և ոչ մեկը (Մատթ. 6:26, 28-29):

1888թ. հրատարակված «Կենդանիների պաշտպանության Յալիցյան ընկերության ամսագրում» պատմվում է Փարիզի գրադարանում Աստվածաշնչի հնագույն (ոչ կանոնական) տեքստերից մեկի ֆրանսերեն բարգմանության մի հետաքրքիր գյուտի մասին: Նրա մեջ մտել էին որոշ հատվածներ, որոնք բացակայում են Աստվածաշնչի ժամանակակից հրատարակություններում: Այդ հատվածներում թրիստոսը հանդես է գալիս որպես կենդանիների պահապան: Դրանցից մեկում պատմվում է, թե ինչպես մի անգամ թրիստոսը բարձրանում է սարը և հանդիպում մի մարդու, որ անխնա ծեծում էր ջորուն: Յիսուսը հարցնում է նրան.

-Մարդ, ինչո՞ւ ես ծեծում քո կենդանուն կամ չե՞ս տեսնում, որ նա չի կարող ժանրություն տեղաշարժել, և չե՞ս տեսնում, թե ինչպես է նա ցավին համբերում:

## Մարդը պատասխանում է.

-ինչպես եմ ես վերաբերվում: Ես կարող եմ նրան ծեծել, ինչքան ուզում եմ, քանի որ իմ սեփականությունն է, ես ինձ համար գնել եմ այն և վճարել եմ նրա համար: Կարող ես հարցնել նրանց, ովքեր քեզ մոտ կանգնած են. նրանք ինձ գիտեն և կհաստատեն:

Քրիստոսի աշակերտներից ոմանք ասում են.

-Ալիպես է, Sté, ինչպես այդ մարդու ասաց: Stեւի Եմք՝ նա այդ օրորին գնեւ է:

## Այդքամ Քիսուսը շարունակում է.

-իսկ դուք չե՞ք տեսել նաև, ինչպես է արյունը հոսում նրանից, և չե՞ք լսել նրա ողբերն ու բողոքները:

Աշակերտները պատասխանում են.

-Ո՞ւ, Տե՛ղ, չենք լսել, ո՞ո նա հեծեծա և բողոքի:

Յիսուսը հուսահատված աղաղակում է.

-Վայ ձեզ: Եթե չեք լսել, թե ինչպես էր նա հեծեծում և բողոքում Երկնավոր Փրկչի առաջ և ողորմնաւորություն խնդրում, ապա երիցս վայ նրանց, ումից որ նա իր ցավերի մեջ բողոքում էր ու տրտնջում:

Հետո մոտենում է կենդանուն և դիպուլմ նրան: Զորին կանգնում է, և նրա վերքերն սպիանում են: Քրիստոն ասում է նրա տիրոջը.

-Հիմա շարունակի՞ր ճանապարհել և այլևս չծեծե՞ն նրան և այդժամ կճանաչես Աստծու ողորմությունը ([11], էջ 18-19):

Ըստ Մովսեսի օրենքի՝ շաբաթ օրը պիտի հանգստանան ոչ միայն մարդիկ, այլև ընտանի կենդանիները, և յոթերորդ տարին արտերում հասած բերքը պիտի թողնվի անասուններին (Ելք 20:10, 23:10):

Միջնադարյան կաթոլիկ նշանավոր աստվածաբան Թովմա Աքվինացին սովորեցնում էր. «Աստծու նպատակը, երբ նա առաջարկում է կենդանիների նկատմամբ բարությամբ վերաբերվել, այն է, որ նարդկանց կանխատրամադրի կարեկցանքի և բարության միմյանց նկատմամբ» ([11], էջ 19): Առակաց գրքում Աստված պատվիրում է մարդուն հոգատար լինել երկրի նկատմամբ, որպեսզի նա մշտապես վայելի իր պարզեւած բարիքները: «Խնամքով վարվիր դաշտի կանաչի հետ, որ խոտ հնձես, դալար խոտ հավաքիր, որ ոչխարներդ գեղմնաբեր լինեն, և դաշտերը լավ՝ պահիր, որ գառներ ունենաս» (Առակ. 27:25-26): «Խելամտորեն հոգատար եղիր քո հոտերի անասունների նկատմամբ, սրտացավ եղիր քո երամակների համար» (Առակ. 27:23): «Արդարը խոճում է իր անասունին, բայց ամբարիշտները անողորն են» (Առակ. 12:10): Տերը պատվիրում է բարեկամաբար օգնել անգամ թշնամու անասուններին. «Եթե տեսնես, որ թշնամուդ գրաստը բեռան ծանրության տակ ընկել է, նրա կողքից անտարբեր մի՛ անցնիր, այլ նրան օգնելով՝ բարձրացրու այն» (Ելք 23:5):

Դետաքրքիր էկոլոգիական պատմություն տեղի ունեցավ Նոյի հետ: Երբ նա պատրաստվում էր իր ընտանիքով մտնել տապան, Աստված ասաց նրան. «Բոլոր կենդանիներից, բոլոր գազաններից ու բոլոր էակներից երկու-երկու կմտցնես տապան, որ նրանք կերակրվեն քեզ հետ: Թող դրանք արու և էգ լինեն» (Ծննդ. 6:19): Ընդ որում, Նոյին չի ասվել, որ պետք է փրկել միայն այն տեսակները, որոնք գեղագիտական, էկոլոգիական, կրթական, պատմական, առողջապահական կամ գիտական տեսակետից արժեքավոր են մարդկանց համար: Նրան հրամայված էր փրկել նրանց բոլորին՝ անկախ մարդկանց համար օգտակարությունից; Քանի որ նրանք բոլորը արարված էին Աստծու կողմից և ունեին կրոնական արժեք (կամ ինչպես ասում են ժամանակակից էկոփիլիստիկաները՝ ներքին արժեք): Ամեն արարած դեր ունի ողջ էկոհամակարգի մեջ և հրաշալի է իր յուրահատկություններով: Մարդը հաճախ չի կարողանում ճշմարիտ գնահատական տալ արարածներին, քանի որ արժեքորում է նրանց միմիայն իրեն պիտանի լինելու դիրքերից: Յովիան Ուսկեբերանն այս մասին ասում է. «Մի՛ հանդգնիր անարգել Աստծու արարածներին միայն այստառով, որ քեզ հայտնի չէ նրանց նպատակը» ([11], էջ 20):

Դժբախտաբար, այսօր տեսակները պաշտպանվում են համարյա միշտ միմիայն նրանց՝ մարդկանց օգտակար լինելու տեսակետից, մինչդեռ հենց Նոյի պատմությունը սովորեցնում է, որ կյանքի նկատմամբ հավերժական հարգանք պետք է տածել: Աստված կամենում է, որ տեսակները շարունակեն իրենց գոյությունը, և ամեն մարդ, ով ուզում է ոչնչացնել տեսակը հանուն «զարգացման», ոտնձգություն է անում Աստծու առանձնաշնորհի նկատմամբ: Յիշենք Աստծու պատվիրանը՝ տրված Նոյին. «Ամեն տեսակ թռչուններից, ամեն տեսակ կենդանիներից, երկրի ամեն տեսակ սողուններից՝ բոլորից երկու-երկու, արու և էգ, թող մտնեն քեզ հետ, որ կերակրվեն քեզ հետ: ...Նաև երկնքի անպիղծ թռչուններից յոթ-յոթ՝ արու և էգ, և պիղծ թռչուններից երկու-երկու՝ արու և էգ, որ սերումդ դահլիճանվի ողջ երկրի վրա» (Ծննդ. 6:20, 7:3):

Երանելի Միջնադարուն ասել է. «Աստծու Յովիան սովորեցնում է խոճալ բոլոր արարածներին, այնպես որ առանց անհրաժեշտության չես ուզում նույնիսկ ծառի տերևս վնասել: Իսկ մարդու վրա պարտականություն է դրված հոգ տանել ամբողջ արարչության համար, ուստիև, ամեն մի վնաս, որ առանց կարիքի հասցում է կենդանուն կամ բույսին, հակասում է շնորհի օրենքին: Շնորհից գրկվածը չի ընկալում աշխարհի գեղեցկությունը և ոչ մի բանի վրա չի զարմանում» ([11], էջ 20; [16], էջ 325):

Միջնադարում Ռուսաստանում կիրարկվել է անտառի օրինության (նվիրագործման՝ անձեռնմխելի դարձնելու) կարգը: Վ.Դալը հետևյալ կերպ է նկարագրում այդ օրինության կարգը. «Անտառի նվիրագործումը՝ նրանուն ծառահատման արգելքը, արվում է հանդիսավորությամբ. քահանան սրբապատկերներով կամ նույնիսկ խաչվառներով պտտվում է նրա շուրջը ժողովրդի և ավագների

## »»82. Աստվածաշունչը և Եկեղեցին բնության մասին

հետ, երգում են «Փառք ի բարձունս» և արգելում են մուտքն անտառ որոշակի թվով տարիներ»: Ռուսաստանի որոշ նահանգներում անձեռնմխելի էին համարվում Եկեղեցիների տեղում աճած պուրակները ([11], էջ 20): Մեզանում էլ՝ հայերիս մեջ, հեռավոր մենաստանների, վանքերի տարածքներից անգամ պտղատու ծառերի միրգը չին պոկում, հավաքում:

Եթովպիտիւմ քրիստոնեական Եկեղեցիների շրջակա հողը սուրբ է. այստեղ չի կարելի վարել, ծառեր հատել, նույնիսկ՝ նրանցից տերև պոկել: Արդյունքում, շատ Եկեղեցիների շրջակայքում ապրում են այնպիսի կենդանիներ, որոնք այլ վայրերում համարյա ոչնչացված են: Նոր Եկեղեցու շինարարության ժամանակ հատկապես կարևոր է տնկել երկու ծառ՝ ձիթենի և մայրի ([11], էջ 20):

Ֆրանցիսկ Ասիզացին (1182-1226) առաջիններից մեկն էր, որ ընդգծել է բնության հետ մարդու հոգևոր իրավահակասարությունը: Նա ընդգծում էր Աստծու ներկայությունը արարածների բազմազանության մեջ և Նրա ցանկությունը, որ մարդիկ ուրախանան այդ բազմազանության համար և փառաբանեն Աստծուն դրա համար: Նա համարում էր, որ փառաբանությունը պիտի արտահայտվեր այնպիսի արարքներով, որոնք համաձայնեցված էին ստեղծված բազմազանության հանդեպ հարգանքի հետ, և ոչ թե՝ պարզապես կենդանի էակներին վճառ պատճառելուց խուսափելու խիստ կանոնը պահպանելով: Նմանապես բոլոր կենդանի էակներին պետք է վերաբերվել հնարավորինս քնքորեն: Բնությունն արժեքավոր է ոչ միայն շնորհիվ իր՝ մարդկանց օգտակար լինելու, այլև Աստծու բարեհած ներկայության արտահայտության բազմաթիվ ձևերով:

Ֆ. Ասիզացին ուղղակիորեն քարոզում էր կենդանիներին և բույսերին: Նա կարդում էր Աստվածաշունչը թոշունների, ծաղիկների և ձկների համար: Նա համարում էր, որ ոչ թե արարածները պիտի ծառայեն մարդուն, այլ մարդը՝ նրանց: Նա կենդանիներին համարում էր մեկ ընտանիք մարդկանց հետ: Բոլոր արարածները, նրա կարծիքով, լավ են, նրանց մեջ նա տեսնում է Աստծուն: Ֆ. Ասիզացու հոգատարությունը կենդանիների հանդեպ հասավ այն աստիճանին, որ նա չէր սպանում նրանց: Նա հանդես էր գալիս որպես պաշտպան անազատ (բռնված, վանդակված) գազանների, խնամում էր նրանց կամ ազատում: Բագեն կամովին ծառայում էր նրան՝ որպես զարթուցիչ: Նա հարգում էր նաև անկենդան բնությունը:

Ֆրանցիսկը ամեն մի կենսածկի մեջ տեսնում էր սրբության տարր: Նա հավատում էր, որ բնությունն ինքնին արժեքավոր է, քանի որ ստեղծված է Աստծու կողմից, և կախված չէ մարդու կողմից իրեն վերագրված արժեքից: Մարդու հարաբերությունները բնության հետ պիտի կրեն փոխադարձ կախվածության բնույթը:

Ֆ. Ասիզացին բնությունը դիտում էր որպես իր Արարչի արտացոլում և գազաններին, թոշուններին, լուսնին, աստղերին, ջրին անվանում էր իր «Ենթայներ» ու «քույրեր» և հորդորում էր բնության ամեն տարրի հետ վերաբերվել եղբոր կամ քրոջ պես՝ առանց շահագործելու, առանց ստորադասելու: Նա ձգուում էր մարդու անսահման տիրապետության գաղափարը փոխարինել բոլոր արարածների՝ ներառյալ մարդու՝ հավասարության գաղափարով ([11], էջ 20-21):

Բենեդիկտյան վանականությունը (5-6 դդ.) համոզված էր, որ ամեն բան շրջակայքում լավ է, այն պետք է գնահատել, հարգել և պատվել: Ամբողջ աշխարհին պետք է հոգատարությամբ վերաբերվել: Ամեն բան աշխարհում արժեքավոր է և ունի իր նպատակը: Ամեն ինչ գեղեցիկ է, որակյալ և դրական ([11], էջ 22):

Ժամանակակից քրիստոնեական աստվածաբան է. Լինզին Եգրակացնում է. «Եթե արարչությունն արժեքավոր է Աստծու համար, ապա այն պետք է գնահատվի և մարդու կողմից: Եթե բոլոր արարածներն ունեն իրենց արժեքը, ապա մարդը չի կարող հավակնել բացարձակ արժեքավորության մյուս արարածների շարքում» ([11], էջ 22):

Ամերիկացի հիդրոլոգ Ու. Լոդերմիլքը 1939թ. առաջարկել է քրիստոնեական 11-րդ պատվիրանը: «Պահպանի և սիրի քո մայր բնությունն այնպես, ինչպես քո մերձավորին և քո Արաքշին»: Մեկ այլ աստվածաբան՝ Ռիչարդ Բեերը կարծում է, որ, եթե աշխարհը պատկանում է Աստծուն, ապա մարդն իրավունք չունի տնօրինելու այլ էակների ճակատագիրը, քայլայելու նրանց միջև եղած փոխհարաբերությունները: Ավելին, Աստված բոլոր արարածներին օժտել է հավասար իրավունքներով ([11], էջ 22):

Ուսւ Ուղղափառ Եկեղեցու հոգևորական Վ. Պոտապովը կրկնում է երանելի Օգոստինոսի խոսքերը. «Երբ մարդն ապրում է մարդու համար և ոչ թե՝ Աստծու, նա նման է սատանային»: Պոտապովի կարծիքով՝ «Միայն մարմնացած Աստծու միջոցով մարդը կարող է հասնել իր արարածային բնության և անբողջ արարված աշխարհի աստվածացմանը: Իսկ դրան նա կարող է հասնել միայն Աստծու և մերձավորի նկատմամբ սիրո միջոցով» ([11], էջ 22):

Աստվածաշունչը հաստատում է այս տեսակետները. «Գայլն ու գառը միասին պիտի ուտեն, ընձառյուծը ուլի հետ պիտի մակաղի, հորթը, ցուլն ու առյուծը միասին պիտի սնվեն, և մատաղատի մանուկը պիտի հովվի նրանց: Եզն ու արջը միասին պիտի ուտեն, նրանց ծագերը խառը պիտի շրջեն, և առյուծը՝ ինչպես եզը, հարդ պիտի ուտի: Մատաղատի մանուկն իր ծեռքը պիտի մտցնի իժերի բույնը և իժերի ծագերի բույնը, ու նրանք ոչ ոքի չպիտի կարողանան վնասել և խայթել իմ սուրբ լեռան վրա, քանզի ամբողջ երկիրը լցվելու է Տիրոջ գիտությամբ՝ ննան առատ ջրերին, որոնք ծածկում են ծովերը» (Ես. 11:6-9):

Սիջնադարյան վաճականները, ում համար սերն ու կարեկցանքը առաջնահերթ արժեքներ էին, հաճախ խնամում էին վայրի կենդանիներին՝ բուժելով նրանց վերքերը և փրկելով որսորդներից: Վաղ շրջանի քրիստոնյաները մտածում էին, որ կենդանիները կարող են ճանաչել մաքուր սրտերը և անզամ առյուծներն ու գայլերը կարող են հիանալ մեծ սրբերով: Քրիստոնեական սրբերը կենդանի բնության հանդեպ սեր ու հարգանք դրսողելու օրինակներ են: Արջերն այցելում էին Սերաֆիմ Սարովսկուն: Անապատականը նրանց կերպարում էր հացի վերջին կտորով, իսկ ինքը մնում էր սոված: Գերման Ալյասկացին կերակրում էր արժերին ու սպիտակ կզաքիսներին: Գերասիմ Հորդանանցին կաղացող առյուծի թաթից հանել է փուշը. առյուծը դարձել է նրա մտերիմ բարեկամը ([11], էջ 22):

Անապատական հայրերի մասին բազմաթիվ պատմություններ կան, թե ինչպես են առյուծը կամ գայլն ընդունակ լինում ոչ միայն միանալ վաճականին՝ նրա ծառայության մեջ Աստծուն, այլև արտահայտել իմնարար առաքինությունները՝ հավատը, հույսը և սերը: Այնպես որ, Եսայու մարգարետությունը չի վերաբերում գուտ ինչ-որ անհասանելի հեռավոր մի ժամանակաշրջանի: Իրենց օրինակով սրբերն ու սրբակենցաղ անձինք ցույց են տվել, որ բնության հետ ներդաշնակությունը լիովին հնարավոր է հենց երկրի վրա՝ հենց այսօր, և դա կախված է միայն ու միայն մարդու վերաբերմունքից: Մարդը վերջապես պիտի գիտակցի, որ կյանքի նպատակն առավելագույն սպառման մեջ չէ: «Մարդու կյանքն իր կուտակած հարստության մեջ չէ» (Ղուկ. 12:15): «Վաճառեցե՛ք ձեր ինչքերը և ողորմություն տվե՛ք» (Ղուկ. 12:33): «Գանձեր մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրա, ուր ցեց և ժանգ ոչնչացնում են, և ուր գողեր պատերն են ծակում ու գողանում, այլ գանձեր դիզեցե՛ք ձեզ համար երկնքում» (Մատթ. 6:19-20): Մարդը պիտի կամենա ապել՝ տալով, իր ունեցածը չունեցողի հետ կիսելով, իրեն բնության հետ հավասար զգալով, իր մերձավորին իր անձի պես սիրելով: Այդժամ միայն երկրի վրա կհառնի մարգարեական դրախտը՝ իր ողջ շքեղությամբ ու ներդաշնակությամբ:

»»83. Մարդ-բնություն փոխհարաբերությունն ըստ Հայ Եկեղեցու ծիսակարգի

### 83. Մարդ-բնություն փոխհարաբերությունն ըստ Հայ Եկեղեցու ծիսակարգի

Հայ Եկեղեցու ծիսակարգն արտացոլում է այն հիմնադրույթները, որոնց վրա կառուցված է քրիստոնեական վարդապետությունը: Այն կազմվել է իմաստասեր հոգևորականների ձեռքով՝ ընդգրկելով բոլոր կարևոր ոլորտները՝ քրիստոսաբանությունից մինչև բարոյական աստվածաբանություն: Նրանից դուրս չի մնացել քրիստոնյայի համար հոգևոր և գործնական կարևորություն ունեցող և ոչ մի խնդիր, քանի որ արարողակարգի նպատակներից մեկն էլ համայնքի կենսակերպի անբաժանելի մասը դառնալն է, մարդու աշխարհայացքի ձևավորման մեջ հաստատուն տեղ ունենալը:

Հայ Եկեղեցու ծիսակարգը բազմից տալիս է անկենդան ու կենդանի բնության նկատմամբ քրիստոնյայի վերաբերնունքի ձևակերպումները: Այստեղ խոստովանելով, որ երկիրն ու նրա յուրաքանչյուր տարր Տիրոջն են պատկանում, գոհանալով, որ Նա այդ ամենն իրեն է հանձնել՝ մարդը խնդրում է Տիրոջն օրինել դրանք: Մեր ծիսակարգում քրիստոնյան հստակ գիտե, որ բարիքներն իր սխալ գործածնան (մեղքերի) պատճառով կարող են վերցվել իրենից, այստեղ նաև սահմանվում է, որ բնական աղետներն էլ մարդու մեղքերի արդյունք են, և դրանք կանխելու, ինչպես նաև դադարեցնելու համար համայնական ապաշխարություն է անհրաժեշտ: Նշենք նաև, որ այստեղ բնական աղետները զուգահեռված են թշնամու ահավորությունների հետ, որով և արարողության յուրաքանչյուր մասնակից խոստովանում է, որ վերահաս չարիքի պատճառը նաև իր մեղքն է:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ամեն տարի 24 անգամ կատարում է անդաստանի կարգ ([5], էջ 412-416). այս արարողությամբ օրինվում են աշխարհի չորս ծագերը, ինչպես նաև՝ հանրապետությունու հայրապետությունը, երկիրը, անդաստանները, տարվա պտղաբերությունը, վանքերը, բնակավայրերը և նրանց բնակիչները: Մաշտոց ծիսարանում ևս կա արտի օրինության կարգ: «Խնդրում ենք քեզնից և աղաչում, աղերսում ենք քեզ և երկրապագում՝ խոստովանելով մեր մեղքերը և քո առատ ողորմությունը խնդրելով: Բացի՛ր, Տե՛ր, երկնքի սահմանները և օգտակար անձուն ցողի՛ր մեզ վրա: Գրա՛, ո՞վ Տե՛ր, ծերերին և երիտասարդներին, մանուկներին և ծծեր երեխաններին, հոտերին և անասուններին և բոլոր ապրող եակներին: Օրինի՛ր, ո՞վ Տե՛ր, մեր երկրի արտի ու այգու, ծառի ու խոտի բերքը: Օրինի՛ր, ո՞վ Տե՛ր, մեր սերմերն ու սերմնացաններին: Քո առատ ողորմությունը տուր, ո՞վ Տե՛ր, և աճեցրու ծառաներիդ բերքը՝ այս կյանքի պետքերը գոհացնելու համար: Քո բարձունքից օրինի՛ր ամպերը, ո՞վ Տե՛ր, որպեսզի քաղցր ցող ցողեն մեր անդաստանների վրա: Օրինի՛ր նաև մեր արտերը, որպեսզի առանց որևէ վնասի իրենց պտուղը հասցնեն: Տե՛ր, օրինի՛ր մշակներին ու իրենց եզներին, որպեսզի ամբողջությամբ ժողովեն իրենց աշխատանքի արդյունքը: Օրինի՛ր, Տե՛ր, ցորենի շտեմարաններն ու գինու և յուղի հնձանները, որպեսզի քո առատ բարիքներով լցվեն ու հորդեն՝ անխախտ քո վճռի համաձայն, թե՝ «Երկինքը ականջ պիտի դնի երկրին, և երկիրը՝ ցորենին, գինուն ու ձեթին, և ին ժողովուրդը նրանցով պիտի լցվի»: Եվ մեզ բոլորիս արժանի արա, որ խաղաղությամբ վայելենք քո ողորմության առատ պարզները և գոհությամբ փառավորենք քեզ՝ Որդուդ և Սուրբ Հոգուդ հետ միասին, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն» ([2], էջ 425-428):

Ինչպես տեսնում ենք, այստեղ մարդու ամենայն մանրամասնությամբ իր երկրագործական մտահոգություններն է բերում Աստծու առաջ և Նրանից պահպանություն խնդրում և հողի, և անասունների, և մշակների, և աղրող բոլոր եակների համար: Այսպիսով ակնհայտ է, որ մարդու իրեն պատասխանատու է զգում ոչ միայն իր հոգածության ներքո ապրող մարդկանց՝ ծերերի, երիտասարդների համար, այլև բոլոր աղրող եակների:

Ավանդաբար օրինվել է նաև նոր փորձած ջրհորը: Եվ այս կանոնում կարդում ենք. «Խնդրում ենք քեզնից և աղաչում, ... , սրբին քո ամենակարող զորությամբ այս ջրհորը և սրա ջուրը մաքրի՛ և հավերժական բխումով առատացրո՛՝ մեր մարմնական կարիքները գոհացնելու համար, որպեսզի շնորհակալությամբ փառավորենք Քեզ...» ([2], էջ 417): Տեսնում ենք դարձյալ, որ մեր մարմնական պետքերի համար գործածելուց առաջ բնության այս մասմիկը՝ կենսատու ջրհորը ևս՝ որպես պարզ ընդունելով Տիրոջից՝ դարձյալ Նրան ենք հանձնում ու խնդրում օրինել: Յետո՛ սրբված ջուրն օգտագործելով՝ փառավորում ենք Սուրբ Երրորդությանը:

Կա ջրի օրինության ևս մի կանոն՝ Խաչահանգիստը: Այս կանոնը կարող է կատարվել հոտերի և նախիրների, այգիների և բանջարանոցների բուժման և պտղաբերության նպատակով. «...Քարերա՛ Տեր, Սուրբ Հոգու շնորհներն ուղարկի՛ այս ջրի վրա և աներևույթ Աջով և ամենահաղթ Խաչից զորությամբ օրինի՛ այն: Զո շնորհները տուր այս ջրին, որպեսզի սրանից բոլոր խնդրներն իրենց հիվանդություններից բժշկություն և ցավերից փարատում գտնեն: Սուրբ Խաչից զորությամբ օրինի՛ այս ջուրը, Տե՛ր, որպեսզի սրանից խնդր հոտերն ու նախիրները ցավերից զերծ լինեն և ծնունդ տան: Սուրբ Խաչի այս նշանով օրինի՛ այս ջուրը, Տե՛ր, քահանայիս ծեռքով և այս ժողովորի խնդրանքով, որպեսզի ո՞ր տունկերի և բույսերի վրա որ ցողվի, ժամագից, թրբությոց և ամեն պատահարներից անվճառ մնան և ավելի ևս պտղաբերեն՝ մարդկանց կարիքների և Զո պաշտամունքի իբրև սպա ծառայելու համար: Շնորհակալությամբ փառք ենք Եղանակը՝ Հոգու և Ամենասուրբ Հոգու հետ միասին, այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն» ([2], էջ 308-309):

Զուրը, որ բոլոր ժամանակներում խորհրդանշել է մաքրություն և կյանքի ակունք, օրինվելով՝ դառնում է նաև օրինաբաշխ, քանի որ Տիրոջ շնորհներն է կրում իր մեջ, և կարող է դրանք տալ իրենից խնդր ամեն կենդանի էակի, իրենով ոռոգվող ամեն ծառ ու ծաղկի:

Ջրի օրինությունն ամեն տարի Աստվածահայտնության տոնին կատարվում է Եկեղեցում՝ հաջորդելով տոնական պատարագին: Դա ջրօրիների կարգն է, որից հետո օրինված ջուրը բաշխվում է հավատացյալ ժողովրդին: Մարդիկ տանում են այն՝ որպես հիվանդներին բժշկություն, իսկ իրենց տներին՝ սրբություն ու առատություն:

Մինչ առատություն ու մաքրություն է խորհրդանշում ջուրը, դրա բացակայությունը ցավ ու սով է նշանակում: Ժողովրդի համար մեծագույն աղետներից է երաշտը. մարդու աչքի առաջ ծարավից թալկանում են արտերը, այգիներն ու դաշտերը: Մարդն օր առ օր իր խնամած ծիլերի հետ, կարծես, զրկվում է կենդանության հույսից, տառապում՝ անզորությունից և սարսափով հետևում՝ ինչպես են խանձվում նորելուկ ընծյուղներն ու անհաս պտուղները: Ամառվա տապի մեջ նա արդեն կանխատեսում է ծմեռային անկանխելի քաղցը:

Երաշտի պարագայում կատարվող կարգը մի յուրօրինակ ապաշխարության աղոթք է, որդիական աղաչանք: Այստեղ ենթատողում հասուն մարդը խոստովանում է, որ արժանի է այս պատժին, և բազումողորմ Արարչից խնդրում է դալարեցնել Երկիրն այն մանուկների ու անասունների սիրուն..., որոնց պետք է նա կերակրի ժամանակին. «...Աղաչում ենք Քեզ, ուղարկի՛ Զո անձրևները, որոնց պետք ունենք, և որոնց համար խնդրում ենք Քեզանից: Դալարեցրո՛ Երկիրը՝ Զո ժողովրդի սիրուն, մանուկների և անասունների և բոլոր կենդանի արարածների սիրուն, որոնք Քեզ են նայում, որպեսզի իրենց կերակրես ժամանակին...» ([2], էջ 435): Նկատենք՝ մարդը չի խնդրում սովից փրկել իրեն. նա աղաչում է Տիրոջը՝ իր պատճառով չպատժել անմեղներին՝ մանուկներին ու բոլոր կենդանի արարածներին: Դիշենք նաև, որ Եկեղեցին «մանուկ» է կոչում ոչ միայն տարիքով փոքրերին, այլև նորադարձներին և մանկան պես մաքուր, անմեղ մարդկանց: Կարելի է վերլուծել յուրաքանչյուր բառը, քանի որ խորախորհուրդ է Յայ Եկեղեցու ծիսարանում արտահայտված քրիստոնեական իմաստությունը, սակայն այսքան էլ բավ է՝ ապացուցելու, որ հայ քրիստոնյան Աստծուց բնությունն ի պահպանություն ընդունել է Երկյուղածորեն և պատասխանատվությամբ:

### »»83. Մարդ-բնություն վիխսհարաբերությունն ըստ Յայ Եկեղեցու ծիսակաղքի

Իսկ այժմ անդրադառնանք այն արարողակարգերին, որոնցում արտացոլված է ոչ միայն պահպանելու ու մշակելու, այլև բարիքներից օգտվելու ձևը: Այս շարքում ներառվում են Մաշտոցում տրվող սեղան օրինելու, նոր հաց օրինելու և, իհարկե, աղ օրինելու կանոնները:

Նշենք այն հատկանիշները, որ հատուկ են այս կանոններին: Նախ՝ քրիստոնյան փառաբանությամբ և գոհությամբ է ընդունում այն պարզեները, որ Աստված է շնորհում: Կանոններում բարեգործություն արտահայտող բազմաթիվ բնորոշումներով է նա Տիրոջ դիմում՝ հավաստելով, որ գիտակցում է իրեն տրված բարիքների արժեքն ու օգտակարությունը: Մարդը գիտե, որ Տիրոջից է ստանում ամեն բան («...Ամեն բարի շնորի և ամեն կատարյալ պարզ վերևից է՝ իջած լուսի Յորից» (Յակ. 1:17)), և առանց Աստծու օրինության ոչ ոք չի կարող այդ բարիքները գործածել՝ ուտել, հագնել և այլն: Եվ երբ Տիրոջ օրինությամբ է գործածվում այս կամ այն պարզել, այն մարդու համար մաքրության, սրբության, առողջության և ներքին բերկրանքի՝ ցնծության առիթ է դառնում:

Որպես ապացույց՝ մեջբերենք հատված սեղանի օրինության կանոնից. «...Բարերար և բազմագութ Տե՛ր, ... Քո ողորմությամբ օրինի՞ր այստեղ դրված հացն ու գինին, որ Քո առաս բարիքներից վերցնելով՝ Քեզ ենք ճատուցում, ով անկարոտ Աստված, ի հիշատակ նրանց, ովքեր Քեզ հավատալով մեռան: Փրկություն, առողջ կյանք և մեղքերի թողություն շնորհի՞ր բոլոր նրանց, ովքեր սրանից կճաշակեն, իսկ մեր ննջեցյալներին հիշի՞ր, Տե՛ր՝ երկնավոր հարսնարանիդ անսպառ ուրախությունների մեջ սրբերին դասակից անելով նրանց, և բարի պարզեներով հատուցի՞ր այս նվերը ճատուցողներին» ([2], էջ 393-394): Խնդրելով Տիրոջ օրինությունն այն բարիքների համար, որ պիտի գործածեն՝ քրիստոնյան հավատում է, որ օրինությունը կփոխանցվի և ճաշակողներին, և պատրաստողներին ու ճատուցողներին:

Նույնը կարդում ենք նաև նոր հաց օրինելու կանոնում. «Օրինի՞ր, Տե՛ր, այս հացի նյութը, ինչպես օրինեցիր հինգ և յոր նկանակները, նույնպես օրինի՞ր այս նոր հացը, և ովքեր կերակրվեն սրանից, թող հոգու և մարմնի առողջություն ընդունելով բարիքը՝ մարդն այն հանձնում է օրինվելու, որպեսզի հոգու ու մարմնի առողջություն տա ճաշակողներին: Նկատենք նաև, որ այստեղ նշվում է մեր Տե՛ր Հիսուս Քրիստոսի օրինությամբ հացի բազմացնան հրաշքի մասին: Ապավինելով Աստծու ողորմածությանը՝ մարդն այս կանոնով հացի բազմացնան ամենօրյա հրաշքն է խնդրում Նրանից՝ հացի հրաշագործ Տիրոջից:

Այս շարքում առանձնահատուկ է աղ օրինելու կանոնը, քանի որ աղն ունի մի քանի խորհրդապաշտական նշանակություններ: Փառաբանելով Աստծուն այս անչափ կարևոր տարրի համար՝ մարդը խնդրում է օրինել այն, նրա միջոցով՝ այն ամենը, ինչ դրանով կիամեմվի, և բոլորին, ովքեր այդ ուտեսատներից կճաշակեն. «Օրինյալ ես, ամենակալ Տե՛ր Աստված, բոլոր արարածների արարիչ, որ բարի և լավ ստեղծեցիր ամեն ինչ, և ոչ մի անպետք բան չկա նրանց մեջ. դրանք տվեցիր մարդկանց կարիքների համար, իսկ աղն ստեղծեցիր աշխարհը պահելու և ջրերը մեկտեղ հավաքելու համար: Եվ հիմա մենք՝ Քո սուրբ անվանդ հավատացողներս, Քո պարզեները վերցնելով՝ գոհություն ենք հայտնում առատ ողորմության համար և փառավորում Քո ամենամեծ տերությունը: Օրինի՞ր, Տե՛ր, Քո ողորմությամբ այս աղը և սրբի՞ր սա, որպեսզի ինչ բանի որ խառնվի սա, լինի քեզ հաճելի և ընդունելի, իսկ մեզ՝ շնորհի հոգու և մարմնի մաքրություն և առողջություն: Որպեսզի սրանով ամրացած ու զվարթացած՝ փառավորենք Քեզ...» ([2], էջ 387-389):

Ակնհայտ է, որ կանոնում առկա են էկոլոգիական աստվածաբանության առնչվող տողեր: Որ բարի և լավ ստեղծեցիր ամեն ինչ, և ոչ մի անպետք բան չկա նրանց մեջ. սա որոշակի պատասխան է այն տեսակետներին, որոնք քրիստոնեությանը մեղադրում են բնության նկատմամբ անհարգալից վերաբերմունք ունենալու մեջ: Յարկ է նաև նշել, որ օրինված աղով եփվում է ողորմության համար նախատեսված կենդանին և բաշխվում է կարիքավոր մարդկանց՝ Աստծու փառքի համար:

Անշուշտ, այն համայնքում, որը բնության բարիքների նկատմամբ այսօրինակ վերաբերմունք ունի, չի կարող լինել բնության շահագործում, բարիքների վատնում ու փչացում: Երկինքը, երկիրը և ամեն բան նրանցում Տիրոջն է պատկանում (Յակ. 1:7, Սաղմ. 8, 18, 23): Դա վերաբերում է նաև անկենդան՝ անօրգանական նյութին: Մարդն ամեն բան՝ որպես պարզ, ստանում է Տիրոջից, իր ստեղծագործական ներդրումն անում և մատուցում Տիրոջը՝ սրբելու, օրինելու, հատուկ շնորհներով օժտելու, իր կարիքների (մարմնական, մտավոր և հոգևոր) համար գործածելու նպատակով: Սա արտացոլված է Հայ Եկեղեցու ծիսարանի այն կանոններում, որոնցով Աստծուն խնդրում ենք օրինել առօրեական կամ ծիսական գործածման համար նախատեսված տարբեր առարկաներ: Առանց Տիրոջից ստացած այդ օրինության և շնորհների՝ ձեռակերտ ստեղծագործությունը լոկ նյութ է՝ զուրկ բարձր, վեհ, սուրբ նպատակների համար պիտանիության շնորհից: Մինչդեռ իր աշխատանքի արդյունքը օրինության համար Տիրոջը մատուցողը ցնծում և ուրախանում է և գոհություն ու փառք է առաքում Բարձրյալին՝ լի երախտագիտության մաքուր զգացումներով: Իրերի և շինությունների օրինության կանոնների այս շարքում են սկիհի և մաղզնայի, Եկեղեցու զգեստի, խունկի, ժամահարի, խաչի և տաճարի օրինության կանոնները, որոնք բոլորն ել սրբազն արարողությունների հետ են առնչվում, ինչպես նաև նոր տան և նոր գրքի օրինության կանոնները:

Սկիհի և մաղզմա օրինելու կանոնում կարդում ենք. «Օրինյալ ես, Տե՛ր Աստված մեր, որ մեզ այս նյութը տվեցիր՝ Քո սրբության անոթը պատրաստելու... Արդ, Վերցրո՛ւ սա մեր ձեռքերից, և սրբիր Քո սրբությամբ, որպեսզի արժանի լինի Քո Սուրբ Եկեղեցու սպասավորության համար ընդունվելու, որով և թող բերկրանք ապրեն սրա մատուցողները՝ Քեզնից բարիքների հատուցում ակնկալելով» ([2], էջ 362-363): Այսպես, մարդը գոհությամբ վերցնում է նյութը Աստծուց, պատրաստում անհրաժեշտը (իր, գործիք և այլն), նորից տալիս է Աստծուն՝ սրբելու իր սրբությամբ, և կրկին ընդունում այն՝ Սուրբ Եկեղեցու սպասավորության համար: Սա և երախտագիտության, և խոնարհության արտահայտություն է, որ և պարտավորեցնում, և բերկրանք է պատճառում մատուցողներին:

Դետևալ կանոնվ օրինվում են Եկեղեցու զգեստները. «Տե՛ր Աստված՝ հզոր, բարձրյալ և ահավոր, ...., ընդունի մեզանից այս զգեստը, ...., օրինի՛ր և սրբիր սա, ինչպես ընդունեցիր և օրինեցիր Հովսեփի կտավները, որ նա մատուցեց՝ որպես պատան աստվածային մարմնիդ համար, որպեսզի սա արժանի լինի Քո Սուրբ Եկեղեցուն: Եվ որպեսզի ցնծան սրա մատուցողները, տո՛ւր նրանց, Տե՛ր, փոխարենը...» ([2], էջ 368-369): Դարձալ, Տիրոջից վերցրած զգեստները մատուցվում են օրինվելու և սրբվելու և ապա հետ ստանում՝ Եկեղեցու սպասավորության համար: Այս կանոնում ևս ակնարկվում է, որ Քրիստոսի մարդանալով Երկիրը սրբվել է նախնական անեօքից: Երբ Նա ճաշակել է Երկրի բարիքներից, օրինվել են դրանք, երբ գինի է խմել, օրինվել է վազը, իսկ երբ Իր՝ աստվածություն կրող մարմինն է պատանվել կտավով, օրինվել է զգեստը: Եվ այժմ էլ, եթե Աստված Իր տաճարին արժանի համարի մատուցվող զգեստները, ցնծություն կապրեն դրանց պատրաստողները:

Բավական բովանդակալից է ժամահարի օրինության կանոնը: Դա տարօրինակ չէ, քանի որ զանգակն է, որ դարեր շարունակ հավատացյալներին Եկեղեցի է կանչել, ազդարաբել ուրախության կամ տրտմության լուրերը, պատերազմի բոթը կամ հաղթանակի ավետիսը՝ տոնական կամ սգո զգացումներով համակելով մարդկանց հոգիները: Ահա մի հատված այդ կանոնից. «Տե՛ր Աստված մեր, ուղարկիր Քո Սուրբ Հոգու շնորհներն այս նյութի վրա... Տուր, Տե՛ր, սրա ձայնին ազդելու շնորհ, որպեսզի բոլոր նրանք, ովքեր լսեն սրա ինչումը, զղան իրենց սրտերում և դառնան չար խորհուրդներից և ամեն տեսակի անօրենություններից և խնդրեն մեղքերի քավություն և թողություն, և Դու բարերարությամբդ լսես և ողորմես նրանց: Տուր, Տե՛ր, սրան ազդող ձայնի շնորհ

### »»83. Մարդ-բնություն փոխհարաբերությունն ըստ Յայ Եկեղեցու ծիսակաղօք

և հիշիր բոլոր նրանց, ովքեր կլինեն հիվանդության ախտերի կամ սատանայի արհավիրքների մեջ և կլսեն սրա հնչումը և կիհշեն քո ահավոր և սքանչելի անումը և ողորմություն կիսնդրեն քեզնից, և Դու թերևացրո՞ւ ու փարատի՞ր նրանց բոլոր ցավերը: Տուր, Տե՛ր, սրան ազդեցիկ ձայնի շնորհ, և թող որ բոլոր նրանք, ովքեր վշտերի և այլ նեղությունների մեջ կլինեն և կլսեն սրա հնչումը և կիհշեն քո Սուրբ Եկեղեցին և քո ահավոր երկրպագությունը և կիսնդրեն քեզնից օգնություն, Դու լսես նրանց և փարատես նրանց նեղությունն ու տրտմությունը: Տուր, Տե՛ր, սրան ազդեցիկ ձայնի շնորհ, որպեսզի երբ հավաքվեն կարկտարեր ամպերը և մարդիկ լսեն սրա հնչումը և հիշեն քո բարերարությունը և խնդրեն քեզնից իրենց հանցանքների ներում և անդաստանների և բոլոր պտուղների պահպանություն խնդրեն, Դու լսես նրանց և ողորմես՝ քո բարության հրամանի փոխարեն, քանզի Դու սովոր ես փոքր ծառայության փոխարեն մեծամեծ սքանչելիքներ գործեւ, և ինչպես կործանեցիր Երիքովի պարիսպները՝ ի պատասխան Եղջերափողերի հնչման, այժմ Էլ շնորհի՛ր թշնամու բոլոր ամրությունների կործանում սրա հնչման միջոցով, որպեսզի կարողանանք օրինել ամենօրհնյալ Աստծու՝ Յորը, Որդուն և Սուրբ Յոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն» ([2], էջ 405-407):

Երբ քրիստոնեությունը դեռ նոր էր Յայաստան մուտք գործել, ընդունված կարգի համաձայն (ըստ Աստվածորդու՝ Յորդանանի ջրերում մկրտվելու օրինակի), մկրտությունն անց էր կացվուն բացօթյա, հոսող ջրերում՝ գետի մեջ ([8], էջ 64): Սակայն ցրտաշունչ ձմեռվան առերեսվելով՝ այդ կարգը փոխվեց. սկսեցին մկրտել Եկեղեցուն: Այսպես հաստատվեց ոչ միայն ջրի օրինության կարգը, այլև ավազան օրինելու կանոնը: Ահա մի հատված այդ կանոնից. «Տեր Աստված,... աղաչում ենք,... քո Սուրբ Յոգին ուղարկի՛ր և օրինի՛ր այս ավազանը, ինչպես [Դու, ո՛վ մեր Տեր Յիսուս Քրիստոս,] քո ամենամաքուր ամենեղությամբ Յորդանան գետը մտնելով՝ օրինեցիր այն, որպեսզի նա օրինակ ծառայի մկրտության այս Ավազանին, որից բոլոր մարդիկ ծնվում են Յորից: Բոլոր նրանց, ովքեր կմկրտվեն այս ավազանում, արժանի արա՛ մեղքերի թողություն գտնելու, Սուրբ Յոգին ընդունելու, Երկնավոր Յորդ որդեգրվելու և Երկնքի Արքայությանդ ժառանգորդը ժառնալու: Որպեսզի մեղքերից սրբված լինելով՝ այս աշխարհում քո կամքի համաձայն ապրենք, անսպառ բարիքներ վայելենք բոլոր սրբերիդ հետ և փառավորենք քեզ, Յոր և Սուրբ Յոգու հետ միասին այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն» ([3], էջ 352):

Բժշկագետները դարեր շարունակ զարմանք են հայտնել, թե ինչպես է, որ ժանտախտի և այլ զարիութելի հիվանդությունների համաճարակների ժամանակ Եկեղեցին և այնտեղ ապաստանած մարդիկ զերծ են մնացել մահաբեր ախտերից: Միայն հետագայում պիտի պարզվեր, որ անուշաբույր խունկն ունի նաև ախտահանող հատկություն, և այնտեղ,




Սիմեոն Արծիւեցի, Մկրտություն, 1305թ.

ուր խունկ են ծխում, հիվանդությունների վարակի տարածման հնարավորությունը զգալի նվազում է: «...Աղաջում ենք քեզ, Տե՛ր բարերար, ընդունի՛ր սա մեր ձեռքերից, ինչպես ընդունեցիր Ամարոնի և Զաքարիայի ձեռքերից, և պարգևի՛ր մեզ Սուրբ Յոգուդ շնորհները: Յեռացրու մեզնից խավարասեր թշնամու ահավորությունները և շնորհի՛ր մեզ աստվածությանդ ահն ու երկյուղը մտապահել մշտապես» ([2], էջ 372): Եվ թերևս, դարեր շարունակ բազմաբյուր անգամ հնչած այս կանոնի շնորհիվ է նաև, որ Աստված այդ հատկությունն է տվել խունկին:

Տիրոջ Սուրբ Խաչակիայտի գորությունը բազում հրաշճներով մշտապես պատկառանք ու երկյուղածություն է ներշնչել հավատացյալ քրիստոնյաններին: Ամեն օր իրենց վրա կրելու, ինչպես նաև Եկեղեցական արարողությունների համար պատրաստել են խաչեր և փայտից, և մետաղներից՝ հավատալով, որ տառապանքի ու փրկագննան այդ նշանը կպահպանի ու կառաջնորդի իրենց: Իսկ Եկեղեցին մշակել է ձեռակերտ խաչերն օրինելու կանոն. «....Դի՛ր, Տե՛ր, և այժմ Քո աստվածային ձեռքը սրա՝ քեզ ընծայված նշանի վրա, և խոնարիվելով օրինի՛ր սա տերունական Քո օրինությամբ, որ անանց է՝ հեղելով սրա վրա նույն շնորհների խորհուրդը, և տալով սա մեզ՝ որպես վերստին փրկանք և պահապան ամեն տեսակի վտանգավոր նեղություններից և մեր զինվորության համար՝ որպես աստվածային սպառազինություն: ...Եվ այս խաչի նշանով թող քեզ համար օրինվեն երկրի թոլոր կողմերը, քրիստոն, փառքերի թագավոր: Սա թող միշիթարի մեզ մեր խոնարհության մեջ: Սա թող լինի մեզ կյանքի ճանապարհ և լույսի ճրագ՝ ուղղելով մեր շավիղները քեզ հաճելի ձևով... Օրինի՛ր այս խաչը Քո թոլոր հավատացյալների պահպանության համար: ...Օրինի՛ր այս խաչը և տո՛ւր այն՝ որպես պահապան, Ամենասուրբ Երրորդությունդ խոստովանողներին» ([3], էջ 331-335): Աղանդավորները դեռ առաջին դարերից բազմից շահարկել են քրիստոնյանների՝ ձեռակերտ խաչը պաշտամունքի առարկա դարձնելու հանգամնքը: Սակայն փաստենք, որ հաճախաղեաւ են հրաշճները հավատով խաչալին դիմողների ու երկյուղածությամբ խաչը համբուրողների կյանքում: Եվ ուղղակի անհնար է ասել՝ քանի՛-քանի՛ կյանք է փրկել, որքա՞ն իիվանդների է ցավերից թերևնություն պարգևել օրինված սուրբ խաչը՝ իր հրաշագործ գորությամբ:

Սրբությունների օրինության կանոնների շարբում առանձնահատուկ տեղ ունի տաճար սրբելու կանոնը: Այստեղ մասնավորաբար ասվում է. «...Սրբի՛ր Քո սուրբ նվերների և պատարագների այս տունը և սեղանը, քանզի Քո տունն աղոթքի տուն է և մեղավորների քավարան: Ամեն մարդ, որ չի խոստովանում Յոր և Որդու և Սուրբ Յոգու անունը, նա մարդ չէ: Եվ ամեն վայր, որտեղ չի փառավորվում Յոր և Որդու և Սուրբ Յոգու անունը, այն սուրբ չէ: ...Նայի՛ր, Տե՛ր, մեր աղաչանքներին և Քո ժողովրդին և առաքի՛ր Սուրբ Յոգիդ այս տեղի և այս սեղանի վրա և սրբի՛ր ինչպես սկզբում էր... Սրբի՛ր և լուսավորի՛ր և պայծառացրու վերստին Քո այս տաճարը և սեղանը, որպեսզի Քո Աստվածությունը հանգչի այս տեղի վրա մշտապես: Որովհետև Քոնն է ամբողջ երկինքն ու երկիրը,



Կարդան Բաղիօցեցի, Եկեղեցու հիմնարկեց, 1577թ.

»»83. Մարդ-բնություն վիշտհարաբերությունն ըստ Յայ Եկեղեցու ծիսակաղքի



Եւևանի Սուրբ Եռորդություն Եկեղեցու օծումը, 2005թ.

և ամեն բանի Տերը Դու ես, և չկա այլ Աստված բացի Քեզնից՝ Յայր և Որդի և Սուրբ Յոգի, և Քեզ վայել է փառք, իշխանություն և պատիվ... Թող օրինվեն և սրբվեն այս սեղանը և Եկեղեցին և սրանց ամեն սպասքը՝ Սուրբ Խաչի այս նշանով, սուրբ մեռոնով և սուրբ Ավետարանով և այս օրվա շնորհով. Յոր և Որդու և Սուրբ Յոգու անունով, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն» ([3], էջ 305-313): Այստեղ ևս մարդը նշում է, որ Տիրոջն են պատկանում Երկինքն ու Երկիրը, և խնդրում է Նրան հատուկ հոգածությամբ մաքրել և օրինել իր տունը՝ շնորհելով այս սուրբ վայրին իր Սուրբ Յոգու մշտակա ներկայությունը:

Աստծու տան օրինության կանոնից անմիջապես հետո անդրադառնանք նոր բնակարան օրինելու կարգին. «Ով Տեր, ամենակալ և ամենակարող Աստված, ... օրինի՛ր այս տունը և այն հեռու պահիր ամեն չարիքից և փորձանքից: Քո ողորմության շնորհն առաւտ արա այս տան վրա: Այն քո սիրո և Երկյուղի վրա հաստատիր, որովհետև որևէ տուն միայն Քեզանով է շինվում և պահվում, բարգավաճում և պայծառանում, իսկ առանց Քեզ՝ իզուր են հոգնում այն շինողները: Եվ որովհետև այս տան բնակիչները Քեզ վստահեցին, թող իրենց հույսը աստվածային օրինությամբ պսակվի, ով Տեր, որպեսզի անդադար շնորհակալությամբ օրինաբանեն ամենասուրբ Երրորդությունն՝ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն» ([4], էջ 474-477):

Նկատենք, որ «տուն» ասելով՝ այստեղ նկատի չի առնվում լոկ նյութեղեն կառույցը, քանի որ միայն խորհրդանշորեն կարող էր լոկ նյութը հաստատված լինել սիրո և Երկյուղածության վրա: «Տունն» այստեղ ընտանիքն է, որ պիտի ապրի այս տանը, բարգավաճի ու պայծառանա՝ անդադար շնորհակալությամբ օրինաբանելով սուրբ Երրորդությանը: Սա նշանակում է նաև, որ ընտանեկան երջանկությունը թափառիկ ու անհաստատ, առանձին մի Երևույթ չէ. այն ճիշտ հարաբերությունների շնորհիվ լցվում է նյութեղեն տան պատերի ներսում, հետո՝ ծավալվում ու դուրս հորդում՝ պայծառացնելով նաև շուրջը՝ կենդանի ու անկենդան շրջապատը:

Եվ վերջում հիշենք նոր գրքի օրինության կանոնը: Յայ Եկեղեցու Ծիսարանում մեծագույն հար-

գանք է արտահայտվում նաև գրավոր արվեստի նկատմամբ: Գիրքն այստեղ մեկ նպատակ ունի՝ լուսավորել ընթերցողների անձերն ու Տիրոջը հետևելուն պատրաստել նրանց սրտերը: Դայտնի է՝ նախքան նորագույն տեխնոլոգիաների երևան գալն ինչքան հումք՝ հորթի կաշի, փայտանյութ, եղեգն և այլն եր օգտագործվում մեկ գիրք պատրաստելու համար: Օրինության այս կանոնը ցույց է տալիս, որ գիրքը ոչ միայն իշխանավորներին հասանելի թանկարժեք իր էր, այլև հարգարժան խրատատու, աստվածային պատվիրանակիր: «Օրինյալ ես, Տե՛ր Աստված մեր, որ մեզ քո պատվիրանները տվեցիր մեր անձերի լուսավորության համար: Ընդունի՛ր և այժմ այս նորատիպ գիրքը մեր ծեռքերից... օրինի՛ր և սրբի՛ր սա, որպեսզի սրա ընթերցողների և ունկնդիրների սրտերը բացվեն՝ քո հրամաններն իրենց մեջ ունենալու, և լինեն նրանք սեփական ժողովուրդ Քեզ համար» ([2], էջ 383-384):

Ցավոք, տեղեկատվական տեխնոլոգիաների մեր դարում այլևս այսօրինակ հարգալից և պատասխանատու վերաբերմունք չկա գրավոր արվեստի և նրա կրիչների նկատմամբ, սակայն այս կանոնը քրիստոնյաներիս հիշեցնում է, թե որն է գրքի իրական կերպն ու նպատակը: Սա եկոխնդիրների առումով առավել կարևոր է, քան կարող է թվական հայացքից, քանի որ բնապահպանությունն սկսվում է համապատասխան հանրային գիտակցություն ձևավորելուց, և եթե գրավոր արվեստը մեղսագործությունը գովազդելու փոխարեն ստանձնի իր իրական պարտավորությունը, ապա մեծապես կվերանան նաև եկոլոգիական խնդիրները:

Եվ ընդհանրապես, եթե Եկեղեցու սպասավորն աղրի Ծիսարանը (այսինքն՝ բերված օրինությունների կանոնները ժամանակ առ ժամանակ ըստ անհրաժեշտության գործածի համայնքի կյանքում), ապա կիրխվեն համայնքի հավատացյալների կյանքը, կենցաղը, մոտեցումները, աշխարհայացքը, վերաբերմունքը բնության նկատմամբ: Ինչպես համոզվեցինք, մեր Ծիսարանի ամեն տողում զգացվում է սուրբ մի նպատակ՝ կորսված ներդաշնակության վերականգնումը: Ապաշխարության ազդու աղոթքներով մարդու դառնում է առ Աստված և աղաչում Նրան հիվանդությունից բուժելով՝ առողջություն պարզել, չբերության դառնություններից ազատելով՝ վերականգնել ծնելիությունը, երաշտից փրկել անձրևների քաղցրությամբ, մեղավոր վիճակից առաջնորդել հոգևոր առողջության՝ պարզելով մեղքերի քավություն և բողություն, զանազան անցանկալի պատահարներից, պատուհասներից, աղետներից, հարձակումներից և ամենակարևորը՝ չարի ծառայությունից, գերության կապանքներից, ստրկությունից փրկություն, ազատում: Մարդն աղոթում է ջինջ հավատով, անխախտելի հույսով, կատարյալ վստահությամբ և մաքուր, աստվածային սիրով, որոնք և ուղեկցում են նրան, և նպատակ են նրա համար՝ որպես սպասվող, ակնկալվող շնորհներ՝ համապատասխան օրինություններից բխող: Նա աղոթում է ոչ միայն իր և հարազատների, այլև Աստծու բոլոր արարածների, իր կառուցած շինությունների, պատրաստած առարկաների համար: Օրինված իրերը, առարկաները, նյութերն էլ իրենց հերթին օրինության և շնորհների աղբյուր են դառնում մարդու համար՝ նրան պարզելով մաքրություն, առողջություն, իմաստություն, լուսավորություն, զորություն, սրբություն, քաջություն, հաղթություն խավարաւեր թշնամու դեմ, երկյուղածություն, խոնարհություն, սրտի ամրություն, զվարթություն, գոհության զգացում, ողորմածություն, գթասրտություն, ցնծություն, ուրախություն, ծառայասիրություն, եղբայրասիրություն, սեր ողջ արարչության հանդեպ:

Այնպես որ, հարկ է վերականգնել ավանդույթներն ու ըստ անհրաժեշտության՝ կատարել այս բոլոր կանոնները (որ վերջերս, ցավոք, հաճախ չեն կատարվում), քանի որ միայն այս ոգով կրթված համայնքում ծառը, բույսը, կենդանին հավատացյալի համար կներկայանան բոլորովին այլ հարթության վրա, այլևս կենդանի արարածներ՝ կոչված գեղեցկացնելու աշխարհը, վերականգնելու նախաստեղծ «բարի և լավ» վիճակը: Անկենդան առարկաներն անգամ մի այլ երեսով կներկայանան մարդում՝ ոչ միայն որպես միջավայր, այլև որպես տիեզերքի ներդաշնակության վերականգնման գործընթացի գործուն մասնակիցներ:

## ԳԼՈՒԽ 15. ՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆ

### 84. Ապաշխարություն

**Ապաշխարեցե՛ք և հավատացե՛ք Ավետարանին:**

**Մարկ. 1:15**

«Աստված, անգիտության ժամանակներն անտես առնելով, այժմ այն է պատվիրում մարդկանց, որ ամեն ոք ապաշխարի» (Գործք 17:30): Ապաշխարել նշանակում է հեծել ինչ-որ սխալի, հանցանքի կամ մեղքի համար, զղումով լաց լինել: Ապաշխարել նշանակում է մեղանչելուց հետո անդրադառնալ այդ մեղքին և զղալ:

Քովհաննես Մկրտիչն սկսեց քարոզչությունը հետևյալ կոչով. «Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. 3:2): Իսկ Յիսուսը շեշտում է նույնը՝ ասելով. «Ժամանակը հասել է, և մոտեցել է Աստծու արքայությունը. ապաշխարեցե՛ք և հավատացե՛ք Ավետարանին» (Մարկ. 1:15): Իսկ Ավետարանն այն գիրքն է, ուր մատնանշված են մարդկային բոլոր թերությունները և դրանք ուղղելու միջոցները: Այս միջոցներն ի գործ դնելով՝ Աստծուց հեռացածները, Աստծու դեմ հանցանք գործածները վերստին կարող են մոտենալ Աստծուն՝ ապաշխարությամբ:

Քարությունից հետո Յիսուսի՝ իր աշակերտներին տված վերջին պատգամներից մեկն էր՝ քարոզել իր անունով «ապաշխարություն և մեղքերի թողություն բոլոր ազգերի մեջ՝ Երուսաղեմից սկսած» (Ղուկ. 24:47):

Ապաշխարությամբ մարդը իրաժարվում է իր վատ ընթացքից և ապրում լավագույն մի կյանք՝ ինքն իրեն զարդարելով առաջինություններով: Ապաշխարությունն սկսվում է սրտի խոնարհությամբ և իր լրումին է հասնում աստվածային պատվիրանի ապրումով: Մինչև մարդ չկարողանա տեսնել իր հանցանքները, չի կարող ուղղվել: Իրեն տեսնելու համար մարդ անպայման պիտի նայի Ավետարանի հայելու մեջ: Ախտաճանաչումի պահից սկսած՝ մարդ սկսում է բարեկարգել իրեն հետագա իր կյանքում: Այլ խոսքով՝ զղալ նշանակում է դադարել մեղանչել:

Պիտի իմանանք, սակայն, որ երկու տեսակ զղում կա. առաջինը Յուդայի զղումն է, իսկ երկրորդը՝ Պետրոսի զղումը: Յուդայինը նման է կոտրված սառցաթեկորի, իսկ Պետրոսինը՝ հալված սառուցի, որի հետքն իսկ չի մնում: Անգլիացի մեծ բանաստեղծ Սիլքոնի խոսքերով, իրական «ապաշխարությունը հավիտենականության պալատը բացող ոսկե բանալին է»:

Քայ Եկեղեցին ապաշխարությունը շեշտում է իր պահեցողական ուտելիքներով, իր խորհրդավոր աղոթքներով, իր՝ արտասուրք քամող երգերով ու շարականներով, որպեսզի մարդը մաքրվի թե՝ արտաքնապես և թե՝ ներքնապես, այսինքն՝ մարմնով ու հոգով:

Ծշմարիտ զղումը երկու երես ունի. առաջին դեպքում մարդը լացող աչքերով քննում է անցյալուն կատարած իր սխալ արարքները, իսկ երկրորդում՝ հուսալից աչքերով նայում ապագային՝ Աստծու օգնականությամբ սուրբ կյանք ապրելու համար: Ապաշխարողն իր կյանքի ամեն օրը պիտի վերջինը համարի՝ Տիրոջը տալով այդ մի օրվա մեղքի հաշիվը:

Քրիստոսը խաչի վրա իր արյան հեղումով ջնջեց մեղքը և մահը: Նրա արյանը խառնվեց աջակողմյան ավազակի արցունքը: Եվ, ո՞վ իրաշը, Աստված և մարդ միաժամանակ մուտք գործեցին երկնքի Արքայություն: Խաչը Տիրոջ կողմից մեզ համար թափված Արյան գիտակցությունն է, խաչը տառապանքով աստվածային զոհագործության խորհրդի մեջ թափանցելն է, խաչն ապաշխարության ճանապարհն է, որ մեղավորին մոտեցնում է Փրկչին, քանի որ պատգամն այս է. «Ով որ չվերցնի իր խաչը և իմ հետևից չգա, չի կարող իմ աշակերտը լինել» (Ղուկ. 14:27):

Քրիստոսին աշակերտելու և միանալու միջոցը ապաշխարելն ու Ավետարանին հավատալն է, և մանավանդ, Ավետարանի պատվերները յուրացնելը և գործադրելն է՝ անսայթաք ու ճշմարիտ կերպով՝ ոչ թե ձևականորեն:

Իսկ ո՞րն է ապաշխարության ընթացքը: Երբ մենք մեղանչում ենք խորհրդով, խոսքով կամ գործով և հետո գեր մի փոքր լուսավորվում ենք, սկսում ենք խղճի խայթ զգալ: Սակայն խղճի խայթը դեռ ապաշխարություն չէ. կարելի է ամբողջ կյանքում ինքն իրեն հանդիմանել վատ արարքների և չար խոսքերի, մութ զգացմունքների և մտքերի համար և չուղղվել: Խղճի խայթին պիտի գումարվի դարձն առ Աստված՝ հույսով ու վստահությամբ, որ Աստված այնքան շատ է սիրում մեզ, որ կների, և այնքան զորավոր է, որ կարող է մեզ փոխել: Ապաշխարությունը կյանքի շրջադարձ է, մտքերի պտույտ, սրտի փոփոխություն, որոնք մեզ շրջում են դեմքով դեպի Աստված՝ ուրախ ու սրտատրոփ հույսով ու վստահությամբ, որ չնայած մենք արժանի չենք Աստծու ողորմությանը, սակայն Տերն աշխարհ է եկել ոչ թե դատելու, այլ՝ փրկելու, եկել է ոչ թե արդարների համար, այլ՝ մեղավորների:

Սակայն մեր կյանքում շատ բան կախված է հենց մեզնից: Ուստիև ապաշխարությունը պիտի սկսվի Աստծու սիրո վրա եղած այդ հույսով և, միաժամանակ, մեր կողմից քաջաբար իրականացրած սխրանքով, երբ մենք ինքներս մեզ ստիպում ենք ապրել այնպես, ինչպես պետք է, և ոչ թե այնպես, ինչպես մինչ այդ ապրում էինք: Առանց դրա Աստված էլ մեզ չի փոկի, քանի որ, ինչպես Քրիստոսն է ասում, ոչ բոլորը, որ «Տե՛ր, Տե՛ր» են կանչում, կմտնեն Աստծու Արքայությունը, այլ նրանք, ովքեր այդ արքայության պտուղներն են բերում (Մատթ. 7:21): Այդ պտուղները մենք գիտենք՝ խաղաղություն, խնդրություն, սեր, համբերություն, հեգություն, ժուժկալություն, խոնարհություն (տե՛ս Գաղ. 5:22-23)` հրաշալի պտուղներ: Դրանք կարող էին մեր կյանքը երկրի վրա հիմա իսկ վերածել դրախտի, եթե, իհարկե, որպես պտղատու ծառ՝ մենք կարողանայինք դրանք տալ:

Այնպես որ, ապաշխարությունն սկսվում է նրանից, որ նախ մեր հոգում խոսում է խիղճը, Աստված կանչում է մեզ: Այնուհետև մենք սովորում ենք ընդունել մեր ամբողջ կյանքը՝ բոլոր իրավիճակները, բոլոր մարդկանց, ովքեր մեր կյանքի մասն են կազմում: Երբեմն մերժելու փոխարեն ընդունելը տառապալից է լինում: Սակայն ապաշխարողն ամեն բան պիտի ընդունի՝ որպես պարզ Աստծու ձեռքից: Անշուշտ, մենք ինչքան էլ ասում ենք՝ Տեր Աստված, ես ուզում եմ քո կամքը կատարել, մեր ներսից մի ճիշ է բարձրանում՝ ոչ այս բանի մեջ, ոչ նրա մեջ: Այս, ես պատրաստ եմ ընդունել իմ մերձավորին, միայն թե՝ ոչ այս մերձավորին: Ես պատրաստ եմ ընդունել ամեն բան, միայն թե ոչ այն, ինչ որ Դու ինձ իրականում ուղարկում ես: Չզապելով այդ ապստամբ ճիշը և մեր կամքը Քրիստոսին չենթարկեցնելով՝ մենք մերժում ենք Տիրոջից մեզ ուղարկված դեղատոմները: Չէ՞ որ, եթե մեր կյանքում եղած ամեն բանը չենք ընդունում Աստծու պարգևի պես, ապա կյանքը մեզ համար չի դառնում ճանապարհ դեպի հավիտենականություն, և մենք անընդիատ փնտրում ենք Տեր Հիսուս Քրիստոսից զատ մի այլ ճանապարհ:

Սա էլ դեռ ամենը չէ: Մենք շրջապատված ենք մարդկանցով, որոնց հետ մեր հարաբերությունները երբեմն շատ ծանր են լինում: Եվ ինչքան հաճախ մենք սպասում ենք, որ ուրիշը զա, խոստովանի, ներում խնդրի, ստորացնի իրեն մեր առաջ... Ճնարավոր է՝ մենք ներեինք, եթե զգայինք, որ նա բավականին նվաստացել է: Սակայն ներել պետք է ոչ միայն նրան, ով արժանի է ներման. մի՞թե մենք Աստծուց կարող ենք ներում սպասել: Մի՞թե, երբ մենք դիմում ենք Աստծուն և ասում. «Տե՛ր, փրկիր, Տե՛ր, ողորմի՛ր», մենք կարող ենք ավելացնել «որովհետև ես դրան արժանի եմ»: Երբեք: Մենք Աստծուց ներում ենք սպասում Քրիստոսի մաքուր, անձնազոհ, խաչի սիրով: Այդ նույնը Տերն սպասում է մեզնից՝ մեր ամեն մի մերձավորի նկատմամբ. մենք մերձավորին պիտի ներենք ոչ թե այն պատճառով, որ նա արժանի է ներման, այլ որովհետև մենք Քրիստոսինն ենք, մենք

### »»85. Պահը որպես մարդու և բնության նորոգման միջոց

պարտավոր ենք Կենդանի Աստծու և խաչյալ Քրիստոսի անունով ներել:

Ներել նշանակում է նայել մարդուն, ինչպիսին որ նա է՝ իր մեղքերի մեջ, իր անտանելիությամբ, ինչպիսին որ նա կա՝ որպես բեռ ներ կյանքում, և ասել. «Ես քեզ կտանեմ՝ որպես խաչ, ես քեզ կիասցնեմ Աստծու Արքայություն՝ անկախ նրանց, դու ուզում ես դա, թե՝ ոչ: Կրերեմ քեզ Տիրոց մոտ և կասեմ՝ Տեր, ես այս մարդուն կրել եմ ամբողջ կյանքում, քանի որ խղճում էի նրան՝ հանկարծ չկործանվեր: Յինա Դու նրան ների՞՝ շնորհիվ իմ ներման»: Ինչքա՞ն լավ կլիներ, եթե մենք կարողանայինք մեկս մյուսի բեռը կրել (տե՛ս Գաղ. 6:2), եթե կարողանայինք մեկս մյուսին տանել ու աջակցել... Եթե, օրինակ, երբ մարդը տկար է, մենք նրան շրջապատեինք հոգատար, քննուշ սիրով, ապա քանի-քանիսը կսթափվեին, ինչքան մարդիկ կդառնային արժանի ներման, որը նրանց տրվել է ձրիաբար:

Ահա՝ ապաշխարության ճանապարհը. մտնել ինքո քո մեջ, կանգնել Աստծու առաջ, տեսնել քեզ դատապարտված, անարժան և ներման, և ողորմության, և փոխանակ Կայենի նման փախչելու Աստծու երեսից (Ծննդ. 4:3-16), դառնալ նրան և ասել. «Հավատում եմ, Տեր, քո սիրուն, հավատում եմ քո Որդու խաչին, հավատում եմ, օգնի՞ իմ անհավատությանը»: Այնուհետև գնալ Քրիստոսի ճանապարհով, ամեն բան ընդունել Աստծու ծեռքից, ամեն բանից պտղաբերել ապաշխարության ու սիրո պտուղներ և առաջինը ներել մեր եղբորը՝ չսպասելով նրա ուղղվելուն, կրել նրան՝ որպես խաչ, խաչվել, եթե անհրաժեշտ է, նրա վրա, որպեսզի իշխանություն ունենանք Քրիստոսի նման ասելու. «Հայր, ների՞ դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անուն» (Ղուկ. 23:34): Եվ ինքը՝ Տերը, Ով ասել է «Ինչ չափով որ չափեք, նույն չափով պիտի չափվի ձեզ համար» (Ղուկ. 6:38), կների մեզ, կուտրի, կփրկի և արդեն երկրի վրա՝ որպես սրբերի, մեզ կտա երկնային ուրախություն:

Սա՞ է Աստծու հետ հաշտվելու, մեր ներձավորի հետ հաշտվելու և մասնավորաբար՝ մարդ-բնություն փոխհարաբերության խախտված ներդաշնակությունը վերականգնելու ճանապարհը:

Ընկած մարդու եսակենտրոնությունը, նրա՝ իր մեղանչական հակումներին, կրքերին ու ցանկություններին ենթարկվելը, օգտապաշտական մոտեցումները բնության նկատմամբ ավելի ու ավելի են խորացնում անդունդը մարդու և բնության միջև: Ապաշխարության կոչը կանչ է մարդուն՝ իր իրական կոչումին դառնալու, բարձրանալու: Այն կոչ է հոգևոր ճգնաժամից դուրս գալու, որին միայն կարող է հետևել էկոլոգիական ճգնաժամից դուրս գալու խնդրի բաղձալի լուծումը:

### 85. Պահը որպես մարդու և բնության նորոգման միջոց

Տարօրինակ է, որ աշխարհի երկու երրորդը բաղցած է, մինչ մյուս մեկ երրորդը հատուկ միջոցների է դիմում նիհարելու համար:


Ի՞նչ է նշանակում էկոլոգիական ճգնաժամը մարդկության համար: Երկիրն այլևս ի գորու չէ՝ հոգալ բուլորիս կարիքները: Այս հարցին պատասխանելու համար հարկ է իմանալ, թե որոնք են մեր կարիքները կամ ինչ պահանջներ ենք ներկայացնում բնությանը: «Համաշխարհային տնտեսության զարգացման» գեկույցում ([22]) մի ցավալի տվյալ կա. «Երեխան, որ ծնվել է Բրիտանիայում, Աներիկայում կամ Ֆրանսիայում, այս մի տարվա ընթացքում կօգտագործի, կվատնի ու կաղտուի ավելի, քան 50 երեխան՝ զարգացող երկրներում: Բայց զարգացող երկրների այն մեկ միլիարդ մարդիկ, ովքեր շրջապատի աղտոտման առումով ունեցել են նվազագույն ներդրում, պիտի կրեն շրջապատի աղետների արդյունքները: Նրանք ստիպված են ապրել՝ վարելով անմշակ նավք, օգտագործելով այն բենզինը, որը հասնում է իրենց կամ ապրելով գործարանների կամ աղբի վերամշակման արտադրանասերի մոտ»:

Կյանքի որակը զարգացած և չզարգացած երկրներում մի քանի անգամ տարբեր է, սակայն մի՞թե դա «Երրորդ աշխարհի» ընտրությունն է կամ բնության՝ նրանց տված հնարավորությունը: «Յարուստ ազգերը, ասվում է նույն գեկույցում ([22]),- տրված յուրաքանչյուր ֆունտ ստերլինգի դիմաց հետ են վերցնում ինը». ահա այսպիսին է չզարգացած և զարգացող երկրներին տրվող բարեգործություն կոչվածի իրական պատկերը:

Զարգացած երկրներում կյանքի որակ ասվածն իրենից մանր ու մեծ անհրաժեշտություններ ու ճոխություններ է ենթադրում, և այդ քաղաքակրթությունների յուրաքանչյուր անդամ ձգտում է ոչ միայն հետ չմնալ հաճույքների և շաբաթության այդ մրցավագքում, այլև ավելի ու ավելի առաջ անցնել բոլորից: Որպես սեռականացված դարաշրջանի կնիք՝ սա նպատակ է դաշնում ոչ միայն այս հնարավորություններն ունեցող (կամ դրանք աղքատ երկրներից բռնագրավող) երկրների հասարակության մտածողության համար, այլև՝ զարգացման ճանապարհը բռնած (վերոհիշյալ քաղաքակրթություններին ձգտող) երկրների բնակիչների համար: Կյանքի այդ որակը, փաստորեն, դաշնում է նպատակ: Սա ցավալի է, քանի որ, ինչպես բազմիցս նշել ենք, էկոլոգիական խնդիրների հիմքը մտքի ու հոգու՝ ճշմարտության ճանապարհից շեղումն է: Մարդիկ ոչ միայն ապրում են, այլև ձգտում են ապրել ճոխության ու վայելքների մեջ՝ շոայլելով ու վատնելով: Այս պարագայում հույսը, որ երկրի բարիքները կրավարարեն ողջ մարդկության կարիքները հոգալու համար, աննշան է: Քանի որ բոլոր նրանք, ովքեր կվարողանան ծերը բերել ավելին, քան անհրաժեշտ է իրենց, հազիվ թե այդ ավելինը տան չունեցողին. առավել հավանական է, որ դա հայտնի ճոխությունների վրա վատնեն: Մինչդեռ երկիրը մարդկության կարիքները բավարարելու համար կարիք ունի իր ռեսուրսների նկատմամբ խնայողական մոտեցման, այսինքն՝ կյանքի որակի ժամանակակից չափանիշների լիարժեք փոփոխության:

Ուստի Ուղղափառ Եկեղեցու 20-րդ դարի նշանավոր հոգևորական Ա. Սուրոժսկին գրում է. «Այն ամենը, ինչ որ մարդը ծախսում է իր կարիքից ավելի, նա գողանում է մեկ ուրիշ մարդուց: Մարդը կարող է վերածնել աշխարհը՝ վերանայելով իր վերաբերմունքը: Ամեն մարդ ինքն իրեն պիտի ասի. «Այն ամենը, ինչ ունեմ և ավել է ինձ համար, գողացել եմ ինչ-որ մեկից»» ([14], էջ 380):

Քրիստոնեությունը սահմանում է բնության բարիքների նկատմամբ խնայողական վերաբերմունքի այն կանոնակարգը, որը մարդուն պարտադրում է չափավորության: Ըստ Յայ Եկեղեցու կանոնակարգի՝ քրիստոնյան պիտի պահը պահի տարվա մեջ մոտ 160 օր, այսինքն՝ տարվա



Ավետիս, Աղյատ Ղազարոս Արքահամի գրկում և մեծատումը  
դժոխուա, 16-րդ դար

### »»85. Պահը որպես մարդու և բնության նորոգման միջոց

գոեթե կեսը: Կենդանական սմնողից զերծ մնալով՝ ամեն մեկն իր չափով կօժանդակի կենդանական աշխարհի բնական հավասարակշռության վերականգնմանը: Մեծ Պահքի շրջանը՝ գարունը, ոչ միայն խոշոր եղջերավորների ծնի շրջանն է, այլև՝ ձկների ձվադրության: Մարդը, ով այս շրջանում զերծ է մնում կենդանական սմնողից, ոչ միայն չի նպաստում օրինախախտությանը, այլև նպաստում է ձկների, թռչունների ու կենդանիների բնականոն բազմացմանը:

Այս կանոնակարգը բնության բարօրության համար Աստծուն տրվող տուրք է: Մարդը՝ որպես վարձակալ, պետական օրենքով պարտավոր է պարբերաբար վճարումներ կատարել այն իրի կամ տարածքի համար, որն իր շահառությանն է հանձնված: Այդ վճարումները Երկրի Տիրոջը կոչվուն են տասանորդներ և պահք: Ինչպես նշում է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Պողոս Աղրիանուառության (18-19-րդ դդ.), «Սարդը պահեցողությամբ է հատուցում իր մարմնի պարտքն Աստծու հանդեպ... Քանզի Աստված՝ որպես Գերագոյն Տեր, ինչ բարիք որ տվել է մեզ, դրանցից տասանորդներ է պահանջում, ինչը Նրա իշխանության նշան է... Այդ պատճառով էլ պետք է մարմնի հասույթը կամ հարկը, որ պահեցողությունն է, մատուցել Աստծուն, որ մեր Տերն ու Բարերարն է՝ ըստ այսմ. «Ի՞նչ ունես, որ ստացած չլինես, և եթե ստացել ես, ինչո՞ւ ես պարծենում չստացողի պես»» (Ա Կորնթ. 4:7), ([7], էջ 405):

Այսպես, անտարակույս է, որ բնությունն ունի մարդու ժումկալ վարքի՝ պահեցողության կարիքը: Սակայն հարկ է հավելել, որ դրա կարիքն ունի նաև մարդը, և առաջին հերթին՝ մարդը: Յիշենք Աստծու առաջին պատվիրանը. «...Բարու և չարի գիտության ծառից մի՛ կերեք»: Սա որոշակի բանից իրեն գրկելու պահանջ էր՝ պահքի սահմանում: Մարդը խախտեց պահքի կանոնը, և այդպես մեղքն աշխարհ մտավ: Այնպես որ, պայքարը մեղքի դեմ ճիշտ է մնել պահքի օժանդակությամբ, և հաղթանակի երաշխիքը մեծ կլինի: Նաև իիշենք, որ մարդու համար բուսակերությունն էր բնական, և կատարելության ճանապարհն ընտրածներն իրենց օրինակով փաստել են, որ օրգանիզմը մասնաւուն անհրաժեշտությունը կարող է չունենալ: Ուսիշքն Աստծու բույլատու կամքով մտավ՝ մեղքի, անբնական ցանկությունների և կրքերի շատացման պատճառով: Մսեղենը միջոց է, որն առավել, քան բուսական սնունդը, զորացնում է մարմինը, մինչդեռ հոգուն ուժ է տալիս պահեցողությունը:

Պահքը հոգեսոր զորացման հայտնի միջոց է, որի մասին առաքյալն ասում է. «Երբ տկար եմ, այն ժամանակ եմ զորավոր» (Բ Կորնթ. 12:10): Մարմինը լծակից թշնամի է, որ հոգուն անդադար ստիպում է կատարել իր քամահաճույքները և ոչ թե Աստծու կամքը, պահքից խորշել տալիս՝ պատճառ բերելով իր տկարությունը, և հոգուն իրեն կամակից դարձնում՝ որովայնն ամեն օր ախտրժելի կերակուրներով խճողելու: Դայտնի է, որ երբ մարմինն է առատ կերակուրներով զորանում, հոգին տկարանում է, իսկ երբ պահեցողությամբ ճնշվում է մարմինը՝ ստիպված լինում առավել քիչ պահանջավոր լինել, հոգին զորանում է: «Ուրեմն,- ասում է Պողոս պատրիարք Աղրիանուառության, - պետք է ծոնով, պահեցողությամբ ու ժումկալությամբ ճնշել մարմինը, որպեսզի իլու հպատակությամբ մինչև վերջ ծառայի Աստծուն» ([7], էջ 404):

Երկրորդ՝ պահքով պայծառանում է նաև միտքը, քանի որ պահքը վերաբերում է ոչ միայն ճաշակելիքին, այսինքն՝ համի զգայարանին, այլև՝ մյուս չորս զգայարաններին: Թամնկարժեք բուրունքները, տեսողական, լսողական և զգայական զվարճակիքներն ու հաճույքները մի կողմ թողնելով՝ մարդն ապրում է աղոթքով ու աշխատանքով՝ մաքրելով իր միտքն ու սիրտը, քանի որ լիովին անօգուտ կլինի պահք պահել միայն բերանով, իսկ մյուս զգայարաններով չգործանալ մեղքի պատճառից: Այնպես որ, պահեցող մարդն իրեն զրկում է ոչ միայն պարարտ կերակուրներից, այլև՝ մեղքի ամեն պատճառից: Տեսնում ենք, որ այս պարագայում պահքը դարձյալ բնության բարիքների խնայողությանն է ծառայում, քանի որ ոչ միայն խնայվում է սնունդը, այլև ինչ-որ

չափով պակասում է ժամանակակից թանկարժեք հաճույքների պահանջարկը: Նաև՝ մաքրված միտքն ու սիրտն այն հիմքն են, որոնց վրա է ձևավորվում առավել հոգածու վերաբերմունք շրջապատի և շրջապատողների հանդեպ:

Եվ վերջապես, պահեցողությունը ոչ միայն մարդու հոգուն ու մտքին է հարկավոր, այլև մարմնի համար է առողջարար և օգտակար: Բժիշկներն առողջ ապրելակերպի շրջանակներուն առաջարկում են պարբերաբար պահը պահել: Այնպես որ, ով տրտնջում է Սուրբ Եկեղեցու կանոնական պահից և գեխությամբ անձնատուր է լինում կերակուրներ ու ընպելիքներ ընբոշխնելուն, ոչ միայն հոգուն է վնասում՝ հայտակեցնելով զորավոր կրքերին, այլև վնասում է մարմինը՝ ենթարկելով զանազան ախտերի ու տկարությունների:

## 86. Տիեզերական հաւատություն

Եթե խոսում ենք հաշտության մասին, հասկանում ենք նոր փոխհարաբերություններ, իրապես նոր հարաբերություններ երկու կողմերի միջև, որոնց միջև սուր վեճ է ծագել, կամ երկու մարդկանց միջև, որոնցից մեկը վիրավորված է, իսկ մյուսը նեղացնողն է: Դա ենթադրում է, որ վիրավորողն ընդունում է իր պատասխանատվությունը, իսկ նեղացած կողմը մեծահոգություն է ցուցաբերելու և պատրաստ է ընդունել մյուս կողմի խոնարի խոստովանությունը, և տեղի կունենա բաց զրոյց, որը թույլ կտա ոչ թե վերականգնել նախկին հարաբերությունները, այլ՝ ստեղծել նորերը:

Անհաշտությունն սկսվում է առաջին պատվիրանազանցությունից (Ծննդ. 3), որին հաջորդում է առաջին մարդասպանությունը. «Այդ ի՞նչ արեցիր,- ասում է Աստված Կայենին,- քո եղբոր արյան կանչը երկրից բռնքքում է ինձ» (Ծննդ. 4:10): Երկրի համար ողբերգություն էր այդ արյունով ներծծվելը, երկիրը սարսափած էր, որ այդպիսի բան կարող էր կատարվել: Իսկ հետո մեղքով է համակվում ողջ մարդկությունը, և արդեն ջրհեղեղից հետո Տերը Նոյին ու նրա հետ փրկվածներին թույլ է տալիս ուտել «ամեն մի կենդանի գեռուն»՝ հավելելով. «Զեր ահն ու երկյուղը թող լինի նրանց վրա» (տե՛ս Ծննդ. 9:3, 2): Եվ սրանով ողջ երևելի արարչությունն սկսում է կրել իր վրա մարդու մեղքերի հետևանքները:

Մինչ այսօր ողջ կենդանական աշխարհը սարսափում է մարդուց, որ դարձել է գլխավոր գիշատիչը, ամենավտանգավոր, ամենասարսափելի գիշատիչը: Սպանելու իր ունակությամբ ու նաև քանակությամբ մարդկությունը սպառնում է ողջ արարչությանը: Ուստի զարմանալի չէ, որ Պողոս առաքյալը գրում է, որ բոլոր արարածները հեծեծում են և մեծ ակնկալությամբ սպասում են Աստծու որդիների հայտնությանը (տե՛ս Հոռմ. 8:22, 19): Սպասում են՝ երբ մարդկությունը խելքի կգա, կդադարի գիշատիչ լինելուց, կդառնա դեմքով դեպի Աստված, կգտնի իր տեղն աստվածային նախախնամության մեջ և կիրագործի իր կոչումը: Մինչդեռ մարդկությունը շարունակում է արյուն թափել, մահացու կերպով ատել, վերաբերվել միմյանց այնպես, ինչպես գիշատիչ գազաններն են վերաբերվում այլ տեսակներին: Նա դավաճանել է Աստծուն՝ շրջվելով Նրանից, և սկսել է փնտրել իր կոչումն ու տեղն արարչության մեջ Նրանից դուրս:

Աստված չգոյությունից գոյության է կոչել ամբողջ աշխարհը, որպեսզի նրա հետ կիսվի ոչ միայն իր ունեցածով, այլև՝ հենց իրենով: Մենք կոչված ենք հաղորդակից լինելու աստվածային բնությանը (Բ Պետր. 1:4), և մեր միջոցով էլ, ամեն բան, ինչի հետ մենք շփվում ենք, պիտի մտնի Աստծու հետ այդ ամբողջական, խոր հաղորդակցության խորհրդի մեջ՝ ամեն արարած յուրովի, բայց մինչև վերջ՝ մինչև իր փառավոր կատարելության սահմանը:

Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, և ամեն մի ատոմ կարող է ճանաչել իրեն կազմի մեջ, քանի որ մենք նման ենք իրեն, միայն թե նոր իրավիճակում՝ Աստծու պատկերով: Աստված մեզ



Հովսիան, Խորհրդավոր ընթրիք, 1306թ.

պատվիրել է լինել առաջնորդներ, լինել կապող օղակ, որը պիտի միավորի ողջ արարչությունը հոգևոր աշխարհի հետ, և հոգիների աշխարհի, հրեշտակների աշխարհի սահմաններից այն կողմ, հենց իր՝ Աստծու հետ: Եվ կգա ժամանակ, երբ ողջ արարչությունը կդառնա Տիրոջ գգեստը, և Աստված կլինի իր զորությամբ և ներկայությամբ և սիրով անընդհատ զարգացող արարչության բուն էլությունն ու խսկությունը: Պողոս առաքյալի խոսքերով՝ կգա այն օրը, երբ Աստված կլինի ամեն ինչ ամենքի մեջ (Ա Կորնթ. 15:28), այսինքն՝ Աստված կլինի ոչ թե ոնանց մեջ, այլ իրենով կլցնի ամեն բան:

Բնության հետ մեր հարաբերությունների համար էական նշանակություն ունի այն, որ Ինքն Աստված մարդացավ, Ինքն Աստված մարմնացավ. Աստվածության լրիվ ամբողջությունը բնակվեց մարմնի մեջ, և Աստվածությունը դույզն-ինչ չպակասեց: «Ես եմ», - ասում է Քրիստոսը (Հովհ. 8:58)՝ կրկնելով Աստծու խոսքը իր մասին (Ելք 3:14). «Ես այն Աստվածն եմ, որ Ե»:

Քրիստոսը իր մարդեղությամբ ազգակից է ամեն ատոմի, այս աշխարհի ամբողջ նյութականությանը: Քրիստոսը հաղորդակից է երկրի հողին, որից ստեղծվել է մարդը, և հողի միջոցով՝ աշխարհի ամբողջ նյութականությանը: Ողջ արարչությունը Նրանուն ճանաչում է ինքն իրեն՝ լրիվության մեջ, ամբողջական փառքի մեջ, և կարող է ցնծալ նրանով, որ կա մի Մարդ, մի իսկական կատարյալ Մարդ, Ով կարող է առաջնորդել իրեն դեպի լրիվություն, դեպի կատարելություն:

Եվ Նա, իսկապես, կատարում է դա, այն էլ՝ զանազան ձևերով: Մարդուն Նա սովորեցնում է կյանքի ճանապարհը, այն ճանապարհը, որ առաջնորդում է դեպի հավիտենական կյանք, դեպի կյանքի լրիվություն, որն այլ բան չէ, քան Աստծու կյանքը, որ հորդում է զորությամբ և գործում է մեր մեջ: Արարչության հարցում Սուրբ Գիրքը և Եկեղեցու հայրերը մեզ սովորեցնում են, որ արարչությունը չի մեղանչել Աստծու դեմ. Նա ընկել է մեղքի տակ, այսինքն՝ տառապանքի, ամներաշնակության, աղավաղման տակ, մարդու մեղքով: Այսպես, մենք խոսում ենք գիշատիչների դաժանության մասին, սակայն նրանք դարձել են այդպիսին մեր պատճառով, քանի որ մենք երես ենք դարձել Աստծուց, Ով մարդկության և արարչության ներդաշնակության բանալին է, և այդպիսով ինքներս գրկվել ենք ներդաշնակության բանալուց, որով կարող էինք մոտենալ արարչությանը, և հիմա չենք կարող առաջնորդել նրան, տիրել նրան լավ իմաստով, հասցնել նրան կատարելության և լրիվության:

Մեր կորցրած այդ հաշտության բանալին մենք գտնում ենք Սուրբ Եկեղեցու խորհուրդների մեջ: Սկսենք Սուրբ Յաղորդության խորհրդից: Կարևոր է նշել, որ Աստված իր ստեղծած ոչ մի բանը չի ոչնչացնում: Որպեսզի նյութը հասնի լրիվության, այն չպիտի ոչնչացվի կամ վերափոխվի ինչ-որ այլ բանի: Սուրբ Յաղորդության հացն ու գինին Սուրբ Պատարագի ընթացքում ինչ-որ իմաստով մնում են այն, ինչ որ էին, սակայն դրանք արդեն նույն հացն ու նույն գինին չեն, որ մենք նախապատրաստել էինք. Նրանք հաղորդակցվել են աստվածային զորության հետ, հաղորդակից են դարձել Քրիստոսի Մարմինն է, բայց և հաց է, դա Քրիստոսի Արյունն է, բայց և գինի է: Դրանք առանձին են և ներկայացնում են Քրիստոսի մահվան ծշմարիտ պատկերը: Միասին նրանք ներկայացնում են Նրա Յարության ծշմարիտ պատկերը: Քահանան հաղորդվում է սրբագործված Մարմնին և Արյանը առանձին-առանձին՝ դրանով ինչ-որ տեղ հիշեցնելով, որ ինքը պարտավոր է մասնակից լինել Քրիստոսի խաչելության ու մահվանը, եթե ուզում է փոխանցել ուրիշներին Յարությունը: Իսկ հավատացյալները հաղորդվում են Քրիստոսի Մարմնին և Արյանը միասին, այսպես որ նրանք ստանում են հարուցյալ Քրիստոսի կյանքն ամբողջության մեջ, իրենց համակող այլակերպված հաղբանակի մեջ ([6], էջ 21; [14], էջ 394):

Իսկ ի՞նչ է կատարվում մկրտության ջրի հետ, մեռնի հետ: Ցուրաքանչյուր պարագայում աստվածային անեղ (անստեղ) զորությունն էապես ներհոսում է արարված նյութի մեջ, լցնում է այդ նյութը և դարձնում է այն հավիտենականության վախճանաբանական մի մասնիկը: Եվ մենք ընկղմվում ենք դրա մեջ, մենք դրոշմվում ենք դրանով, որպես սնունդ՝ ընդունում ենք այն, ինչ որ պատկանում է ապագային, և այն դառնում է մեր մեջ հավիտենական կյանքի թթվածորը:

Մենք, այսպես օրինելով զանգակը, քշոցը, խունկը և այլ առարկաներ, ստանում ենք խորհրդին հաղորդակից կամ գուցեմասնակից իրեր, որոնց միջոցով վերուստ խորհրդավորաբար զորությունն է փոխանցվում: Եվ ուրեմն, մեզ համար ինչքան սուրբ պիտի լինի այս աշխարհը: Ինչքան սուրբ է այն ներունակաբար՝ չնայած դեռ գտնվում է մեր մեղանչական վիճակի գերության մեջ:

Մկրտության կարգի մեջ կարդացվում է մի հատված Պողոս առաքյալի՝ հռոմեացիներին ուղղված նամակից (Հոռմ. 6:3-11), որտեղ ասվում է, որ մենք պիտի տնկակից լինենք Քրիստոսի մահվանը, որպեսզի մեր մեջ կրենք Քրիստոսի հավիտենական կյանքը: Ամեն մի օրինության կարգի մեջ մենք կարող ենք տեսնել այդ նույն կոչը՝ ուղղված մեր մտքին, հոգուն և սրտին՝ արձագանքելու, մասնակիցը դառնալու Քրիստոսի մահվանը, քանի որ առանց այդ մահվան չի կարող լինել Յարություն, որպեսզի մեր մեջ հայտնվի Քրիստոսի կյանքը:

Իսկ հիմա, նայելով մեզ շրջապատող աշխարհին, չե՞նք սարսափում, որ միակ պատճառը, որ ողջ աշխարհը չի հասնում այն լրիվությանը, որին հասնում է նյութը խորհուրդների ժամանակ, մենք ենք: Քանի որ մենք կանգնած ենք Աստծու արարչության և հենց իր՝ Աստծու միջև, մինչդեռ

»»86. Տիեզերական հաշտություն



Սուրբ Էջմիածին, Ձրօհնել, 2007թ.

պիտի լինեինք կամուրջ, լինեինք առաջնորդներ, պիտի առաջնորդեինք այս աշխարհը, լինեինք այս աշխարհում քահանայապետներ, որպեսզի դարձնեինք և այն, և ամեն ինչ, որ նրանում կա, սրբագործված և սուրբ: Մենք գիտակցում ենք, որ եթե շարունակենք մեզ պահել այնպես, ինչպես պահում ենք, ապա մարդկությունը կկործանվի: Մենք իրավունք չունենք հավատացյալ կոչվելու, եթե գիտենք, որ ամենաբարի Տերն իր սուրբ նախախնամությամբ հոգ է տանում մեր մասին, մինչդեռ մենք հոգ չենք տանում միլիարդավոր էակների մասին, որոնց նա կյանքի է կոչել սիրով, որպեսզի նրանց ի վերուստ ուրախություն շնորհի:

Մենք պիտի ընդունենք մեր մեղքը և փոխվենք: Մենք պիտի վերաբերվենք Աստծու ողջ արարչությանը խոնարհաբար, ինչպես ծառան է վերաբերվում իր տիրոջը: Տերը մեզ ասել է, որ մենք կոչված չենք իշխելու, այլ՝ ծառայելու (Մատթ. 23:11): Լավագույն դեպքում մենք երևակայում ենք, որ պիտի ծառայենք մեկս մյուսին, սակայն դա էլ չենք իրագործում: Իսկ իրականում մենք կոչված ենք լինել ողջ արարչության ծառաները, ծառայել նրան ամբողջ կյանքով, ամբողջ մտքով, ամբողջ սրտով, Քրիստոսի մտքին հաղորդակից լինելու մեր ամբողջ խորությամբ և կարողությամբ:

Ահա թե որտեղ է հաշտությունը: Մենք պիտի ներողություն խնդրենք՝ ուղղելով չարիքը, քանի որ ներումը ծրի չի լինում: Ներումն սկսվում է այնտեղ, որտեղ կա մեղքի խոստովանություն վիրավորված կողմի առաջ, որտեղ մենք ներողություն ենք խնդրում և պատրաստակամորեն սկսում ենք շտկել կատարված չարիքը՝ փորձելով ամբողջովին հատուցել, ինչ էլ որ պահանջվի մեզնից: Դակառակ դեպքում, մենք երբեք չենք հաշտվի մինյանց հետ, քանզի մարդկությունը

չի կարող միավորվել միայն ընդհանուր շահերի հիման վրա: Գիշատիչ գազանները չեն կարող դառնալ միավորված խմբերի լայնարձակ թագավորություն: Իսկ մենք ձգտում ենք անել հենց դա. մնալ նույն գիշատիչները՝ արյունաբունները, եսամոլները, ազահներն ու հեշտասերները, մինչդեռ կոչված ենք հաշտվել՝ ընտրելով բարձր մի կոչում, բավական բարձր մարդկության համար:

Սեր հաշտությունը ենթադրում է կառուցել Աստծու Թագավորությունը առաջին հերթին ոչ մինյանց հետ: Այո՛, մինյանց հետ էլ՝ անձնապես և փոքր խմբերով, և ավելի ու ավելի բազմանդամ խմբերով, բայց առաջին հերթին և հիմնականում՝ աշխարհի հետ, որում մենք ապրում ենք: Այդժամ մենք կունենանք ընդհանուր նպատակ՝ դարձնել աշխարհն այնպիսին, ինչպիսին որ Աստված է կամեցել, և այդժամ մենք կհասնենք իրական հաշտության մինյանց հետ: Բավարար չէ ապաշխարել, բավարար չէ Աստծուց բողություն խնդրել. մենք պիտի այլ կերպ բողություն խնդրենք՝ լինելով Աստծու իսկական, գործուն ծառաներն ու բանբերներն այս աշխարհում:





Ոստակես, Ոտմլվա, Դադուղություն, 1397թ.

\* \* \*

Յիմա, երբ ընդհանուր առնամբ ծանոթացանք էկոլոգիական խնդիրներին և համոզվեցինք, որ քրիստոնեական Եկեղեցին իր հետևորդներից ակնկալում է ոչ միայն անտարբեր չլինել դրանց հանդեպ, այլև՝ խնամել ու պահպանել ողջ կենդանի ու անկենդան բնությունը՝ նրա յուրաքանչյուր ներկայացուցչի առաջնորդելով կատարելության, նշենք մի քանի որոշակի քայլեր, որ որպես քրիստոնյա՝ կարող ենք և պետք է կատարենք՝ տիեզերական բաղձալի հաշտության պահը հնարավորին չափ մոտեցնելու համար:

1. Խոստովանենք, որ մեղավոր ենք մայր բնության առաջ, զղջանք ու ապաշխարելով՝ սկսենք նորովի ապրել:
2. Խոհեմ լինենք՝ հնարավորինս զապելով մեր ցանկությունները (վայելքների, զվարճությունների, հաճույքների, մեր կենսաապահովման համար ոչ անհրաժեշտ ծախսումների առումով):
3. Որքան կարող ենք, սահմանափակենք մեր բնական կրքերը՝ հեռացնել-վաճելով մեզնից անբնականները: Դիմենք պահքի օգնությանը՝ տկարացնելու համար մեր մարմինները, որպեսզի հոգով զրուանանք՝ հաղթելու այդ անտեսանելի պատերազմի մեջ:
4. Զգտենք բավարարվել անհրաժեշտով և խնայենք ամեն ինչում (դա վերաբերում է և կենցաղային, առօրյա գործածության պարագաներին՝ հագուստ, սնունդ, ջուր, վառելիք, էլեկտրաէներգիա, կահույք, սպասք, զարդեր, քսուքներ, ներկեր,... և գրասենյակային, արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական իրերին, նյութերին, սարքերին, սարքավորումներին, գործիքներին և հաստոցներին, և օգտակար հանածոներին, և, առհասարակ, ցանկացած միջոցի, որ պիտի ծառայի մեջ):
5. Մեր և հոգատարություն ցուցաբերենք բուսական ու կենդանական աշխարհների նկատմամբ. ըստ անհրաժեշտության՝ խնամենք դրանք (օր., խուսափենք ծառահատումներից, մասնակցենք ծառատունկերին, չզլանանք մշակել մերձակա պուրակի կամ զագոնների ծաղիկներն ու խոտը, որսորդությամբ կամ ձկնորսությամբ չզբաղվենք զրադաշտությամբ կամ շամանցի համար և այլն):
6. Չաղտոտենք շրջակա միջավայրը. որքան կարող ենք, մաքրենք այն՝ հեռացնելով պոլիէթիենային տոպրակները, փաթեթները, թիթեյա և ապակե տարաները և այլ իրեր (էական չէ՝ ուն կողմից նետված), որ չեն փտում ու չեն մասնակցում բնական շրջապատույտին:
7. Մեր ուժերի սահմաններում ձգտենք նպաստել զենքի և զինամքերքի արտադրության ու գործածնան կրծատմանը:
8. Խուսափենք անհարկի ճամփորդություններից ու տեղափոխումներից (այդպիսով կխնայենք վառելիք, տրանսպորտային միջոցների վազք, ժամանակ, մարդկային և նյութերական ռեսուրսներ, և ավելի քիչ կաղտություն մթնոլորտը):
9. Մասնակցենք արարչության օրինության արարողություններին (անդաստան, ջրօրինեք, տնօրինեք, խաչահանգիստ և այլն):
10. Ոչ միայն՝ խոսքով, այլև մեր վարքով կենդանի քարոզ լինենք այլոց համար՝ հորդորելով ստանձնել արարչության պահպանության ու խնամքի պատասխանատվությունը, ավետելով մարդու միջոցով ողջ արարչության կատարելացման և փրկության անհրաժեշտությունն ու հնարավորությունը:

գ



Մարտիրոս և Որդի Գրիգորիս, Խնասուն և հիմար կոյսեր, Վերջին դատաստան, 1604թ.

Երկրի մասին հոգալը լոկ մեր Յախսընտրած ուղին չէ. այն մեր կոչումն է, մեր գործը, որ Տերն է հանձնարարել մեզ՝ մշակներիս: Նա յուրաքանչյուրիցս անհատապես պահանջելու է մեր աշխատանքի պտուղները, և վայ նրան, ով ձեռնունայն կներկայանա Նրան:

## ԱՍՏՎԱԾ

Աստված արարել է բոլոր արարածներին և մարդուն, արարել է իր սիրուց մղված, արարել է, որպեսզի ամեն բանի տա երանություն, ամեն բան բերի հասցնի սրբության և կատարելության վիճակի: Ողջ արարչությունն արարվել է լավ, բարի և կապված է բարի ու գեղեցիկ Արարչի հետ. այն փառաբանում է Արարչին: Մարդու կոչումն է հավերժացնել այդ փառաբանությունը: Մարդը ներկայացուցիչն է երկու աշխարհների՝ հոգևոր և նյութական: Մարդու վրա դրված է պատասխանատվության ահօնելի մի խնդիր. Աստված արարել է նրան մեծագույն մի առաքելության համար: Մարդը պիտի ամբողջ տեսանելի աշխարհը միասնական դարձնի և այն միավորի անտեսանելի աշխարհի հետ. այսինքն՝ մարդու միջոցով պիտի իրականանա ամբողջ տիեզերքի հոգեղինացումն ու այլակերպությունը:

Սակայն մարդն իր տեղն ու դերը տիեզերքում ճիշտ չի պատկերացնում: Բնության օգտագործումը մարդու կողմից դարձել է բնության շահագործում: Մեղքի մեջ ավելի ու ավելի ընկերման մարդկությունն իր ոչ ճիշտ տնտեսական, քաղաքական, ռազմական քաղաքականություններով և իր եսապաշտ և անպատասխանատու մոտեցումներով անընդհատ աղարտում է շրջակա միջավայրի արարչաստեղծ տեսքը, աղտոտում և անպիտան է դարձնում հողը, ջուրը, օդը, ոչնչացնում անտառներն ու հողային ծածկույթը, նպաստում կենդանական ու բուսական աշխարհների կենսաբազմազանության կրծատմանը, անխնա օգտագործումով շուտափույթ սպառնան վտանգի տակ դնում անվերականզնելի հանքային ռեսուրսները... Այս բոլորի համար մենք պիտի պատասխան տանք Ասեղ Դատաստանի ժամանակ: Սակայն բնությունն այսօր իսկ հատուցում է պահանջում իր հետ ներդաշնակ հարաբերությունների խախտման համար: Մենք չպիտի սպասենք, մինչև բնությունն ինքը վրեժինդիր լինի. պիտի փնտրենք ու գտնենք հաշտության ուղին: Մենք պիտի վերադառնանք մեր կոչմանը՝ բոլոր արարածների համար խելացի պահապան ու նշակ լինենք, դառնանք ողջ արարչության առաջնորդ-սպասավորը՝ այն դեպի Աստված բարձրացնելու և Աստծու մեջ հաստատելու:

Մեր Աստվածը հավիտենական Աստված է, և Նրա հոգատարությունը ողջ արարչության ու մարդկանց նկատմամբ տարածվում է բոլոր ժամանակների վրա: Ուստի մենք էլ պարտավոր ենք հարգել մեր թե՛ ներկա և թե՛ ապագա մերձավորների (բոլոր արարածների և մարդկանց) իրավունքները և երկյուղածությամբ ու արդարացիորեն օգտվել երկրի ռեսուրսներից՝ ամեն կերպ ձգտելով չաղարտել մայր բնությունը և չվնասել այն, իսկ ապագա սերունդներին, որպես ժառանգություն, չքողնել աղտոտիչներով և անապատներով ծածկված մի երկիր:

Վարդ Սրբոցի պատմություններից ու Եկեղեցու ծիսական գրքերում գետեղված աղոթքներից սեր ու հոգատարություն է բխում բնության տարրեր երևույթների նկատմամբ և պատասխանատվության զգացում՝ դրանց համեմատ: Մեր սուրբ նախնիներն իրենց ումեցած ամեն բանը համարել են Աստծու պարզե, ընդունել երախտագիտությամբ ու երկյուղածությամբ, ստացածի մի մասը բաշխել կարիքավորներին: Նրանք աղոթել են ոչ միայն մերձավոր մարդկանց համար, այլև բոլոր կենդանի էակների:

Մենք էլ պիտի սիրո և հոգատարության զգացումներով լցվենք արարչության հանդեպ, նրա մեջ տեսնենք լավն ու բարին, այն սրբազնա, նվիրագործված վիճակը, որ Արարչի կողմից նախասահնանված է նրա համար: Պիտի հիշենք մեր քահանայապետական կոչումը, որով երկնքից օրինություն պիտի իջեցնենք՝ արարչությունը վերափոխելու-միացնելու Արարչին, հիշենք մեր մարդարեական կոչումը՝ խոսքով ու գործով արարչության մեջ Աստծու կամքը հոչակելու, և վերջապես՝ մեր թագավորական կոչումը՝ արարածների ողջ շղթան ներդաշնակ միության ու կարգավորվածության մեջ պահպանելու:

ճանապարհն ապաշխարությունն է: Այն սկսվում է՝ խղճի ծայնին անսալով, մեղքի գիտակցությամբ, շարունակվում է՝ ճշմարիտ զղումով, հույսով, հավատով ու վստահությամբ առ Աստված դառնալով: ճանապարհը մեկն է՝ անձնուրացությամբ իր խաչը վերցրած՝ խոնարհանտության ու ժուժկալության, գրասրտության, ներողանտության, համբերության ու սիրո առաքինություններով զարդարվելը: ճանապարհը Քրիստոսն է:

## SUMMARY

**GOD & MAN:** God created all creatures including man – human beings. His creation was incited by His love.

He wanted to endow everything with bliss and bring them to holiness and perfection. God was the Beautiful and Good Creator and His creation was made perfectly in order that it would glorify Him.

The vocation of man is to eternalize that glorification. Man is the representative of the spiritual and material worlds and therefore he assumes a huge responsibility. God created man for this great mission. Man should unite the whole visible world with the invisible world: that is the spiritualization and transfiguration of the whole universe must be realized by the efforts of man.

Man should remember his vocation, which is a blessing that fell from heaven, and work at transforming creation and uniting it with God. Man should remember his prophetic vocation which is to declare using words and deeds the will of God in his creation. And man should remember his regal vocation by keeping the whole range of creatures in harmonious unity and order.

However, man does not understand correctly his role and place in the universe. Man began to exploit nature and use it incorrectly. Man has been plunging more and more into sin and has been unceasingly distorting the surrounding environment created by God. He uses incorrect economical, political and military policies and he uses hypocritical and irresponsible approaches. The result is that man spoils the earth, the water and the air and makes them unusable. He causes the reduction of biodiversity of fauna and flora and he puts irreplaceable mineral resources at risk of exhaustion. And man must answer for all of this at Doomsday. However, today nature requires retribution because man has broken harmonious relations with it. He should not wait until nature takes revenge but he should seek and find a way to conciliation. Man should return to his vocation and be clever guardians and toilers for the whole creation. He should be leaders and servants for the creation and raise it to God and maintain it in God.

Our God is eternal and his care toward the whole creation and man applies to all time. So man should respect the rights of both our present and future kinsmen and all creatures. He should use natural resources with awe and justice. In all possible ways man should not exploit and damage Mother Nature. He should not leave future generations a land covered with pollution and deserts, as a legacy.

The stories in “Life of Saints” and the prayers in Church ritual books instruct man that love , care and a feeling of responsibility should overflow towards different phenomena of nature. Our Saint Ancestors regarded everything they had as gifts from God accepting them with gratitude and awe and giving part to the poor. They prayed not only for kinsmen but also for all living creatures. Man should nourish these feelings of love and care toward God’s creation. God, the Creator, predestined that man would see the good, the kind, the sacred and the endowed in His creation.

**THE WAY:** the way for man to become intimate with God is through Christ. Man must repent and that begins when he hears the voice of conscience and becomes aware of his sin. It continues with true repentance, hope, belief and trust toward God. There is only one way to God and it is adorned with the virtues of humbleness, abstinence, charity, patience and love. That way is Christ.

q



24. Հայրապետյան Է. Մ. և ուրիշներ, Շրջակա միջավայրի պահպանություն, Երևան, 2005:
25. Հայաստանի կենսաբազմազանություն, Առաջին ազգային գեկույց, Երևան, 1999:
26. Առաջարկ Ա. Ա., Ինֆառ յեղանակ, Երևան, 2001.
27. Առաջարկ Ա. Ա., Ինֆառ յեղանակ, Երևան, 2005.
28. Եվրոպական Ակադեմիա, Եվրոպական ակադեմիա, Երևան, 2003.
29. Եվրոպական Ակադեմիա, Եվրոպական ակադեմիա, Երևան, 2006.
30. Եվրոպական Ակադեմիա, Եվրոպական ակադեմիա, Երևան, 2001.
31. Լազարյան Ա. Ա., Լազարյան Ա. Ա., Եվրոպական ակադեմիա, Երևան, 2005.
32. Լազարյան Ա. Ա., Լազարյան Ա. Ա., Եվրոպական ակադեմիա, Երևան, 2003.
33. Լազարյան Ա. Ա., Լազարյան Ա. Ա., Եվրոպական ակադեմիա, Երևան, 2001.
34. Նորադին Ա. Ն., Եվրոպական ակադեմիա, Երևան, 2001.



q

